

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ԱՐԴԻ ՆԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԵՐԱԴԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ - 2018**

**ՄԱՍ I**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴՄԻԱ  
Մ. ԶՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴՄԻԱ

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ - 2018**

8129007  
A304648

**ՍԱՍ I**



**ԵՐԵՎԱՆ**  
**ՀՀ ԳԱՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**2018**

Երաշխավորված է հրատարակության  
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհուրդ՝**

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության դոկտոր  
աշխարհի գիտ. թեկնածու, պրոֆեսոր  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
տնտեսագիտության թեկնածու  
տնտեսագիտության թեկնածու

Յուրի Միքայելի Սուվարյան  
Ռոբերտ Ներսեսի Սարիկյան  
Աշոտ Հակոբի Բաթայան  
Արարատ Եղիշեի Զաքարյան  
Դավիթ Վլադիմիրի Հարությունյան  
Էբա Արկադիի Բաբայան  
Քրիստինե Յուրիի Բաղդասարյան  
Հայկ Աշոտի Մարկոսյան  
Լիլիթ Նորայրի Մարգարյան

**Ժողովածուի պատասխանատու խմբագիր՝**

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի  
Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու – 2018, Մաս I) /  
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: Պատ.  
խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018 – 312 էջ:

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ  
0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15  
Հեռ. (+374 10) 58-19-71  
E-mail: [nas\\_ie@sci.am](mailto:nas_ie@sci.am), [economicjournal@sci.am](mailto:economicjournal@sci.am)

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2018

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ЭКОНОМИКИ ИМЕНИ М. КОТАНЯНА

**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ  
СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ  
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ – 2018**

**ЧАСТЬ I**

Ереван  
Издательство "Гитутюн" НАН РА  
2018

**Редакционный совет:**

академик НАН РА

доктор экономических наук, профессор  
доктор экономических наук, профессор  
доктор экономических наук, профессор  
доктор экономических наук  
кандидат географ. наук, профессор  
кандидат экономических наук  
кандидат экономических наук  
кандидат экономических наук

Суварян Юрий Михайлович  
Сарибян Роберт Персесович  
Баядян Ашот Акопович  
Закарян Арарат Егишевич  
Арутюнян Давид Владимирович  
Бабаян Эба Аркадиевна  
Багдасарян Кристина Юрьевна  
Маркосян Айк Ашотович  
Саргсян Лилиг Норайровна

Ответственный редактор сборника  
член-корреспондент НАН РА,

доктор экономических наук, профессор **ВЛАДИМИР АРУТЮНЯН**

Современные проблемы социально-экономического развития в Республике Армения.  
Сборник научных статей -2018, Часть I /институт экономики НАН РА им.М.Котаняна.  
Отв.редактор В. Л. Арутюнян. Ер., изд-во «Гитутюн» НАН РА, 2018, 312 с.

*Национальная академия наук Республики Армения Институт экономики имени М.  
Котаняна*

Республика Армения  
0015, Ереван, ул. Григора Лусаворича 15  
Тел. (+3741) 58-19-71,  
E-mail: [nas\\_ie@sci.am](mailto:nas_ie@sci.am), [economicjournal@sci.am](mailto:economicjournal@sci.am)

M. KOTANYAN INSTITUTE OF ECONOMICS  
NATIONAL ACADEMY OF SCIENCES  
REPUBLIC OF ARMENIA

**THE CONTEMPORARY ISSUES OF  
SOCIOECONOMIC DEVELOPMENT IN THE  
REPUBLIC OF ARMENIA**

**SCIENTIFIC JOURNAL OF ARTICLES - 2018**

**PART I**

**Yerevan**

*"Gitutyun" Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia*  
**2018**

Approved for publishing by the decree of the  
Scientific Council of M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences of the Republic of Armenia

**Editorial Board:**

**Yuri Mikael Suvryan**

*Academician of the National Academy of Sciences  
of the Republic of Armenia,*

*Doctor of Sciences (Economics), Professor*

*Doctor of Sciences (Economics), Professor*

*Doctor of Sciences (Economics), Professor*

*Doctor of Sciences (Economics), Professor*

*Doctor of Sciences (Economics).*

*Doctor of Geographical Sciences, Professor*

*Doctor of Economics*

*Doctor of Economics*

*Doctor of Economics* ,,

**Robert Nerses Sarinyan**

**Ashot Hakob Bayadyan**

**Ararat Yeghish Zakaryan**

**Davit Vladimir Harutyunyan**

**Eba Arkadi Babayan**

**Kristina Yuri Baghdasayan**

**Hayk Ashot Markosyan**

**Lilit Norayr Sargsyan**

Responsible Editor

**VLADIMIR HARUTYUNYAN**, Doctor of Sciences (Economics), Professor

Correspondent Member of the National Academy of Sciences

Republic of Armenia

The Contemporary Issues of Socioeconomic Development in the Republic of Armenia, Scientific journal of articles, 2018, Part I / M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia; Responsible Editor: Vladimir L. Harutyunyan, Yerevan, "Gitutyun" Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia, 2018, 312 p.

*M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia*

15 Grigor Lusavorich Street

Yerevan 0015, Republic of Armenia

Tel. (+374 10) 58-19-71

E-mail: [nas\\_ie@sci.am](mailto:nas_ie@sci.am), [economicjournal@sci.am](mailto:economicjournal@sci.am)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՍԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

|   |   |     |
|---|---|-----|
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ. Լ.,<br>ԹԱՄԱԶՅԱՆ Ա. Ռ.  | Ստվերային շրջանառության առաջնային ոլորտներն ու բնագավառները և դրանց ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա .....  | 13  |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ. Լ.,<br>ԹԱՄԱԶՅԱՆ Ա. Ռ.  | Ստվերային շրջանառության կրճատման ուղղությամբ օրենսդրական դաշտի բարելավման մոտեցումներն ու միջոցառումները .....  | 25  |
| ԱՎԵՏԻՍՅԱՆ Գ. Ս.                         | Մրցակցության պետական կարգավորման ուղղությունները և դրանց ընտրության հիմնախնդիրն անցումային տնտեսությամբ երկրներում .....                                  | 41  |
| ԱՎԵՏԻՍՅԱՆ Ս. Ա.,<br>ԱՎԱՆԵՍՅԱՆ Ի. Ա.     | Արժեթղթերի շուկայի ձևավորման առանձնահատկություններն Արցախի Հանրապետությունում .....   | 49  |
| ԲԱՆՇՅԱՆ Ս. Ս.                           | ՀՀ ցեմենտի շուկայի զարգացման միտումները .....   | 63  |
| ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ Ք. Յ.,<br>ԿՅՈՒՐԵՂՅԱՆ Ա. Ս.  | Մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը գործարար միջավայրի վրա .....  | 68  |
| ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ Ք. Յ.,<br>ՊԵՏՐՈՍՅԱՆ Լ. Ս.   | Ստվերային տնտեսության գնահատման մոտեցումները միկրոմակարդակում .....   | 74  |
| ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ Ք. Յ.,<br>ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ Տ. Ս. | Տրանսֆերային գնագոյացման մեխանիզմները և դրանց ներդրման մոտեցումները ՀՀ-ում .....  | 80  |
| ԲԱՅԱԴՅԱՆ Ա. Հ.,<br>ԲԱՅԱԴՅԱՆ Ա. Ա.       | ՀՀ համախառն ներքին արդյունքի և պետական պարտքի դինամիկ փոփոխությունների վերլուծությունը .....  | 91  |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ Դ. Հ.                         | ՀՀ-ի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը .....  | 98  |
| ԿՅՈՒՐԵՂՅԱՆ Ա. Ս.                        | ՀՀ սոցիալ-տնտեսական գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ գործարար միջավայրի բարեփոխման գերակայությունների համատեքստում ..... | 107 |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Դ. Վ.                     | Հարկային օրենսդրության ձևավորման ու բարեփոխման էվոյուցիան ակցիզային հարկի մասով .....   | 113 |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Դ. Վ.                     | Հարկային օրենսդրության ձևավորման ու բարեփոխման էվոյուցիան ավելացված արժեքի հարկի մասով .....  | 124 |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ռ. Վ.                     | Պետական եկամուտների գնահատման և կանխատեսման մի մոտեցման շուրջ .....   | 141 |

|                     |  |     |
|---------------------|--|-----|
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ս. Վ. | Հարկային բեռը և հարկման արդյունավետությունը  | 147 |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ս. Վ. | ՀՀ հարկային օրենսդրությունը և նրա բաղկացուցիչ տարրերը .....  | 159 |
| ՄԱԿԱՐՅԱՆ Ա. Ռ.      | Ներմուծման դերը երկրների տնտեսական աճի ապահովման գործում .....                                     | 172 |
| ՄԱԿԱՐՅԱՆ Ա. Ռ.      | Տնտեսական աճի վրա ներմուծման ազդեցության մեխանիզմները ՀՀ-ում .....                                 | 182 |
| ՇԱՀԻՆՅԱՆ Ս. Վ.      | Բանկային ծառայությունների տնտեսական բովանդակությունն ու դերը ժամանակակից առևտրային բանկերում ..... | 192 |
| ՇԱՀԻՆՅԱՆ Ս. Վ.      | ՀՀ բանկային ոլորտի ընդհանուր նկարագիրը .....   | 201 |
| ՋԱԼԱԼՅԱՆ Ք. Վ.      | ՀՀ ներդրումային միջավայրի իրավաօրենսդրական դաշտի վերլուծություն .....                              | 209 |
| ՋԱՎԱԴՅԱՆ Մ. Ս.      | Բանկային գործունեության ռեսուրսատարողության արդյունավետության գնահատման մտեցումները .....          | 218 |
| ՄԱՐԳՍՅԱՆ Ա. Տ.      | Իրացվելիության ռիսկը և դրա կարգավորումը բանկերում .....  | 229 |
| ՄԱՐԳՍՅԱՆ Ա. Տ.      | ՀՀ առևտրային բանկերի պասիվների կառուցվածքի վերլուծությունը .....                                   | 241 |
| ՄԱՐԳՍՅԱՆ Լ. Ն.      | Արտահանումը որպես տնտեսական աճի հիմնական գործոն ՀՀ-ում .....                                       | 250 |
| ՔԱՐԴՈՒՄՅԱՆ Ն. Գ.    | ՀՀ հարկային բեռը միջազգային վարկանիշներում   | 263 |
| ՔՈՉԱՐՅԱՆ Ռ. Ս.      | Անկանխիկ դրամաշրջանառության ժամանակագրական փոփոխությունների վերլուծությունը ՀՀ-ում .....           | 272 |

**ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏԵԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

|                 |  |     |
|-----------------|--|-----|
| ՄԱՐԻՆՅԱՆ Ռ. Ն.  | «Ազնիվ գիտության օգուտները» Նիկողայոս Զորայանի հայեցողությամբ..... | 280 |
| ՄԱՐԻՆՅԱՆ Ռ. Ն.  | Մտեփանոս Նազարյան (տնտեսագիտական մտորումներ) .....                 | 295 |
| ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ | .....  | 306 |

# СОДЕРЖАНИЕ

## МАКРОЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ И ФИНАНСЫ

|                                      |   |     |
|--------------------------------------|---|-----|
| АРУТЮНЯН В. Л.,<br>ТАМАЗАЯН А. Р.    | Первичные сферы и области теневого оборота и их влияние на экономику РА.....  | 13  |
| АРУТЮНЯН В. Л.,<br>ТАМАЗАЯН А. Р.    | Подходы и меры улучшения законодательного поля в целях сокращения теневого оборота в РА.....  | 25  |
| АВETИСЯН Г. С.                       | Направления государственного регулирования конкуренции и проблема их выбора в странах с переходной экономикой.....                    | 41  |
| АВETИСЯН С. А.,<br>АВАНЕСЯН И. А.    | Особенности формирования рынка ценных бумаг Республики Арцах.....   | 49  |
| БАХШЯН С. М.                         | Тенденции развития рынка цемента в РА.....  | 63  |
| БАГДАСАРЯН К. Ю.,<br>КЮРЕГЯН А. М.   | Влияние макроэкономических показателей на бизнес-среду.....   | 68  |
| БАГДАСАРЯН К. Ю.,<br>ПЕТРОСЯН Л. М.  | Подходы оценки теневой экономики на микроуровне.....  | 74  |
| БАГДАСАРЯН К. Ю.,<br>ПАРСАДАНЯН Т.С. | Механизмы трансферного ценообразования и подходы по их внедрению в РА.....  | 80  |
| БАЯДЯН А. А.,<br>БАЯДЯН А. А.        | Анализ динамического изменения валового внутреннего продукта и государственного долга РА.....   | 91  |
| ГРИГОРЯН Д. О.                       | Членство Армении в Евразийском экономическом союзе.....   | 98  |
| КЮРЕГЯН А. М.                        | Способы повышения эффективности управления социальными и экономическими процессами в контексте приоритетов деловой среды Армении..... | 107 |
| АРУТЮНЯН Д. В.                       | Эволюция формирования и реформирования налогового законодательства в области акцизного налога.....                                    | 113 |
| АРУТЮНЯН Д. В.                       | Эволюция формирования и реформирования налогового законодательства в области НДС.....   | 124 |
| АРУТЮНЯН Р. В.                       | Об одном подходе оценки прогнозирования государственных доходов.....  | 141 |
| АРУТЮНЯН Т. В.                       | Налоговая нагрузка и налоговая эффективность.....   | 147 |
| АРУТЮНЯН Т. В.                       | Налоговое законодательство РА и его компоненты....  | 159 |
| МАКАРЯН А. Р.                        | Роль импорта в обеспечении экономического роста в различных странах.....  | 172 |

|                |   |     |
|----------------|---|-----|
| МАКАРЯН А. Р.  | Механизмы влияния импорта на экономический рост в РА .....                              | 182 |
| ШАГИНЯН Т. В.  | Экономическое содержание и роль банковских услуг в современных коммерческих банках..... | 192 |
| ШАГИНЯН Т. В.  | Общее описание банковского сектора Армении .....  | 201 |
| ДЖАЛАЛЯН К. В. | Анализ законодательно-правовой базы инвестиционной среды РА.....                        | 209 |
| ДЖАВАДЯН М. С. | Подходы к измерению эффективности ресурсоемкости банковской деятельности.....           | 218 |
| САРГСЯН А. Т.  | Риск ликвидности и его регулирование в банках .....                                     | 229 |
| САРГСЯН А. Т.  | Анализ структуры пассивов коммерческих банков РА.....                                   | 241 |
| САРГСЯН Л. Н.  | Экспорт как ключевой фактор экономического роста РА .....                               | 250 |
| КАРДУМЯН Н. Г. | Налоговое бремя РА в международных рейтингах.....                                       | 263 |
| КОЧАРЯН Р. С.  | Анализ временных изменений безналичного денежного оборота Республики Армения.....       | 272 |

## ИСТОРИЯ ТЕОРЕТИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ И ЭКОНОМИЧЕСКОЙ МЫСЛИ

|               |   |     |
|---------------|---|-----|
| САРИНЯН Р. Н. | Взгляды Никогоаса Зораяна «Выгоды благородной науки»..... | 280 |
| САРИНЯН Р. Н. | Степанос Назарян (экономические раздумья) .....           | 295 |
| НАШИ АВТОРЫ   | .....   | 306 |

# CONTENTS

## MACROECONOMIC ISSUES AND FINANCES

|   |  |           |
|---|--|-----------|
| APRUTYUNYAN B. J.,<br>TAMAZYAN A. P.    | The Primary Spheres, Areas of Application of Unreported Sales Turnover and the Impact of Thereof on the Economy of the Republic of Armenia.....  | 13        |
| HARUTYUNYAN V. L.,<br>TAMAZYAN A. R.    | Approaches to and Measures for Legislation Changes to Reduce the Size of Unreported Sales Turnover.....  | 25        |
| AVETISYAN G. S.                         | The Directions of the State Regulation of Competition and the Issue of the Choice of Thereof in Transition Economies.....  | 41        |
| AVETISYAN S. A.,<br>AVANESYAN I. A.     | Creating Securities Market in the Republic of Artsakh...   | 49        |
| BAKSHSHYAN S. M.                        | Cement Market Development Trends in the Republic of Armenia .....  | 63        |
| BAGHDASARYAN K.Y.,<br>KYUREGHYAN A. M.  | The Impact of Macroeconomic Indicators on the Business Climate.....  | 68        |
| BAGHDASARYAN K.Y.,<br>PETROSYAN L. M.   | Approaches to Measuring the Size of Shadow Economy on the Micro-Level.....   | 74        |
| BAGHDASARYAN K.Y.,<br>PARSADANYAN T. S. | The Mechanisms of Transfer Pricing and Possible Approaches to Introducing Thereof in the Republic of Armenia .....   | 80        |
| BAYADYAN A. H.,<br>BAYADYAN A. A.       | Analysis of Dynamic Changes Reported in the Gross Domestic Product and Public Debt .....   | 91        |
| GRIGORYAN D. H.<br>KYUREGHYAN A. M.     | Armenia's Accession to the Eurasian Economic Union Approaches to Increasing the Efficacy of Management of Socioeconomic Processes in the Republic of Armenia in the Context of Priorities for Reforming the Business Environment of the Republic of Armenia..... | 98<br>107 |
| HARUTYUNYAN D. V.                       | The Evolution of Tax Legislation with Respect to the Excise Tax .....  | 113       |
| HARUTYUNYAN D. V.                       | The Evolution of Tax Legislation with Respect to the Value Added Tax .....   | 124       |
| HARUTYUNYAN R. V.                       | On an Approach to Estimating And Forecasting the State Revenues.....   | 141       |
| HARUTYUNYAN T. V.                       | Tax Burden and Taxation Efficacy.....  | 147       |

|                   |   |     |
|-------------------|---|-----|
| HARUTYUNYAN T. V. | Tax Legislation and Its Components in the Republic of Armenia .....                               | 159 |
| MAKARYAN A. R.    | The Role of Imports in Ensuring Economic Growth in Various Nations .....                          | 172 |
| MAKARYAN A. R.    | Mechanisms of the Impact of Imports on the Economic Growth in the Republic of Armenia.....        | 182 |
| SHAHINYAN T. V.   | The Economic Meaning and the Role of Banking Services in Contemporary Commercial Banks .....      | 192 |
| SHAHINYAN T. V.   | General Overview of the Banking Sector in the Republic of Armenia .....                           | 201 |
| JALALYAN K. V.    | Analysis of the Legislation Regulating the Investment Environment in the Republic of Armenia..... | 209 |
| JAVADYAN M. S.    | Approaches to Measuring the Efficacy of Resource-Intensity of the Banking Activity .....          | 218 |
| SARGSYAN A. T.    | Liquidity Risk and its Regulation at Banks.....   | 229 |
| SARGSYAN A. T.    | Analysis of the Liability Profile of Commercial Banks in the Republic of Armenia.....             | 241 |
| SARGSYAN L. N.    | Export as the Key Factor of Economic Growth in the Republic of Armenia .....                      | 250 |
| QARDUMYAN N. G.   | The Tax Burden in the Republic of Armenia According to the International Rankings .....           | 263 |
| KOCHARYAN R. S.   | Analysis of Temporal Changes in the Non-Cash in Circulation in the Republic of Armenia .....      | 272 |

## ECONOMIC RESEARCH AND THE HISTORY OF THE ECONOMIC THOUGHT

|                |   |     |
|----------------|---|-----|
| SARINYAN R. N. | “The Benefits of the Noble Science” from the Viewpoints of Nikoghayos Zorayan ..... | 280 |
| SARINYAN R. N. | Stepanos Nazaryan (Economic Thoughts).....  | 295 |
| OUR AUTHORS    | .....   | 306 |

# ՍԱԿՐՈՏՆԵՍԵԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

## ՎԱՐԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ*

## ԱՐԹՈՒՐ ՈԱՖԻԿԻ ԹԱՄԱՉՅԱՆ

*տնտեսագիտության թեկնածու*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ*

## ՍՏՎԵՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՆ ՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ստվերային տնտեսական շրջանառությունն իր առանձնահատուկ դրսևորումներն է ստանում հատկապես զարգացող երկրներում, որոնցից առաջին հերթին կարելի է առանձնացնել ստվերային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների անօրինական ճանապարհով երկրից դուրս բերելու գործընթացը («փողերի լվացում»)։ Իհարկե, այն ուղղակիորեն չի անդրադառնում երկրի արտադրության ծավալների, մասնավորապես ՀՆԱ-ի հաշվարկման վրա, սակայն որոշ դեպքերում այն կարող է զուգորդվել արտաքին տնտեսական ոլորտում ստվերային տարբեր տեսակի գործողությունների իրականացման հետ։ Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ արտահանվող ֆինանսական միջոցների մեծ մասը ստեղծված է տնտեսության հենց ստվերային հատվածում, այս խնդիրը արժանի է լուրջ ուշադրության։ Խնդիրն առավել արդիական է դառնում այն պարագայում, երբ երկրից դուրս բերված հսկայական միջոցները տարբեր օֆշորային գոտիներից վերադառնում են Հայաստան արդեն օտարերկրյա ուղղակի ներդրումների տեսքով և ստանում հարկային ու մաքսային տարատեսակ արտոնություններ։

Բացի այդ, ժամանակակից շուկայական հարաբերություններում աստիճանաբար ավելի ու ավելի են արմատավորվում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված բիզնես գործունեության տեսակները (էլեկտրոնային առևտուր, օնլայն խանութներ և կազինոներ, օնլայն տաքսի ծառայություններ և այլն), որոնք, կապված ինտերնետ տիրույթում զրանցվելու և գործարքներ իրականացնելու հանգամանքի հետ, ըստ էության, դուրս են գտնվում ոչ միայն ՀՀ հարկային, մաքսային և վիճա-

կազմակերպության մարմինների, այլև նույնիսկ սովյալ սուբյեկտների պետական գրանցում իրականացնող պետական մարմինների վերահսկողությունից: Նշված ոլորտները, բնականաբար, ստվերային տնտեսության բացահայտման, գնահատման և վերացման տեսանկյունից ներկայումս ամենաառաջնային ոլորտներն են, քանի որ դրանց շրջանառությունն աճում է բավականին բարձր տեմպերով՝ ընդգրկելով նորանոր բնագավառներ և գործունեության տեսակներ, իսկ դրանք վերահսկելի դարձնելու առումով ներկայումս առկա են ոչ միայն օրենսդրաիրավական, այլև տեխնիկական բնույթի մի շարք խնդիրներ:

Քանի որ ստվերային տնտեսությունն իր բազմապիսի դրսևորումներն է ստանում տնտեսության տարբեր ճյուղերում, ներկայացնենք Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտները և այն հիմնական գործունեության տեսակները, որոնք ի հայտ են բերվել մեր հետազոտությունների հիման վրա և, ըստ մեզ, առավել «ստվերայնացված» են:

1. Ապրանքների և ծառայությունների առևտրի ոլորտը, որը ներառում է.
  - ա) ապրանքների անօրինական ներմուծումը և արտահանումը,
  - բ) տեղական և արտասահմանյան այն ապրանքների վաճառքը, որոնք պահանջում են պետական գրանցում կամ լիցենզավորում, կամ գրանցվել են իրական արժեքից, ներկայացվող չափորոշիչներից բավականին մեծ տարբերություններով (օրինակ՝ դեղորայքի գրանցումը համապատասխան մարմիններում),
  - գ) ապրանքների և ծառայությունների վաճառքը քաղաքացիների կողմից առանց այդ ապրանքների ծագման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի առկայության, ինչպես նաև առանց պետական պարտադիր որևէ վճարում կատարելու,
  - դ) ապրանքների և ծառայությունների համար կրկնակի գների առկայությունը (մեկը՝ փաստաթղթերի, մյուսը՝ իրական կանխիկ վաճառքի համար),
  - ե) արգելված տեղերում առևտրի կազմակերպումը,
  - զ) գների բարձրացման ակնկալիքով ապրանքների արհեստական պահեստավորումը՝ դրանք «սև շուկայում» կամ առավել բարձր գներով վաճառելու նպատակով (իհարկե, գործունեության այս տեսակը առավել բնորոշ էր Հայաստանի անկախացման սկզբնական տարիներին),
  - է) ձեռնարկության աշխատակիցներին աշխատավարձի դիմաց ապրանքների և ծառայությունների տրամադրումը՝ հիմնականում առանց համապատասխան հարկեր վճարելու,

- ը) ցածրորակ, պետական և միջազգային ստանդարտներին չհամապատասխանող ու առանց երաշխիքների ապրանքների և ծառայությունների վաճառքը,
- թ) անվճար ծառայությունների տրամադրումը,
- ժ) բարտեբային առևտուրը,
- ի) ամբողջ տարվա ընթացքում տարատեսակ գեղչերի ու ակցիաների իրականացումը և այլն:
2. Դրամական փոխանցումների ոլորտում.
- ա) գոյություն ունեցող դրամական օրինական փոխանցումների համակարգին զուգահեռ կանխիկ փողի անօրինական շուկայի ստեղծումը, որով իրականացվում են սուվերային գործունեությունից ստացվող հասույթների վճարումները (սուվերային ոլորտի բազմաթիվ ներկայացուցիչներ հաճախ միայնակ միջև փոխադարձ վճարումներն իրականացնում են տարբեր տեսակի ապրանքների ու ծառայությունների փոխանակման, փոխադարձ ներման և այլ ճանապարհներով՝ շրջանցելով ոչ միայն բանկային համակարգը, այլև չօգտագործելով կանխիկ դրամը),
- բ) փոխհատուցումների, զիջումների հիման վրա փոխադարձ վճարային պարտավորությունների վերացումը՝ առանց օրենքով նախատեսված համապատասխան գրանցումների իրականացման,
- գ) որպես վճարման միջոց գրեթե բացառապես միայն կանխիկ դրամի կիրառումը և բանկային համակարգի շրջանցումը,
- դ) կանխիկ դրամով վճարումների իրականացումն առանց տվյալ գործարքների գրանցման և հարկերի վճարման:
3. Դրամավարկային ոլորտում.
- ա) արտարժույթի ներմուծումը կամ արտահանումը երկրից՝ առանց համապատասխան հայտարարագիր ներկայացնելու,
- բ) արտարժույթի «սև» շուկայի ձևավորումը և արտարժույթի փոխանակումը սուվերային փոխարժեքներով, որը նույնպես հիմնականում բնորոշ էր վաղ շրջաններին,
- գ) վարկերի տրամադրումը «թաքնված» տոկոսադրույքով (լրացուցիչ գանձումներ՝ տարատեսակ ծառայությունների անվան տակ, կաշառքներ կամ հովանավորչության կիրառում՝ վարկավորման համեմատաբար լավ պայմաններ ստանալու նպատակով և այլն),
- դ) վարկերի տրամադրումը բանկային համակարգից դուրս գտնվող մեխանիզմների միջոցով,
- ե) տնային տնտեսություններին տրամադրված սպառողական վարկերի անօրինական օգտագործումը և այլն:

4. Աշխատուժի շուկայում.

- ա) գիշերային չգրանցվող աշխատանքները, որոնք մասնագիտական գրականության մեջ հայտնի են «մունլայթիզ» անվանումով, իսկ գործունեության այս տեսակի գոյության հիմնական պատճառներից է տնտեսական գործունեության չգրանցված կամ անօրինական լինելու հսկումները,
- բ) արտաժամյա կամ տոնական և հանգստի օրերին օգտագործվող աշխատանքը՝ առանց օրենքով սահմանված հավելավճարների վճարման,
- գ) ժամավճարով աշխատողների վարձատրության պահպանման (չբարձրացման) պարագայում աշխատանքային ժամաքանակի ավելացումը,
- դ) այլ տեսակի անօրինական աշխատանքները (օրինակ՝ անչափահասների, հղի կանանց աշխատանքի օգտագործումը և այլն, թեև դրանք ներկայումս արդեն բնորոշ չեն մեր տնտեսությանը):

5. Բնօգտագործման ոլորտում.

- ա) չափագրման և անհրաժեշտ այլ ցուցանիշների խեղաթյուրման արդյունքում հաշվետվություններում չարտացոլվող հանքարդյունահանումը,
- բ) նույն ճանապարհով թափոնների, պոչամբարների ծավալների ուղղացումը, ինչպես նաև չկատարված տարբեր ծախսերի ներկայացումն ու հարկվող շահույթի նվազեցումը:

6. Էլեկտրոնային հարթակներում իրականացվող գործունեության ոլորտում՝ առանց հարկեր վճարելու.

- ա) օնլայն տաքսի ծառայությունների մատուցումը,
- բ) էլեկտրոնային առևտրի իրականացումը,
- գ) օնլայն խաղատների և խանութների կազմակերպումը,
- դ) թաքնված գովազդային ծառայությունների մատուցումը և այլն:

7. Այլ ոլորտներ, որոնց տակ հիմնականում հասկացվում է.

- ա) ապօրինի շինարարությունը,
- բ) բազմաբնակարան շենքերում ընդհանուր օգտագործման տարածքների ապօրինի վերափոխումը (օրինակ՝ անհատական բնակարանային տարածքի ընդարձակումը ընդհանուր օգտագործման միջանցքների ապօրինի յուրացման միջոցով),
- գ) չգրանցված սուբյեկտների կողմից արտադրության կամ ծառայությունների մատուցումը,
- դ) աշխատավարձերի վճարումն ապրանքների և ծառայությունների տեսքով,

- ե) պետության կամ հասարակության միջոցներն ու ժամանակն անձնական կարիքների համար օգտագործելը,
- զ) պետության կողմից տնօրինվող բնապահպանական տարածքների տնօրինական օգտագործումը,
- է) հասարակական կամ բարեգործական նպատակների անվան տակ դրամահավաքության կազմակերպումը կամ իրական գներից մի քանի անգամ բարձր գներով ապրանքների իրացումը և այլն:

Բնականաբար չի կարելի ասել, որ ներկայացվածը ՀՀ-ում ստվերային շրջանառության ամբողջական ցանկն է, ուստի անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այս կամ այն չափի ստվերայնություն կարելի է գտնել սոցիալ-տնտեսական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում և բնագավառներում: Սակայն ակնհայտ է նաև, որ ստվերային տնտեսությունն իր բազմապիսի դրսևորումներով քայքայիչ հետևանքներ է թողնում տնտեսական համակարգի վրա, ուստի ստվերային տնտեսության գոյությունը և դրա ծավալների ընդարձակումը՝ իր բազմապիսի հետևանքներով, մտահոգում են ոչ միայն տնտեսագետներին, այլև իշխանություններին և հասարակությանը մի շարք պատճառներով, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները:

1. Հարկերի հավաքագրման մեխանիզմների խաթարումը և պետության հարկային եկամուտների պակասեցումը, որն առաջացնում է ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման խնդիրներ: Քանի որ տնտեսագետների մի ստվար հատված ընդունում է, որ ստվերային տնտեսության հիմնական պատճառներից են պետության կողմից կիրառվող հարկային և մաքսային բարձր տոկոսադրույթները, ինչպես նաև պետական բյուջեի եկամուտների հավաքագրման ոլորտում պետության կողմից իրականացվող կոշտ քաղաքականությունը, հետևաբար՝ հարկային բարձր տոկոսադրույթները որոշիչ հանգամանք են տնտեսվարող սուբյեկտների համար ստվերային գործունեություն իրականացնելու հարցում: Այս առումով զարգացող ստվերային տնտեսությունը ենթադրում է պետական եկամուտների նվազեցում, որն էլ մեծացնում է ՀՀ պետական բյուջեի պակասուրդը: Այն առավել ցայտուն է արտահայտվում թույլ ֆիսկալ դիրք ունեցող անցումային տնտեսություններում, ինչպիսին է, օրինակ, Հայաստանի տնտեսությունը: Չկարողանալով հավաքագրել իր հարկային եկամուտները՝ պետությունը հաճախ թերանում է կատարել հասարակության առջև ունեցած իր բազմաթիվ պարտավորությունները, որը սոցիալական խոշոր ցնցումներ կարող է առաջացնել երկրում:

2. Մակրոտնտեսական մակարդակով տնտեսությունում ստվերային խոշոր հատվածի առկայությունը կասկածի տակ է առնում մակրոտնտեսական այնպիսի պաշտոնական ցուցանիշների ճշգրտությունը, ինչպի-

սիք են համախառն ներքին արդյունքը, գործազրկության մակարդակը, ազգային եկամուտը, սղաճը և տնտեսական քաղաքականության իրականացման համար հիմք հանդիսացող այլ կարևոր ցուցանիշներ: Հետևաբար՝ տնտեսության վերաբերյալ ոչ ամբողջական և թյուր տեղեկատվության վրա հիմնված ու պետության կողմից իրականացվող ցանկացած տնտեսական քաղաքականություն կարող է սխալ, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ սպասվածից հակառակ արդյունքներ տալ:

Կարելի է առանձնացնել սովերային տնտեսության՝ ՀՆԱ-ի վրա ազդելու հետևյալ հիմնական ուղղությունները.

- հասարակության տարբեր պահանջմունքները բավարարող ու սովերային տնտեսությունում արտադրված ապրանքների և ծառայությունների արժեքը երկրի ամբողջական արդյունքում չհաշվարկվելու պատճառով ՀՆԱ-ը թերհաշվարկվում է,
- եթե տնտեսության սովերային հատվածն ավելի արագ է աճում, քան տնտեսության պաշտոնական հատվածը, ապա պաշտոնապես հաշվարկված ՀՆԱ-ի աճի տեմպի ցուցանիշը չի արտահայտում տնտեսության աճի տեմպի իրական մակարդակը,
- խեղաթյուրվում է ՀՆԱ-ի կառուցվածքը տնտեսության ոլորտների, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման առումով և այլն<sup>1</sup>:

Համաձայն ազգային հաշիվների ցուցանիշների հաշվարկման միջազգային սկզբունքների՝ տնտեսության ամբողջական արդյունքը պետք է ներառի ինչպես տնտեսության պաշտոնական հատվածում, այնպես էլ սովերային տնտեսությունում, ներառյալ անօրինական և թաքնված ոլորտներում արտադրված ապրանքները և ծառայությունները:

3. Մովերային տնտեսությունն անհավասար տնտեսական ու մրցակցային պայմաններ է ստեղծում տնտեսության պաշտոնական և ոչ պաշտոնական հատվածներում գործող արտադրական կազմակերպությունների (ձեռնարկությունների) միջև: Շուկայական տնտեսության արդյունավետ գործունեության ապահովման համար առաջնային պայման է մրցակցության միջոցով տնտեսական և իրավական հավասար պայմանների ստեղծումը տնտեսվարող բոլոր սուբյեկտների միջև:

Խնդիրն առավել սրվում է հատկապես օտարերկրյա ներդրումների ներգրավման տեսանկյունից: Ցանկացած օտարերկրյա ներդրող նոր ներդրումներ կատարելուց առաջ, բացի տնտեսական և քաղաքական համապատասխան վերլուծություն և հաշվարկներ կատարելուց, ուսումնա-

<sup>1</sup> «Методологические принципы отражения в СНС теневой экономики и методические рекомендации по расчету ее показателей», г. Москва, 1995.

սիրում է նաև տվյալ երկրում տնտեսական գործունեության համար ստեղծված միջավայրը, որտեղ որոշիչ գործոն է տնտեսական հավասար պայմանների առկայությունը տնտեսվարող բոլոր սուբյեկտների համար: Ոչ մի լուրջ, ուսցիտնալ օտարերկրյա ներդրող ներկայումս չի սկսի որևէ տնտեսական գործունեություն իրականացնել տնտեսության մի այնպիսի ոլորտում, որտեղ ստվերային մասը մեծ չափերի է հասնում, և որտեղ օտարերկրյա ներդրողը տնտեսապես անհավասար պայմաններում կգտնվի՝ հարկային վճարումներից խուսափելու արդյունքում տնտեսական ծախսերը կրճատած և մրցակցային ավելի բարենպաստ վիճակում գտնվող ստվերային ոլորտի ձեռնարկության համեմատ: Այս տեսանկյունից ստվերային տնտեսությունը օտարերկրյա ներդրումների ներգրավման հիմնական խոչընդոտներից մեկն է<sup>1</sup>:

4. Ստվերային տնտեսությունը խաթարում է նաև աշխատուժի արդյունավետ վերաբաշխումը տնտեսության տարբեր ճյուղերի միջև: Ստվերային ոլորտում աշխատողները չեն վճարում իրենց հարկային և սոցիալական ապահովության պարտադիր վճարումները և այդ առումով հայտնվում են ավելի բարենպաստ ֆինանսական վիճակում, քան տնտեսության պաշտոնական հատվածում զբաղվածները: Ընդարձակվող ստվերային տնտեսությունը ենթադրում է տնտեսության թաքնված հատվածի կողմից աշխատուժի նկատմամբ պահանջարկի մեծացում: Հաշվի առնելով այն, որ հարկերը չվճարելու հետևանքով իրական տնօրինվող եկամուտը ստվերային ոլորտում աշխատող մարդկանց մոտ ավելի մեծ է, կարելի է ենթադրել, որ ստվերային տնտեսության ընդարձակման արդյունքում տեղի կունենա աշխատուժի որակյալ մասի հոսք տնտեսության պաշտոնական հատվածից դեպի ոչ պաշտոնականը՝ նվազեցնելով տնտեսական արդյունավետությունը պաշտոնական հատվածում<sup>2</sup>:

5. Քանի որ ստվերային գործունեությունը հաճախ անօրինական և քրեածին բնույթ է կրում, ապա ստվերային տնտեսությունը շատ դեպքերում առաջացնում է տարատեսակ կոնֆլիկտներ: Անբարեխիղճ մրցակցությունն առկա է ոչ միայն տնտեսության պաշտոնական, պաշտոնական և ստվերային հատվածների, այլև հենց ստվերային ոլորտի ձեռնարկությունների միջև: Պետք է նշել, որ, ի տարբերություն տնտեսության պաշ-

<sup>1</sup> Ղուչյան Հ., Ստվերային տնտեսության գոյության պատճառները և գնահատման հիմնահարցերը ՀՀ-ում, Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում (գիտական հոդվածների ժողովածու), գիրք առաջին, Եր., էջ 35-41, 1997:

<sup>2</sup> Մուվարյան Յու., Կիրակոսյան Շ., Աշխատանքի շուկա. միտումները և արդի հիմնահարցերը, Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում (գիտական հոդվածների ժողովածու), գիրք առաջին, Եր., էջ 153-163, 1997:

տոնական հատվածում գործող ձեռնարկությունների, որոնք, վճարելով հարկերը, միաժամանակ օգտվում են հասարակական «ապրանքներից», տնտեսության ստվերային հատվածի հատկապես անօրինական գործունեությամբ զբաղված ձեռնարկությունները զրկված են այդ հասարակական «ապրանքների և ծառայությունների» մեծ մասից օգտվելու հնարավորությունից: Մասնավորապես խոսքը ուստիկանության, դատարանների և իրավապահ այլ մարմինների ծառայություններից օգտվելու հնարավորության սահմանափակման մասի է: Այս պարագայում, ստվերային գործունեությամբ զբաղված տարբեր ձեռնարկությունների միջև առաջացող վեճերի լուծման միակ տարբերակը մնում է ուժի կիրառումը: «Ստվերային բիզնեսը» պաշտպանելու հնարավորություն ունենալու նպատակով ստվերային ոլորտի բազմաթիվ ձեռնարկատերեր ստեղծում են իրենց հանցավոր խմբերը, որի արդյունքում մեծանում է հանցագործությունների քանակը, և հարցականի տակ է առնվում հասարակության կայունությունը:

Պետք է նշել, որ ստվերային տնտեսությունում հանցավոր խմբերի ներգրավվածությունն առաջացնում է նաև մենաշնորհային հիմնախնդիրներ: Ակնհայտ է, որ հանցավոր խմբերը ձգտում են առավելագույնի հասցնել իրենց վճարվող գումարների չափը, ինչը հնարավոր է միայն որևէ ոլորտում մենաշնորհային դիրք ունենալու դեպքում: Օրինակ, որևէ տարածքում միայն մեկ ռեստորանի գոյությունը շատ ավելի շահութաբեր է դրա տիրոջ համար, քան նույն տարածքում մի քանի ռեստորանների առկայությունը: Հանցավոր խմբերն անօրինական ուժային մեթոդների կիրառմամբ կարող են արգելել կամ սահմանափակել տվյալ տարածքում նոր ռեստորանների բացումը, և այդ առումով այն նպաստում է մենաշնորհների զարգացմանը: Իհարկե, այս դրույթը համապատասխանում է այն իրավիճակին, երբ հանցավոր խումբը հենց ինքն է կառավարում այդ հաստատությունը: Միաժամանակ, եթե հանցավոր խումբը միայն վերահսկում է այդ տարածքը և «ռեկետ»-ի միջոցով վճարներ է հավաքագրում այդտեղ գործող հաստատություններից, ապա այն ամենևին էլ շահագրգռված չի լինի տնտեսվարող սուբյեկտների թվաքանակի կրճատման մեջ: Մյուս կողմից՝ հատկանշական է նաև այն փաստը, որ հանցավոր խմբերի համար առավել հեշտ է վերահսկել մեկ մենաշնորհային, քան բազմաթիվ փոքր ձեռնարկություններ:

6. Ստվերային տնտեսությունը բացասական ազդեցություն է ունենում նաև տնտեսական գործունեությամբ զբաղված մարդկանց վարքականոնի և էթիկայի վրա: Այն հասարակության մեջ ստեղծում է հետադիմական գաղափարներով և ավանդույթներով օժտված հասարակական մի

խավ: Այս ոլորտում աշխատող մարդիկ դադարում են տարբերակել տնտեսական գործունեության ընթացքում թուլյատրեյի և արգելված նորմերը, որն այնուհետև տարածվում է ամբողջ հասարակության վրա և խաթարում հասարակության կարգ ու կանոնը:

Ընդհանուր առմամբ սովերային տնտեսությունը հասարակության և տնտեսության անցումային փուլում ունի ոչ միայն բացասական, այլև դրական, կայունացնող դեր: Մասնավորապես կարող ենք նշել սովերային տնտեսության հետևյալ կայունացնող հետևանքները:

1. Տնտեսվարող սուբյեկտների տեսանկյունից սովերային տնտեսության գոյությունը հնարավորություն է ընձեռում տնտեսական գործունեության ավելի արդյունավետ մեթոդների ներդրման և կիրառման համար: Հարկեր չմուծող սովերային գործունեությամբ զբաղվող ձեռնարկատերը մեծացնում է ձեռնարկության շահույթը, որը տնտեսության պաշտոնական հատվածում գործող ձեռնարկությունների համեմատ մրցակցային առավելություն է ընձեռում, ինչն էլ հնարավորություն է տալիս նոր տեխնոլոգիաների և արտադրության նոր ձևերի կազմակերպման միջոցով բարձրացնելու տնտեսական արդյունավետությունը:

2. Սովերային տնտեսության կայունացնող հաջորդ դերն այն է, որ, չնայած անօրինական լինելու հանգամանքին, այն նոր աշխատատեղեր է ստեղծում բնակչության համար՝ մեղմելով սոցիալական լարվածությունը տնտեսության կամ բնակչության կենսամակարդակի անկման պայմաններում: Նոր աշխատատեղերի և եկամտի ստեղծման առումով սովերային տնտեսությունը սոցիալական կարգավորիչ դեր է կատարում. որոշ չափով փոքրացնելով բնակչության տարբեր խավերի միջև գոյություն ունեցող եկամուտների լայն ճեղքվածքը՝ թուլացնում է հասարակության սոցիալական լարվածությունը:

3. Սովերային տնտեսությունը մասնավոր ֆինանսական միջոցների կուտակման նոր աղբյուր է, որտեղ ստեղծված միջոցները կարող են օգտագործվել հասարակության տարբեր խնդիրները հոգալու համար: Այսօր ակնհայտ է, որ Հայաստանում տարբեր տեսակի քաղաքական և հասարակական գործունեության, ինչպես նաև մշակույթի ոլորտում բարեգործության ֆինանսավորման համար օգտագործվում են նաև սովերային տնտեսությունում ստեղծված գումարները՝ նվազեցնելով ծախսային ճնշումը բյուջեի վրա: Այդ առումով սովերային տնտեսությունը քաղաքացիական հասարակության ստեղծման համար անհրաժեշտ միջոցների աղբյուր է, չնայած այն հանգամանքին, որ այդ միջոցները շատ դեպքերում ստեղծված են անօրինական գործունեության միջոցով:

4. Ստվերային տնտեսությունը նպաստում է նաև տնտեսական կյանքի ակտիվացմանը և մեծացնում է տնտեսության պաշտոնական հատվածի ամբողջական պահանջարկը, քանի որ ստվերային տնտեսությունում ստեղծված եկամտի մեծ մասը, միևնույնն է, ծախսվում է տնտեսության պաշտոնական հատվածում:

Ամփոփելով ստվերային տնտեսության դրական և բացասական հետևանքները՝ պետք է նշել վերջինիս գերակշռող ազդեցությունը տնտեսական գործընթացների վրա հատկապես անկայուն և անարդյունավետ տնտեսական համակարգ ունեցող անցումային երկրների համար:

## **ՍՏՎԵՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՆ ՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

### **ՎԼԱԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ*

### **ԱՐԹՈՒՐ ՌԱՖԻԿԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ*

**Յամառոտագիր:** Որպես կանոն, ստվերային շրջանառության ոլորտներն ու բնագավառները տարբեր երկրներում, ունենալով առանձնահատուկ դրսևորումներ, ունեն նաև մի շարք նմանություններ՝ կապված ստվերային տնտեսության առանձնահատկությունների, պետական կարգավորման օբյեկտիվ բարդությունների և այլ հանգամանքների հետ: Այս տեսանկյունից շատ կարևոր է հնարավորինս ճիշտ ուրվագծել ստվերային շրջանառության այն բնագավառները, որոնց շրջանակի և ծավալների կրճատումն առաջնահերթ նշանակություն ունի երկրի մակրոտնտեսական իրավիճակի կայունացման, պետական եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական կյանքի վրա դրանց ազդեցության հնարավորինս չեզոքացման համար:

*Բանալի բառեր. ստվերային տնտեսություն, ստվերային շրջանառություն, ստվերային ոլորտներ ու բնագավառներ, պետական կարգավորում, մակրոտնտեսական իրավիճակ, ստվերային շրջանառության ազդեցություն:*

## ПЕРВИЧНЫЕ СФЕРЫ И ОБЛАСТИ ТЕНЕВОГО ОБОРОТА И ИХ ВЛИЯНИЕ НА ЭКОНОМИКУ РА

**ВЛАДИМИР ЛИПАРИТОВИЧ АРУТЮНЯН**, д.э.н., профессор,  
член-корр. НАН РА

*директор Института экономики им. М. Котаняна НАН РА,*

**АРТУР РАФИКОВИЧ ТАМАЗЯН**, к.э.н.,

*старший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА*

**Аннотация:** Как правило, сферы и области теневого оборота в разных странах, имея особенные разновидности проявления, имеют также и ряд сходств, связанных с особенностями теневой экономики, с объективными сложностями государственного регулирования и другими обстоятельствами.

С этой точки зрения очень важно точно определить те сферы теневой экономики, в которых сокращение их объема и масштаба, имеют первостепенное значение для макроэкономической стабилизации страны, повышения уровня сбора государственных доходов, а также с целью воздействия возможной нейтрализации их влияния на социально-экономическую жизнь страны.

*Ключевые слова: теневая экономика, теневой оборот, теневые сферы и области, государственное регулирование, макроэкономическая ситуация, влияние теневого оборота.*

## THE PRIMARY SPHERES, AREAS OF APPLICATION OF UNREPORTED SALES TURNOVER AND THE IMPACT OF THEREOF ON THE ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA

**VLADIMIR LIPARIT HARUTYUNYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor  
Director, M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciences, Republic of Armenia  
Corresponding Member, National Academy of Sciences, Republic of Armenia*

**ARTUR RAFIK TAMAZYAN**, *Candidate of Sciences (Economics)*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics,  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** As a rule, the primary spheres and areas of application of the unreported sales turnover in different nations with specifics to a given nation have several similarities with respect to the characteristics of the shadow economy, objective difficulties of the state regulation and other factors. With this regard, the

possibly precise identification of those areas of unreported sales turnover is stressed, since the reduction of the size of the unreported turnover and possible areas of application are of prime importance to stabilizing the macroeconomic situation, increasing the level of state revenues collected, neutralizing the possible impact of thereof on the socioeconomic stance.

*Keywords: Shadow economy, unreported sales turnover, unreported spheres and areas, state regulation, macroeconomic stance, impact of unreported sales turnover.*

## **ՎԱՐԴԵՍԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ*

## **ԱՐԹՈՒՐ ՈԱՖԻԿԻ ԹԱՄԱՉՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ*

# **ՍՏՎԵՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Տնտեսության թաքնված հատվածը հիմնախնդիր է տնտեսության պաշտոնական հատվածում բարեխղճորեն գործող ձեռնարկությունների և մարդկանց համար, հատկապես ծախսերի կրճատման և պետության կողմից պահանջվող կարգերին ու հրահանգներին չհետևելու միջոցով անարդար և անբարեխիղճ մրցակցային պայմանների ստեղծման առումով: Մտվերային տնտեսությունը նպաստում է նաև պետական բյուջեի եկամուտների թերհավաքագրմանը, որը ստիպում է կառավարությանն իրականացնել հարկային բեռի բարձրացում, ինչն իր հերթին շղթայապես անդրադառնում է տնտեսության պաշտոնական հատվածում օրինական գործող տնտեսավարող սուբյեկտների վրա ու ստիպում նրանց անցնել «ստվերի» տակ՝ խուսափելով հարկային պարտավորություններից կամ դրանց մի մասից: Այս առումով պետությունը պետք է վարի չափազանց հաշվեկշռված և հեռանկարային հարկային քաղաքականություն:

Ընդհանուր առմամբ, մեր կարծիքով, հիմնախնդրի օրենսդրափրավական տեսանկյունից գոյություն ունի ստվերային տնտեսության հիմնահարցի լուծման չորս հիմնական տարբերակ, այն է.

1. թույլատրել, որ օրենքները նախկինի պես խախտվեն (անգործության տարբերակ),

2. ստիպել, որպեսզի տնտեսավարողներն իրենց գործողությունները համապատասխանեցնեն օրենքներին ու նորմատիվ մյուս ակտերի պահանջներին՝ կիրառելով նաև այդ գործընթացի նկատմամբ վերահսկողության բոլոր հնարավոր գործիքները,

3. վերանայել օրենքներով նախատեսված «խիստ» պահանջները բարեխիղճ սուբյեկտների պաշտպանվածության մակարդակի բարձրացման նպատակով,

4. նպատակամետ ներագրման միջոցով փոփոխել և կատարելագործել այն գործոնների շարքը և դրանց ազդեցությունը, որոնք շահադրդում

են մարդկանց օրենքները խախտելու վարքագիծ ունենալու հարցում: Այս կապակցությամբ ստեղծված իրավիճակն էլ ուղղակիորեն թելադրում է ստվերային տնտեսության դեմ պայքարի ռազմավարության հիմնական բովանդակությունը, որը, մեր կարծիքով, պետք է կայանա հետևյալում:

1. Ստվերային տնտեսությունն ընդհանուր առմամբ մեծ չարիք է հասարակության համար, սակայն զարգացման ներկայիս փուլում այն ունի նաև որոշ դրական կողմեր, ինչը չի կարելի անտեսել դրա դեմ մղվող պայքարում:

2. Ստվերային տնտեսության ծավալների կրճատումը հնարավոր է և պետք է իրականացվի աստիճանաբար՝ դրա հետևանքով եկամտի միակ և քրեորեն հետապնդելի աղբյուրից գրկված սուբյեկտներին աշխատանքով և օրինական եկամուտներ ստանալու աղբյուրներով ապահովելու կամ դրանց ձևավորման հնարավորությունների ստեղծման պայմանով:

3. Ստվերային տնտեսության դեմ պայքարի արդյունքում օրինական և թափանցիկ գործունեության դաշտ տեղափոխված անձանց եկամուտները պետք է բավարարեն՝ նորմալ և սպառողական իրական զամբյուղի արժեքից ոչ ցածր մակարդակի կենսակերպ ապահովելու համար:

4. Այս պայքարը պետք է հանգեցնի հասարակության շերտավորման կառուցվածքում միջին խավի տեսակարար կշռի գերազանցմանը (ըստ եկամուտների և ծախսերի):

ՀՀ-ում հարկային հարաբերությունների կարգավորման առումով նշանակալի քայլ հանդիսացավ 2016 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից հարկային օրենսգրքի ընդունումը, որն ուժի մեջ մտավ և սկսեց գործել 2018 թվականի հունվարի 1-ից: Հարկային տվյալ օրենսգրքի ընդունումը ստվերային շրջանառության դեմ պայքարի համատեքստում, ըստ էության, լուծում է տվել բազմաթիվ օրենսդրական խնդիրների, որոնք նախկինում ստվերային տնտեսության ընդլայնման խթաններ էին, քանի որ օրենքներով չկարգավորված հարցերը կամ թերի կարգավորումները բնականաբար լայնորեն օգտագործվում էին ստվերային տնտեսության գործիչների կողմից՝ հարկերի վճարումից խուսափելու կամ եկամուտները թերհայտարարագրելու նպատակով: Ուստի, հարկային օրենսգրքի ընդունման ամենամեծ արժանիքներից մեկը կարելի է համարել հատկապես հարկային վարչարարության գրեթե բոլոր հարցերին օրենսդրական պատշաճ լուծումներ տալու հանգամանքը: Մրանից ելնելով, կարծում ենք, կարելի է փաստել, որ հարկային վարչարարության հետ կապված ստվերային շրջանառության առաջացման ռիսկերը՝ օրենսդրական ձևակերպումների մասով, ըստ էության, չեզոքացված են, և այս մասով ստվերայնության առաջացում կամ ընդլայնում

կարող է տեղի ունենալ միայն կոռուպցիոն ռիսկերի ի հայտ գալու և հարկային օրենսգրքի պահանջները հետևողականորեն չկիրառելու հետևանքով:

Այդուհանդերձ, հարկային օրենսգիրքը գերծ չէ նաև որոշ թերություններից, որոնց կանդրադառնանք այն մասով, որը կապված է սովետային տնտեսության համար մոտիվացիաներ պարունակելու, հիմնարար հասկացությունների հստակեցման և հարկային քաղաքականության կատարելագործման որոշակի միջոցառումների հետ:

1. Չնայած այն հանգամանքին, որ ժամանակի ընթացքում հարկման հատուկ կամ այլընտրանքային համակարգերը հետզհետե նեղանում են (իսկ ևս մեկ քայլ այս ուղղությամբ կատարվեց նաև հարկային օրենսգրքի ընդունմամբ), այնուամենայնիվ ՀՀ-ում այս հարկատեսակների քանակը բավականին մեծ է, ինչն էլ օբյեկտիվորեն խոչընդոտում է հարկման մեկ միասնական համակարգի ձևավորման գործընթացը: Բնչ վերաբերում է այս համակարգերով հարկման ենթակա գործունեության տեսակների քանակին, ապա դրանք բավականին շատ են և ընդգրկում են գրեթե ամբողջ փոքր և մասամբ էլ միջին բիզնեսի ոլորտը: Մտվերայնության տեսանկյունից հարկման հատուկ համակարգերի հանրահայտ թերությունն այն է, որ այս համակարգերը, որպես կանոն, հաշվի չեն առնում կազմակերպությունների կողմից իրականացվող տնտեսական գործունեության արդյունքները, կամ էլ հարկային դրույթաչափը կիրառվում է դրանց ընդհանուր շրջանառության նկատմամբ՝ պարունակելով կրկնահաշվարկներ և այնպիսի ծախսեր, որոնք հարկման ընդհանուր համակարգի կիրառման պայմաններում չէին ներառվի նրանց հարկման բազա: Արդյունքում հարկման հատուկ համակարգով աշխատող սուբյեկտների կողմից պետական կամ համայնքային բյուջե վճարվող հարկերի գումարները զգալիորեն տարբերվում են այն պոտենցիալ գումարներից, որոնք կվճարվեին բյուջե՝ հարկման ընդհանուր համակարգի պայմաններում, ընդ որում՝ այդ գումարների միջև առկա տարբերությունը՝ կախված հարկման ելակետային տվյալների (ցուցանիշների), հարկման համար հիմք հանդիսացող շրջանառության նվազագույն կամ առավելագույն շեմերի հիմնավորվածության մակարդակից և այլ գործոններից, կարող է լինել ինչպես բյուջեների, այնպես էլ կազմակերպությունների «օգտին», չնայած հարկման հատուկ համակարգերի կիրառման դեպքում այս տարբերությունը, որպես կանոն, լինում է տնտեսվարողների օգտին՝ բյուջետային եկամուտների թերհավաքագրման հաշվին: Հետևաբար, հարկման հատուկ համակարգերի կիրառության արդյունքում տնտեսական գործունեության փաստացի արդյունքներով վճարման ենթակա գումարներից

բյուջետային եկամուտների թերհավաքագրված մասը կարելի է բնորոշել որպես «օրինական ստվերային եկամուտներ» այդ համակարգով աշխատող կազմակերպությունների համար, և որը, ըստ էության, հարկային արտոնության տարատեսակ է:

Հասկանալի է նաև, որ նկարագրված վիճակը ոչ թե կանխամտածված ձևավորված համակարգ է, այլ պայմանավորված է զարգացող երկրներին բնորոշ առանձնահատկություններով և պետական կարգավորման համակարգի թերություններով, բիզնեսի կազմակերպման և կառավարման փորձի պակասով և օբյեկտիվ մի շարք այլ հանգամանքներով, որոնք թույլ չեն տալիս լիարժեք կիրառել հարկման ընդհանուր համակարգը: Այդուհանդերձ, որպես հարկային քաղաքականության ռազմավարական ուղղություն, անհրաժեշտ է հնարավորինս շուտ ձեռքագատվել այդ հանգամանքներից և աստիճանաբար (բայց նույնպես՝ հնարավորինս շուտ) անցում կատարել միասնական հարկման ընդհանուր համակարգին, որի արդյունքում էլ հնարավոր կլինի վերացնել մեր բնորոշմամբ «օրինական ստվերային տնտեսության» այս հատվածը: Մյուս կողմից, հարկ է նաև նկատի ունենալ, որ այս ռազմավարության գործնական կիրառության արդյունքում փոքր և միջին բիզնեսի վրա այս փոփոխության բացասական ազդեցության չեզոքացման առումով անհրաժեշտ է ապահովել մի շարք այլ պայմաններ ևս, մասնավորապես արտադրության և շրջանառության համատարած և պարտադիր փաստաթղթավորման ապահովումը, հարկային վարչարարության բնագավառում խտրական մոտեցումների և կոռուպցիայի վերացումը, մրցակցային առողջ միջավայրի ապահովումը և այլն, որոնց ուղղությամբ պետական համապատասխան քաղաքականությունը նույնպես բարելավման և կատարելագործման կարիք ունի: Այսինքն, կարելի է փաստել նաև, որ հարկային միասնական ընդհանուր համակարգին անցումը համալիր պետական քաղաքականության, այլ ոչ միայն հարկային քաղաքականության արդյունք պետք է հանդիսանա, ինչն էլ, մեր կարծիքով, էականորեն դանդաղեցնում է այս գործընթացը:

2. Հարկային քաղաքականության և ստվերային տնտեսության միջև անմիջական կապի առումով Հայաստանում ամենակատելի հանգամանքներից մեկը հարկային արտոնությունների տեսակների ու ծավալների մեծ շրջանակն է, որի սահմանման նպատակը ոչ միայն անցումային փուլում տնտեսվարողներին «շեշելու» հնարավորության տրամադրումն է, այլև նրանց կողմից ներդրումային ակտիվության մակարդակի բարձրացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը և այլն, ինչը ստվերային տնտեսության կրճատման հետ համեմատած պակաս կարևոր չէ

պետության համար: Բնականաբար, հետապնդելով նշված նպատակները, պետք է ընդունել, որ սահմանված արտոնությունները կարող են օգտագործվել ոչ միայն այդ նպատակների իրականացման, այլև ստվերային շրջանառության ձևավորման կամ այդ շրջանառություններն ավելացնելու նպատակով: Հետևաբար, հարկային արտոնությունների տրամադրումը հիմնավորված կարելի է համարել միայն այն պարագայում, երբ դրանց տրամադրումը հանգեցնում է նոր ներդրումների ներգրավման, նոր աշխատատեղերի ստեղծման և ի վերջո՝ մի քանի տարի հետո ՀՆԱ-ի ավելացման: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ տարիներ շարունակ ՀՀ-ում հիմնական հարկերի մասով սահմանվել և կիրառվել են հարկային արտոնությունների բազմաթիվ տեսակներ, որոնք, ըստ էության, անփոփոխ տեղափոխվեցին նաև հարկային օրենսգիրք և շարունակում են գործել: Դրամական արտահայտությամբ այդ արտոնությունների հանրագումարային մեծությունը կամ պետության հարկային ծախսերի մակարդակը (որը պաշտոնապես հաշվարկվում է որպես գործող հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտներ կամ այդ եկամուտների չափով պետության կրած այլընտրանքային ծախսեր) ՀՀ ֆինանսների նախարարության տվյալներով 2018 թվականին միայն երեք հարկատեսակների գծով պետք է կազմի մոտ 395,5 մլրդ դրամ, իսկ 2016-2017 թվականներին նշված հարկատեսակների մասով հարկային ծախսերի ընդհանուր գումարները համապատասխանաբար կազմել են 340,3 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 6.99 տոկոսը և 381,5 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 7.0 տոկոսը (տե՛ս ստորև բերվող աղյուսակը):

Անշուշտ, հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով բյուջետային եկամուտների կորուստը բավականաչափ մեծ ծավալ է կազմում հատկապես ֆինանսական սուղ հնարավորությունների պայմաններում և, ըստ էության, կարող է արդարացված լինել միայն հարկային արտոնությունների տրամադրման արդյունքում ստացվելիք համարժեք օգուտների ապահովման պարագայում:

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

**Հարկային ծախսերի գնահատականը ՀՀ-ում  
2018 թվականին (մլրդ դրամ)**

|     | Հարկային ծախսերի տեսակը          | Հարկային ծախսերի չափը | Տեսակարար կշիռը հարկային եկամուտների մեջ, % | Տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, % |
|-----|----------------------------------|-----------------------|---|------------------------------|
| 1.  | ԱԱՀ-ի գծով, այդ թվում՝           | 314,118               | 25.19                                       | 5.37                         |
| 1.1 | գյուղատնտեսություն               | 27,553                | 2.21  | 0.47                         |
| 1.2 | առողջապահություն                 | 35,914                | 2.88  | 0.61                         |
| 1.3 | կրթություն                       | 24,984                | 2.00  | 0.43                         |
| 1.4 | ֆինանսներ և ապահովագրություն     | 35,462                | 2.84  | 0.61                         |
| 1.5 | ԱԱՀ-ի շեմ                        | 38,094                | 3.05  | 0.65                         |
| 1.6 | այլ արտոնություններ              | 152,112               | 12.20                                       | 2.60                         |
| 2.  | Շահութահարկի գծով, այդ թվում՝    | 21,842                | 1.75  | 0.37                         |
| 2.1 | գյուղատնտեսություն               | 2,795                 | 0.22  | 0.05                         |
| 2.2 | ԱԱՀ-ի շեմ                        | 19,047                | 1.53  | 0.33                         |
| 3.  | Եկամտային հարկի գծով՝ այդ թվում՝ | 59,530                | 4.77  | 1.02                         |
| 3.1 | գյուղատնտեսություն               | 59,530                | 4.77  | 1.02                         |
|     | <b>Ընդամենը</b>                  | <b>395,490</b>        | <b>31.72</b>                                | <b>6.76</b>                  |

Տվյալ պատկերը ձևավորվել է հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականության այն ուղղության շնորհիվ, ըստ որի՝ երկարաժամկետ հատվածում կայուն հարկային բազա ստեղծելու նպատակով շարունակաբար հարկային և մաքսային որոշակի արտոնություններ են տրամադրվում տնտեսության իրական հատվածի այն տնտեսվարողներին, որոնք ունեն զարգացման լուրջ ներուժ և միաժամանակ ձեռնարկությունների տեխնիկական ու տեխնոլոգիական վերազինման կարիք: Մեր կարծիքով ևս տնտեսական քաղաքականության տվյալ ուղղությունը շատ կարևոր է նույնիսկ բնակչության սոցիալական ոչ այնքան բարվոր իրավիճակի պայմաններում, քանի որ դրա հաջող իրականացումը թույլ կտա ապագայում զգալիորեն և շարունակաբար բարձրացնել բնակչության սոցիալական ապահովության և սոցիալական պաշտպանվածության մակարդակը:

Մյուս կողմից, կարծում ենք, հատկապես խորհրդարանական կառավարման անցման համատեքստում, կարևոր է նաև տրամադրված հարկային, մաքսային և մյուս արտոնությունների արդյունքների ու դրանց արդյունավետության պարբերաբար գնահատման (իսկ հնարավորության

դեպքում՝ մշտադիտարկման) գործընթացի իրականացումը (ինչը մինչ այժմ երբևէ չի իրականացվել), որի կապակցությամբ առաջիկա տարվա ընթացքում նպատակահարմար կլինեն հատուկ ուսումնասիրություններ կատարել՝ պարզելու համար, թե ամենատարբեր արտոնությունների տրամադրման հետևանքով փաստացի ինչ օգուտներ է ստացել պետությունը, որ տիպի հարկային արտոնությունների տրամադրումն է եղել արդարացված, ինչպես են ազդել այդ արտոնությունները տնտեսական աճի և տնտեսության ճյուղային կառուցվածքի վրա և այլն, ինչն էլ թույլ կտա փաստարկված ճշգրտումներ մտցնել հարկային քաղաքականության այս կարևոր հատվածում:

Նշված գործընթացի կարևորությունն ու դերն ընդգծելու նպատակով, կարծում ենք, բավական է նշել, որ վերջին տարիներին հանրապետությունում իրականացվող ներդրումների գծով հիմնականում արձանագրվում են ոչ թե դրանց մակարդակի բարձրացման, այլ ընդհակառակը՝ նվազման միտումներ: Մասնավորապես ՀՀ ֆինանսների նախարարության տվյալներով 2018 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշի աճը կանխատեսվել է ընդամենը 0.2 տոկոս և պետք է կազմի ՀՆԱ-ի 18.4 տոկոսը՝ 2017 թվականի 18.2 տոկոսի դիմաց: Ընդ որում, առաջիկա տարվա այս ցուցանիշը զիջում է 2014 թվականի մակարդակին 2.5 տոկոսային կետով, ինչն էլ վկայում է՝ ներդրումների մակարդակի նվազման մասին: Հետևաբար՝ ելնելով վերը նշվածից, անհրաժեշտ է հատուկ ուսումնասիրություններ կատարել սահմանված հարկային արտոնությունների կիրառման արդյունավետության գնահատման տեսանկյունից, ընդ որում՝ ըստ առանձին հարկատեսակների և դրանց մասով՝ ըստ առանձին արտոնությունների, և աստիճանաբար վերացնել բոլոր այն հարկային արտոնությունները, որոնք տնտեսական կամ բյուջետային դրական էֆեկտ չեն արձանագրում վերջին 5-10 տարիների ընթացքում:

3. Ներկայումս սովորաբար շրջանառության ավելացման ամենամեծ տնտեսական մոտիվացիան, մեր կարծիքով, եկամտային հարկի դրույքաչափերն են: Հարկային օրենսգրքի ընդունմամբ եկամտային հարկի դրույքաչափերը ոչ միայն որոշ չափով բարձրացվեցին, այլև ավելի խորացվեց այդ դրույքաչափերի պրոգրեսիվության մակարդակը: Այսպես, եթե մինչև հարկային օրենսգրքի ընդունումը մինչև 120 հազ. դրամ եկամտի դեպքում գանձվում էր դրա 24.4 տոկոսը, 120 հազարից մինչև 2.0 մլն դրամը՝ 29.280 դրամին զումարած 120 հազարը գերազանցող գու-

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

մարի 26 տոկոսը, իսկ 2.0 մլն դրամից ավելի եկամտի դեպքում՝ 518.080 դրամին գումարած 2.0 մլն դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը, ապա հարկային օրենսգրքով սահմանվեց, որ մինչև 150 հազ. դրամ եկամտի դեպքում զանձվում է դրա 23.0 տոկոսը (այսինքն՝ չնչին նվազեցում տեղի ունեցավ), 150 հազարից մինչև 2.0 մլն դրամը՝ 34.500 դրամ՝ գումարած 150.000 դրամը գերազանցող գումարի 28 տոկոսը, իսկ 2.0 մլն դրամից ավելի եկամտի դեպքում՝ 552.500 դրամ՝ գումարած 2.0 մլն. դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը: Մա նշանակում է, որ խորացվեց եկամտային հարկի պրոգրեսիվության մակարդակը՝ ավելացնելով միջին եկամուտներ ունեցողների հարկային բեռը, որն արդեն իսկ սովերային եկամուտների վճարման և չգրանցված աշխատողներ պահելու առումով էականորեն կարող է խթանել գործատուների սովերային շրջանառության ավելացման շահադրդվածությունը: Մակայն, խնդիրը միայն սրանով չի սահմանափակվում. ինչպես նախկինում, այնպես էլ հարկային օրենսգրքի ընդունմամբ Հայաստանում գործել է շահութահարկի մեկ միասնական 20 տոկոս դրույքաչափի, որի հետ եկամտային հարկի պրոգրեսիվ և բարձր դրույքաչափերի համադրման արդյունքում ձեռնարկատերերը միանշանակ շահագրգռված են լինում էականորեն ցածր սահմանել աշխատողների պաշտոնական աշխատավարձերը, իսկ իրական և պաշտոնական աշխատավարձերի տարբերությունը վճարել կանխիկ (այսպես կոչված՝ «ծրարով», ինչն էլ հենց աշխատավարձի սովերային մասն է): Արդյունքում սովերայնության միայն այս մասով ավելանում է կազմակերպության հարկվող շահույթի բազան, որն էլ, ի տարբերություն եկամտային հարկի 23, 28 կամ 36 տոկոսի, հարկվում է շահութահարկի 20 տոկոս դրույքաչափով՝ նվազեցնելով ոչ միայն գործարարի հարկային բեռը, այլև պետական բյուջեի փաստացի եկամուտները: Ընդ որում, այս սխեմայով տեղի է ունենում սովերայնության նվազագույն աճը, թեև գործնականում բազմաթիվ գործատուներ այն համատեղում են նաև հարկային վճարումները նվազեցնող այլ սխեմաների հետ:

Մեր կարծիքով տվյալ խնդրի լուծումը բավականին պարզ ու հասկանալի է. անհրաժեշտ է տրամագծորեն փոխել եկամտային հարկի դրույքաչափերի սահմանման քաղաքականությունը և անցում կատարել եկամտային հարկի մեկ միասնական 20 տոկոս դրույքաչափի, որն էլ, նույնը լինելով շահութահարկի դրույքաչափի հետ, սկզբունքորեն կվերացնի սովերային աշխատավարձերի վճարման և հարկերից խուսափելու տնտեսական մոտիվացիան: Այսինքն, միասնական 20 տոկոս եկամտային հարկի և միասնական 20 տոկոս շահութահարկի պայմաններում գոր-

ծառուի համար որևէ տարբերություն չի լինի, թե իր կողմից վճարվող եկամուտները, որ հարկատեսակով կհարկվեն՝ եկամտային հարկով, թե՛ շահութահարկով, քանի որ երկու դեպքում էլ նույն չափի հարկային բեռ է ձևավորվում, իսկ հակառակ կողմից՝ տարբերությունը բավականին ակնհայտ է. ստվերային եկամուտներ վճարելու դեպքում մշտապես առկա է լինում բացահայտվելու և խոշոր տուգանքներ վճարելու (ընդհուպ մինչև քրեական պատասխանատվության ենթարկվելը) ռիսկը, հարկային մարմինների հետ «լեզու գտնելու» դժվարությունները և հավելյալ ծախսերի կատարումը, ինչպես նաև դրանց հետ կապված քրեական պատասխանատվության ենթարկվելու ռիսկը (արդեն կաշառք տալու հիմքով) և այլն:

Բնականաբար եկամտային հարկի միասնական 20 տոկոս դրույքաչափին անցումը բավականին կտրուկ բայլ է, որի արդյունքում առաջիկա մի քանի տարիներին բյուջետային եկամուտների զգալի կորուստներ կարձանագրվեն: Մակայն այդ բուֆերային ժամանակաշրջանն անցնելուց հետո սկզբունքորեն կլուծվի ստվերային տնտեսության ամենանշանակալի տնտեսական մոտիվացիաներից մեկի վերացման սկզբունքային խնդիրը, իսկ պակասող բյուջետային եկամուտների հարցը կարող է լուծվել այլ (ընդհուպ մինչև արտաքին աղբյուրներից վարկային գումարների ներգրավման) միջոցով:

4. Հարկային օրենսգիրքը գործողության մեջ մտնելուց հետո՝ 4 տարիների ընթացքում (այսինքն՝ 2018-2022 թվականներին), նախատեսվել է կտրուկ բարձրացնել այնպիսի ապրանքների ակցիզային հարկի դրույքաչափերը, ինչպիսիք են՝ ծխախոտը (մինչև 44 տոկոս), սպիրտային խմիչքները (մինչև 110 տոկոս), վիսկի, ռոմ և այլ սպիրտային թրմեր (մինչև 100 տոկոս), քսայուղերը (10 տոկոսից 2018թ. հունվարի 1-ից սահմանելով միանգամից 50 տոկոս), բենզինը (գործող՝ 1 տոննայի համար 25.000 դրամից 2018թ. հունվարի 1-ից դարձնելով 1 տոննայի համար 40.000 դրամ, այսինքն՝ մեծացնելով 37.5 տոկոսով), սեղմված բնական գազը (գործող՝ 1000 խոր. մ.-ի համար 8.330 դրամից 2018թ. հունվարի 1-ից կիրառելով 25.000 դրամ, այսինքն՝ ավելացնելով 300 տոկոսով) և այլն, ինչը, բնականաբար, կտրուկ բարձրացնելու է այդ ապրանքների գները: Ֆիսկալ նպատակներով հարկային բեռի նման բարձրացումները, ինչպես արդեն նշել ենք, ինքնին ստվերային շրջանառության ավելացման ուղղակի գործոն են, որի հետևանքները, կարծում ենք, մոտ ապագայում իրենց զգալ կտան՝ կեղծ կամ անորակ ապրանքների շրջանառության ծավալների մեծացումից մինչև հարկման օբյեկտների քողարկում: Այս առումով, եթե նույնիսկ համարենք, որ ծխախոտի կամ ալկոհոլային խմիչքների ակցիզային հարկերի բարձրացման արդյունքում դրանց գների աճը կարող է բերել նաև

որոշակի դրական հետևանքների (հակաժխախտության և ավտոհոլիզմի դեմ պայքարի տեսքով), ապա քայլերի, բենզինի, սեղմված գազի և բազային մյուս ապրանքների կտրուկ թանկացումը ոչ միայն գների, այլև տնտեսության ստվերայնության շղթայական աճի անխուսափելի գործոն կդառնա, ուստի, կարծում ենք, անհրաժեշտ է կամ հրաժարվել այս մոտեցումից և թեկուզ աստիճանաբար, բայց նվազեցնել բազային ապրանքների ակցիզային հարկերը, կամ էլ բնակչության եկամուտները բարձրացնել այնքան, որ հնարավոր լինի սպառել գոնե նշված ապրանքների որակյալ (իրենց թանկ գների համապատասխանող) տեսակները՝ հնարավորինս քիչ տեղ թողնելով ստվերային կամ ստուգատ ապրանքների շրջանառության համար:

5. Ստվերային տնտեսության կրճատման առումով կարևոր է նաև հստակեցնել հարկային օրենսգրքի երկու սկզբունքներ, որոնց սահմանումները բավականին մեկնաբանելի են և որևէ պարտավորեցնող դեր չեն խաղում ՀՀ հարկային համակարգի ձևավորման տեսանկյունից: Մասնավորապես.

ա) հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով ՀՀ-ում գործող միասնական հարկային համակարգի սկզբունք է ամրագրվել «մրցունակությունը», ըստ որի. «...հարկային համակարգը պետք է ներդրումների ներգրավման և նպաստավոր գործարար միջավայրի ձևավորման տեսակետից լինի մրցունակ»: Առաջին հայացքից սահմանվածը բավականին «գրավիչ» սկզբունք է, սակայն խնդիրն այն է, որ այս սկզբունքն արդեն իսկ խախտված է, և ՀՀ հարկային համակարգն էլ չի համապատասխանում դրան, իսկ այս սկզբունքի վերլուծությունը և մեկնաբանությունը որոշ հարցերի տեղիք են տալիս: Այսպես, մրցունակությունը ենթադրում է որոշակի մրցակցային առավելությունների առկայություն այլ երկրների հարկային համակարգերի համեմատությամբ, որոնք առաջին հերթին դրսևորվում են հարկային համեմատաբար ցածր դրույքաչափերի և հարկման փոքր բազայի սահմանման մեջ կամ գոնե հիմնական գործընկեր երկրների հետ պարունակում են համահավասար դրույքաչափեր և հարկման պայմաններ: Այնինչ, եթե համեմատենք ՀՀ և թեկուզ Ռուսաստանի Դաշնության հիմնական հարկատեսակների գծով հարկային դրույքաչափերը (օրինակ՝ ՀՀ-ում եկամտային հարկի պրոգրեսիվ՝ 23, 28 և 36 տոկոս դրույքաչափերի փոխարեն ՌԴ-ում գործում է միասնական 13 տոկոս դրույքաչափ, ԱԱՀ-ի մասով համապատասխանաբար՝ 20 տոկոս և 18 տոկոս դրույքաչափեր և այլն), ապա ակնհայտ է, որ ՀՀ հարկային համակարգը մրցունակության որևէ հատկանիշ չի պարունակում, իսկ սահմանված սկզբունքն էլ զուտ դեկլարատիվ բնույթ է կրում:

բ) Հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի մյուս՝ 14-րդ կետով ՀՀ-ում գործող միասնական հարկային համակարգի սկզբունք է ամրագրվել «արդյունավետությունը», ըստ որի՝ հարկային համակարգը պետք է հնարավորություն ընձեռի, որ հարկ վճարողների մոտ հաշվառումը, իսկ հարկային մարմինների մոտ՝ հարկային հսկողությունն իրականացվեն հնարավորինս փոքր ռեսուրսներով»: Մեր կարծիքով, «հարկային համակարգի արդյունավետություն» հասկացության մեկնաբանությունը, այսպիսով, խիստ նեղացված է և որպես դրա հիմնական չափորոշիչ է դիտարկված նվազագույն ռեսուրսներով (հետևաբար՝ նաև ծախսերով) հարկային վարչարարության և հարկային հաշվառման իրականացումը: Մինչդեռ ներկայացված մեկնաբանություննից դուրս է մնացել այն հիմնական արդյունքը՝ հավաքագրվող պետական եկամուտների մակարդակի աճը, որը պետք է հանդիսանա հարկային համակարգի գործունեության զլխավոր նպատակը, և հենց այս նպատակին հասնելն էլ, նշված ծախսատարության ցածր մակարդակի հետ, կդառնա հարկային համակարգի արդյունավետության գնահատման իրական չափորոշիչը: Վերջինս, ի տարբերություն սահմանվածի, արդեն կարտացոլի սովերային տնտեսության թեկուզ ոչ 100-տոկոսանոց, բայց կրճատման փաստը, որով էլ կարելի է պարբերաբար գնահատել ՀՀ հարկային մարմինների գործունեությունը սովերային շրջանառության կրճատման առումով: Հետևաբար, առաջարկում ենք տվյալ սկզբունքը սահմանել հետևյալ խմբագրությամբ. «...հարկային համակարգը պետք է հնարավորություն ընձեռի, որ հարկ վճարողների մոտ հաշվառումը, իսկ հարկային մարմինների մոտ՝ հարկային հսկողությունը իրականացվեն հնարավորինս փոքր ռեսուրսներով՝ ապահովելով հարկային եկամուտների հավաքագրման հնարավոր առավելագույն մակարդակ»:

6. Սովերային շրջանառության դեմ պայքարի համատեքստում կարևոր ենք համարում վերանայել հարկային օրենսգրքի ևս մեկ դրույթ, որը, մեր կարծիքով, ակնհայտ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում և գործնականում հնարավորություն է տալիս տնտեսվարողներին և հարկային մարմինների ծառայողներին «փոխշահավետության» սկզբունքի հիման վրա համաձայնության գալու և թաքցնելու հարկերի որոշ մասը: Մասնավորապես հարկային օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով հարկային մարմնի ղեկավարին իրավասություն է վերապահվում, անկախ օրենսգրքում նշված պայմանների առկայությունից, երրորդ անձանցից (այդ թվում՝ պետական մարմիններից) ստացված կամ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա հարկային մարմնի սահմանած կարգով կազմակեր-

պություններին և (կամ) ֆիզիկական անձանց համարել փոխկապակցված՝ դրանից բխող, այդ թվում՝ լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջադրելու հետևանքներով: Մեր կարծիքով սովյալ մոտեցումն ակնհայտ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում՝ հարկային մարմնին իր համար «խաղի կանոններ» սահմանելու հնարավորություն տալու և իր իրավասությունների հայեցողական կիրառման տեսանկյունից: Հետևաբար՝ առաջարկում ենք վերանայել առաջարկվող մոտեցումը և կազմակերպություններին և (կամ) ֆիզիկական անձանց փոխկապակցված համարելու ամբողջ գործընթացը կանոնակարգել հարկային օրենսգրքով, կամ էլ, հակառակ դեպքում՝ նշված կարգի սահմանման լիազորությունը վերապահել գոնե ՀՀ կառավարությանը:

7. Ինչպես արդեն նշել ենք, ժամանակակից պայմաններում բավականին արագ զարգանում է ինտերնետ տիրույթում ստեղծված և ստեղծվող էլեկտրոնային հարթակների միջոցով իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը, որի մի զգալի մասը, ըստ էության, դուրս է մնում հանրապետության հարկային, մաքսային և վիճակագրական մարմինների վերահսկողության դաշտից: Այս կապակցությամբ 2016 թվականի հունիսի 17-ին «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում կատարվեցին որոշակի լրացումներ, ինչը մասամբ լուծեց նշված խնդիրը, բայց իր ամբողջության մեջ այն դեռևս մնում է հրատապ: Մասնավորապես հիշյալ լրացմամբ այս օրենքում ավելացվեց նոր՝ 4.1-րդ գլուխը, որով կանոնակարգվում են էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցներով իրականացվող առևտրի և (կամ) մատուցվող ծառայությունների հետ կապված հարաբերությունները: Տվյալ գլխի 15.1.-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է «Ֆիզիկական անձինք էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով, որպես ձեռնարկատիրական գործունեություն, ապրանքների վաճառք կարող են իրականացնել միայն որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված լինելու և էլեկտրոնային եղանակով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի առկայության դեպքում: Այն դեպքում, երբ ֆիզիկական անձինք էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով վաճառում են անձնական գույքն ու իրերը, ապա էլեկտրոնային առևտրային հարթակում նախատեսվում է առանձին բաժին (ենթաբաժին)՝ անձնական գույքին վերաբերող գործարքները տարբերակելու համար»: Այստեղից ակնհայտ է, որ նշված դրույթը վերաբերում է բացառապես ֆիզիկական անձանց և չի տարածվում իրավաբանական անձանց վրա, ինչն արդեն իսկ վերջիններիս համար հսկայական դաշտ է ապահովում՝ սովերային առևտուր իրականացնելու և ծառայություններ մատուցելու համար, ինչպես նաև խոսքը միայն ՀՀ տարածքում

ձևավորված էլեկտրոնային հարթակներում առևտուր իրականացնողների գրանցման մասին է: Մտվերային շրջանառության տեսանկյունից խնդիրն այն է, որ օտարերկրյա պետությունների տարածքում ձևավորված էլեկտրոնային հարթակները նույնպես հասանելի են ՀՀ սուբյեկտների համար, և այդ հարթակներում գրանցված ու ՀՀ տարածքում առևտուր իրականացնող կամ ծառայություններ մատուցող սուբյեկտները որևէ հարկային պարտավորություն չեն ստանձնում և իրականացնում, այսինքն՝ միանգամայն դուրս են մնում հարկային մարմինների վերահսկողությունից (օրինակ՝ «Yandex», «GG» տաքսի ծառայությունները, բազմաթիվ օնլայն-կազմակերպություններ, օնլայն-խանութներ և այլն): Այս կապակցությամբ առաջարկում ենք հիմնովին լրամշակել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 4.1-րդ գլուխը, ինչպես նաև համապատասխան կարգավորումներ ներառել նաև ՀՀ հարկային օրենսգրքում և սահմանել.

ա) անկախ էլեկտրոնային հարթակի գրանցման վայրից, ՀՀ տարածքում էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտները պարտավոր են ՀՀ-ում գրանցվել որպես ձեռնարկատիրության սուբյեկտներ,

բ) այդ սուբյեկտների կողմից ապրանքների իրացման և ծառայությունների մատուցման վայր է ՀՀ տարածքը, եթե ապրանքի պատվիրումը կամ ծառայության համար պատվերը տրվել է ՀՀ տարածքից (IP հասցեներից), իսկ այս դեպքում, բնականաբար, տվյալ սուբյեկտների համար կառաջանան օրենքով սահմանված հարկային պարտավորություններ,

գ) այն դեպքում, երբ հնարավոր չի լինի նույնականացնել ծառայություն մատուցող կամ ապրանքներ առաջարկող սուբյեկտին, ապա օրենքի ուժով արգելափակել նրա ծառայությունների և ապրանքների իրացման նպատակով օգտագործվող հաղորդակցության միջոցներին ինտերնետային հասանելիությունը: Նշենք նաև, որ չնայած այս գործընթացը բավականին բարդ է ու ծախսատար, պահանջում է տեխնիկական և տեխնոլոգիական նոր լուծումներ մշակել, սակայն անհրաժեշտ է և անհրաժեշտ է լինելու ոչ միայն ստվերային շրջանառությունների կրճատման, այլև ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից, ուստի այս ուղղությամբ աշխատանքների իրականացումը, կարծում ենք, այլընտրանք չունի: Մյուս կողմից էլ, կարծում ենք, կարելի է նաև սահմանել նորմ, ըստ որի՝ ծառայություն մատուցող կամ ապրանքներ առաջարկող սուբյեկտի նույնականացման անհնարինության դեպքում ձեռնարկատիրության սուբյեկտ դիտարկել և հարկել այն էլեկտրոնային հարթակները կամ վեբ-կայքերը, որոնք կտեղադրեն համապատասխան հայտարարություններ, գովազդային նյութեր կամ որևէ կերպ ՀՀ ռեզիդենտներին հա-

ասնելի կդարձնեն չգրանցված սուբյեկտի ապրանքների իրացման կամ ծառայությունների մատուցման գործընթացը:

8. Ստվերային շրջանառության ընդլայնման գործիքներից մեկն էլ, ինչպես արդեն նշել ենք, ամբողջ տարվա ընթացքում տարատեսակ գեղչերի և ակցիաների իրականացումն է, ինչը նույնպես առաջարկում ենք կանտնակարգել օրենքներով կամ կառավարության որոշումներով: Մասնավորապես առաջարկում ենք սահմանել նորմ, ըստ որի՝ տնտեսվարողները, մինչև գեղչերի կիրառումը, պարտավորվեն իրենց սպասարկման հարկային մարմինն տրամադրել հստակ տեղեկատվություն սահմանվող գեղչերի և դրանց կիրառման ժամանակահատվածի վերաբերյալ, ինչն էլ հարկային մարմինները կօգտագործեն համապատասխան ստուգումների կամ խրոնոմետրաժի ընթացքում նրանց տնտեսական շրջանառության իրական ծավալների ու հարկային պարտավորությունների հստակեցման նպատակով:

Ինչպես կարելի է նկատել, վերևում ներկայացվեցին այն ընդհանրական և որոշակի առաջարկությունները, որոնք կապված են ստվերային շրջանառության դեմ պայքարի օրենսդրական հիմնախնդիրների լուծման հետ, որոնք ծավալային ու համեմատական առումով այնքան էլ մեծ չեն: Ներկայումս, մեր կարծիքով, ստվերային տնտեսության դեմ պայքարն ավելի շատ պետք է տարվի արդեն իսկ համալրված և բարելավված օրենսդրական դաշտի կիրառման, բոլոր տնտեսվարողների նկատմամբ հարկային ու մաքսային վարչարարության համահավասար իրականացման և պետական վերահսկողության համատարած կիրառման ուղղությամբ՝ բացառելով Հայաստանի Հանրապետությունում «արտոնյալ» տնտեսվարող սուբյեկտների գոյությունը:

**ՍՏԿԵՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ  
ՕՐԵՆՍՂՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

**ՎԼԱԴԻՍԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ՉԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ*

**ԱՐԹՈՒՐ ՌԱՖԻԿՎԻ ԹԱՍԱԶՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու  
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ*

**Համառոտագիր:** Ստվերային շրջանառության կրճատման առաջնային ուղղությունը, բնականաբար, համապատասխան օրենսդրության մշակումն ու ընդունումն է, ինչպես նաև դրա լիարժեք և անվերապահ կատարման նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը: Վերջինս իր հերթին սերտորեն առնչվում է երկրում կոռուպցիայի հաղթահարման հիմնախնդրին, ուստի ստվերային տնտեսության կրճատման և հակակոռուպցիոն ռազմավարության զուգահեռաբար և համակցված իրականացումն էլ երկրում ստվերային շրջանառությունների կրճատման հիմնական երաշխիքն է: Հողվածում անդրադարձ է կատարվում տվյալ զլոբալ հիմնախնդրի առաջին՝ ստվերային տնտեսության կրճատման օրենսդրական դաշտի կատարելագործմանը:

*Բանալի բառեր. ստվերային շրջանառություն, հարկեր, հարկային արտոնություն, հարկային օրենսգիրք, հարկային ծախսեր, էլեկտրոնային առևտուր:*

**ПОДХОДЫ И МЕРЫ УЛУЧШЕНИЯ ЗАКОНОДАТЕЛЬНОГО ПОЛЯ В  
ЦЕЛЯХ СОКРАЩЕНИЯ ТЕНЕВОГО ОБОРОТА В РА**

**ВЛАДИМИР ЛИПАРИТОВИЧ АРУТЮНЯН, д.э.н., профессор,**

*член-корр. ИАН РА*

*директор Института экономики им. М. Котаняна НАН РА,*

**АРТУР РАФИКОВИЧ ТАМАЗЯН, к.э.н.,**

*старший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА*

**Аннотация:** Тенденцией к снижению теневой экономики, естественно, является разработка и принятие соответствующих законов и осуществление государственного контроля за ее полным и безоговорочным исполнением. Последнее, в свою очередь, тесно связано с проблемой преодоления корруп-

ции в стране, поэтому сочетание сокращения теневой экономики и осуществление комплексной и устойчивой антикоррупционной стратегии представляет собой основную гарантию сокращения теневой экономики в стране.

В данной статье рассматривается проблема о совершенствовании законодательного поля в целях сокращения теневой экономики.

*Ключевые слова: теневой оборот, налоги, налоговые привилегии, налоговое законодательство, налоговые затраты, электронная торговля.*

## APPROACHES TO AND MEASURES FOR LEGISLATION CHANGES TO REDUCE THE SIZE OF UNREPORTED SALES TURNOVER

**VLADIMIR LIPARIT HARUTYUNYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor Director, M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciences, Republic of Armenia Corresponding Member, National Academy of Sciences, Republic of Armenia*

**ARTUR RAFIK TAMAZYAN**, *Candidate of Sciences (Economics) Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The main approach to reducing the size of unreported sales turnover, in general, is the drafting and adoption of the corresponding legislation and execution of the state control over the complete and unconditional law enforcement. The latter one, in its turn, is associated with addressing the issue of corruption; hence, the main guarantee for reducing the size of the unreported sales turnover is the simultaneous and combined and/or joint implementation of corruption fighting and shadow economy size reduction strategies. The article addresses this global issue by discussing the respective legislative changes to improve the current legislation.

**Keywords:** *Unreported sales turnover, taxes, tax incentive, tax code, tax cost, E-commerce.*

**ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ  
ԱԼՑՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Շուկայական տնտեսության պայմաններում մենաշնորհների հայտնվելը և տնտեսության մենաշնորհացումն անցանկալի երևույթներ են, որոնք պահանջում են պետական կարգավորում: Ներկայումս տնտեսապես զարգացած բոլոր երկրներում իրականացվում է մրցակցության և մենաշնորհների իրավական կարգավորում՝ նպատակ ունենալով մեղմել կամ վերացնել մենաշնորհների առաջացրած տնտեսական և սոցիալական հետևանքները: Պետությունները տարբեր օրենքներ են ընդունել մենաշնորհների գործունեության բացասական հետևանքները կանխելու նպատակով, ընդհուպ՝ մինչև զնի սահմանված վերին սահմանը խախտելու համար դատական պատասխանատվության ենթարկելը:

Պատմականորեն մրցակցության պետական կարգավորման պահանջը դրսևորվել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Եվրոպայում խոշոր ֆիրմաները ստանում էին պետական պատվերներ, իսկ փոքր ու միջին ձեռնարկությունները կազմալուծվում էին: Այդ շրջանում ձևավորվեց տնտեսությանը պետական միջամտությունը հիմնավորող գլխավոր տեսությունը՝ րեյնսյան տնտեսագիտությունը, որի առանցքային դրույթն այն էր, որ շուկան չի կարող ինքնակարգավորվել, մակրոտնտեսական անկայունությունը և տնտեսական ճգնաժամերը շուկային բնորոշ քրոնիկ միտումներ են: Ուստի անհրաժեշտ են կարգավորման կոշտ և ուղղակի մեթոդներ՝ սկսած շուկայի համակենտրոնացվածության աստիճանի վերլուծությունից մինչև ընկերությունների միաձուլումների արգելումը:

Կոշտ հակամենաշնորհային կարգավորման և առաջատար ընկերությունների վերակազմավորման անհրաժեշտությունը հիմնավորող տեսությունների կողմից շուկայի կենտրոնացվածության աճի և մրցակցության բացակայության միջև կապը հաստատվում էր «Կառուցվածք-վարքագիծ-արդյունք» հայեցակարգով, ըստ որի՝ ֆիրմաների վարքագծի և տնտեսության ճյուղերի արդյունավետության ցուցանիշների միջև առկա են սերտ պատճառահետևանքային կապեր, որոնք, հաշվի առնելով տեսությունները, առաջարկում էին շուկայի կառուցվածքի վրա ազդեցության միջոցով բարելավել համապատասխան ճյուղի արդյունավետության ցու-

ցանիշները՝ ռեսուրսների վերաբաշխման արդյունավետությունը, արտադրանքի շահութաբերությունը, տեխնիկական առաջընթացը և այլն:

Հակամենաշնորհային կարգավորման տեսությունն ամրապնդվեց հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ գերակայում էր տնտեսական ճգնաժամի հետևանքների և տնտեսության վրա ռազմական բեռի հաղթահարման պահանջը<sup>1</sup>:

XX դարի 70-ական թվականներից արդեն բազմաթիվ տնտեսագետներ պնդում էին, որ տնտեսական հարաբերություններին պետք չէ պետության միջամտությունը: Մրցակցային պայքարը նպաստում է առկա գիտելիքների կիրառմանը և նորարարությունների զարգացմանը, որն իր հերթին նպաստում է շուկայում մրցակցային առավելությունների ձեռքբերմանը:

Հակամենաշնորհային կարգավորման նկատմամբ նման այլընտրանքային մոտեցման հիմնական գաղափարախոսությունն այն էր, որ կատարյալ մրցակցության իրավիճակի՝ որպես էտալոն դիտարկումը նվազեցնում է պետական կարգավորման արդյունավետությունը՝ սահմանափակելով այնպիսի ֆիրմաների գործունեությունը, որոնք նպաստում են իրական շուկաներում մրցակցության զարգացմանը, ինչը հակասում է սպառողների և հասարակության շահերին: Մրցակցության աջակցման քաղաքականությունն ավելի ընդգրկուն հասկացություն է, քան հակամենաշնորհային կարգավորումը:

Գլոբալացման պայմաններում անհրաժեշտ է պահպանել շուկայի հավասարակշռությունն ու արտադրական հզորությունը, որը պետք է համապատասխանեցվի արտասահմանյան մրցակիցների հզորության մակարդակին: Երկարաժամկետ հեռանկարում արդյունավետ քաղաքականությունը պետք է հանգեցնի մրցունակության/արտադրողականության աճին՝ խթանելով ներդրումների հոսքը և նորարարական գործունեությունը<sup>2</sup>:

Ամփոփելով գիտական գրականությունը՝ կարող ենք առանձնացնել պետության կողմից «մրցակցություն-մենաշնորհ» հարաբերությունների կարգավորման երկու առանցքային մոտեցում, որոնց սկզբունքային տարբերությունների հիման վրա ստորև առանձնացրել ենք կարգավորման երկու ուղղությունների՝ հակամենաշնորհային և մրցակցության պաշտպանության քաղաքականությունների, համակարգային ամփոփ բնութագրերը (աղյուսակ 1):

<sup>1</sup> К.А. Писенко. Развитие антимонопольного права: Монография. – М.: РУДН, 2010. – с. 126-195.

<sup>2</sup> Porter Michael E. On Competition. – Boston MA: Harvard Business School, 1998, p.432.

**Հակամենաշնորհային և մրցակցության պաշտպանության քաղաքականությունների համեմատական բնութագրիչները**

| Հ/Հ | Համեմատական բնութագրիչներ  | Հակամենաշնորհային քաղաքականություն  | Մրցակցության պաշտպանության քաղաքականություն  |
|-----|--|---|--|
| 1.  | Մրցակցություն-մենաշնորհ հարաբերությունների և արդյունավետության նկատմամբ համակարգային մոտեցումը | «Ավանդական» հայեցակարգ. կատարյալ մրցակցության պայմանները շուկայի արդյունավետության ապահովման չափանիշներն են: Մրցակցությունն անհամատեղելի է մենաշնորհի հետ | «Ավանդական» հայեցակարգի արդիականացում. մենաշնորհ արդյունավետության ապահովման կարևոր տարրերից է, որի ակտիվացման շնորհիվ ստեղծվում են ժամանակավոր նորարարական առավելություններ |
| 2.  | Մրցակցության էության ընկալումը և մրցակցային գործընթացների հետևանքները                          | Մրցակցությունն ուղղված է շուկայական իշխանության ձեռքբերմանը: Արդյունքում հարստությունը բաշխվում և վերաբաշխվում է  | Մրցակցությունն ուղղված է նոր արժեքների (և ուր շուկաների) ստեղծմանը: Արդյունքում ստեղծվում է նոր հարստություն   |
| 3.  | Մրցակցության պետական կարգավորման կարգախոսը   | Կատարյալ մրցակցության պայմաններից շեղումը հանգեցնում է մենաշնորհացման և արդյունավետության իջեցման   | Կատարյալ մրցակցության պայմաններից շեղումը բացասական ազդեցություն չունի հասարակության բարեկեցության վրա   |
| 4.  | Մրցակցային քաղաքականության նպատակը   | Ապահովել հարստության արդար բաշխումը՝ հասարակական բարեկեցությունն ապահովելու նպատակով  | Ապահովել ներդրումների և նորարարությունների աճը, որը կբերի հասարակության բարեկեցության և մրցունակության աճին  |
| 5.  | Մրցակցային քաղաքականության հիմնական միջոցառումները   | Գերակշռում են հակամենաշնորհային միջոցառումները  | Գերակշռում են մրցակցության պաշտպանության քաղաքականության հիմնական տարրերը  |
| 6.  | Մրցակցային քաղաքականության մեթոդներն ու գործիքները   | Մենաշնորհի դիրք ունեցող ընկերությունների վերակազմավորում, խախտումների կարգավորման՝ per se սկզբունք  | Իրավախախտումների կարգավորման per se սկզբունքի սահմանափակում, «խոհեմություն» ծրագրերի տեղայնացում   |
| 7.  | Շուկայի կամ մրցակցային միջավայրի վերլուծությունը   | Մտատիկ մոտեցում: Կենտրոնում շուկայի կառուցվածքն է, շուկայի մասնակիցները և նրանց մասնաբաժինները  | Դինամիկ մոտեցում: Կենտրոնում շուկայի սուբյեկտների վարքագիծն է և դրա ազդեցության գնահատումը   |

Ընդհանուր առմամբ, համեմատելով հակամենաշնորհային (ներկայումս, բացի ԱՄՆ-ից, մոդելը կիրառող երկրներից են նաև Արգենտինան,

Կանադան, Ճապոնիան) և մրցակցության պաշտպանության քաղաքականությունները (Եվրամիության անդամ-պետություններից բացի, մոդելը կիրառող երկրներից են նաև Ավստրալիան, Նոր Զելանդիան) և դրանց միջև առկա հիմնարար տարբերությունները, կարող ենք փաստել, որ աշխարհում այսօր գործում է համեմատաբար լիբերալ հակամենաշնորհային օրենսդրություն: Այսինքն՝ մրցակցության պետական կարգավորման ժամանակ առաջին հերթին շեշտը դրվում է ոչ թե ներքին շուկայում արտադրողների գործունեության նկատմամբ հսկողության սահմանման, այլ համաշխարհային շուկայում ազգային ընկերությունների զբաղեցրած դիրքերի ընդլայնմանն ուղղված պետական աջակցության վրա:

Միևնույն ժամանակ նշենք, որ ներկայումս հակամենաշնորհային օրենսդրությունների և քաղաքականությունների զարգացումը տեղի է ունենում ամերիկյան և արևմտաեվրոպական մոդելների մերձեցման միջոցով, ինչպես այն երկրներում, որոնք ընդունել են հակամենաշնորհային օրենսդրության այս կամ այն մոդելը, այնպես էլ այդ երկու մոդելները համատեղող երկրներում: Աշխարհում չկա մի երկիր, որը, չունենալով հստակ հակամենաշնորհային օրենսդրություն և դա իրականացնող ինքնուրույն ու անկախ մարմին, ունեցել է լուրջ հաջողություններ տնտեսական զարգացման հարցում:

Եվ չնայած այսօր բոլոր երկրներն էլ ունեն հստակ հակամենաշնորհային օրենսդրություն և դա իրականացնող ինքնուրույն ու անկախ մարմիններ, որոշ երկրներում մրցակցության կարգավորման հարցերում առկա են լուրջ խնդիրներ: Խոսքը վերաբերում է հատկապես անցումային տնտեսությամբ երկրներին, այդ թվում՝ ՀՀ-ին, որտեղ, ի տարբերություն զարգացած երկրների, որոնք կարողացել են ընտրել իրենց երկրին հատուկ կարգավորման արդյունավետ մոդելներ, առկա են որոշակի հակասություններ:

Ի տարբերություն արևմտյան երկրների, որտեղ նախ՝ առաջացել և զարգացում են ապրել շուկայական մենաշնորհները, այնուհետև դրվել են դրանց գործունեության կարգավորման հիմքերը, անցումային տնտեսությամբ երկրներում հենց սկզբից՝ XX դարի 90-ական թվականներից սկսած, երբ ընդունվեցին այդ երկրների ազգային հակամենաշնորհային օրենսդրությունները, շեշտը դրվեց հակամենաշնորհային կարգավորման վրա՝ շուկայական մենաշնորհների և մրցակցության բացակայության պայմաններում: Այդ պատճառով այսօր անցումային տնտեսությամբ բոլոր երկրներում հակամենաշնորհային օրենսդրության գործնական կիրառումը բավականին բարդ է, քանի որ այս երկրներում հիմնականում

պետք է գործ ունենալ ոչ թե մրցակցության պաշտպանության, այլ մրցակցային հարաբերությունների վերստեղծման հետ:

Անցումային շրջան ապրող երկրներում շուկայական տնտեսության ձևավորումը շարունակում է բախվել առանձնահատուկ բնույթի մենաշնորհների հետ: Այդ մենաշնորհները ձևավորվել են ոչ շուկայական միջավայրում և իրենց կազմավորման գործընթացով զգալիորեն տարբերվում են մրցակցային միջավայրում արտադրության կենտրոնացման արդյունքում ձևավորված մենաշնորհային կառուցվածքներից<sup>1</sup>:

Բացի վերը նշված հակասություններից, անցումային տնտեսությամբ երկրներին, այդ թվում՝ ՀՀ-ին, բնորոշ են նաև մի շարք թերություններ, որոնք թույլ չեն տալիս լիարժեքորեն իրականացնել մրցակցային արդյունավետ քաղաքականություն: Դրանց շարքում են դասվում.

1. իրավական համակարգը և օրենքների վատ կատարումը, որոնք անցումային տնտեսությամբ շատ երկրներում դեռևս չեն համապատասխանում բաց շուկայական տնտեսության և ազատ ժողովրդավարական հասարակության սկզբունքներին: Բացի այդ, իրավական ակտերն առանձին լոբբիստական և բիզնես խմբերի ճնշմամբ կամ քաղաքական խաղերի արդյունքում բազմաթիվ փոփոխությունների են ենթարկվում ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր մարմինների նախաձեռնությամբ,
2. ենթակառուցվածքների թերզարգացածությունը և տնտեսության մենաշնորհացումը,
3. անազնիվ մրցակցությունը կամ շուկա մուտք գործելու արգելքները, որոնք խաթարում են մրցակցության զարգացումը,
4. հարկային և մաքսային վարչարարությունը, հարկատուների նկատմամբ կամայական մոտեցումները, որոնք չեն նպաստում մրցակցային միջավայրի կայացմանը,
5. ստվերային տնտեսությունը և հարկերի վճարումից խուսափելու տարածված պրակտիկան,
6. կոռուպցիոն համակարգի համատարած երևույթները, որոնք մրցակցության խաթարման և մենաշնորհային գործունեության խրախուսման համար «բարենպաստ» դաշտ են ստեղծում:

Չնայած վերը նշված թերություններին՝ անցումային տնտեսությամբ բոլոր երկրները փորձում են պայմաններ ստեղծել տնտեսության և արտադրության տարբեր ճյուղերի զարգացման համար՝ կիրառելով իրենց կողմից ընդունված հակամենաշնորհային օրենսդրությունը: Այստեղ

<sup>1</sup> Ա. Մարկոսյան, Մ. Մկրտումյան, Բնական մենաշնորհների պետական կարգավորումը, Եր., 2002թ., էջ.4:

հարկ է նշել, որ յուրաքանչյուր երկրի համար շատ կարևոր է կարգավորման արդյունավետ ուղղության ընտրությունը, քանի որ հակամենաշնորհային օրենսդրությունն ու դա իրականացնող պետական մարմինների գործունեությունն ունեն շուկայում բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորման հարցում որոշիչ դեր, ուստի միայն ճիշտ ընտրված օրենսդրությունն ու այն իրագործող մարմինների խելամիտ գործունեությունը կարող են նպաստել տնտեսության առաջընթացին:

Կարգավորման արդյունավետ մոդելի ընտրության խնդիրը կարևորվում է հատկապես սակավառեսուրս փոքր երկրների համար, որոնցից ուրույն մոտեցում է պահանջվում առաջադրվող խնդիրների լուծման համար: Մրանից հետևում է, որ երկրները պետք է հստակ պատկերացում ունենան, թե որ տնտեսական քաղաքականության որ մոդելն ավելի արդյունավետ կլինի տնտեսության համար: Մրցակցության և մենաշնորհների կարգավորման պետական քաղաքականություն մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկրի պատմական, տնտեսական և քաղաքական առանձնահատկությունները<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա այստեղ մենաշնորհներն առաջացել են նախ՝ շուկայական հարաբերությունների ձևավորման և ոչ թե հասունության փուլում, իսկ դրանց առաջացման հիմքում մեծամասամբ ընկած են ոչ թե տնտեսական, այլ արհեստական գործոններ: Այսինքն՝ հանրապետությունում գործող բազմաթիվ ընկերությունների մենաշնորհային դիրքը պայմանավորված է ոչ թե տնտեսական առավելություններով, այլ վարչական լծակների գործադրման համակարգով: Հայաստանում կենտրոնացման գործընթացները երբևէ չեն կանոնակարգվել տնտեսական քաղաքականության՝ հատկապես հակամենաշնորհային գործիքներով, ինչի հետևանքով ձևավորվել է կլանային համակարգ<sup>2</sup>:

ՀՀ-ում գործող մենաշնորհները երբևէ չեն առանձնացել գիտատեխնիկական և նորարարական մշակումներով, բարձր տեխնոլոգիաների ներդրմամբ: Ավելին, դրանց առկայությունն ու հակամրցակցային գործունեությունն ըստ ամենայնի արգելակել են երկրի գիտատեխնիկական

---

<sup>1</sup> Մ. Միքայելյան, Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (ատենախոսություն), Եր., 2005թ., էջ 6:

<sup>2</sup> Աշոտ Մարկոսյան, Հայաստանի Հանրապետության տնտեսության դիվերսիֆիկացման հիմնախնդիրները, «Մոնիալական մոտեցումներ Հայաստանի մարտահրավերներին. զրոբայ հեռանկարներ. տեղական իրողություններ (խորհրդածոթովի նյութեր)», Երևան, 2010, էջ 156:

և նորարարական ներուժի իրացումն ու աշխատանքի արտադրողակա-  
նության աճը<sup>1</sup>:

Ներկայումս տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում տնտեսական,  
վարչական և օրենսդրական բարեփոխումների կարիք կա: Մակայն,  
անկախ այդ բարեփոխումներից, ներկայումս առավել կարևոր է երկրում  
ձևավորված մենաշնորհների, հատկապես ոչ բնական կամ ոչ մրցակցա-  
յին գործընթացների ճանապարհով ներմուծման ոլորտում ձևավորված  
մենաշնորհների խնդրի լուծումը: Բարեփոխումներն առաջին հերթին  
պետք է ուղղվեն հենց այդպիսի մենաշնորհների կարգավորմանը և  
սահմանափակմանը:

Մրցակցային օրենսդրությունը պետք է տարբերակված մոտեցում  
ցուցաբերի տնտեսության տարբեր ճյուղերին՝ կախված դրանց՝ պետու-  
թյան համար ունեցած նշանակությունից:

Ընդհանուր առմամբ, կարծում ենք, որ արտահանող և ներկրող մե-  
նաշնորհների նկատմամբ վարվող քաղաքականությունը պետք է տար-  
բերակված լինի, իսկ մրցակցային հարաբերությունների զարգացման  
համար պետք է ստեղծվեն և կիրառվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք  
թույլ կտան հարթել ստեղծված սոցիալ-տնտեսական լարվածությունը և  
բարձրացնել երկրի մրցունակությունը միջազգային շուկաներում:

**ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆ  
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

**ԳԱՅԱՆԵ ՍԱՅԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ**  
*ՀՊՏՀ ասպիրանտ*

**Համառոտագիր:** Հոդվածում քննարկվել են մենաշնորհների/մրցակ-  
ցության պետական կարգավորման հիմնական ուղղությունները, դրանց  
բնորոշիչ առանձնահատկությունները և անցումային տնտեսությամբ  
երկրներում կարգավորման արդյունավետ ուղղության ընտրության հիմ-  
նախնդիրը: Հոդվածում քննարկվել են նաև Հայաստանում մենաշնորհ-  
ների ձևավորման առանձնահատկությունները և դրանց կարգավորման  
մոտեցումները: Հոդվածում քննարկվել են ինչպես տեսական, այնպես էլ  
գործնական հարցեր:

<sup>1</sup> Առում Մարգարյան, Ազգային նորամուծային համակարգը. Զարգացման մարտա-  
հրավերների համատեքստում, «ՎԷՄ», 2009 հուլիս-սեպտեմբեր, թիվ 2, էջ 99:

*Բանալի բառեր. մրցակցություն, մենաշնորհ, հակամենաշնորհային և մրցակցության պաշտպանության պետական քաղաքականություններ, անցումային տնտեսությամբ երկրներ, կարգավորման արդյունավետ մոդել:*

## НАПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ КОНКУРЕНЦИИ И ПРОБЛЕМА ИХ ВЫБОРА В СТРАНАХ С ПЕРЕХОДНОЙ ЭКОНОМИКОЙ

ГАЯНЕ СААКОВНА АВETИСЯН

*аспирант АГЭУ*

**Аннотация:** В статье обсуждались основные направления государственного регулирования монополий/конкуренции, их характерные особенности и проблема выбора эффективного направления регулирования в странах с переходной экономикой. В статье также обсуждались особенности формирования монополии в Армении и подходы к их регулированию. В статье обсуждены как теоретические, так и практические вопросы.

*Ключевые слова: конкуренция, монополия, антимонопольная политика и государственная политика защиты конкуренции, страны с переходной экономикой, эффективная модель регулирования.*

## THE DIRECTIONS OF THE STATE REGULATION OF COMPETITION AND THE ISSUE OF THE CHOICE OF THEREOF IN TRANSITION ECONOMIES

GAYANE SAHAK AVETISYAN

*Ph.D. Student, Armenian State University of Economics*

**Abstract:** The article discusses the main directions of the state regulation of monopolies/competition, the characteristic features of thereof, and the issues of choosing the effective direction of regulation in transition economies. The article discusses the specifics of creating monopolies in Armenia and approaches to regulating thereof, as well. Both theoretical and practical issues have been discussed in the article.

*Keywords: Competition, monopoly, anti-monopoly and competition protection policies, countries with transitional economy, effective model of regulation.*

**ՍՈՒՄԱՆ ԱՔԿԱՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ**, *տ.գ.թ., դրոցենտ*

*Շուշիի տեխնոլոգիական համալսարանի*

*էկոնոմիկայի և կառավարման ամբիոն*

**ԻՐԻՆԱ ԱՐՄԵՆԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ**

*Շուշիի տեխնոլոգիական համալսարանի*

*էկոնոմիկայի և կառավարման ամբիոնի դասախոս*

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱԽԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Արցախի Հանրապետությունում (ԱՀ) ֆինանսական զարգացած շուկա ստեղծելու համար պետք է առանձնահատուկ ուշադրություն հատկացվի արժեթղթերի շուկայի ձևավորման գործընթացին: ԱՀ-ում արժեթղթերի շուկան ներկայումս կայացման փուլում է, և այժմ, առավել քան երբևէ, կարևորվում է ազատ ֆինանսական ռեսուրսների ներգրավման հարցը:

ԱՀ-ում շուկայական հարաբերությունների ձևավորման գործընթացը ստացել է անշրջելի բնույթ: Որպես շուկայական տնտեսության հիմնական բաղադրիչ հատկանշական է ԱՀ-ի արժեթղթերի շուկայի ձևավորման ու զարգացման փաստը:

Անկախացումից հետո ԱՀ-ում կատարված գործընթացների արդյունքում ձևավորվեց որոշակի տնտեսական համակարգ, որը ձևով շուկայական է, բայց իմաստային առումով նախկին պլանային տնտեսությունից բազմաթիվ տարբեր է պարունակում: Խրոհիդային ժամանակաշրջանի ու ներկայիս իրավիճակի տարբերությունն ընդամենն այն է, որ մասնավոր սեփականության ինստիտուտը մեզանում ամրագրված է օրենսդրությամբ, սակայն հիմնական դրամական հոսքերն անուղղակիորեն վերահսկում է պետությունը կամ պետական իշխանությունը ներկայացնող սուբյեկտները, ինչն էլ ստեղծում է անկայուն շուկայական մթնոլորտ:

Պետական համակարգում իրականացվող տնտեսական հարաբերությունները ձևավորում են ֆինանսական շուկա, որի հատվածներից է կապիտալի, արժութային, դրամական ու արժեթղթերի շուկան: Հատկապես վերջինս ֆինանսական շուկայի բաղկացուցիչ հատվածն է:

Զարգացած ֆինանսական շուկա ունեցող երկրներում արտադրության ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է արժեթղթերի շուկայի միջոցով, քանի որ բանկային համակարգի համեմատությամբ, մի-

ջոցների ներգրավումն այս եղանակով ավելի էժան և արդյունավետ աղբյուր է:

Վարչահրամայական համակարգի փլուզումից հետո Հայաստանի և Արցախի Հանրապետությունները տնտեսական բարեփոխումների ուղին ընտրած ԱՊՀ մյուս երկրների նման հայտնվեցին տնտեսության մեջ օբյեկտիվորեն առաջացած խնդիրների լուծման հրամայականի առջև: Շուկայական տնտեսության ձևավորումը դժվար և երկարաժամկետ փուլ է, որն ուղեկցվում է նոր արտադրահարաբերությունների ստեղծմամբ, հների վերացմամբ կամ նոր պայմաններին դրանց հարմարեցմամբ:

ԱՀ-ում հետանկախական փուլի սկզբնական շրջանում, բացի վերը նշվածներից, ավելացան նաև այլ դժվարություններ՝ պատերազմ, շրջափակումներ ու էներգետիկ ճգնաժամ:

Ցանկացած տնտեսություն ունի իր առանձնահատկությունները, որոնք բնորոշվում են այդ պետության և ժամանակաշրջանի սոցիալական գործոններով և տնտեսական կյանքի առանձնահատկություններով:

ԱՀ-ի անցումային տնտեսության առանձնահատկությունն այն է, որ աննախադեպ ոչ ավանդական եղանակով անցումը՝ պլանայինից շուկայական տնտեսության, և ԱՀ-ն բնականաբար տնտեսական դժվար և բարդ իրավիճակում է գտնվում, քանի որ վերջին տարիներին է անկախություն ձեռք բերել: Տարբեր պետությունների տարածքում գտնվող ձեռնարկությունների միջև տնտեսական կապերի խզումը, սպառման շուկաների կորուստը, շրջափակումն ու պատերազմական իրավիճակը, ինչպես նաև գների ազատականացումն ու բյուջեի ֆինանսական հնարավորությունների զգալի կրճատումը խիստ բացասաբար ազդեցին մակրոտնտեսական իրավիճակի վրա: ԱՀ-ի տնտեսությունը, ինչպես և նախկին միութենական մյուս հանրապետությունները, զարգանում էր վարչահրամայական կառավարման մեթոդների կիրառմամբ: Անհրաժեշտություն է առաջանում ձևավորել նոր, արդյունավետ տնտեսական քաղաքականություն: Սակայն մեր հանրապետությունում անցումային հիմնահարցերի լուծման համար չի կարելի հենվել որևէ փորձարկված կամ արդեն օգտագործված մոդելի վրա:

ԱՀ-ում շուկային անցման գլխավոր խնդիրները դարձան.

- պետական ձեռնարկությունների ապապետականացումը և սեփականաշնորհումը,
- շուկայական ենթակառուցվածքների և տնտեսական նոր կապերի ու համապատասխան մեխանիզմների ձևավորումը,

- տնտեսության ապամենաշնորհումը՝ որպես մրցակցության զարգացման և շուկայական հավասարակշռվածության հասնելու կարևոր նախապայման,
- գների ազատականացումը, պահանջարկին և առաջարկին համապատասխան գների ձևավորումը,
- սոցիալական պաշտպանվածության համակարգի ստեղծումը, որը կարող է թեթևացնել շուկայական տնտեսության պայմաններին բնակչության մի մասի հարմարեցման հոգսը,
- ակտիվ կառուցվածքային և ներդրումային քաղաքականության իրականացմամբ տնտեսության սոցիալական կողմնորոշվածության ուժեղացումը, որի շնորհիվ պետք է զարգանա սպառման ապրանքների ու ծառայությունների արտադրությունը, ինչպես նաև բարձրանա արտադրության ճկունության ընկալունակությունը, տեխնոլոգիական նորամուծությունների նկատմամբ:

Հաջորդ առանձնահատկությունն այն է, որ ԱՀ-ում ֆինանսական շուկայի կարևորագույն հատվածի արժեթղթերի շուկայի ձևավորումը սկսվեց տնտեսական ընդհանուր բարեփոխումների հետ, տնտեսական ու քաղաքական ոչ նպաստավոր պայմաններում: Բարեփոխումների ժամանակ արժեթղթերի շուկայի զարգացումը խոչընդոտում էին մի շարք գործոններ, որոնցից մեկն այն է, որ վարչափրամայական տնտեսությունում բացակայում էին արժեթղթերի թողարկումն ու շրջանառությունը՝ բացառելով արժեթղթերում ներդրողների գոյությունը:

ԱՀ-ի արժեթղթերի շուկայի կայացման և զարգացման առաջին կարևոր քայլերից է համարվում պետական ոլորտի մասնավորեցումը: Ընդհանուր առմամբ շուկայական տնտեսության անցման հիմնական ուղղությունը մասնավոր հատված ստեղծելն է:

ԱՀ-ում արժեթղթերի շուկայի ձևավորման հաջորդ կարևոր առանձնահատկություններից է մասնավորեցման մեխանիզմը, որն ունի մի շարք նպատակներ, դրանք են.

- ստեղծել արտադրական, կյութական ու դրամական միջոցների արդյունավետ օգտագործման համակարգ,
- զարգացնել մրցակցությունը,
- ապահովել ձեռնարկատիրական գործունեության,
- ներգրավել և խթանել օտարերկրյա ներդրումները:

ԱՀ-ի արժեթղթերի շուկայի ձևավորման համար մեծ դեր ունեցավ նաև պետական պարտքի արժեթղթավորումը: Տնտեսագիտական տեսանկյունից պետական արժեթղթերի միջոցով բյուջեի պակասուրդի ֆինանսավորումն ավելի արդյունավետ է, քան այդ նպատակով Արցախի

ԿԲ-ի կողմից վարկերի հատկացումը կառավարությանը: Այն խոչընդոտում է ԿԲ-ի կողմից իրականացվող քաղաքականությունը ֆինանսական շուկայում, ինչպես նաև վարկային շուկայի ձևավորումն ու փողի լրացուցիչ թողարկումը, որն էլ իր հերթին հանգեցնում է շրջանառության մեջ չապահովված փողի ավելացմանը և արժեզրկմանը:

Կայուն տնտեսություն ունենալու համար կարևոր առանձնահատկություններից էր նաև ՀՀ և ԱՀ միասնական ֆինանսական շուկայի ներդրումը: 1990-ականներից սկսած՝ ԼՂՀ և ՀՀ ֆինանսական շուկաները գործում են կարգավորման ու վերահսկողության միևնույն հարթության մեջ:

ԱՀ-ում ստեղծվեցին արդյունաբերական, շինարարական, նախագծային ընկերությունների մասնաճյուղեր, արտադրամասեր, կոոպերատիվներ, ինչպես նաև բացվեցին ՀՀ բանկերի մասնաճյուղեր: ՀՀ և ԱՀ տնտեսությունների միավորումը ոչ միայն հետապնդում էր քաղաքական նպատակներ, այլև ենթադրում էր ԱՀ-ի սոցիալ-տնտեսական արագ զարգացում:

Արժեթղթերի շուկայի կայացման առանձնահատկություններից է համարվում այն, որ ԱՊՀ բոլոր երկրների նման ՀՀ և ԱՀ իջխանությունները կանգնած էին արմատական տնտեսական բարեփոխումների իրականացման հիմնախնդրի առաջ:

Տնտեսության կայունացման հետ մեկտեղ դրական փոփոխություններ տեղի ունեցան ֆինանսական շուկայի, տնտեսության ճյուղերի փոխհարաբերությունների բնագավառում, շարունակվեց բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության մեխանիզմների կատարելագործման գործընթացը, որը մեծ ներդրում էր համակարգի բնականոն գործունեության ապահովման գործում:

Լինելով փակ տնտեսություն՝ միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը ԱՀ-ի տնտեսության վրա չուղեկցվեց անկումով, ինչպես այդ տեղի ունեցավ ՀՀ տնտեսության 2000-2013թթ. ընթացքում անվանական ՀՆԱ-ի տարեկան միջին աճը կազմել է մոտ 14%, այն էլ ապառողական զների ինդեքսի միջին տարեկան 4.8% աճի պայմաններում:

Այժմ Արցախի Հանրապետության իրավիճակը բնութագրելու համար ներկայացնենք ՀՆԱ-ի ցուցանիշը՝ ըստ ոլորտների 2008-2017թթ. կտրվածքով (տե՛ս աղյուսակ 1):

Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը ԼՂՀ-ում<sup>1</sup>


| Ցուցանիշները                                  | 2008    | 2009     | 2010     | 2011     | 2012     | 2013     | 2014     | 2015     | 2016     | 2017     |
|---|---------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|
| Անվանական չՆԱ (մլն դրամ)                      | 87148.1 | 102338.7 | 118187.2 | 135498.5 | 150015.7 | 168563.6 | 188840.3 | 209345.7 | 229651.6 | 272070.8 |
| ՉՆԱ-ի իրական աճը(%)                           | 14.3    | 13.1     | 5.5      | 9.1      | 9.9      | 9.3      | 8.9      | 9.1      | 9.2      | 15.6     |
| ՉՆԱ մեկ շնչի հաշվով (հազ. դրամ)               | 627.9   | 734.4    | 842.4    | 960.6    | 1023.0   | 1174.7   | 1308.7   | 1443.8   | 1577.3   | 1856.2   |
| Արդյունաբերության իրական աճ (%)               | 111.6   | 115.6    | 105.3    | 100.8    | 99.2     | 110.0    | 117.2    | 102.5    | 109.7    | 154.8    |
| Գյուղատնտեսության իրական աճ (%)               | 125.4   | 101.1    | 88.7     | 120.1    | 123.9    | 109.2    | 95.7     | 112.9    | 107.4    | 107.8    |
| Շինարարության աճ (%)                          | 124.2   | 133.5    | 124.0    | 101.4    | 87.4     | 118.1    | 111.7    | 101.0    | 91.0     | 103.2    |
| Պետական բյուջեի սեփական եկամուտներ (մլն դրամ) | 19911.7 | 21250.8  | 23807.5  | 25756.4  | 28755.6  | 27919.3  | 31485.4  | 34436.4  | 33711.1  | 41355.8  |
| Պետական բյուջեի ծախսեր (մլն դրամ)             | 50074.7 | 55098.5  | 62182.4  | 67377.0  | 67343.8  | 69623.2  | 78126.5  | 83107.7  | 84670.4  | 92098.6  |

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ 2017թ. ԱՀ-ում համախառն ներքին արդյունքը կազմել է 272.1 մլրդ դրամ՝ ապահովելով իրական աճի տեմպ 15.6 տոկոսի չափով: Մեկ շնչին ընկնող ՉՆԱ-ն կազմել է 1856.2 հազ. դրամ՝ 2016թ. 1577.3 հազ. դրամի դիմաց: Պետական բյուջեի եկամուտները 2017թ. կազմել են 41.4 մլրդ դրամ, որից հարկային եկամուտներն ու պետական տուրքերը կազմում են 39.8 մլրդ դրամ: 2017թ. պետական բյուջեն հաջողվել է կատարել առանց ծախսերի գծով ընթացիկ պարտքերի էական կուտակման: Բոլոր հիմնավորված պարտավորությունները, որոնք ստանձնել են պետական մարմինները, ֆինանսավորվել են համապատասխան չափերով: Պետական բյուջեով նախատեսված ծրագրերը հիմնականում իրականացվել են նախանշված ծավալներով՝ ապահովելով ակնկալվող արդյունքները: 2017թ. պետական բյուջեի ծախսերը կազմել են 92.1 մլրդ դրամ:

<sup>1</sup> stat-nkr.am

2008-2017թթ. ժամանակահատվածում արդյունաբերական արտադրանքի արտադրության միջին տարեկան աճը կազմեց շուրջ 17%: Չնայած ՀՆԱ-ի կառուցվածքում գյուղատնտեսական արտադրանքի մեծ ծավալներին՝ վերջինիս միջին տարեկան անվանական աճի տեմպը նշված ժամանակաընթացքում կազմել է 8%, ընդ որում՝ 2009թ. և 2014թ. տեղի է ունեցել գյուղատնտեսության ոլորտի անկում: Շինարարության ոլորտի միջին տարեկան անվանական աճը կազմել է 11%:


ԱՀ-ի ՀՆԱ-ի վերաբերյալ ավելի պարզ պատկերացում ունենալու համար կազմենք գծապատկեր 1-ը:



Գծապատկեր 1. ՀՆԱ-ի դինամիկան ԼՂ-ում 2000-2017թթ.<sup>1</sup>(%)

ԱՀ տնտեսության մեջ 2000-2017թթ. ժամանակահատվածում արձանագրվել է տնտեսական աճի միտում՝ միջին հաշվով տարեկան կազմելով շուրջ 11%: Տնտեսական բարեփոխումների և տնտեսության զարգացման արդյունքում տնտեսական աճի բարձր տեմպ է արձանագրվել 2002թ.: Այն նշանակում է կորագույն՝ առաջատար տեխնոլոգիաների ներդրում, ընկերությունների արտադրական կարողությունների տեխնիկական վերազինում ու կատարելագործում: Այդ հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ են ներդրումներ: Իսկ ԱՀ-ում զգալի է ներդրումների պակասությունը: Դրա հաղթահարումն անհնար է՝ առանց ներդրումների աճի և հատկապես ներքին ներդրումների հավաքագրման:

<sup>1</sup> «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական եռամսյակային զեկույցները, հունվար-դեկտեմբեր, 2000-2017թթ., ԼՂՀ ԱԿԾ:



**Գծապատկեր 2. Վարկային ներդրումների դինամիկան ԼՂՀ-ում 2001-2017թթ.<sup>1</sup> (մլն ՀՀ դրամ)**

Ցանկացած երկրի տնտեսական աճի ապահովման գործընթացում կարևոր նշանակություն ունեն վարկային ներդրումները (տե՛ս գծապատկեր 1):

Ըստ գծապատկեր 2-ի՝ 2001-2017թթ. ընթացքում ԱՀ տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալներն աճել են ավելի քան 95 անգամ: Մինչև 2005թ. տնտեսությանը տրամադրված վարկերի կառուցվածքում գերակշռել են արտարժույթով տրամադրված վարկերը: 2006թ.-ից սկսած՝ տեղի ունեցավ արտարժույթով տրամադրվող վարկերի ծավալների կտրուկ կրճատում, և միայն 2010 թ.-ից արտարժույթով տրամադրված վարկերի ծավալները կրկին գերազանցեցին դրամային վարկերի ծավալներին:

2008թ. Արցախի ներդրումային հիմնադրամը սկսեց իրականացնել փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցությանն ուղղված վարկերի տրամադրման դիմաց պահանջվող տոկոսադրույքների մի մասի պետության կողմից սուբսիդավորման ծրագիրը:

Ծրագրի գործարկման հինգ տարիների ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին գործակալ բանկերի կողմից տրամադրվել են շուրջ 19.0 մլրդ դրամ վարկեր, որի գերակշռող բաժինը ընկնում է «Արցախբանկ» ՓԲԸ-ին: 2014 թվականին հիմնադրամը փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտ-

<sup>1</sup> «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական եռամսյակային զեկույցները, հունվար-դեկտեմբեր, 2000-2017թթ., ԼՂՀ ԱՎԾ:

ներին հատկացված առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների սուբսիդավորման համար ծախսել է 562.5 մլն դրամ<sup>1</sup>:

Մինչև 2006թ. ՀՆԱ-ում վարկային ներդրումների տեսակարար կշիռը դրսևորել է ինչպես աճի, այնպես էլ նվազման միտում: Սկսած 2007թ. վարկային ներդրումների նկատելի աճ է արձանագրվել ԱՀ տնտեսության մեջ: Արդյունքում ՀՆԱ-ի աստիճանական աճի պայմաններում վերոնշյալ ցուցանիշը դրսևորել է աճի միտում:

Պաշտոնական աղբյուրները վկայում են ԱՀ-ի տնտեսության աճի մասին, սակայն այդպիսի աճը չի կարող երկար շարունակվել առանց տնտեսության կառուցվածքային փոփոխության:

Ներդրումների նկատմամբ երկրի տնտեսության իրական պահանջարկի ծավալի որոշումն առանձնակի դժվարություն է ներկայացնում, քանի որ չկան մոտավոր կողմնորոշիչներ, որոնք ցույց կտան, թե տնտեսության որ հատվածներում է կենսականորեն անհրաժեշտ ստեղծել նոր արտադրություններ և ընկերություններ:

Զարգացած երկրների ֆինանսական շուկայի փորձը ցույց է տալիս պետական արժեթղթերի շուկայի կարևորությունն ու նշանակությունը ֆինանսական համակարգի ձևավորման ու զարգացման գործում: Հետևաբար՝ ԱՀ-ում ֆինանսական զարգացած շուկա ստեղծելու համար պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել արժեթղթերի շուկայի ձևավորման գործընթացին:

ԱՀ-ում արժեթղթերի շուկայի զարգացումը պետք է սկսել պետական պարտատոմսերի շուկայից: Շուկայական տնտեսության պայմաններում յուրաքանչյուր պետության ֆինանսական կայունության աստիճանը որոշվում է նաև երկրի պետական բյուջեի եկամուտների ձևավորման իրավիճակով, պակասուրդի և պետական պարտքի մեծությամբ, որոնց վերաբերյալ տվյալները գետեղված են աղյուսակ 2-ում:

---

<sup>1</sup> «Արցախի ներդրումային հիմնադրամ» հաշվետվություն 2014թ. գործունեության՝ [www.aif.am](http://www.aif.am):

ԱՀ-ում ՀՆԱ-ի և պետական բյուջեի եկամուտների ու ծախսերի  
շարժվածությունը (2005–2017թթ.)<sup>1</sup>

| Ցուցանիշները   | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009  | 2010  | 2011  | 2012  | 2013  | 2014  | 2015  | 2016  | 2017  |
|--|------|------|------|------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|
| ՀՆԱ (ընդամենը մլրդ դրամ)   | 51,4 | 61,9 | 70,8 | 87,1 | 102,3 | 118,2 | 135,5 | 150,0 | 166,5 | 188,8 | 209,3 | 229,7 | 272,1 |
| ՀՆԱ-ի շարժը նախորդ տարվա համեմատ (%-ներով)                         | -    | 10,1 | 8,8  | 14,3 | 13,1  | 5,5   | 9,1   | 9,9   | 9,2   | 8,9   | 9,1   | 9,2   | 15,6  |
| Պետական բյուջեի եկամուտները (ընդամենը մլրդ դրամ)                   | 6,6  | 9,4  | 11,6 | 19,9 | 21,3  | 23,8  | 25,7  | 28,8  | 27,9  | 31,5  | 34,4  | 33,7  | 41,4  |
| Պետական բյուջեի եկամուտների շարժը նախորդ տարվա համեմատ (%-ներով)   | -    | 42,4 | 23,4 | 71,6 | 7,0   | 11,7  | 8,0   | 12,1  | -3,1  | 12,8  | 9,4   | -2,1  | 22,7  |
| Պետական բյուջեի ծախսերը (ընդամենը մլրդ դրամ)                       | 20,2 | 26,0 | 30,8 | 50,1 | 55,1  | 62,2  | 67,4  | 67,3  | 69,6  | 78,1  | 83,1  | 84,7  | 92,1  |
| Պետական բյուջեի ծախսերի շարժը նախորդ տարվա համեմատ (%-ներով)       | -    | 28,7 | 18,5 | 62,7 | 10,0  | 12,9  | 8,4   | -0,1  | 3,4   | 12,2  | 6,4   | 1,9   | 8,8   |
| Պետական բյուջեի պակասուրդը (ընդամենը մլրդ դրամ)                    | 13,7 | 16,6 | 19,2 | 30,2 | 33,8  | 38,4  | 41,6  | 38,6  | 41,7  | 46,6  | 48,7  | 51,0  | 50,7  |
| Պետական բյուջեի պակասուրդի շարժը նախորդ տարվա համեմատ (%-ներով)    | -    | 21,2 | 15,7 | 57,3 | 11,9  | 13,6  | 8,3   | -7,2  | 8,0   | 11,8  | 4,4   | 4,7   | -0,4  |
| Պետական բյուջեի պակասուրդի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի համեմատ (%-ներով) | 26,7 | 26,8 | 27,1 | 34,7 | 33,0  | 32,5  | 30,7  | 25,7  | 24,7  | 24,7  | 23,2  | 22,2  | 18,6  |

Աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ դրական տեղաշարժեր են կատարվել ԱՀ բյուջեի եկամուտների գծով: Բյուջեի պակասուրդը

<sup>1</sup> ԼՂԱԿԾ պաշտոնական կայք [www.stat-nkr.am](http://www.stat-nkr.am):

նույնպես ավելացել է: ԱՀ-ի պետական պակասուրդի կրճատման հիմնական աղբյուր են համարվում բյուջետային միջոցների տարեսկզբի մնացորդը, վարկերի վերադարձերից մուտքերը, ներքին և արտաքին այլ աղբյուրներ: Առաջատար երկրներում պետական բյուջեի պակասուրդի ծածկման հիմնական աղբյուրներից են պետության թողարկած արժեթղթերը (պարտատոմսերը):

Պետության կողմից արժեթղթերի թողարկումն ունի մի շարք առավելություններ լրացուցիչ ռեսուրսների ստացման մյուս աղբյուրների համեմատ: Բացի այդ, ԼՂՀ-ում կան նաև իրական նախադրյալներ: Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, տնային տնտեսությունների ազատ դրամական միջոցները 01.01.2018թ. դրությամբ կազմում են 53.3 մլրդ դրամ, իսկ ԱՀ պետական բյուջեի պակասուրդը՝ 50.7 մլրդ դրամ: Եթե այդ միջոցների գոնե կեսն (26.65 մլրդ դրամը) ուղղվի պետական պարտատոմսերի ձեռքբերմանը, արդյունքում բյուջեի պակասուրդը կկրճատվի ավելի քան երկու անգամ:

Ընդհանրապես զարգացած տնտեսությամբ երկրների պետական արժեթղթերի շուկայի հիմքում ընկած են գործառնական հետևյալ բաղկացուցիչ տարրերը.

- ժամանակավորապես ազատ դրամական միջոցների հավաքագրումը առևտրային բանկերից, տարբեր կազմակերպություններից, ձեռնարկություններից, ոչ բանկային ֆինանսավարկային հաստատություններից և բնակչությունից, որոնք հիմնականում ուղղվում են պետական բյուջեի պակասուրդի մարմանը,
- պետական արժեթղթերի օգտագործումը՝ որպես դրամավարկային հարաբերությունների կարգավորման գործիք,
- ֆինանսավարկային ինստիտուտների հաշվեկշիռների իրացվելիության ապահովումը՝ պետական արժեթղթերում ներդրված ներուժի արդյունավետ իրականացման հաշվին:

Արդի պայմաններում ՀՀ-ում և ԱՀ-ում տնտեսությունը կարիք ունի ներդրումների, քանի որ կայուն տնտեսական աճ ապահովելու համար դեռևս բանկային վարկերը բավարար չեն: Ուստի դրա կարգավորման համար անհրաժեշտ է ունենալ արտադրական գործընթացների ֆինանսավորման գործուն համակարգ, հատկապես զարգացած արժեթղթերի շուկա:

Ուսումնասիրությունները վկայում են, որ դեռևս 1990-ական թվականներից ՀՀ-ում և ԱՀ-ում գործում են փոքր և միջին կապիտալացմամբ ընկերություններ, որոնց ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է բանկային վարկերի և սեփական միջոցների հաշվին: Սակայն այդ

ընկերությունների որոշ մասն իրենց զարգացման ընթացքում առնչվել են բազմաթիվ հիմնախնդիրների՝ կապիտալի շուկա մուտք չունենալու հետևանքով, քանի որ չեն ապահովել տեղեկատվական թափանցիկություն ու չեն ձգտել մտնել ֆինանսական շուկա և ստանալ իրենց ճշգրիտ գնահատականն ընկերության կապիտալացման աճի շնորհիվ:

Զարգացման հեռանկարային նպատակներ ունեցող մի շարք ընկերություններում ձևավորվում են կապիտալի շուկայի նկատմամբ հետաքրքրություններ, հատկապես այն ժամանակ, երբ ընկերությունների համար բանկերից վարկ ստանալը բավականաչափ թանկ կազմավորման աղբյուր է, իսկ ֆինանսական միջոցների այլընտրանքային աղբյուրները դրանց գործունեության անընդհատության ապահովման համար անհրաժեշտություն են:

Ցանկացած երկրի տնտեսության զարգացումը հնարավոր չէ պատկերացնել առանց արժեթղթերի շուկայի: Ներկա իրավիճակում ԱՀ-ի արժեթղթերի շուկան գտնվում է ցածր մակարդակում, այդ են վկայում մակրոտնտեսական ցուցանիշները, որտեղ արժեթղթերի շուկան գրեթե ոչ մի դերակատարություն չունի, և բացի Արցախի ՀԷԿ-ից, հանրապետությունում ոչ մի ընկերություն արժեթղթեր չի թողարկում:

Արցախի տնտեսության ներկա մակարդակը թույլ է տալիս խթանելու արժեթղթերի շուկայի կայացումը, ինչն էլ վկայում են վերջին տարիների մակրոտնտեսական ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 3):

*Աղյուսակ 3*

**ԱՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2017թ.<sup>1</sup>**

|   | 2017թ. 2016թ.<br>համեմատ (տոկոս) |
|---|----------------------------------|
| Համախառն ներքին արդյունք  | 115.6                            |
| ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը (ընթացիկ գներով հաշվարկված ՀՆԱ-ի հարաբերությունը նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ՀՆԱ-ի ծավալի համեմատ) | 102.5                            |
| Արդյունաբերական արտադրանքի ծավալը   | 154.8                            |
| Գյուղատնտեսության համախառն արտադրանքը   | 107.8                            |
| Շինարարության ծավալը  | 103.2                            |
| Միջին ամսական անվանական աշխատավարձը   | 101.8                            |
| Առևտրի շրջանառության ծավալը   | 114.7                            |
| Ծառայությունների ծավալը   | 110.7                            |
| Մպառողական գների ինդեքսը  | 99.5                             |

<sup>1</sup> «ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-դեկտեմբերին» եռամսյակային տեղեկատվական զեկույց, ԼՂՀ ԱՎԾ, 2018:

Վերևում թվարկվածները շուկայի զարգացման կարևորագույն նախապայմաններն են: Շատ կարևոր է նաև զիտակցել, որ արժեթղթերի շուկայի առկայությունը կարող է խթանել տնտեսությունը և դրա միջոցով ֆինանսական միջոցների ձեռքբերումը, ի տարբերություն բանկային համակարգի սահմանափակ հնարավորությունների, ավելի էժան ու արդյունավետ կլինի:

Արժեթղթերի շուկայի կայացումն ու զարգացումը երկարատև գործընթաց է: Բացի դրանից անհրաժեշտ է հաշվի առնել, որ տնտեսական անկման փուլում երկարաժամկետ արժեթղթերի տոկոսադրույքները բարձր են լինում, իսկ կարճաժամկետ արժեթղթերի տոկոսադրույքները՝ ցածր: Տնտեսական անկման փուլում երկարաժամկետ արժեթղթերի եկամտաբերությունը սովորաբար բարձր է, բանի որ ներդրողները չեն ցանկանում ռիսկի դիմել և ներդրումներ կատարել երկարաժամկետ արժեթղթերում:

Միևնույն ժամանակ կարճաժամկետ արժեթղթերի տոկոսադրույքները նվազում են, բանի որ ֆինանսական շուկայի բոլոր հատվածներում առկա են լինում տոկոսադրույքների նվազման միտումներ:

Այսպիսով, Արցախի Հանրապետության արժեթղթերի շուկայի կայացման համար անհրաժեշտ է.

- կատարելագործել մարդկանց ֆինանսական ոլորտի բանիմացության գծով գրագիտությունը,
- ավելացնել ԲԲԸ-ների քանակը,
- վերացնել արժեթղթերի շուկայի զարգացումը խոչընդոտող գործոնները,
- բարձրացնել հասարակության տեղեկացվածության գործում ԶԼՄ-ների դերը,
- հասարակության ուշադրությունը հրավիրել հատկապես կորպորատիվ կառավարմանը:

Համախմբելով կարելի է ասել, որ հիմնվելով համաշխարհային բարեհաջող օրինակի վրա ու տանելով ֆինանսական ոլորտի գծով գրագիտության բարձրացման ուղղությամբ շարունակական գործընթացները՝ արդյունքում կբարձրանա բնակչության ֆինանսական ապահովվածության մակարդակը: Հետզհետե կավելանան ֆինանսական տարաբնույթ և այլ ածանցյալ գործիքներից օգտվելու հնարավորությունները, ինչպես նաև կնպաստեն վարկերի վերադարձելիությանն ու կկարողանան ձևավորել «երկար փողեր» տնտեսության համար, և այդ բոլորն էլ կխթանեն ֆինանսական համակարգի կայունացումն ու զարգացումը:

## ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԱՈՒՆՁՆԱ- ՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՍՈՒՄԱՆ ԱՐԿԱՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*

*Շուշիի տեխնոլոգիական համալսարանի*

*էկոնոմիկայի և կառավարման ամբիոն*

**ԻՐԻՆԱ ԱՐՄԵՆԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ**

*Շուշիի տեխնոլոգիական համալսարանի*

*էկոնոմիկայի և կառավարման ամբիոնի դասախոս*

**Համառոտագիր:** Չարգացած երկրների ֆինանսական շուկայի փորձը ցույց է տալիս արժեթղթերի շուկայի կարևորությունը և նշանակությունը ֆինանսական համակարգի ձևավորման ու զարգացման գործում: Հետևաբար, ԱՀ-ում ֆինանսական զարգացած շուկա ստեղծելու համար պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել արժեթղթերի շուկայի ձևավորման գործընթացին: ԱՀ արժեթղթերի շուկան ներկայում կայացման փուլում է, և այժմ, առավել քան երբևէ, կարևորվում է ազատ ֆինանսական ռեսուրսների ներգրավման հարցը:

*Բանալի բառեր. ֆինանսական շուկա, արժեթղթերի շուկա, պետական բյուջե, պարտատոմս, ֆինանսական ռեսուրսներ:*

## ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ РЫНКА ЦЕННЫХ БУМАГ РЕСПУБЛИКИ АРЦАХ

**СУСАН АБКАРОВНА АВЕТИСЯН, к.э.н., доцент**

*Кафедра экономики и управления*

*Шушинского технологического университета*

**ИРИНА АРМЕНОВНА АВАНЕСЯН**

*преподаватель кафедры экономики и управления*

*Шушинского технологического университета*

**Аннотация:** Опыт финансового рынка развитых стран показывает важность и значение рынка ценных бумаг в формировании и развитии финансовой системы. Следовательно, для создания развитого финансового рынка в Республике Арцах особое внимание должно быть уделено процессу формирования рынка ценных бумаг. Рынок ценных бумаг РА находится в стадии становления, и в настоящее время, более чем когда-либо, важен вопрос привлечения свободных финансовых ресурсов.

**Ключевые слова:** *финансовый рынок, рынок ценных бумаг, госбюджет, облигация, финансовые ресурсы.*

## CREATING SECURITIES MARKET IN THE REPUBLIC OF ARTSAKH

**SUSAN ABKAR AVETISYAN**, *Ph.D. in Economics, Associate Professor*  
*Chair of Economics and Management, Shushi University of Technology*

**IRINA ARMEN AVANESYAN**

*Lecturer, Chair of Economics and Management*  
*Shushi University of Technology*

**Abstract:** The international practice on financial market in developed nations indicates the importance and significance of securities markets in building and making the financial system more sophisticated. Hence, in order to build a sophisticated financial market in the Republic of Artsakh, the process of creating the securities market is highly stressed. The creation of securities market in the Republic of Artsakh is in the embryonic stage, and currently, more than ever, the issue of attracting free resources is stressed.

**Keywords:** *Financial market, securities market, state budget, bond, financial resource.*

### ՀՀ ՑԵՄԵՆՏԻ ՇՈՒԿԱՅԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ընդերքը հարուստ է ոչ մետաղական հանքավայրերով. երկրի տարածքում հայտնաբերված են ոչ մետաղական հանքային ռեսուրսների ավելի քան 700 հանքավայրեր, որոնցից 390-ը ներկայումս շահագործվում են: Մակայն հարկ է նշել, որ ոչ մետաղական հանքավայրերի շահագործումը կազմում է ՀՀ հանքարդյունաբերության համախառն արտադրանքի միայն 5%-ը, և ոլորտն ունի արտադրության զարգացման, նոր իրացման շուկաների ընդարձակ հնարավորություններ:

Երկրի ոչ մետաղական հանքային ռեսուրսներում ուրույն տեղ են գրավում կրաքարի պաշարները, որը հումք է ցեմենտի արտադրության համար: Հայտնի են Արարատի, Հրազդանի, Սպիտակի, Կապանի, Իջևանի ու այլ կրաքարի հանքավայրեր: Արարատի հանքավայրի հենքի վրա դեռևս 1930թ. կազմակերպվել էր ցեմենտի արտադրություն: 1970թ. Հրազդանում շահագործվել է ցեմենտի երկրորդ գործարանը, որտեղ որպես հումք օգտագործվում էր Արարատից բերվող կրաքարը, և գործարանը դարձել էր տարածաշրջանում հիմնական արտադրողներից մեկը, որի արտադրանքն արտահանվում էր Վրաստան և Ադրբեջան:

2002թ. Արարատի ցեմենտի գործարանը մասնավորեցվեց «Մուլտի գրուպ» կոնցեռնի կողմից և վերանվանվեց «Արարատցեմենտ» ՓԲԸ և արտադրում է բարձրորակ 400, 450, 500 և ավելի բարձր մակնիշի ցեմենտ: Իսկ Հրազդանի ցեմենտի գործարանը 2001թ. մասնավորեցումից հետո վերանվանվեց «Միկա-ցեմենտ» ՓԲԸ և նշված 2 ընկերությունները ներկայումս տեղական շուկայի հիմնական արտադրողներն են:

Համաշխարհային ցեմենտ արտադրող առաջատար երկրների ցանկը գլխավորում են Չինաստանը, Հնդկաստանը և ԱՄՆ-ը, իսկ մեր տարածաշրջանում, ըստ «Global Cement» պարբերականի, Իրանի ցեմենտը 24 երկիր է արտահանվում<sup>1</sup>: 2000-2008թթ. Հայաստանում շինարարության ոլորտի երկնիշ աճը և արտահանման շուկաների առկայությունը նպաստեցին ցեմենտի արտադրության ծավալների ընդլայնմանը: Իսկ 2009թ.-ից շինարարության ոլորտի անկման և արտահանման ծավալների կրճատման հետևանքով Հայաստանի ցեմենտ արտադրող ձեռնարկությունները չեն գործում ողջ հզորությամբ: Պատճառներից մեկն էլ Վրաստանում ցեմենտի նոր գործարանի բացումն է, մինչդեռ Վրաստանը մեր արտահան-

<sup>1</sup> <http://www.globalcement.com/>

ման հիմնական շուկաներից էր: Վերջին տարիներին ՀՀ ցեմենտի շուկայի հիմնական ցուցանիշներն առավել քան խոստոն են ոլորտի հիմնախնդիրների առկայության առումով (տե՛ս աղյուսակ 1):

*Աղյուսակ 1*

**ՀՀ ցեմենտի շուկայի հիմնական ցուցանիշները 2009-2016թթ.<sup>1</sup>**

| N | Ցուցանիշներ  | 2009  | 2010  | 2011  | 2012  | 2013  | 2014  | 2015  | 2016  |
|---|--|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|
| 1 | Արտադրանքի ծավալը ընթացիկ գներով (մլրդ դրամ)         | 15,4  | 18,5  | 15,3  | 16,6  | 18,3  | 16,14 | 16,4  | 11,1  |
| 2 | Պատրաստի արտադրանքի իրացման ծավալը (մլրդ դրամ), որից | 15,7  | 17,5  | 15,7  | 16,4  | 18,1  | 15,8  | 16,8  | 11,4  |
| 3 | Աշխատողների միջին ցուցակային թիվը (հազ.մարդ)         | 1,9   | 1,7   | 1,7   | 1,6   | 1,6   | 1,5   | 1,6   | 1,5   |
| 4 | Ցեմենտի արտադրություն (հազ. տոննա)                   | 467,3 | 487,6 | 422,2 | 437,6 | 430,9 | 427,0 | 417,0 | 267,9 |
| 5 | Ցեմենտի I տոննայի միջին գինը (հազ. դր.)              | 32,9  | 37,9  | 36,4  | 37,9  | 42,4  | 37,8  | 39,4  | 41,3  |
| 6 | Ցեմենտի արտահանում (հազ. տոննա)                      | 117,3 | 37,9  | 97,9  | 136,2 | 185,2 | 72,9  | 3,7   | 0,001 |
| 7 | Ցեմենտի ներմուծում (հազ. տոննա)                      | 1,3   | 1,5   | 1,6   | 1,9   | 3,4   | 7,5   | 12,3  | 30,1  |

Հայաստանում ցեմենտի արտադրությամբ զբաղվող երկու ընկերությունները՝ «Միկա-ցեմենտ» ՓԲԸ-ն և «Արարատցեմենտ» ՓԲԸ-ն, միասին 2000-ական թթ. կեսերին արտադրում էին տարեկան միջինը 550-600 հազար տոննա ցեմենտ: Ցեմենտի արտադրության բարձրակետը 2007թ. էր, երբ Ազգային վիճակագրության ծառայության տվյալներով Հայաստանում արտադրվել էր 722 հազար տոննա ցեմենտ: Դրանից հետո սկսվեց անկումը: 2009-2015թթ. երկրում ցեմենտի արտադրության ծավալներն աստիճանաբար կրճատվել են՝ 467,3 հազ. տ-ից հասնելով 417 հազ. տ-ի, իսկ 2016թ. կտրուկ կրճատվել է և 2015թ. համեմատ նվազել 36%-ով: Ներքին սպառման պահանջարկը բավարարվել է ներմուծման հաշվին. 2016թ. 2015թ. համեմատ ցեմենտի ներմուծման ծավալները աճել են

<sup>1</sup> ՀՀ ԱՎԾ, Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման, 2009-2016թթ. և ՀՀ ԱՎԾ, ՀՀ արտաքին առևտրի տվյալների բազա ըստ ապրանքային անվանացանկի 4-նիշ դասակարգման:

ավելի քան 2,4 անգամ՝ 12,3 հազ. տ-ից հասնելով 30,1 հազ. տ-ի: 2015թ. արտահանումը կազմել է 3,7 հազ. տ., իսկ 2016 թ. այն արդեն զրոյական մակարդակի էր: Արտահանման կտրուկ կրճատման և ներքին արտադրության ծավալների նվազման և միաժամանակ ներմուծման աճի միտումի պահպանման դեպքում հայկական ցեմենտի արտադրությունը կարող է լրիվ դադարել: Նման պատկերը հիմնականում պայմանավորված է հայրենական արտադրության ցեմենտի ինքնարժեքի և հետևաբար գնի աճով, որն արդյունք է վառելիքի և էներգիայի բարձր ծախսերի: «Միկա-ցեմենտ» ընկերությունում ցեմենտ արտադրվում է հին տեխնոլոգիաներով՝ թաց եղանակով, որը բարձրացնում է արտադրանքի ինքնարժեքը, քանի որ բավական մեծ՝ մոտ 45% կշիռ են կազմում էներգակիրները՝ գազը և էլեկտրաէներգիան: Ցեմենտի բարձր գինը կարելի է կապել գազի գնի բարձրացման հետ: Արդյունքում հայկական ցեմենտի գինը բարձր է հարևան երկրների համեմատությամբ (Թուրքիայում՝ 60-70 դոլար/տոննա, Ռուսաստանում՝ 4199 ռուբլի/տոննա): Նույն պատճառով հայկական արտադրանքը, լինելով անմրցունակ, դուրս է մնացել վրացական ցեմենտի շուկայից:

Ցեմենտի հայրենական արտադրության ծավալների կրճատման հաջորդ գործոնը շինարարության տեմպերի նվազումն է<sup>1</sup>. շինարարության ծավալները 2016թ. 2009թ. համեմատությամբ նվազել են 31%-ով, արդյունքում 2016թ. ցեմենտի ներքին սպառումը կրճատվել է 2009թ. համեմատ մոտ 53 հազ. տ-ով:

Ոլորտում արտադրողականությունը շարունակական նվազման միտում ունի. 2016թ. 2009թ. համեմատ այն կրճատվել է 21%-ով, իսկ 2015թ. համեմատությամբ՝ 31%-ով: Սա փաստում է այն մասին, որ ընկերությունները ցեմենտի արտադրության մեջ չեն կիրառում ժամանակակից տեխնիկա ու տեխնոլոգիա և դրանց ձեռքբերման ուղղությամբ ներդրումներ չեն իրականացնում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ցեմենտի արտադրության ծավալների նվազումը պայմանավորված է ինչպես ներքին պահանջարկի (շինարարության անկման պատճառով), այնպես էլ արտահանման նվազմամբ: Արտահանման ծավալների նվազումը կարող է պայմանավորված լինել նաև ներկրող երկրներում շինարարության ծավալների կրճատմամբ, ինչպես նաև ցեմենտի շուկայում նոր մրցակիցների ի հայտ գալով:

Ըստ մամուլում հրապարակված նյութերի՝ 2018 թվականին Մյունխենի մարզի Կապան քաղաքում նախատեսվում է բացել ցեմենտի գործա-

<sup>1</sup> ՀՀ ԱԿԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, Իրական հատված, Շինարարություն 2009-2016 թթ. [http://armstat.am/file/article/sv\\_12\\_15a\\_123.pdf](http://armstat.am/file/article/sv_12_15a_123.pdf).

րան, որի հումքը ներմուծվելու է Իրանից<sup>1</sup>: Նման արտադրության նպատակը մարզում ցեմենտի նկատմամբ առկա պահանջարկի բավարարումն է ներմուծվող ցեմենտի գնից ավելի ցածր գնով հայրենական արտադրությամբ, որը ծրագրվում է ապահովել ի հաշիվ տրանսպորտային ծախսերի կրճատման և ժամանակակից ռեսուրսախնայող տեխնոլոգիաների կիրառման: Գործարանի ստեղծումը կապահովի նաև 50-60 աշխատատեղերի բացման սոցիալական խնդրի լուծումը: Մյուսիքի մարզում ցեմենտի նկատմամբ բարձր պահանջարկը պայմանավորված է տարածաշրջանում գործող 3 լեռնահանքային ձեռնարկությունների և նրանց ենթակառուցվածքների ակտիվ շինարարական գործունեությամբ:

Կարծում ենք, որ 2017թ. Մեղրիում բացված ազատ տնտեսական գոտին կնպաստի մրցունակ արտադրանքի թողարկմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանն այս ոլորտում, ինչպես նաև կստեղծի արտահանման հնարավորություններ: Ազատ տնտեսական գոտում գործող հարկման արտոնյալ համակարգը հնարավորություն կտա իջեցնելու ցեմենտի ինքնարժեքը և իրացման զինը՝ բարձրացնելով նրա մրցունակությունը նաև իրանական շուկայում:

Կապանի ցեմենտի կառուցվող գործարանը հեռանկարում կարող է որպես հումք օգտագործել Կապանի կրաքարի հանքավայրի պաշարները:

Ցեմենտի արտադրության և արտահանման ծավալների աճն ապահովելու նպատակով անհրաժեշտ է կրճատել հայկական ցեմենտի արտադրության ծախսերը և այն մրցունակ դարձնել հարևան երկրների արտադրանքի հետ՝ կիրառելով ռեսուրսախնայող նոր տեխնոլոգիաներ: Արդյունքում դառնալով մրցունակ տարածաշրջանային շուկայում՝ հնարավոր կդառնա արտահանման կարողությունների և ծավալների ընդլայնումը:

## **ՀՀ ՑԵՄԵՆՏԻ ՇՈՒԿԱՅԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

### **ՍԱՍՈՒՆ ՄՅԱՍՆԻԿԻ ԲԱԽՇԱԼ**

*ՀԱՊՀ ուսանող*

**Համառոտագիր:** Հայաստանը ցեմենտ արտահանող երկրից վերջին տարիներին դարձել է ներմուծող երկիր: Հեղինակը փորձել է վեր հանել այն հիմնական գործոնները, որոնք պայմանավորում են ՀՀ ցեմենտի շուկայի նման զարգացումները՝ միաժամանակ նշելով ոլորտի պոտեն-

<sup>1</sup> <http://hetq.am/arm/news/82441/gagik-tsarukyany-kapanum-cementi-gortsaran-c-karucum-gaxaqapetaranum-texyak-chen.html/>

ցիալը բնական ռեսուրսների և արտահանման շուկաների առկայությամբ: Ընդգծվել է ռեսուրսախնայող տեխնոլոգիաների օգտագործման անհրաժեշտությունը ոլորտում որպես մրցունակությունը բարձրացնող միջոց:

*Բանալի բառեր. ոչ մետաղական հանքային ռեսուրսներ, ցեմենտի շուկա, ռեսուրսախնայող տեխնոլոգիաներ, արտահանման կարողություններ:*

## ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ РЫНКА ЦЕМЕНТА В РА

**SASUN MYASNIKOVICH BAKSHYAN**

*Студент, Национальный политехнический университет Армении*

**Аннотация:** В последние годы экспортирующая цемент Армения стала страной импортирующей. Автор попытался выявить те основные факторы, которые обусловили такое развитие рынка цемента, одновременно подчеркивая потенциал сферы в природных ресурсах и на рынках экспорта. В данной работе необходимость использования ресурсосберегающих технологий в сфере подчеркивается как средство повышения конкурентоспособности.

*Ключевые слова: не металлические минеральные ресурсы, рынок цемента, ресурсосберегающие технологии, потенциал экспорта.*

## CEMENT MARKET DEVELOPMENT TRENDS IN THE REPUBLIC OF ARMENIA

**SASUN MYASNIK BAKHSHYAN**

*Bachelor Student, National Polytechnic University of Armenia*

**Abstract:** From being a cement-exporter Armenia has become a cement-importer. The author attempts to highlight those main factors that have explained such developments in cement market in the Republic of Armenia, meanwhile stating the potential for growth with respect to natural resources and export markets. The author stresses the need for utilizing resource-saving technology in the sector as a mean for making the produced items more competitive.

*Keywords: No-metallic mineral resources, cement market, resource-saving technology, export capacity.*

**ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*

*ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**ԱՐՓԻՆԵ ՄԵՆԱԿԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

## **ՍԱԿՐՈՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՉՂԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ**

Գործարար միջավայրը յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն է, որի զարգացումը հնարավորություն է ընձեռում մեղմելու անցումային տնտեսություններին բնորոշ տնտեսական և սոցիալական դժվարությունները՝ կայուն պայմաններ հետագա տնտեսական աճի համար, հետևաբար՝ գործարար միջավայրի զարգացումն ազդում է տվյալ երկրի կյանքի որակի բարելավման և բարձրացման վրա:

«Գործարար միջավայր» տնտեսագիտական հասկացության վերաբերյալ տրվել են տարբեր սահմանումներ, որոնց բովանդակությունը, կարծես թե համընկնում է<sup>1</sup>: Այսպես երբեմն գործարար միջավայրը նույնացվում է «գործարար» կամ «ձեռներեցություն» հասկացությունների հետ: Սակայն «գործարար միջավայրն» առավել լայն հասկացություն է, որն ընդգրկում է թվարկված բոլոր տեսակները<sup>2</sup>: Օրինակ, ըստ Ֆիլ Քելիի, գործարար միջավայրը բոլոր պայմանների, իրադարձությունների ամբողջությունն է, որոնք շրջապատում և ազդում են վերջինիս վրա<sup>3</sup>:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ գործարար միջավայրը գործարարությանն առնչվող այն ամենն է, ինչն ազդում է տվյալ գործունեության վրա<sup>4</sup>:

Իսկ ըստ Քելթ Դեաի՝ գործարար միջավայրն այն բոլոր պայմանների, իրադարձությունների և «ազդեցությունների» հանրագումարն է, որոնք շրջապատում և ազդում են դրա վրա:

Մեկ այլ սահմանման համաձայն՝ տնտեսական քաղաքականության արդյունավետ իրականացման համար գործարար միջավայրը տնտեսա-

<sup>1</sup> Дергунов А. Системный подход развитию национальной инновационной среды. Инновации N3.2008 53-56 с.

<sup>2</sup> Դրամբյան Ա. Բիզնես միջավայրի կառուցվածքն ու դրա վրա ազդող գործոնները «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, #6 հունիս(168) 2014, Երևան, 56 էջ:

<sup>3</sup> Phil Kelly and Ashwin "The Business Environment", 2013, pp.78-81.

<sup>4</sup> CEA. Business studies: Assessment Unit3. 2009.p. 54.

կան, սոցիալական, քաղաքական կամ ինստիտուցիոնալ պայմանների ամբողջություն է<sup>1</sup>:

Դ.Դոլարի համաձայն՝ գործարար միջավայրը ինստիտուցիոնալ, քաղաքական և կարգավորող պայմաններն են, որոնց շրջանակներում գործում է առևտրային կազմակերպությունը<sup>2</sup>: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ գործարար միջավայրը գործոնների համախումբ է, որը պետության կողմից ապահովում է գործարարության զարգացման համար անհրաժեշտ պայմաններ<sup>3</sup>, իսկ Յ. Սալոմանի համաձայն՝ գործարար միջավայրը ներքին և արտաքին գործոնների փոխազդեցության արդյունքում գործարարների ձեռնարկատիրական ունակությունների դրսևորման վարքագիծն է, որը հետագայում կարող է խթանել ներդրումային հոսքերի, նոր աշխատատեղերի, հարկային եկամուտների ավելացումն ու նպաստել տնտեսության զարգացմանը<sup>4</sup>:

Պետք է նշել, որ գործարար միջավայրի ուսումնասիրությամբ զբաղված են միջազգային տարբեր կառույցներ, մասնավորապես, ըստ Համաշխարհային բանկի, գործարար միջավայրը գործոնների համախումբ է, որը բնութագրում է տվյալ երկրի առևտրային կազմակերպությունների գործարարությամբ զբաղվելու մոտիվացիան՝ արդյունավետ ներդրումային քաղաքականության, նոր աշխատատեղերի ստեղծման, համաշխարհային մրցակցային շուկաներին ինտեգրման արդյունքում<sup>5</sup>:

Պետք է նշել, որ գործարար միջավայրի վրա ազդում են տարբեր մակրոտնտեսական ցուցանիշներ, հետևաբար՝ հողվածում ներկայացվել է վերջիններիս ազդեցությունը, և կատարվել է համապատասխան գործունային վերլուծություն, մասնավորապես հիմնավորվել է, որ մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման միջոցով հնարավոր է զարգացնել գործարար միջավայրը: Այդ առումով իրականացվել է գործունային վերլուծություն, ներկայացվել են հետևյալ ցուցանիշները.

- վարկեր/ՀՆԱ ցուցանիշը,
- համախառն տնօրինվող եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը,
- տրանսֆերտներ/ՀՆԱ ցուցանիշը,
- հարկային բեռը:

<sup>1</sup> Fernando A.C. “Business Environment”, Pearson Education, 2011, pp. 33-36.

<sup>2</sup> Dollar D. Hallwart-Driemier M. Mengistae T. “Investment Climate and Firms Performance in the Development Economies”. World Bank, 2003, pp. 118-120.

<sup>3</sup> Inter-American Development bank, 2003 p.75.

<sup>4</sup> Saloman Johan “Economics and the Business Environment”, 2008. pp.126-128.

<sup>5</sup> Всемирный Банк, “Доклад о мировом развитии”, 2005, с. 9-11.

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ի տվյալները, 2016 թվականին 2004 թվականի համեմատ վարկեր/ՀՆԱ ցուցանիշն աճել է 5.36 տոկոսային կետով, վերջինիս նվազման պատճառներից է հանդիսացել վարկերի տրամադրման տոկոսադրույքի նվազումը 6.59 տոկոսային կետով (աղյուսակ 2): Վերջինս հանգեցրել է առևտրային բանկերի կողմից տրամադրվող ընդհանուր վարկերի ծավալների ավելացման՝ 2292575 մլն դրամով, մեկ շնչին ընկնող վարկի ծավալն ավելացել է 769.46 հազար դրամով, իսկ տրանսֆերտներ/ՀՆԱ ցուցանիշը նույն ժամանակահատվածում նվազել է 23.5 տոկոսային կետով, միաժամանակ 20.6 տոկոսային կետով աճել է համախառն տնօրինվող եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը:

*Աղյուսակ 1*

**2004-2016թթ. վարկեր/ՀՆԱ, համախառն տնօրինվող եկամուտներ/ՀՆԱ, տրանսֆերտներ/ՀՆԱ և հարկային բեռի շարժընթացը ՀՀ-ում (%)<sup>1</sup>**

|      | Վարկեր/ՀՆԱ | Համախառն տնօրինվող եկամուտներ/ՀՆԱ | Տրանսֆերտներ/ՀՆԱ | Հարկային բեռ |
|------|------------|-----------------------------------|------------------|--------------|
| 2004 | 7.52       | 17.3                              | 10.2             | 30.72        |
| 2005 | 8.68       | 20.6                              | 9.6              | 31.6         |
| 2006 | 9.17       | 18.6                              | 10.2             | 31.66        |
| 2007 | 13.5       | 19.7                              | 11.6             | 34.98        |
| 2008 | 17.4       | 19.7                              | 14.6             | 16.78        |
| 2009 | 23.4       | 18.7                              | 10               | 16.02        |
| 2010 | 27.4       | 16.5                              | 8.4              | 16.59        |
| 2011 | 33.5       | 14.7                              | 9.5              | 16.71        |
| 2012 | 37.6       | 24.1                              | 9.2              | 20.58        |
| 2013 | 39.4       | 24.9                              | 10               | 22.44        |
| 2014 | 45.3       | 23.1                              | 9                | 22.75        |
| 2015 | 42         | 23.2                              | 8.5              | 23.04        |
| 2016 | 47.9       | 22.6                              | 7.8              | 23.32        |

<sup>1</sup> 22 ԱՎԾ Տարեգրքեր 2006թ., 2010թ., 2017թ., Հայաստանի ֆինանսների վիճակագրություն՝ դրամավարկային միջնորդության համակարգի հիմնական ցուցանիշներ, էջ 79, 41,48 [http://www.armstat.am/file/article/finansner\\_07\\_3.pdf](http://www.armstat.am/file/article/finansner_07_3.pdf), [http://www.armstat.am/file/article/finansner\\_11\\_5.6.pdf](http://www.armstat.am/file/article/finansner_11_5.6.pdf), [http://www.armstat.am/file/article/finansner\\_2017\\_3.pdf](http://www.armstat.am/file/article/finansner_2017_3.pdf): Հրապարակումներ, Հայաստանի ազգային հաշիվներ՝ հատվածային հաշիվներ [http://www.armstat.am/file/article/hah\\_08\\_5.pdf](http://www.armstat.am/file/article/hah_08_5.pdf), [http://www.armstat.am/file/article/hah\\_11\\_7-12.pdf](http://www.armstat.am/file/article/hah_11_7-12.pdf), [http://www.armstat.am/file/article/hah\\_14\\_7+.pdf](http://www.armstat.am/file/article/hah_14_7+.pdf), [http://www.armstat.am/file/article/hah\\_17\\_9.pdf](http://www.armstat.am/file/article/hah_17_9.pdf):

2016 թվականին 2004 թվականի համեմատ հարկային բեռի ցուցանիշը 24.08 տոկոսային կետով նվազել է (աղյուսակ 1), իսկ հարկային եկամուտները նույն ժամանակահատվածում աճել են 846723 մլն դրամով, հետևաբար՝ աճել են մեկ շնչին ընկնող հարկային եկամուտները՝ 288.90 հազար դրամով:

2008 թվականին 2004 թվականի համեմատ վարկեր/ՀՆԱ ցուցանիշը աճել է 9.8 տոկոսային կետով, որի պատճառներից մեկը վարկերի տրամադրման տոկոսադրույքի նվազումն է 9.34 տոկոսային կետով: Վերջինս հանգեցրել է առևտրային բանկերի կողմից տրամադրվող ընդհանուր վարկերի ծավալների ավելացման՝ 490989 մլն դրամով, իսկ մեկ շնչին ընկնող վարկի ծավալն ավելացել է 151.544 հազար դրամով: Ինչ վերաբերում է տրանսֆերտներ/ՀՆԱ ցուցանիշին, այն 2004 թվականին կազմել է 10.2 տոկոս, սակայն 2008 թվականին այս ցուցանիշն ավելացել է 1.4 անգամ, միաժամանակ նաև 13.87 տոկոսային կետով աճել է համախառն տնօրինվող եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը:

2008 թվականին 2004 թվականի համեմատ հարկային բեռի ցուցանիշը նվազել է 45.37 տոկոսային կետով, իսկ հարկային եկամուտները նույն ժամանակահատվածում աճել են 48195.6 մլն դրամով, հետևաբար՝ աճել են մեկ շնչին ընկնող հարկային եկամուտները՝ 148.53 հազար դրամով:

*Աղյուսակ 2*

**2004-2016թթ. ընդհանուր վարկերի, մեկ շնչին ընկնող վարկի և տոկոսադրույքի շարժընթացը ՀՀ-ում (մլն դրամ)<sup>1</sup>**

|      | Ընդհանուր վարկեր | Հարկային եկամուտներ | Մեկ շնչին ընկնող վարկ | Մեկ շնչին ընկնող հարկային եկամուտ | Միջին տոկոսադրույք |
|------|------------------|---------------------|-----------------------|-----------------------------------|--------------------|
| 2004 | 143506           | 257520              | 0.04465               | 0.08012                           | 18.2               |
| 2005 | 194871           | 312316              | 0.06056               | 0.09706                           | 17.3               |
| 2006 | 243580           | 375537.2            | 0.07562               | 0.11658                           | 17.2               |
| 2007 | 426150           | 494420.8            | 0.13207               | 0.15323                           | 16.5               |
| 2008 | 634495           | 739476.8            | 0.19619               | 0.22865                           | 16.5               |
| 2009 | 735200           | 642824.3            | 0.22665               | 0.19817                           | 18.8               |

<sup>1</sup> ՀՀ ԱՎԾ Տարեգրքեր 2006թ., 2010թ., 2017թ., Հայաստանի ֆինանսների վիճակագրություն՝ դրամավարկային միջնորդության համակարգի հիմնական ցուցանիշներ, էջ 79, 41,48 [http://www.armstat.am/file/article/finansner\\_07\\_3.pdf](http://www.armstat.am/file/article/finansner_07_3.pdf), [http://www.armstat.am/file/article/finansner\\_11\\_5.6.pdf](http://www.armstat.am/file/article/finansner_11_5.6.pdf), [http://www.armstat.am/file/article/finansner\\_2017\\_3.pdf](http://www.armstat.am/file/article/finansner_2017_3.pdf), <https://www.cba.am/am/sitepages/default.aspx>:

|      | Ընդհանուր վարկեր | Հարկային եկամուտներ | Մեկ շնչին ընկնող վարկ | Մեկ շնչին ընկնող հարկային եկամուտ | Միջին տոկոսադրույք |
|------|------------------|---------------------|-----------------------|-----------------------------------|--------------------|
| 2010 | 949772           | 718348.3            | 0.29169               | 0.22061                           | 18.9               |
| 2011 | 1268789          | 796960.4            | 0.38818               | 0.24383                           | 17.7               |
| 2012 | 1605680          | 898415.9            | 0.53096               | 0.29708                           | 16.0               |
| 2013 | 1798255          | 1022053             | 0.59505               | 0.33820                           | 15.0               |
| 2014 | 2188357          | 1087379             | 0.72611               | 0.36079                           | 16.3               |
| 2015 | 2119513          | 1091679             | 0.70542               | 0.36333                           | 15.4               |
| 2016 | 2436081          | 1104243             | 0.81411               | 0.36902                           | 17.0               |

Դիտարկելով հետճգնաժամային տարիները՝ 2014-2016թթ., պետք է արձանագրել, որ չնայած այդ ժամանակահատվածում վարկերի տրամադրման տոկոսադրույքը բարձրացել է 4.29 տոկոսային կետով, այնուամենայնիվ առևտրային բանկերի կողմից տրամադրվող ընդհանուր վարկերի ծավալներն ավելացել են 247724 մլն դրամով, հետևաբար՝ մեկ շնչին ընկնող վարկի ծավալներն ավելացել են 88.0044 հազար դրամով: Ուստի 2016 թվականին 2014 թվականի համեմատ վարկեր/ՆԱ ցուցանիշն ավելացել է 5.73 տոկոսային կետով, միաժամանակ 2.50 տոկոսային կետով ավելացել է հարկային բեռը: Իսկ տրանսֆերտներ/ՆԱ ցուցանիշը նվազել է 13.33 տոկոսային կետով, միաժամանակ նաև 2.16 տոկոսային կետով նվազել է համախառն տնօրինվող եկամուտներ/ՆԱ ցուցանիշը, իսկ հարկային եկամուտները նույն ժամանակահատվածում ավելացել են 16864 մլն դրամով, ուստի մեկ շնչին ընկնող հարկային եկամուտներն ավելացել են 8.2283 հազար դրամով:

## **ՍԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ**

**ԶՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*

*ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**ԱՐՓԻՆԵ ՄԵՆԱԿԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

**Ֆամառոտագիր:** Հոդվածում ներկայացվել են «Գործարար միջավայր» տնտեսագիտական հասկացության վերաբերյալ տարբեր սահմանումներ, ինչպես նաև հոդվածում հիմնավորվել է գործարար միջավայրի վրա ազդող մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը, մասնավորապես դիտարկվել են վարկեր/ՆԱ ցուցանիշը, համախառն տնօրինվող եկա-

մուտներ/ՀՆԱ ցուցանիշը, տրանսֆերտներ/ՀՆԱ ցուցանիշը, հարկային բեռը, և դրանց հիման վրա կատարվել է համապատասխան վիճակագրական վերլուծություն, և տրվել են դրանց տնտեսագիտական հիմնավորումները:

*Բանալի բառեր. գործարար միջավայր, հարկային եկամուտ, տոկոսադրույք, հարկային բեռ, տրանսֆերտներ:*

## ВЛИЯНИЕ МАКРО ЭКОНОМИЧЕСКИХ ПОКАЗАТЕЛЕЙ НА БИЗНЕС-СРЕДУ

**КРИСТИНЕ ЮРЬЕВНА БАГДАСАРЯН**, *к.э.н., доцент*  
*старший научный сотрудник Института экономики им. М. Котаяна НАН РА*  
**АРПИНЕ МЕХАКОВНА КЮРЕГЯН**  
*соискатель Института экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация:** В статье представлены различные определения понятия «бизнес-среда», а также в статье были обоснованы макроэкономические показатели, влияющие на бизнес-среду в особенности кредитов / ВВП, соотношение валового располагаемого дохода / ВВП, трансфертов / ВВП, налоговое бремя и на основе этих показателей был проведен статистический анализ и даны их экономические обоснования.

*Ключевые слова:* бизнес-среда, налоговый доход, процентная ставка, налоговое бремя, трансферты.

## THE IMPACT OF MACROECONOMIC INDICATORS ON THE BUSINESS CLIMATE

**KRISTINE YURI BAGHDASARYAN**, *Ph.D. in Economics, Associate Professor*  
*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*  
**ARPINE MEKHAK KYUREGHYAN**  
*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article presents various definitions on the concept of "business climate", and justifies the impact of those macroeconomic variables that affect the business climate, as well. Namely, the following variables have been examined: loan-to-GDP, gross disposable income-to-GDP, remittances-to-GDP ratios, and the tax burden, and based on the data of thereof respective statistical analysis and economic interpretations are provided.

*Keywords:* Business climate, tax revenues, interest rates, tax burden, remittances.

**ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ, տ.գ.թ., դոցենտ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*

*ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**ԼԻԼԻԹ ՄԱՆՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան*

*տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

## **ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՄԻԿՐՈՄԱԿՐՈՂԱԿՈՒՄ**

Ստվերային տնտեսության մասշտաբների գնահատումը բավականին բարդ խնդիր է, սակայն պետք է նշել, որ ստվերային տնտեսական գործունեության մասշտաբների որոշումը կարևորագույն նշանակություն ունի ցանկացած երկրի կառավարության համար այն պատճառով, որ տնտեսական կյանքի բոլոր ոլորտների վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության առկայությունը կարևոր նախապայման է՝ համարժեք պետական տնտեսական քաղաքականություն իրականացնելու համար:

Կարևորելով ստվերային տնտեսության ծավալների գնահատումը՝ բազմաթիվ զարգացած և զարգացող երկրներ իրականացրել են այդ երևույթի բազմակողմանի ուսումնասիրություններ, որի արդյունքում ձևավորվել են ստվերային տնտեսության մասշտաբի գնահատման տարբեր մեթոդներ, որոնք պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝


- միկրոմակարդակում օգտագործվող մեթոդներ կամ ուղղակի մեթոդներ,
- մակրոմակարդակում օգտագործվող մեթոդներ կամ անուղղակի մեթոդներ:

Գծապատկեր 1-ի համաձայն՝ հարցումների միջոցով ստվերային տնտեսության գործունեության ծավալների գնահատումը ենթադրում է այս կամ այն չափով տվյալ գործընթաց ներգրավված սուբյեկտների հետ սոցիոլոգիական հարցումների իրականացում: Այս մեթոդի դրական կողմն այն է, որ ստվերային գործարքների վերաբերյալ տեղեկությունը ստացվում է հենց անմիջական մասնակիցներից, համեմատաբար ճշգրիտ գնահատական է տալիս ստվերային գործունեության մասին: Սակայն այս դրական արդյունքի ստացումը էապես կախված է նրանից, թե ինչպես կձևակերպվեն այն հարցերը, որոնք տրվում են հարցվողին, և արդյո՞ք նրա կողմից անկեղծ պատասխաններ կստացվեն: Հենց սա էլ այս մեթոդի

---

<sup>1</sup> Бокун Н. Кулибаба И. Проблемы статистической оценки теневой экономики // Вопросы статистики. 1997. № 7., с. 3-7.

բացասական կողմն է, բանի որ, ինչպես նշվեց, վերը նշված առավելությունը պայմանավորված է այն հարցերի ձևակերպումով, որոնք տրվում են հարցման ընթացքում:



**Գծապատկեր 1. Ստվերային տնտեսության մասշտաբի գնահատման միկրոմեթոդները<sup>1</sup>**

Բաց ստուգումների մեթոդի կիրառումն իրականացվում է հատուկ մասնագիտացված վերահսկիչ մարմինների կողմից, որոնց ստացած արդյունքներն արտացոլվում են պաշտոնական մարմինների հաշվետվություններում: Այս մեթոդի կիրառման արդյունքում բացահայտվում և կասեցվում են արժուրային, մաքսային, բանկային, հարկային, հակամենաշնորհային օրենսդրության խախտումները: Այս մեթոդի հիմնական առավելությունն այն է, որ հնարավորություն է տալիս ուսումնասիրողին ոչ միայն ստանալու ստվերային գործունեության ծավալների վերաբերյալ

<sup>1</sup> Попов В.В., Методы измерения теневой экономики и их использование в постсоветской России, Журнал " Экономическая теория преступлений и наказаний ", /под ред. Л. М. Тимофеева, Ю. В. Латова./, М. 2002, №4/2, с. 3.

որոշակի տեղեկություններ, այլ Բացահայտելու, թե որոշակի որ տնտեսվարող սուբյեկտն է ներգրավված ստվերային հարաբերություններում:

Տնտեսաիրավական վերլուծության հատուկ մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս, ի տարբերություն վերը նշված մեթոդների, առավել ճշգրիտ գնահատելու և վերլուծելու ստվերային տնտեսական գործունեությունը միկրոմակարդակում: Ինչպես երևում է անվանումից, այս մեթոդը ենթադրում է տնտեսական և հաշվապահական մեթոդների, իրավական նորմերի լայն կիրառում: Այս վերլուծության մեթոդները դրսևորվում են երեք հիմնական տիպերով.

1. հաշվապահական վերլուծության մեթոդ,
2. փաստաթղթային վերլուծության մեթոդ,
3. տնտեսական վերլուծության մեթոդ:

Հաշվապահական վերլուծության մեթոդի կիրառումը ենթադրում է հաշվապահական հաշվառման գործընթացի հետազոտում՝ նպատակ ունենալով Բացահայտել տեղ գտած անհամապատասխանությունները և շեղումները:

Փաստաթղթային վերլուծության մեթոդի կիրառումը նպատակ ունի Բացահայտելու հաշվապահական փաստաթղթերում տեղ գտած թերությունները, որոնք վերջին հաշվով բերել են կամ կբերեն վերջնական ֆինանսական արդյունքների աղավաղման:

Տնտեսական վերլուծության մեթոդի կիրառումը նպատակ ունի Բացահայտելու տնտեսական գործունեության ընթացքում տեղ գտած անհամապատասխանությունները, որոնք դրսևորվում են տնտեսական ցուցանիշների միջև և շատ դեպքերում որակվում են որպես տնտեսական հանցագործության որոշակի դրսևորումներ:

Ընդունված է տարբերակել տնտեսական վերլուծության մեթոդի հետևյալ տարատեսակները.

- համեմատական մեթոդ,
- հատուկ հաշվարկային մեթոդ,
- ստերեոտիպերի մեթոդ,
- ուղղորդվող ցուցանիշների մեթոդ<sup>1</sup>:

Համեմատական մեթոդը ներառում է մի շարք տնտեսական ցուցանիշներ, որոնց միջև եղած կապերի վերլուծության հիման վրա փորձ է արվում Բացահայտել գոյություն ունեցող թերացումները: Անհամապատասխանությունները Բացահայտվում են հետևյալ խմբի ցուցանիշների վերլուծության արդյունքում. էլեկտրաէներգիայի ծախսը տեխնոլոգիական

<sup>1</sup> Рябушкин Б. Т., Методы оценки теневого и неформального секторов экономики. Изд. Финансы и статистика 2003, стр. 5.

պահանջմունքները բավարարելու նպատակով և արտադրանքի թողարկումը, հումքի ծախսը: Վերլուծության այս մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս տարբեր ժամանակահատվածներում ստացված միևնույն ցուցանիշների վերաբերյալ սեղեկատվության համադրման և վերլուծության հիման վրա բացահայտելու այն դիտավորյալ կատարված արարքները, որոնք նպատակ են հետապնդել թաքցնելու ստացվող եկամուտների որոշակի մասը՝ խուսափելով լրացուցիչ հարկային պարտավորություններից:

Հատուկ հաշվարկային ցուցանիշների մեթոդը ենթադրում է որևէ հատուկ ցուցանիշի հաշվարկ, որն օգտագործված է բացահայտելու հետազոտվող օբյեկտի կողմից տնտեսական հանցագործություններ կատարելու փաստը: Մասնավորապես հետազոտվող օբյեկտի համար հաշվարկված ցուցանիշը համեմատվում է վերը նշված հատուկ հաշվարկային ցուցանիշների հետ, և եթե պարզվում է, որ այդ ցուցանիշների միջև կա տարբերություն, ապա ենթադրվում է, որ հետազոտվող օբյեկտը կատարել է իրավախախտում:

Ստերեոտիպերի մեթոդը կիրառվում է՝ նպատակ ունենալով բացահայտել տնտեսական այս կամ այն ցուցանիշների միջև այնպիսի ոչ սովորական կախվածությունները, որոնք նորմալ տնտեսական գործունեություն ծավալելու դեպքում գոյություն ունենալ չէին կարող:

Ուղղորդվող ցուցանիշների մեթոդի դեպքում վերլուծվում և իրար հետ համեմատվում են մի կողմից ձեռնարկության տնտեսական ցուցանիշները, իսկ մյուս կողմից՝ արտաքին միջավայրի այն գործոնները, որտեղ այն գործունեություն է ծավալում: Որպես օրինակ կարելի է բերել այն դեպքը, երբ ապրանքային շուկայում տեղի ունեցող դրական տեղաշարժերի պայմաններում տվյալ ձեռնարկությունը գրանցում է հակադարձ միտումներ՝ արտահայտված ֆինանսատնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշներով:

## ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՄԻԿՐՈՍԱԿԱՐԴԱԿՈՒՄ

**ԶՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*

*ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**ԼԻԼԻԹ ՄԱՆՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

**Համառոտագիր:** Հոդվածում վերլուծվել են ստվերային տնտեսության գնահատման մոտեցումները միկրոմակարդակում: Պետք է ասել, որ ստվերային տնտեսության մասշտաբների գնահատումը բավականին բարդ գործընթաց է, որն, իր հերթին ենթադրում է ինչպես քանակական, այնպես էլ որակական գնահատականներ: Սակայն մինչ այժմ դեռևս մասնագիտական գրականության մեջ գոյություն չունի հստակ ձևակերպում կամ մոտեցում, որը ճշգրիտ գնահատական կտար ստվերային տնտեսության մասշտաբների վերաբերյալ: Հոդվածում ընդգծվել են ստվերային տնտեսության գնահատման մոտեցումները միկրոմակարդակում, ինչպես նաև առանձնացվել են ուղղակի մեթոդները՝ տալով դրանց տեսական և գործնական մոտեցումները:

*Բանալի բառեր. ստվերային տնտեսություն, բաց ստուգումների մեթոդ, տնտեսաիրավական վերլուծության մեթոդ, փաստաթղթային վերլուծության մեթոդ:*

## ПОДХОДЫ ОЦЕНКИ ТЕНЕВОЙ ЭКОНОМИКИ НА МИКРОУРОВНЕ

**КРИСТИНЕ ЮРЬЕВНА БАГДАСАРЯН**, *к.э.н., доцент*

*старший научный сотрудник*

*Института экономики им. М. Котаняна НАН РА*

**ЛИЛИТ МАНВЕЛОВНА ПЕТРОСЯН**

*соискатель Института экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** В статье анализированы подходы оценки теневой экономики в обществе. Следует отметить, что масштаб теневой экономики представляет собой довольно сложный процесс, который, в свою очередь, предполагает как количественные, так и качественные оценки. Однако до сих пор в профессиональной литературе нет четкого определения или подхода, которые могли бы точно оценить масштаб теневой экономики. В статье

рассмотрены подходы к оценке теневой экономики на микроуровне и выделены прямые методы; а так же их теоретические и практические подходы.

*Ключевые слова: теневая экономика, открытый метод тестирования, метод экономического анализа, метод документального анализа.*

## **APPROACHES TO MEASURING THE SIZE OF SHADOW ECONOMY ON THE MICRO-LEVEL**

**KRISTINE YURI BAGHDASARYAN**, *Ph.D. in Economics, Associate Professor  
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**LILIT MANVEL PETROSYAN**

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article analyzes the approaches to measuring the size of the shadow economy on the micro-level. It needs to be stated that calculating the precise size of the shadow economy is a rather complicated process that in its turn implies both quantitative and qualitative measurements and assessments. However, a clear and/or single definition or approach to measuring the precise size of the shadow economy hasn't been justified by the economic literature so far. The approaches to measuring the size of shadow economy on the micro-level are covered in the article, and direct methods have been singled out by providing the theoretical and applied approaches to thereof.

**Keywords:** *Shadow economy, open test method, method of legal and economic analysis, method of document analysis.*

**ԶՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ**, տ.գ.թ., դոցենտ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*

*ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**ՏԱԹԵՎԻԿ ՍՄԲԱՏԻ ՓԱՐՍԱՂԱՆՅԱՆ**, տ.գ.թ.,

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*

*ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*


## **ՏՐԱՆՏԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼԵՐԴՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԼԵՐԸ ԶՅ-ՈՒՄ**

Տրանսֆերային գնագոյացումը փոխկապակցված անձանց միջև ապրանքների և ծառայությունների իրացումն է՝ շուկայականից տարբերվող գներով, ինչը հնարավորություն է տալիս եկամուտները վերաբաշխելու հոգուտ այն ընկերությունների, որոնք գործունեություն են ծավալում առավել թեթև հարկային դաշտում: Մա վճարվող հարկերը նվազագույնի հասցնելու առավել պարզ ու տարածված մեխանիզմ է:

Տրանսֆերային գնագոյացման հետ կապված հարաբերությունները նպատակաուղղված են զսպելու փոխկապակցված անձանց միջև կնքվող գործարքների առարկայի գնագոյացման հարցում փոխկապակցվածության գործոնի ազդեցությունը՝ կանխելով հարկվող եկամուտների արհեստական ուղղորդումը հարկման ավելի բարենպաստ դաշտ՝ պայմանավորված հարկային օրենսդրությամբ (տեղական կամ օտարերկրյա) նախատեսված առավելությունների կամ գործարքի կողմերից որևէ մեկի նկատմամբ կիրառելի արտոնությունների առկայությամբ:

Տրանսֆերային գնագոյացումը փոխկապակցված հարկ վճարողների կողմից կնքվող, պարզած ձևով հեռավորության սկզբունքին համապատասխանող և ֆինանսական ցուցանիշների ընթացակարգի կիրառմամբ վերահսկվող գործարքների գների գոյացումն է (զծապատկեր 1):

Հայաստանում, ինչպես և մյուս երկրներում, տրանսֆերային գնագոյացման կանոնների ներդրումը կարող է առաջացնել խնդիրներ, որոնք առաջին հերթին կապված են տեղեկատվության պակասի հետ: Հարկատուների մոտ բացակայում են գների հիմնավորման հմտություններն ու փորձը, որը բնական է և պետք է ձևավորվի ժամանակի ընթացքում: Այս հարցում շատ կարևոր է, որպեսզի հարկային մարմինն ընդառաջ գնա և բաց երկխոսություն վարի հարկատուների հետ:



**Գծապատկեր 1. Տրանսֆերային գնագոյացման մեխանիզմների գործընթացը<sup>1</sup>**

ՀՀ հարկատուների մյուս անհանգստությունը կապված է հարկային գաղտնիք համարվող տեղեկատվության օգտագործման հետ: Չնայած «Տրանսֆերային գնագոյացման մասին» ՀՀ օրենքն արգելում է նման տեղեկատվության օգտագործումը հարկային ստուգումների ժամանակ, սակայն ընկերությունները շարունակում են մտահոգված լինել, որ հարկային մարմինը կարող է օգտագործել այս տեղեկատվությունը, որը հասանելի չէ անձամբ հարկատուին: Հետևաբար՝ շատ ավելի կարևոր է, թե ինչպես են կանտոնները կիրառվելու որոշակի իրավիճակներում: Այլ երկրներում, որտեղ արդեն իսկ տարիներ շարունակ գործում են տրանսֆերտային գնագոյացման կանտոններն ու մեխանիզմները, երբեմն առաջ են գալիս նման տեղեկատվության ոչ նպատակային օգտագործման դեպքեր:

Հայաստանում տրանսֆերային գնագոյացման մեխանիզմները և դրանց ներդրման խնդիրներն արդիական են նաև այն առումով, որ վերահսկողության դաշտ են մտնելու ինչպես միջսահմանային խոշոր գործարքները, այնպես էլ երկրի ներսում կատարվող գործարքների մի մասը: Ինչ վերաբերում է այս գործարքների ընդհանուր ծավալներին, ապա դեռևս որոշակի գնահատականներ չեն տրվել, սակայն դրանք կարելի է հավաքել արտաքին առևտրի վիճակագրությունից հաշվի առնելով, որ յուրա-

<sup>1</sup> Գծապատկեր 1-ը կազմվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով «Տրանսֆերային գնագոյացման մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթները:

քանչյուր հարկատուի գծով վերահսկվող բոլոր գործարքների ընդհանուր գումարը պետք է գերազանցի տարեկան 200 մլն դրամը:

Օրինակ, զարգացած երկրներում, որտեղ գործում են նմանատիպ օրենքներ, հարկային վարչարարություն իրականացնող մարմիններին իրավունք է վերապահված ճշգրտելու տնտեսապես չհիմնավորված ցուցանիշների ու գործոնների հաշվառմամբ, այսինքն՝ պարզած ձեռքի հետավորության սկզբունքի չպահպանմամբ կնքված գործարքների արդյունքում հարկվող եկամտի գումարը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ նշված սկզբունքին համապատասխանությունը բացահայտվում է ուսումնասիրության առարկա հանդիսացող վերահսկվող գործարքի և դրա հետ համադրելի չվերահսկվող գործարքների պայմանների՝ գնագոյացման որոշ մեթոդների կիրառմամբ համեմատության արդյունքում:

Հարկ է նշել, որ գոյություն ունեն երկու տիպի գործարքներ.

1. վերահսկվող գործարքներ, որոնք կատարվում են փոխկապակցված անձանց միջև,
2. չվերահսկվող գործարքներ, որոնք իրականացվել են փոխկապակցված չհամարվող անձանց միջև:

Վերահսկվող գործարքների դեպքում հարկային մարմիններն իրավունք ունեն ստուգելու կիրառված վերահսկվող գործարքներում շուկայական գների համապատասխանությունը, և եթե կողմերը չեն սահմանել շուկայական գներ, ապա ավելացնում են հարկերը: Տեսնենք, թե ինչպես կարող է հարկատուն, օգտագործելով օրենքով նախատեսված հնարավորությունները, նվազեցնել ռիսկերը տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառման հետ կապված: Հարկատուների համար նախատեսված տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառման բաժինը լի է մի շարք բարդություններով: Ի վերջո, փոխկապակցված անձանց միջև գործարքներ կատարող ընկերությունները պետք է ներկայացնեն վերահսկվող գործարքների ծանուցում, ինչպես նաև պատրաստեն փաստաթղթեր հարկային վերահսկողության նպատակով: Որն էլ զգալի աշխատանք և ֆինանսական ռեսուրսներ է պահանջում այդ ընկերություններից: Ջարմանալի չէ այն, որ այդ պարագայում նրանցից ոմանք փորձում են խուսափել վերահսկվող գործարքների կիրառումից, օրինակ՝ հրաժարվում են փոխկապակցված անձ լինելուց: Ուստի ընկերությունների մի խումբ, փաստացի փոխկապակցված հարկատուներ լինելով հանդերձ, ստեղծում

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը տրանսֆերային գնագոյացման մասին. Չողված 4. Վերահսկվող գործարքները:

<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=5940&Reading=0>

են փոխկապակցվածության բացակայության տեսք: Օրինակ՝ բիզնեսի սեփականատերերը և ղեկավարները խուսափում են մասնակցելուց այլ ընկերությունների խմբերի կառավարմանը և տիրապետմանը: Նրանք փորձում են ձևականորեն խուսափել փոխկախվածությունից և, համապատասխանաբար, վերահսկվող գործարքների կանոնների կիրառությունից: Սակայն նման գործողությունները զգալի ռիսկեր են կրում:

Հարկ է նշել, որ վերահսկվող գործարքները կարող են լինել նաև ավելի քիչ ռիսկային: Եթե կան վերահսկվող գործարքներ, ապա կարելի է ընտրել գործնականում տրանսֆերային գնագոյացման այն մեթոդը, որը հնարավորություն է տալիս նվազեցնելու ռիսկերը կապված գների հարկային վերահսկողության հետ<sup>1</sup>:

1. Վերահսկվող գործարքները շուկայական պայմաններում: Հենց դա էլ պահանջում է հարկային օրենսգիրքը: Որպես կանոն, շուկայական գինը գների միջակայքն է: Եթե այս միջակայքում սահմանվի գինը, ապա հարկային լրացուցիչ հետևանքներ չեն լինի: Շուկայական գների միջակայքի սահմաններում հարկատուն իրավունք ունի ընտրելու այն գինը, որն իրեն ավելի շահավետ է: Այսպիսով, եթե շահույթ չհետապնդող (անարդյունավետ) ընկերությունը ապրանքը վաճառում է շահութաբեր ընկերությանը, ապա ամենաբարձր գինը կարող է ավելի շահավետ լինել, որպեսզի ծախսերը (կորուստները) տեղափոխի մեկ այլ խմբի ընկերության: Հետևաբար, այս պարագայում նպատակահարմար է սահմանել գինը այնպես, որ այն մոտ լինի միջակայքի վերին սահմանին: Սակայն, եթե ընկերությունը հակառակ իրավիճակում է, ապա ավելի շահեկան է, որ գինը ավելի մոտ լինի միջակայքի ստորին սահմանին: Շուկայական գների միջակայքում ընտրելով գինը՝ պետք է հիշել, որ հարկային մարմինն իրավունք ունի ստուգելու և չհամաձայնելու ընկերության կողմից որոշված գնի հետ:


2. Ներքին համադրելի գործարքները: Օրենսգրքի դրույթներին համապատասխան, առաջնային մեթոդը համադրելի շուկայական գների մեթոդն է: Հատկապես պետք է առանձնացնել այսպես կոչված ներքին համադրելի գործարքները, այսինքն՝ այն գործարքները, որոնք համադրվում են վերահսկվող գործարքների հետ, բայց կատարվել են ընկերության անկախ կողմի հետ կապված առևտրային և ֆինանսական համադրելի պայմաններում: Եթե հարկատուն գործարքներ ունի այն անձանց հետ, որոնք փոխկապակցված անձինք չեն համարվում, ապա այդպիսի գործարքների գները առաջնահերթություն են հարկման նպատակների հա-

<sup>1</sup> Электронный ресурс: Контролируемые сделки: выбор метода трансфертного ценообразования. <http://www.garant.ru/article/805167/>

մար: Հետևաբար, կարելի է կառավարել «ոչ փոխկապակցված» հարկատուների հետ իրականացված նման համեմատելի գործարքները, որպեսզի տեղեկատվական այլ աղբյուրների կիրառմամբ նվազեն հարկային մարմնի կողմից գների վերանայման ռիսկերը: Ներքին համադրելի գների օգտագործումը շահավետ է այնքանով, որ տեղեկատվության այս աղբյուրը տվյալների բազաների ձեռքբերման համար ծախսեր չի պահանջում:

**3. Շուկայական գների որոշման մեթոդի ընտրությունը:**

Հարկային օրենսգիրքը նախատեսում է շուկայական գների որոշման հինգ եղանակ (գծապատկեր 2):



**Գծապատկեր 2. Շուկայական գների որոշման մեթոդները<sup>1</sup>**

Թույլատրվում է օգտագործել այս մեթոդների երկու կամ ավելի համադրություն:

4. Անկախ գնահատական: Շուկայական գների արդարացման այս մեթոդը թույլատրելի է հազվադեպ: Նման դեպքերում գնահատողը ներգրավվում է մեկանգամյա գործարքի մեջ: Այս դեպքում մեկանգամյա գործարքը ընկալվում է որպես գործարք, որի տնտեսական էությունը տարբերվում է կազմակերպության հիմնական գործունեությունից և իրականացվում է հասույթի հիմունքներով: Հետևաբար, մեկանգամյա գործարքի համար գինը կարող է որոշվել անկախ գնահատողի զեկույցի (հաշվետվության) հիման վրա:

<sup>1</sup> Գծապատկեր 2–ը կազմվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով «Տրանսֆերային գնադրացման մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթները:

5. Օրենքով սահմանված պարտքային պարտավորությունների վերաբերյալ սահմանափակումների կիրառումը: Վերահսկվող պարտքային պարտավորությունների վերաբերյալ տոկոսների մեծության ճանաչման համար հատուկ կանոններ են սահմանվում: Օրենսգիրքը սահմանում է բոլոր տեսակի արժույթների տոկոսադրույքների միջակայքը, իսկ եթե որոշակի վարկի տոկոսադրույքը գտնվում է այդ միջակայքում, ապա վարկատուի եկամուտներն ու փոխառուի ծախսերը ճանաչվում են շուկայական: Այդ դեպքում վերանում են շուկայական տոկոսադրույքի հաշվարկման անհրաժեշտությունը և հարկային վերահսկողության նպատակով փաստաթղթերի պատրաստումը: Մինևույն ժամանակ արգելվում է սահմանել փաստացի տոկոսադրույքի առավելագույն (սվազագույն) արժեք, այն կարող է լինել սահմանային արժեքների միջակայքում: Բայց այդ դեպքում կկիրառվեն բաժնի ընդհանուր կանոնները: Դա նշանակում է, որ հարկային մարմինն իրավունք ունի վիճարկելու գործարքների գները հարկման նպատակներով:

6. Երջանատության մեջ գտնվող արժեթղթերի գների որոշման մեթոդի ընտրություն: Ընդ որում, որոշ դեպքերում թույլատրվում է կիրառել վերոնշյալ գների որոշման այն մեթոդները, որոնք նախատեսվում են: Այսպիսով, շրջանատության մեջ գտնվող արժեթղթերով գործարքների ֆինանսական արդյունքի ստեղծմամբ հարկատուն իրավունք ունի ընդունելու գործարքի հաշվարկման գինը հարկային նպատակներով, որոշված մեթոդների կիրառմամբ, օրենքով սահմանված կարգով<sup>1</sup>:


Չվերահսկվող գործարքները համադրելի են վերահսկվող գործարքների հետ այն դեպքում, եթե չկան այնպիսի էական տարբերություններ, որոնք կարող են էապես ազդել տրանսֆերային գնագոյացման համապատասխան մեթոդով քննության ենթակա ֆինանսական ցուցանիշների վրա, կամ եթե առկա են նման տարբերություններ, ապա չվերահսկվող գործարքի համապատասխան ֆինանսական ցուցանիշը ենթարկվել է ճշգրտման<sup>2</sup>: Երկու կամ ավելի գործարքների համադրելիությունը պարզելու համար պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները.

- գործարքի առարկայի բնույթը,
- գործարքի կողմերի իրականացրած գործառույթները,
- գործարքների պայմանագրային պայմանները,

<sup>1</sup> Электронный ресурс: Контролируемые сделки: выбор метода трансфертного ценообразования. <http://www.garant.ru/article/805167/>.

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը տրանսֆերային գնագոյացման մասին. Հոդված 7. Չվերահսկվող գործարքների մասին տեղեկատվության աղբյուրները: <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=5940&Reading=0>

- տնտեսական հանգամանքները, որոնց պայմաններում գործարքներն իրականացվել են,
- գործարքների մասով փոխկապակցված անձանց կողմից որդեգրված գործարար ռազմավարությունները:



**Գծապատկեր 3. Չվերահսկվող գործարքների տեսակները<sup>1</sup>**

Չվերահսկվող գործարքների մասին տեղեկատվություն կարող են ներառել ներքին և արտաքին չվերահսկվող գործարքները (գծապատկեր 3):

Հարկ է նշել, որ հարկային մարմինը չի կարող հիմնվել արտաքին չվերահսկվող գործարքի վրա՝ ճշգրտումներ կատարելու նպատակով, եթե իրականացվող համադրելիության գնահատման մանրամասները պարունակում են հարկային գաղտնիք:

Ներքին և արտաքին գործարքների միջև առկա են որոշակի տարբերություններ՝ պայմանավորված տնտեսապես փոխկապակցված երկրների միջև ազգային ինքնիշխանությամբ և պետական սահմաններով: Այդ տարբերություններն են<sup>2</sup>.

<sup>1</sup> Գծապատկեր 3-ը կազմվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով «Տրանսֆերային գլոբալացման մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթները:

<sup>2</sup> Электронный ресурс: Эволюция и развитие мировой экономики: Внешние и внутренние сделки. <http://mirovaja-ekonomika.ru/vneshnie-i-vnutrennie-sdelki/>

1. միջազգային գործարքները պահանջում են արտարժույթով հաշվարկներ, որոնք փոխարկվում են ազգային արժույթով: Փոխանակման հարաբերակցությունը ենթարկվում է տարբեր տատանումների, հետևաբար՝ փոխանակման գործընթացը ինքնին կապված է ռիսկերի և բարդությունների հետ, որոնք բնորոշ չեն ներքին գործարքներին:

2. Ազգային կառավարությունները կարող են կիրառել ցանկացած սահմանափակում միջազգային գործարքների վրա, որոնք, սակայն, չեն կիրառվում ներքին գործարքներում: Նման սահմանափակումների թվում կարելի է դասել սակագները, ներմուծման տարբեր քվոտաներ, այսպես կոչված, արտահանման արտոնյալ սահմանները, սուբսիդիաների միջոցով արտահանման խթանումը, ազգային արժույթի փոխարկելիության սահմանափակումները: Այս բոլոր միջոցները խոր ազդեցություն ունեն տնտեսության վրա, բայց հիմնականում վերաբերում են ոչ թե ներքին, այլ միջազգային, տնտեսական գործընթացներին:

3. Յուրաքանչյուր երկիր վարում է դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականություն, որն ազդում է գնաճի, տնտեսական աճի, զբաղվածության մակարդակի վրա: Որպես կանոն, նման քաղաքականությունը երկրի ներսում ընդհանուր է բոլոր տարածաշրջանների համար, սակայն զգալիորեն տարբերվում է մի երկիրը մյուսից: Եթե, օրինակ, Ֆրանսիայում գնաճի մակարդակը մոտավորապես նույնն է իր բոլոր շրջանների համար, ապա Ֆրանսիայի և Գերմանիայի միջև այս ցուցանիշի տարբերությունները կարող են բավականին զգալի լինել, որն էլ ազդում է ինչպես սովյալ երկրների շուկաներում, այնպես էլ երրորդ երկրների շուկաներում ապրանքների և ծառայությունների մրցունակության վրա: Այսպիսով, միջազգային առևտրի և ֆինանսական գործարքների բազմաթիվ փոփոխություններ առաջանում են այս կամ այն երկրի կողմից իրականացվող ներքին տնտեսական քաղաքականության արդյունքում:

4. Սովորաբար յուրաքանչյուր երկիր տեղեկացված է արտաքին առևտրի կառուցվածքի, ծավալների և ուղղությունների մասին ավելի շատ, քան ներքին գործարքների նույն ցուցանիշների մասին: Միացյալ Նահանգներում, օրինակ, ոչ ոք չգիտի, թե ինչ ապրանքներ են վաճառվում և ինչ քանակությամբ Կալիֆոռնիայի Լահանգի և Նյու Յորքի քաղաքների միջև: Վարչական սահմաններում պետությունների միջև ոչ ոք չի արձանագրում այդ տեղեկությունները: Մեկ այլ բան է արտաքին առևտուրը: Երբ առևտրային նավը դուրս է գալիս կամ մտնում է օտարերկրյա նավահանգիստ, վաճառողները կամ գնորդները պետք է լրացնեն արտահանման կամ ներմուծման հռչակագիր տեղեկացնելով բեռի բնույթի,

քաշի, արժեքի, դրա ստացողի և ուղարկողի, ինչպես նաև այլ տեղեկությունների մասին: Հենց սա այն առևտրային հայտարարագրերից է, որոնք պարտադիր են բոլոր երկրներում, որոնք կարող են ձեռք բերել ավելի քիչ կամ ոչ այնքան ճշգրիտ վիճակագրական տեղեկատվություն միջազգային առևտրի և այլ համաշխարհային տնտեսական գործարքների վերաբերյալ. ինչը հաճախ բավարար չէ ներքին առևտրի և այլ գործարքների վերլուծության համար:

5. Արտադրության գործոնները շատ ավելի շարժունակ են երկրի ներսում, քան երկրների միջև: Շատ քիչ բան կարող է խանգարել ԱՄՆ-ի կամ Անգլիայի շրջանների միջև աշխատանքի տեղաշարժին: Այնուամենայնիվ, ներգաղթի բոլոր սահմանափակումները, լեզուն և այլ սոցիալ-մշակութային տարբերությունները երբեմն լուրջ խոչընդոտներ են երկրների միջև մարդկանց տեղաշարժի համար: Բհարկե, աշխատուժի համեմատ կապիտալը շատ ավելի հեշտ է տեղաշարժվում, սակայն այդ դեպքում ևս ավելի ցայտուն է երկրի ներսում, քան տարբեր պետությունների միջև:

6. Եվ վերջապես, արտաքին շուկաներ ներթափանցելու համար արտահանողները պետք է իրենց արտադրանքը հարմարեցնեն արտասահմանյան սպառողների ստանդարտների ու ճաշակի հետ: Ներքին և արտաքին տնտեսական կապերի միջև առկա բոլոր տարբերություններն ավելի շուտ վերաբերում են դրանց իրականացման ձևերին, քան բուն գործընթացների էությանը: Մինչդեռ այս տարբերություններն այնքան կարևոր և եզակի են, որ համաշխարհային տնտեսության աճի հետ մեկտեղ հանգեցրել են տնտեսական գիտելիքների որոշակի ոլորտի՝ համաշխարհային տնտեսության տեսության ձևավորմանը: Համաշխարհային տնտեսությունը որպես գիտություն շուկայական տնտեսության տեսության մի մասն է, որն ուսումնասիրում է տարբեր երկրների միջև տնտեսական փոխգործակցության ձևերի օրինականությունն ապրանքների և ծառայությունների միջազգային փոխանակման բնագավառում<sup>1</sup>:

Կարևոր խնդիրներից մեկը ՀՀ հարկային նոր օրենսգրքում տրանսֆերային գնագոյացման կանոններին, հարևան երկրներում դրանց կիրառման գործնական օրինակներին, հարկատուների հետ այդ նոր կանոններին համապատասխանելու համար անհրաժեշտ նախապատրաստական քայլերն են, որոնք բավականին անհսնգստացնում են ՀՀ հարկատուներին:

<sup>1</sup> Электронный ресурс: Эволюция и развитие мировой экономики: Внешние и внутренние сделки. <http://mirovaja-ekonomika.ru/vneshnie-i-vnutrennie-sdelki/>.

Այսպես, հարկային նոր օրենսգրքի համաձայն՝ փոխկապակցված անձանց միջև գործարքները պետք է իրականացվեն շուկայական սկզբունքներով, այսինքն՝ գները չպետք է տարբերվեն շուկայականից: Հարկային մարմնին տրվում է լիազորություն՝ վերահսկելու այս գործարքները, իսկ հարկատուները պարտավորվելու են ներկայացնել նման գործարքներում գների ձևավորման հիմնավորումը: Վերահսկողության դաշտ են ընկնում նաև օֆշորներում գործող ընկերությունների հետ կատարված գործարքները:

## **ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՅԱԳՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԴՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԴՅՈՒՄ**

**ԶՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂԱՍԱՐՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**ՏԱԹԵՎԻԿ ՍՍԲԱՏԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հողվածի շրջանակներում սահմանվել է տրանսֆերային գնագոյացում եզրույթը: Գործարքների իրականացման ընթացքում առանձնացվել են դրանց սիպերը(վերահսկվող և չվերահսկվող), ուսումնասիրվել են շուկայական գների որոշման մեթոդները: Վերլուծվել են չվերահսկվող գործարքների արտաքին և ներքին տեսակները, ինչպես նաև բացահայտվել են տեսակների միջև տարբերությունները: Ամփոփելով տվյալ ուսումնասիրությունը՝ պետք է նշել, որ տրանսֆերային գնագոյացման միանշանակ կիրառվող մեխանիզմ դեռևս մշակված չէ:

**Բանալի բառեր.** *տրանսֆերային գնագոյացում, հարկ վճարող, չվերահսկվող գործարքներ, վերահսկվող գործարքներ, ներքին համադրելի գործարքներ, գործարքների համադրելիություն, ներքին գործարքներ, արտաքին գործարքներ:*

## МЕХАНИЗМЫ ТРАНСФЕРНОГО ЦЕНООБРАЗОВАНИЯ И ПОДХОДЫ ПО ИХ ВНЕДРЕНИЮ В РА

**КРИСТИНЕ ЮРЬЕВНА БАГДАСАРЯН**, к.э.н., доцент,  
старший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА  
**ТАТЕВИК СМБАТОВНА ПАРСАДАНЯН**, к.э.н.  
младший научный сотрудник Института экономики им.М.Котаняна ИАН РА

**Аннотация:** В рамках этой статьи определяется термин «трансферное ценообразование». Во время транзакции были идентифицированы их типы (контролируемые и неконтролируемые), были изучены методы определения рыночных цен. Были проанализированы внешние и внутренние типы неконтролируемых транзакций, а также были выявлены различия между этими видами. Подведением итогов исследования, следует отметить, что окончательный применяемый механизм трансфертного ценообразования еще не разработан.

**Ключевые слова:** трансферное ценообразование, налогоплательщики, неконтролируемые транзакции, контролируемые транзакции, внутренние транзакции, сопоставимость транзакций, внешние транзакции.

## THE MECHANISMS OF TRANSFER PRICING AND POSSIBLE APPROACHES TO INTRODUCING THEREOF IN THE REPUBLIC OF ARMENIA

**KRISTINE YURI BAGHDASARYAN**, Ph.D. in Economics, Associate Professor  
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia  
**TATEVIK SMBAT PARSADANYAN**, Ph.D. in Economics  
Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia

**Abstract:** The article defines the term “transfer pricing”. In the process of carrying out transactions the types of thereof have been identified (controlled and non-controlled), and the methods of market pricing have been studied as well. The external and internal types of non-controlled transactions have been analyzed as well, and the differences between the two types have been identified. The authors conclude that a single, unanimously applied transfer pricing mechanism hasn't been designed so far.

**Keywords:** Transfer pricing, taxpayer, uncontrolled transactions, controlled transactions, internal comparable transactions, compatibility of transactions, internal transactions, external transactions.

**ԱՇՈՏ ՀԱԿՈՒԻ ԲԱՅԱԴՅԱԼ**, տ.գ.դ., պրոֆեսոր  
 ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
 ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող  
**ԱՆՆԱ ԱՇՈՏԻ ԲԱՅԱԴՅԱԼ**, տ.գ.թ., դոցենտ  
 Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

## **ՀՀ ՀԱՄԱԽԱՈՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԵԻ ԴԻՆԱՄԻԿ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Վերջին տասնամյակում ՀՀ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) և պետական պարտքի մեծությունն ու տնտեսական գործընթացների վրա դրանց ազդեցության աստիճանը բավականին դինամիկ փոփոխությունների են ենթարկվել: Հաշվի առնելով 90-ական թվականներին պետական պարտքի կառավարման համակարգի կայացման գործընթացները, ինչպես նաև այդ պարտքի ներգրավման և մարման անկանոն միտումները այս հետազոտության մեջ վերլուծության են ենթարկվել վերջին տարիների դինամիկ փոփոխությունները: Քանի որ այդ տարիներին պետական պարտքի կառավարման գործընթացում ձևավորվել էին որոշակի անորոշություններ:

ՀՀ պետական պարտքի վերլուծության ժամանակ չի կարելի անտեսել ՀՀ ՀՆԱ-ի մեծության դինամիկայում նկատվող կարևոր զարգացումները, որոնց հետ կապված տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:


*Աղյուսակ 1*

**ՀՀ համախառն ներքին արդյունքի 2007-2017թթ. դինամիկ փոփոխությունները (մլն դրամ և մլն ԱՄՆ դոլար)\***

| Տարիներ | ՀՆԱ մլն դրամ | Հարաբերական շեղումը (+,-) նախորդ տարվա համեմատ (%) | ՀՆԱ մլն ԱՄՆ դոլար | Հարաբերական շեղումը (+,-) նախորդ տարվա համեմատ (%) |
|---------|--------------|--|-------------------|--|
| 2007    | 3149283.4    | 18.5   | 9206.3            | 44.20  |
| 2008    | 3568227.6    | 13.3   | 11662.0           | 26.7   |
| 2009    | 3141651.0    | - 12.0   | 8648.0            | - 25.8   |
| 2010    | 3460202.7    | 10.1   | 9260.3            | 7.1  |
| 2011    | 3777945.6    | 9.2  | 10142.1           | 9.5  |
| 2012    | 4266460.5    | 12.9   | 9958.0            | - 1.8  |
| 2013    | 4555638.2    | 6.8  | 10439.2           | 4.8  |
| 2014    | 4828626.3    | 6.0  | 10888.8           | 4.3  |
| 2015    | 5043633.2    | 4.5  | 10553.3           | - 3.1  |
| 2016    | 5079864.6    | 0.7  | 10572.3           | 0.2  |
| 2017    | 5580116.9    | 9.9  | 11559.7           | 9.3  |

\* [www.armstat](http://www.armstat). Հայաստանի վիճակագրական տարեգիրք

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են այն սափին, որ 2008թ., ֆինանսատնտեսական համաշխարհային ճգնաժամով պայմանավորված, նկատվել է ՀՆԱ-ի կտրուկ անկում: Դրամային արտահայտությամբ ՀՆԱ-ի անկումը կազմել է 12.0%, դոլարային արտահայտությամբ՝ 25.8%, ինչը պայմանավորված է 2009թ. նախորդ տարվա համեմատ ազգային արժույթի փոխարժեքի կտրուկ անկմամբ: Դոլարային արտահայտությամբ անկումն ավելի հստակ է արտահայտում արտաքին պետական պարտքի սպասարկման ունակությունը, ինչը ևս մեկ անգամ հիմնավորում է պետական պարտքի դինամիկայի վերլուծությունը՝ միաժամանակ երկու արժույթով իրականացնելու անհրաժեշտությունը: Հետևաբար՝ աղյուսակ 1-ում բերված տվյալներն ավելի հասկանալի դարձնելու համար ներկայացնենք գծապատկեր 1-ը:



**Գծապատկեր 1. ՀՀ համախառն ներքին արդյունքի դինամիկ փոփոխությունները՝ ըստ 2007-2017թթ.**

Դրամային արտահայտությամբ ՀՆԱ-ի մեծությունն արդեն 2011թ. հասավ միջճգնաժամային մեծությանը, ապա դոլարային արտահայտությամբ այն դեռևս գտնվում է ճգնաժամային մակարդակից ցածր մակարդակում, ինչը նշանակում է, որ ճգնաժամից 7 տարի անց էլ պետությունը չի վերականգնել իր հզորությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ՀՆԱ-ն և պետական պարտքը խիստ փոխկապակցված են և պայմանավորվում են մեկը մյուսով, ուստի ներկայացնենք ՀՀ պետական պարտքի վիճակագրական տվյալները՝ 2007-2017թթ. դինամիկան աղյուսակ 2-ում:


ՀՀ պետական պարտքի դինամիկ փոփոխությունները՝ ըստ 2007-2017թթ.  
(մլրդ դրամ և մլն ԱՄՆ դոլար)<sup>\*</sup>

| Տարիներ | ՀՀ պետական պարտք, մլրդ դրամ | Հարաբերական շեղումը (+) նախորդ տարվա համեմատ, % | ՀՀ պետական պարտք, մլն ԱՄՆ դոլար | Հարաբերական շեղումը (+) նախորդ տարվա համեմատ, % |
|---------|-----------------------------|---|---------------------------------|---|
| 2007    | 516.2                       | 1.4   | 1696.9                          | 21.2  |
| 2008    | 584.6                       | 13.3  | 1906.1                          | 12.3  |
| 2009    | 1270.7                      | 117.4   | 3362.5                          | 76.4  |
| 2010    | 1379.3                      | 8.6   | 3795.1                          | 12.9  |
| 2011    | 1592.3                      | 15.4  | 4128.7                          | 8.8   |
| 2012    | 1764.4                      | 10.8  | 4372.1                          | 5.9   |
| 2013    | 1861.3                      | 5.5   | 4588.5                          | 5.0   |
| 2014    | 2109.6                      | 13.3  | 4441.5                          | -3.2  |
| 2015    | 2456.3                      | 16.4  | 5077.7                          | 14.3  |
| 2016    | 2875.6                      | 17.1  | 5942.1                          | 17.02   |
| 2017    | 3279.6                      | 14.1  | 6774.6                          | 14.0  |

\* [www.arnstat](http://www.arnstat). Հայաստանի վիճակագրական տարեգիրք

Աղյուսակ 2-ից երևում է, որ ՀՀ պետական պարտքի մեծությունը դրամային և դոլարային արտահայտությամբ 2007 թվականին կազմել է համապատասխանաբար 516.2 մլրդ դրամ և 1696.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2017 թվականին՝ 3279.6 մլն դրամ և 6774.6 մլն ԱՄՆ դոլար: Այսինքն, եթե դրամային արտահայտությամբ պարտքի մեծությունն աճել է 6.4 անգամ, ապա դոլարային արտահայտությամբ՝ 4.0 անգամ:

Աղյուսակ 2-ին համահունչ ներկայացված գծապատկեր 2-ի տվյալները ցույց են տալիս, որ դրամային և դոլարային արտահայտությամբ պետական պարտքի դինամիկայում նկատվում են որոշակի տարբերություններ, որոնք պայմանավորված են արտարժույթային փոխարժեքների տարբերությամբ:



**Գծապատկեր 2. ՀՀ պետական պարտքի դինամիկան՝ ըստ 2007-2017թթ.**


Ցանկացած երկրում, այդ թվում նաև Հայաստանում կարևորագույն ցուցանիշ է համարվում պետական պարտքի բեռը, որը ՀՀ պետական պարտքի մեծության և ՀՆԱ-ի հարաբերությունն է: Վերջինս հնարավորություն է ընձեռում՝ գնահատելու տնտեսության վրա պարտքային ճնշումը: Որքան մեծ է այդ ցուցանիշի արժեքը, այնքան պետությունը դրան համահունչ երկրում արտադրված ապրանքների և ծառայությունների ավելի մեծ մասնաբաժին պետք է ուղղի ոչ թե տնտեսության ներքին զարգացման խթանմանը, այլ պարտատերերին պարտքային պարտավորությունների վերադարձմանը: Միաժամանակ այն դեպքում, երբ կուտակված պարտքն ավելի է մեծանում, ապա կարող է ուղղել պարտքային պարտավորությունների մարմանը, և արդյունքում պարտատերերի մոտ կարող է մտավախություն առաջանալ երկրի վճարունակության վերաբերյալ: Պետական պարտքի բեռի ցուցանիշի 50% մեծությունը համարվում է անվտանգ և մտավախության համար հիմք չի ձևավորում: Կատարված հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանը եվրոգոտում ներառվելու համաձայնագրով այս ցուցանիշի մեծությունը պետք է լինի 60%-ից ոչ ավել<sup>1</sup>:

ՀՀ պետական պարտքի և ՀՆԱ-ի ցուցանիշի հարաբերակցության վերաբերյալ համապատասխան հաշվարկային տվյալները ներկայացնենք աղյուսակ 3-ում և գծապատկեր 3-ում:

<sup>1</sup> Ա. Հ. Բայադյան, Հ. Ա. Մարկոսյան, Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2015թ.:

**Պետական պարտք /ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշն՝  
ըստ 2007-2017թթ.**

| Տարիներ | ՀՀ պետական /ՀՆԱ, %, դրամային արտահայտությամբ | ՀՀ պետական /ՀՆԱ, %, դոլարային արտահայտությամբ |
|---------|--|---|
| 2007    | 16.4   | 18.4  |
| 2008    | 16.4   | 16.3  |
| 2009    | 40.5   | 38.9  |
| 2010    | 39.9   | 41.0  |
| 2011    | 42.2   | 40.7  |
| 2012    | 41.4   | 43.9  |
| 2013    | 40.9   | 44.0  |
| 2014    | 43.7   | 40.8  |
| 2015    | 48.7   | 48.1  |
| 2016    | 56.6   | 56.2  |
| 2017    | 58.8   | 58.6  |



**Գծապատկեր 3. Պետական պարտք / ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշի դինամիկան՝ ըստ 2007-2017թթ.**

Պետական պարտք և ՀՆԱ հարաբերակցության դինամիկան վերլուծելով՝ նկատվում են տարբերություններ պարտքի և ՀՆԱ-ի դրամային ու դոլարային արտահայտությամբ կատարված հաշվարկների ժամանակ: Մինչև 2008 թվականը այդ ցուցանիշը դրսևորել է հստակ արտահայտված նվազման միտում, այն 2008 թվականին կազմել է 16.3%: ՀՀ պետական պարտքի պատկերն ամբողջովին փոխվում է 2009 ճգնաժամային տարում. դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ ճգնաժամային պայման-

ներում ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը գերազանցեց նախապես պլանավորված մակարդակը՝ կազմելով ՀՆԱ-ի 7.6%-ը՝ նախատեսված 1%-ի փոխարեն: 2009 թվականից հետո նկատվում է հակառակ միտումը, ինչի արդյունքում այդ ցուցանիշի դրամային և դոլարային արտահայտությամբ մեծությունները կազմել են 2017 թվականին համապատասխանաբար 58.8% և 58.6%:

Ամփոփելով նշենք, որ կատարված վերլուծությունները վկայում են, որ ՀՆԱ-ի և պետական պարտքի միջև կա խիստ փոխկապվածություն: Այն է. ինչքան շատ լինի ՀՆԱ-ն, այնքան ցածր մակարդակի վրա կգտնվի պետական պարտքը: Հետևաբար դրան հասնելու համար ՀՀ կառավարությունը պետք է աջակցություն ցուցաբերի արտադրական խոշոր կազմակերպությունների վերագործարկմանը և նորերի բացմանը, քանի որ հենց դրանք կնպաստեն աշխատատեղերի ու եկամուտների ավելացմանը: Արդյունքում դրանով իսկ կավելանա ՀՀ պետական բյուջեի եկամտային մասը՝ ի հաշիվ շահութահարկի և եկամտային հարկի:

### **ՀՀ ՀԱՄԱՆԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԵԻ ԴԻՆԱՄԻԿ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

**ԱՇՈՏ ՀԱԿՈՒԲԻ ԲԱՅԱԴՅԱՆ**, *տ.գ.դ., պրոֆեսոր*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող*

**ԱՆՆԱ ԱՇՈՏԻ ԲԱՅԱԴՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան*

**Համառոտագիր:** Ցանկացած երկրի, այդ թվում նաև Հայաստանի տնտեսության համար կարևորվում է տնտեսական աճի ապահովումը, որը հիմնականում պայմանավորված է համախառն ներքին արդյունքի ավելացմամբ: Վերջինս իր էությամբ խիստ փոխկապակցված է նաև ՀՀ պետական պարտքի փոփոխությունների հետ: Քանի որ որքան արագ տեմպերով ավելանա ՀՆԱ-ի մեծությունը, կնշանակի պետական պարտքի մարումներն ավելի հեշտությամբ կարող են իրականացվել: Ուստի այդ մեծությունների միջև եղած փոխադարձ կապը բացահայտելու համար ներկայացրել ենք պետական պարտքի բեռի հաշվարկն ըստ 2007-2017թթ.:

**Բանալի բառեր.** *համախառն ներքին արդյունք, պետական պարտք, դինամիկ փոփոխություններ, պետական պարտքի բեռ, բյուջեի դեֆիցիտ, պետական բյուջե:*

## АНАЛИЗ ДИНАМИЧЕСКОГО ИЗМЕНЕНИЯ ВАЛОВОГО ВНУТРЕННЕГО ПРОДУКТА И ГОСУДАРСТВЕННОГО ДОЛГА РА

**АШОТ АКОПОВИЧ БАЯДЯН**, д.э.н., профессор

*Зав. Отделом, старший научный сотрудник  
Института экономики НАН РА им. Котаяна*

**АННА АШОТОВНА БАЯДЯН**, к.э.н., доцент

*Армянский Государственный Экономический университет*

**Аннотация:** Как для любой страны, так и для экономики Армении важно обеспечить экономический рост, что в основном обусловлено увеличением валового внутреннего продукта. Последнее по существу строго взаимосвязано с изменениями в государственном долге РА. И насколько быстрыми темпами будет увеличиваться величина ВВП, настолько легче будет погасить государственный долг. Поэтому, чтобы выявить взаимосвязь между этими величинами, мы представили расчет бремени государственного долга на 2007-2017 гг.

**Ключевые слова:** *валовой внутренний продукт, государственный долг, динамические изменения, бремя государственного долга, дефицит бюджета, государственный бюджет.*

## ANALYSIS OF DYNAMIC CHANGES REPORTED IN THE GROSS DOMESTIC PRODUCT AND PUBLIC DEBT

**ASHOT HAKOB BAYADYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor  
Head of Department, Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ANNA ASHOT BAYADYAN**, *Ph.D. in Economics, Associate Professor  
Armenian State University of Economics*

**Abstract:** For the economy of any nation, namely for the economy of Armenia as well, ensuring the economic growth is stressed that is mainly associated with the increase reported in the gross domestic product (GDP). The latter one is highly correlated with changes in the public debt of the Republic of Armenia, per se. Higher GDP growth rates would imply smooth process of repaying and servicing of the public debt. Therefore, in order to identify how these two variables are correlated the authors provide the measurement of the public debt burden based on the statistical data covering the period 2007-2017.

**Keywords:** *Gross domestic product, public debt, dynamic changes, public debt burden, budget deficit, state budget.*

### ՀՀ-Ի ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

Վերջին մի քանի տասնամյակում պետությունների համագործակցության մեջ որպես հարաբերությունների կառուցման ձևաչափ լայն տարածում են ստացել ինտեգրացիոն գործընթացները, որոնք իրականացվում են պետությունների որոշակի խմբի կողմից ինտեգրացիոն կազմավորում հիմնադրելու միջոցով: Նման կազմավորումներ են Եվրոպական միությունը (ԵՄ), Շանհայի համագործակցության կազմակերպությունը, Եվրասիական տնտեսական ընկերակցությունը և այլն: Նշված ինտեգրացիոն կազմավորումների շարքը գալիս է համալրելու Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ նաև ԵՏՄ), որին անդամակցում են Հայաստանը, Ռուսաստանը, Ղազախստանը և Բելառուսը<sup>1</sup>: Եվրասիական տնտեսական միությունը հիմնադրվել է Եվրասիական տնտեսական ընկերակցության մաքսային միության հիման վրա՝ 2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի ստորագրմամբ և ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից: Միության 5 անդամ-երկրներից միայն Հայաստանը չունի ընդհանուր սահման ԵՏՄ մյուս երկրներից որևէ մեկի հետ, ինչն էլ էական դժվարություններ է առաջացնում ապրանքաշրջանառության տրանսպորտային ապահովումը կազմակերպելու հարցում: Միավորման նպատակն է անդամ-պետությունների տնտեսությունների ամրապնդումը, դրանց միջև կապերի սերտացումը, տնտեսության մոդեռնիզացումը և համաշխարհային շուկայում տվյալ պետությունների մրցունակության բարձրացումը: ԵՏՄ-ում իրականացվում է մակրոտնտեսական համաձայնեցված քաղաքականություն, որի վարման հիմնական ուղղություններն են՝ միության անդամ-երկրների տնտեսությունների գործունեության նույնական սկզբունքների ձևավորումը, տնտեսությունների արդյունավետ փոխգործակցության ապահովումը, ինչպես նաև տեսության համար միասնական սկզբունքների և ուղղությունների մշակումը: Պայմանագրով սահմանվում է ապրանքների, ծառայությունների և աշխատուժի ազատ տեղաշարժ, կոորդինացված

<sup>1</sup> <http://publications.yosu.am/wp-content/uploads/2015/05/63-74.pdf>

համաձայնեցված կամ միասնական տնտեսական քաղաքականության իրականացում հետևյալ ոլորտներում<sup>1</sup>


1. մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորում,
2. մաքսային կարգավորում,
3. տեխնիկական կարգավորում,
4. սանիտարական, անասնաբուժական-սանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ,
5. ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրում ու բաշխում,
6. երրորդ երկրների նկատմամբ առևտրային ռեժիմի սահմանում,
7. արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրություն,
8. մակրոտնտեսական քաղաքականություն,
9. մրցակցային քաղաքականություն,
10. էներգետիկ քաղաքականություն,
11. արդյունաբերական և գյուղատնտեսական լրավճարներ,
12. բնական մենաշնորհներ,
13. պետական և /կամ/ համայնքային գնումներ,
14. ծառայությունների և ներդրումների փոխադարձ առևտուր,
15. տրանսպորտ և փոխադրում,
16. արժույթային քաղաքականություն,
17. մտավոր սեփականություն,
18. աշխատանքային միգրացիա,
19. ֆինանսական շուկաներ:

Միության առանձնահատկություններից է այն, որ անդամ-երկրները միասնական դրույքաչափով պարտավորվում են մաքսագեղծել երրորդ, այսինքն՝ միության անդամ չհանդիսացող երկրներից ներմուծվող ապրանքները: Այս կերպ ԵՏՄ-ն հավակնում է կարգավորել իր անդամ պետությունների և երրորդ երկրների միջև առևտրային հարաբերությունները<sup>2</sup>: Անդամակցելով ԵՏՄ-ին՝ ՀՀ-ն պարտավորվում է հավաքագրած մաքսատուրքերը փոխանցել ԵՏՄ համընդհանուր բյուջե, որտեղից հետո պետք է ձեռք բերի իր համար նախատեսված մասնաբաժինը, ինչը կազմում է 1.13 %: Միաժամանակ մեր հանրապետությունը պարտավորվում է իր տնտեսական քաղաքականությունն իրականացնել մակրոտնտեսական ցուցանիշների որոշակի քանակական արժեքների սահմաններում,

<sup>1</sup> <http://www.mineconomy.am/uploads/20142811172603816.pdf>

<sup>2</sup> [http://www.academia.edu/12700143/%D5%80%D5%80\\_%D4%B5%D4%B1%D5%8F%D5%84\\_%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8](http://www.academia.edu/12700143/%D5%80%D5%80_%D4%B5%D4%B1%D5%8F%D5%84_%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8)

մասնավորապես համախմբված բյուջեի տարեկան դեֆիցիտը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3 %-ը, պետական պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 50 %-ը, իսկ գնաճի մակարդակը չպետք է գերազանցի ամենացածր գնաճ ունեցող անդամ-պետության ցուցանիշը ավելի քան 5 %-ով<sup>1</sup>: Այդ իսկ պատճառով միասնական տնտեսական քաղաքականություն իրականացնելիս պետք է անպայման հաշվի առնվեն հարկաբյուջետային քաղաքականության մեջ տեղի ունեցող փոփոխությունների բոլոր հետևանքները: ԵՏՄ-ի կարգավորումներն առաջին հերթին վերաբերում են անդամ-երկրների փոխադարձ և երրորդ երկրների հետ առևտրին: ԵՏՄ-ի ընդհանուր առևտրաշրջանառությունը երրորդ Միության անդամ չհանդիսացող երկրների հետ 2016թ. կազմել է 509.8 մլրդ դոլար, որից արտահանման ցուցանիշը՝ 308.4 մլրդ, իսկ ներմուծմանը՝ 201.4 մլրդ: Սա 2015թ. ցուցանիշից 12%-ով քիչ է:




Գծապատկեր 1. ԵՏՄ-ի առևտուրը երրորդ երկրների հետ 2016թ. (մլրդ դոլար)<sup>2</sup>

Ապրանքաշրջանառության ցուցանիշների դիտարկումն առանձին երկրների մասով ցույց է տալիս, որ թե՛ արտահանման, թե՛ ներմուծման առավելագույն բաժինը՝ մոտ 85%-ը, հասնում է Միության գերխոշոր

<sup>1</sup> Հիմնադիր պայմանագրի 63-րդ հոդված. Տնտեսական զարգացման կայունությունը որոշող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները:

<sup>2</sup> Աղբյուրը՝ ԵՏՄ վիճակագրության բաժին:

անդամ Ռուսաստանի Ղաշնությանը: Պատկերը նույնն է ԵՏՄ ներքին ապրանքաշրջանառության դեպքում: ԵՏՄ 5 անդամ-երկրների ներքին ապրանքաշրջանառության 84%-ը բաժին է ընկնում Ռուսաստանի հետ 4 երկրների փոխադարձ առևտրին: ԵՏՄ-ն աշխարհին առաքում է հանքահումքային և վառելիքաէներգետիկ ապրանքներ (արտահանման 60.6%) և ներմուծում պատրաստի տեխնոլոգիական արտադրանք (43.3%), ինչը փաստում է ԵՏՄ-ի արդյունաբերական պոտենցիալի ցածր և անմրցունակ մակարդակի մասին: Հայաստանը Միության արտաքին առևտրաշրջանառության մեջ ունի աննշան ծավալներ՝ ընդամենը 0.7%: Արտահանման ծավալներում Հայաստանի մասնաբաժինը 0.4% է, ներմուծման մեջ՝ 1.1%<sup>1</sup>:



Գծապատկեր 2. Հայաստանի առևտրաշրջանառությունը (մլն դր.) 2017թ.<sup>2</sup>

Սա փաստում է, որ Հայաստանն ի սկզբանե կայուն ապրանքաշրջանառություն է ունեցել այլ, մասնավորապես եվրոպական երկրների, ոչ թե Ղազախստանի, Ղրղըզստանի կամ Բելառուսի հետ: Հայ գործարարները ներգրավված չեն եղել ղազախական, ղրղըզական և բելառուսական շուկաներում, նրանց հիմնական ուղղությունները եղել են Եվրոպան, Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Կանադան: Այդ է պատճառը, որ ներկայումս բավականին դժվար է նոր շուկաներ մտնելը, և չնայած ապրանքաշրջանառությունն այս երկրների հետ շատ ցածր է, այնուամենայնիվ նկատվում

<sup>1</sup> <http://ampop.am/armenia-in-eaeu/#imageclose-2742>  
<sup>2</sup> Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն:

է որոշակի աճ: Խնդիրը դժվար լուծելի է դառնում նաև այն պատճառով, որ այդ երկրների արտադրանքները մրցունակ և նախընտրելի չեն միայնաց համար: Մա դժվար թե կարգավորեն անզամ Միությունում գործող առևտրային կարգավորման ազատական դրույթները: Եվ սա միայն Հայաստանի հետ առևտրային հարաբերություններին չի վերաբերում, այլ նաև նշված Բելառուս-Ղազախստան, Բելառուս-Ղրղըզստան և Ղրղըզստան-Ղազախստան փոխադարձ առևտրին:


*Աղյուսակ 1*

**ՀՀ առևտուրը ԵԱՏՄ անդամ-երկրների հետ 2017թ. (հազար ԱՄՆ դոլար)<sup>1</sup>**

| Երկրներ   | Արտահանում | Ներմուծում | Սալդո       |
|-----------|------------|------------|-------------|
| Ռուսաստան | 541 582,60 | 866 643,70 | -325 061,10 |
| Բելառուս  | 6 937,0    | 23 075,40  | -16 138,40  |
| Ղազախստան | 4 915,70   | 8 666,70   | -3 751,00   |
| ԵԱՏՄ      | 553 435,30 | 898 385,80 | -344 950,50 |

ՀՀ-ի գլխավոր առևտրային գործընկերը վերջին մի քանի տարիներին թե՛ արտահանման, թե՛ ներմուծման գծով եղել և մնում է Ռուսաստանի Դաշնությունը, որը միաժամանակ ԵՏՄ անդամ-երկիր է: 2017թ. նրան բաժին է ընկել ՀՀ-ի արտահանման 24.1%-ը, ներմուծման՝ 20.7%-ը: ՀՀ առևտրային գործընկերների շարքում ԵՏՄ անդամ-երկրներից երկրորդ տեղում Բելառուսն է: Ղազախստանից Հայաստան ապրանքների ու ծառայությունների արտահանումը և ներմուծումը համեմատած ՌԴ-ի և Բելառուսի հետ եղել է քիչ: Ղրղըզստանից ապրանքների և ծառայությունների ներմուծում գրեթե չի եղել, իսկ արտահանումը կազմում է շատ չնչին մասը:

<sup>1</sup> Աղբյուր՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն՝ [http://www.armstat.am/file/article/sv\\_12\\_17a\\_411.pdf](http://www.armstat.am/file/article/sv_12_17a_411.pdf).



**Գծապատկեր 3. Հայաստան-Ռուսաստան առևտրաշրջանառությունը 2011-2017թթ. (մլն դոլար)<sup>1</sup>**

Ըստ առևտրային ցուցանիշների՝ Հայաստանի առևտրատնտեսական կապերը ԵՏՄ-ի շրջանակներում սահմանափակվում են բացառապես ՀՀ-ՌԴ տնտեսական կապերի տիրույթում: Այս իրավիճակում ավելորդ է դառնում անդրադարձ կատարել Հայաստան-Բելառուս, Հայաստան-Ղազախստան, Հայաստան-Ղրղըզստան ներդրումներին, աշխատանքային միգրացիային, տուրիզմին կամ այլ ոլորտների, քանի որ տեսանելի շարժ այդ առումով չկա: Հետևաբար, ԵՏՄ-ի սկզբնավորման գոնե այս փուլում Հայաստանը Միության կազմում փորձում է առաջնահերթ և բացառապես տնտեսական հարաբերություններ խորացնել Ռուսաստանի հետ: ԵՏՄ անդամակցությունից հետո, Հայաստանը ևս զրոյականացրեց մաքսատուրքերը, ինչը երկարաժամկետ դրական ազդեցություն կարող է ունենալ նախ՝ հայկական շուկայում սպառողական ապրանքների գների նվազման, ապա՝ հայկական ապրանքների՝ ԵՏՄ շուկայում մրցունակության մեծացման առումով: Թե որքանով է մաքսատուրքերի զրոյականացումը նպաստել Ռուսաստանից ներմուծվող և դեպի Ռուսաստան արտահանվող ապրանքների ծավալների վրա, ցույց է տալիս վիճակագրությունը: Օրինակ, եթե 2015թ. Ռուսաստանից տրանսպորտային միջոցների ներմուծման ծավալը կազմում էր 16.5 մլն դոլար<sup>2</sup>, ապա 2016թ. այդ ծավալը աճել է 53%-ով<sup>3</sup>, հասնելով 25.3 մլն դոլարի: Հայաստանից

<sup>1</sup> Աղբյուր՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն:

<sup>2</sup> [http://armstat.am/file/article/ft\\_2\\_nish\\_2016\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2_nish_2016_10.pdf).

<sup>3</sup> [http://www.eurasiancommission.org/ru/act/integr\\_i\\_makroec/dep\\_stat/tradestat/tables/intra/Documents/2016/12/1201612\\_9\\_1.pdf](http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/tradestat/tables/intra/Documents/2016/12/1201612_9_1.pdf).

Ռուսաստան ամենաշատն արտահանվում են ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ<sup>1</sup>: 2015թ. արտահանումը կազմել է 92.3 մլն դոլար, մինչդեռ 2016թ. այն աճել է 52.5%-ով՝ կազմելով 140.8 մլն: Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ ապրանքախմբի մեջ 94%-ը բաժին է ընկնում սպիրտային խմիչքներին, հիմնականում կոնյակի և օղու տեսականուն: Դեռևս խորհրդային ժամանակներից ռուսական շուկայում հայկական խմիչքները կայուն սեզվենտ և մրցունակություն են ունեցել: ԵՏՄ անդամակցության շրջանում անկում է արձանագրվել Հայաստանից Ռուսաստան արտահանվող կաթի, կաթնամթերքի և այլ կենդանական ծագման սննդամթերքի կազմում<sup>2</sup>: 2016թ. նվազելով 43%-ով և կազմելով 13.2 մլն դոլար: Արտահանման կառուցվածքում խոշոր ապրանքախումբ համարվող «Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերքները» ևս 2016թ. նվազել են՝ կազմելով 12.2 մլն դոլար 2015թ. 14.3 մլն-ի փոխարեն: Բացի ապրանքների և ծառայությունների առևտրից և կապիտալ ներդրումների իրականացումից, ԵՏՄ անդամ-երկրները, այդ թվում նաև Հայաստանը, համագործակցում են նաև մի շարք այլ ոլորտներում: ԵՏՄ անդամակցության հետ մեկտեղ փոփոխություններ են կատարվել աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տնտեսվարող սուբյեկտներին լիցենզիաների տրամադրման ոլորտում, ոստիկանության գործունեության, առողջապահության ոլորտում, տրանսպորտի բնագավառում և նույնիսկ մշակույթի նախարարության կարգավորման բնագավառում: ՀՀ-ի համար չափազանց կարևոր է խորացնել համագործակցությունը ԵՏՄ-ի հետ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Այնուամենայնիվ կարող ենք նշել այն փաստը, որ ՀՀ-ն, լինելով փոքրատարածք, Բելառուսի և Ղազախստանի նկատմամբ ունի համեմատական շատ լուրջ առավելություններ, որը նշանակում է, որ ՀՀ-ԵՏՄ շրջանակներում լուրջ հնարավորություններ ունի՝ օգտվելով ստեղծված բարենպաստ միջավայրից: ՀՀ-ն ակտիվորեն համագործակցում է ԵՏՄ անդամ-պետությունների հետ նաև կրթության և գիտության ոլորտում: Հատկապես խորանում է այս ոլորտում համագործակցությունը Ռուսաստանի հետ, որի վաղ ապացույցն է ՀՀ-ում Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի մասնաճյուղի բացումը, իսկ արդեն վաղուց ՀՀ-ում գործում է Հայ-ռուսական (Մլավոնական) համալսարանը: Աշխատուժի ազատ տեղաշարժի ապահովման նպատակով ԵՏՄ պայմանագրով միության անդամ-պետությունների քաղաքացիների համար, ովքեր ցանկություն ունեն աշխատելու ԵԱՏՄ

<sup>1</sup> [http://armstat.am/file/article/ft\\_2\\_nish\\_2016\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2_nish_2016_10.pdf).

<sup>2</sup> Նույն տեղում:

պետություններից որևէ մեկում, թույլատրության փաստաթղթերի ձևակերպումը, ինչպիսիք են պատենտները կամ աշխատանքի թույլտվությունը, չի պահանջվում: Հավասարապես, ինչպես ԵՏՄ երկրների սահմանն անցնելիս՝ միգրացիոն քարտերի լրացումը, եթե քաղաքացիների գտնվելու ժամկետը չի գերազանցում մուտքի օրվանից 30 օրը: Աշխատողներն ու նրանց ընտանիքի անդամներն ազատվում են գրանցումից (հաշվառումից) ներքին գործերի մարմիններում մինչև 30 օր գտնվելու ժամկետով<sup>1</sup>:

Եվրասիական տնտեսական միության ուսումնասիրություն, ակնհայտորեն ցույց է տալիս դրա բազմաշերտ և բազմաբովանդակ լինելը: Եվրասիական տնտեսական միությունը որպես վերազգային մարմին՝ ստեղծվել է ժողովրդավարական հիմքեր ունեցող պետությունների կողմից, որոնք դրա ստեղծման հիմքում դրել են ընդհանուր համագործակցության գաղափարը:

## ՀՀ-Ի ԱՆՂԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

### ՂՈՆԱՐԱ ՀՈՎԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*ՀՀ ԳԱՄ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ*

**Համառոտագիր:** Հոդվածում ներկայացվում է ՀՀ-ի անդամակցությունը ԵՏՄ-ին, ինչպես նաև դրա սոցիալ-տնտեսական հետևանքները: Արդեն 2 տարի է՝ Հայաստանը Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) լիիրավ անդամ է: Հինգ երկրներ ընդգրկող ինտեգրացիոն միավորմանը միանալու գործընթացը Հայաստանը սկսեց 2013թ. աշնանը: Չունենալով ընդհանուր սահման ԵՏՄ մյուս երկրների՝ Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի հետ՝ 2016թ. Հայաստանն իր արտաքին առևտրաշրջանառությունը կազմակերպեց ԵՏՄ համաձայնագրերով:

**Բանալի բառեր.** *Եվրասիական տնտեսական միություն, առևտրաշրջանառություն, արտահանում, ներմուծում, մաքսատուրքեր, ինտեգրացիոն գործընթացներ, համագործակցություն, անդամ-երկրներ, միություն:*

<sup>1</sup> <http://www.mfa.am/hy/international-organisations/EurAzES/>.

## ЧЛЕНСТВО АРМЕНИИ В ЕВРАЗИЙСКОМ ЭКОНОМИЧЕСКОМ СОЮЗЕ

**ДОНАРА ОВИКОВНА ГРИГОРЯН**

*экономист первой категории Института экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** В статье представлено членство Армении в Евразийском экономическом союзе, а также его социально-экономические последствия. Уже два года Армения является полноправным членом Евразийского экономического союза (ЕЭС). Процесс присоединения к интеграционной ассоциации с участием пяти стран начался в Армении осенью 2013 года. Не имея общей границы с другими странами ЕЭС - Россией, Беларусью, Казахстаном и Кыргызстаном, в 2016 году Армения организовала свой внешнеторговый оборот с соглашениями ЕЭС.

**Ключевые слова:** *Евразийский экономический союз, торговля, экспорт, импорт, таможенные пошлины, интеграционные процессы, сотрудничество, страны-участницы, объединение.*

## ARMENIA'S ACCESSION TO THE EURASIAN ECONOMIC UNION

**DONARA HOVIK GRIGORYAN**

*First Level Economist, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** This article presents Armenia's membership in the Eurasian Economic Union (EAEU), and socio-economic consequences of thereof. Armenia has joined the EAEU since January 2015 as a full member-state. In fall 2013, Armenia initiated the process of joining the Union of founding three member-states and along with Kyrgyz Republic's accession to the Union the number of full members reached 5 states in 2015. Without having common borders with the member-states of the EAEU, namely with Russia, Belarus, Kazakhstan and Kyrgyz Republic, Armenia's bilateral trade with each of the member-states was regulated in compliance with the principles stated in various EAEU agreements in 2016.

**Keywords:** *The Eurasian Economic Union, foreign trade, exports, imports, customs duties, integration processes, cooperation, member-states, union.*

**ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ  
ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ  
ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ**

ՀՀ սոցիալ-տնտեսական գործընթացների կառավարման հիմնախնդիրները տնտեսության զարգացման զրավականներից են. այդ առումով հողվածում իրականացվել է վերլուծություն, համաձայն որի մշակվել է ձևաչափ, որտեղ ներառվել են գործարար միջավայրի բարեփոխման գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում: Այդ համատեքստով իրականացվել է գնահատում, որտեղ ներառվել են մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները՝ զբաղվածության և տնտեսական ակտիվության մակարդակները:

ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշներից մեկը ինչպես զբաղվածության, այնպես էլ տնտեսական ակտիվության մակարդակն է: Պետք է նկատել, որ գոյություն ունի որոշակի ազդեցություն բնակչության զբաղվածության և տնտեսական ակտիվության մակարդակների միջև, ինչպես երևում է գծապատկեր 1-ից:

2005 թվականը 2004 թվականի համեմատ զբաղվածության մակարդակի փոփոխություն չի արձանագրել, սակայն բերել է տնտեսական ակտիվության մակարդակի 1.5 տոկոս նվազեցման:

2007 թվականին 2004 թվականի համեմատ զբաղվածության մակարդակի 4.3 տոկոս նվազեցումը բերել է տնտեսական ակտիվության մակարդակի 6.9 տոկոս նվազեցման: Պետք է նկատել, որ տնտեսական ակտիվության մակարդակի անկումը եղել է ավելի էական, քան զբաղվածության մակարդակի անկումը:

2009 թվականին 2007 թվականի համեմատ զբաղվածության մակարդակի 5.1 տոկոս նվազեցումը բերել է տնտեսական ակտիվության մակարդակի 8.6 տոկոս ավելացման, զբաղվածության նվազման պատճառ է հանդիսացել ֆինանսատնտեսական ճգնաժամը, որի հետևանքով տեղի է ունեցել աշխատատեղերի էական կրճատում, վերջինս էլ հանգեցրել է գործազրկության մակարդակի ավելացման (7,0%)<sup>1</sup>:

<sup>1</sup> ՀՀ ԱԿԾ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010 թվականի «Զբաղվածություն», էջ 64, <http://armstat.am/file/doc/99461553.pdf>:

2016 թվականին 2009 թվականի համեմատ զբաղվածության մակարդակի 3.9 տոկոս աճը բերել է տնտեսական ակտիվության մակարդակի 3 տոկոս ավելացման, վերջինիս աճի պատճառ է հանդիսացել նույն ժամանակահատվածում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճը՝ 8 ԱՄՆ դոլար:

2017 թվականին 2016 թվականի համեմատ զբաղվածության մակարդակի ավելացումը (1 տոկոս) հանգեցրել է տնտեսական ակտիվության մակարդակի 0.8 տոկոս ավելացման:

Զբաղվածության և տնտեսական ակտիվության մակարդակների կանխատեսման նպատակով կիրառվել է max-min մեթոդը, որը 2 ցուցանիշների դեպքում կանխատեսվող մեթոդ է:

MAX-MIN մեթոդը կիրառելու նպատակով զբաղվածության և տնտեսական ակտիվության մակարդակներից ընտրվել են առավելագույն և նվազագույն ցուցանիշները: Զբաղվածության մակարդակի առավելագույն արժեքը 51.9% է, նվազագույնը՝ 48.1%, իսկ տնտեսական ակտիվության մակարդակի առավելագույն արժեքը 63.4% է, իսկ նվազագույնը՝ 54.5%: Հաշվարկվել է վերջիններիս տարբերությունը, այնուհետև հարաբերությունները:

MAX-MIN մեթոդը արտացոլվել է հետևյալ բանաձևի միջոցով.

$$Y = a + bx \quad (1)$$

որտեղ.

Y-ը զբաղվածության մակարդակն է (%),

x-ը՝ տնտեսական ակտիվության մակարդակը (%),


a-ն հաստատուն մեծություն է (ենթակա է որոշման),

b-ն՝ փոփոխական մեծություն (ենթակա է որոշման):

Հաշվարկը կատարվել է 2004-2017թթ. կտրվածքով, և (1) հավասարումը ունեցել է հետևյալ տեսքը.

$$Y = 0.559 + 0.023x$$

Այսինքն՝ a-ն՝ 0.559 կամ 55.9%, իսկ b-ն՝ 0.023 կամ 2.3%, հետևաբար՝ տնտեսական ակտիվության մակարդակի մեկ տոկոսային փոփոխությունը կարող է բերել զբաղվածության մակարդակի 2.3 տոկոսային կետի ավելացման, այսինքն՝ տնտեսական ակտիվության մակարդակի հետագա բարձրացումը կբերի բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման:



Գծապատկեր 1. 2004-2017թթ. զբաղվածության, տնտեսական ակտիվության մակարդակների շարժունությանը ՀՀ-ում (%)<sup>1</sup>

Տնտեսական ակտիվության և զբաղվածության մակարդակների միջև փոխկապակցվածությունը բացահայտելու նպատակով իրականացվել է կոռելյացիոն վերլուծություն, որտեղ տնտեսական ակտիվության և զբաղվածության մակարդակները ներկայացվել են հետևյալ բանաձևի հիման վրա.

$$Y = a_0 + a_1 * Em + \epsilon_i \quad (2)$$

որտեղ

Y –ը տնտեսական ակտիվության մակարդակն է,

Em – ը զբաղվածության մակարդակն է,

(a<sub>0</sub>, a<sub>1</sub>), –ը հաստատուն մեծության և փոփոխականի էլաստիկության գործակիցներն են,

ε<sub>i</sub> –ն պատահական սխալի մեծությունն է:

Վերլուծության համար դիտարկվել են 2004-2017թթ. ընդգրկող ժամանակահատվածի տնտեսական ակտիվության և զբաղվածության մակարդակների պաշտոնական վիճակագրական տարեկան տվյալները:

<sup>1</sup> ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական Տարեգրքեր 2006թ., 2010թ., 2015թ., 2017թ., «Զբաղվածություն», էջեր 50, 52, 57, 51 (<http://armstat.am/file/doc/99461553.pdf>), (<http://armstat.am/file/doc/99493603.pdf>), (<http://armstat.am/file/doc/99504348.pdf>): Հրատարակումներ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-օգոստոսին» ([http://armstat.am/file/article/sv\\_08\\_17a\\_141.pdf](http://armstat.am/file/article/sv_08_17a_141.pdf)):

2004-2015թթ. զբաղվածության, տնտեսական ակտիվության  
մակարդակների շարժընթացը ՀՀ-ում (%)<sup>1</sup>

|      | Զբաղվածության<br>մակարդակ | Տնտեսական<br>ակտիվության<br>մակարդակ | Զբաղվածության<br>մակարդակ<br>(Log) | Տնտեսական ակտի-<br>վության մակարդակ<br>(Log) |
|------|---------------------------|--------------------------------------|------------------------------------|--|
| 2004 | 53                        | 58.6                                 | 3.970292                           | 4.070735                                     |
| 2005 | 53                        | 57.7                                 | 3.970292                           | 4.055257                                     |
| 2006 | 51.7                      | 55.9                                 | 3.945458                           | 4.023564                                     |
| 2007 | 50.7                      | 54.5                                 | 3.925926                           | 3.998201                                     |
| 2008 | 49.8                      | 59.5                                 | 3.908015                           | 4.085976                                     |
| 2009 | 48.1                      | 59.2                                 | 3.873282                           | 4.080922                                     |
| 2010 | 49.6                      | 61.2                                 | 3.903991                           | 4.114147                                     |
| 2011 | 51.4                      | 63                                   | 3.939638                           | 4.143135                                     |
| 2012 | 51.9                      | 62.7                                 | 3.949319                           | 4.138361                                     |
| 2013 | 53.2                      | 63.4                                 | 3.974058                           | 4.149464                                     |
| 2014 | 52                        | 63.1                                 | 3.951244                           | 4.144721                                     |
| 2015 | 50.9                      | 62.5                                 | 3.929863                           | 4.135167                                     |
| 2016 | 50.3                      | 61.6                                 | 3.918005                           | 4.120662                                     |
| 2017 | 50.5                      | 61.5                                 | 3.921973                           | 4.119037                                     |

2-րդ ռեգրեսիոն հավասարումը գնահատվել է փոքրագույն քառ-կուսիների եղանակով՝ Eviews 9<sup>2</sup>՝ ելնելով համակարգչային ծրագրային հնարավորությունից, սակայն մինչ այդ հավասարումը գնահատելը անհրաժեշտ է տվյալները համահարթեցնել: Ուստի այդ նպատակով

<sup>1</sup> ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական Տարեգրքեր 2006թ., 2010թ., 2015թ., 2017թ., «Զբաղվածություն», էջեր 50, 52,57,51 (<http://armstat.am/file/doc/99461553.pdf>), (<http://armstat.am/file/doc/99493603.pdf>),(<http://armstat.am/file/doc/99504348.pdf>): Հրատարակումներ՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՄԱՍՄ Հայաստան.Տնտեսական աճը, աղքատությունը և աշխատանքի շուկայի զարգացումները 2004-2008թթ.,2008-2013թթ.,2012-2017թթ., էջեր 28,31,33 [http://www.armstat.am/file/article/poverty\\_2009\\_2.pdf](http://www.armstat.am/file/article/poverty_2009_2.pdf), [http://armstat.am/file/article/5.poverty\\_2014a\\_2.pdf](http://armstat.am/file/article/5.poverty_2014a_2.pdf):

<sup>2</sup> Eviews-ը Micro TSPփաթեթի Windows տարբերակն է, որը պարունակում է զարգացած «հուշում» (help), որն, ըստ էության, էկոնոմետրիկ մեթոդների ուղեցույց է: Eviews- ի մասին մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ հետևյալ էլ. հասցեում՝ <http://www.eviews.com/>:

տվյալները լուգարիթմել ենք որպես աղյուսակ 1՝ որպեսզի խուսափենք կեղծ կոռեյացիոն կապ ստանալուց:

*Աղյուսակ 2*

**Ընտրված գործոնների միջև կոռեյացիոն մեծությունները<sup>1</sup>**

|                                | Տնտեսական ակտիվության մակարդակ | Զբաղվածության մակարդակ |
|--------------------------------|--------------------------------|------------------------|
| Տնտեսական ակտիվության մակարդակ | 1                              |                        |
| Զբաղվածության մակարդակ         | 0.701427                       | 1                      |

Ընտրված ցուցանիշների հիման վրա իրականացված կոռեյացիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց միջև իրոք գոյություն ունի նշանակալից դրական կոռեյացիա: Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 2-ի տվյալները, տնտեսական ակտիվության և զբաղվածության մակարդակների միջև գոյություն ունի նշանակալից դրական կոռեյացիա 0.70: Ուստի իրականացված կոռեյացիոն վերլուծության արդյունքները հաստատում են, որ դիտարկվող գործոնների միջև գոյություն ունի նշանակալի փոխկապվածություն:

**ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՐԴԻՆԵՐԸ ՀՀ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋՎԱՎԱՅՐԻ ԲԱՐԵՓՈՒՄՍԱՆ ԳԵՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ**

**ԱՐՓԻՆԵ ՄԵԽԱԿԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

**Համառոտագիր:** Հայաստանի Հանրապետությունում տնտեսական ակտիվության մակարդակի հետագա բարձրացումը կարող է բերել բնակչության առցիալ-տնտեսական խնդիրների լուծման, զբաղվածության մակարդակի ավելացման, աղքատության մակարդակի կրճատման, և դրանով իսկ կբարձրանա բնակչության կենսամակարդակը: Վերջինիս մակարդակի բարձրացումն էլ խթան կհանդիսանա օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, որն էլ կբերի գործարար միջավայրի զարգացման:

<sup>1</sup> Հաշվարկվել է հեղինակի կողմից:

*Բանալի բաներ. գործարար միջավայր, մակրոտնտեսական ցուցանիշ, բնակչության կենսամակարդակ, զբաղվածության մակարդակ, տնտեսական ակտիվության մակարդակ, MAX-MIN մեթոդ:*

## СПОСОБЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ УПРАВЛЕНИЯ СОЦИАЛЬНЫМИ И ЭКОНОМИЧЕСКИМИ ПРОЦЕССАМИ В КОНТЕКСТЕ ПРИОРИТЕТОВ ДЕЛОВОЙ СРЕДЫ АРМЕНИИ

**АРПИНЕ МЕХАКОВНА КЮРЕГЯН**

*соискатель Института экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация:** Повышение уровня экономической активности в Республике Армения может привести к решению социально-экономических проблем населения, повышению уровня занятости и снижению уровня бедности, тем самым поднимая уровень жизни населения. Это приведет к стимулированию привлечения иностранных инвестиций, что в свою очередь будет способствовать развитию бизнес-среды.

*Ключевые слова:* бизнес-среда, макроэкономический показатель, уровень жизни населения, уровень занятости, уровень экономической активности, метод MAX-MIN.

## APPROACHES TO INCREASING THE EFFICACY OF MANAGEMENT OF SOCIOECONOMIC PROCESSES IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF PRIORITIES FOR REFORMING THE BUSINESS ENVIRONMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

**ARPINE MEKHAK KYUREGHYAN**

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Further increase of the level of economic activity in the Republic of Armenia could lead to addressing of the socioeconomic issues of the population, the increase in employment, poverty reduction, thus raising the living standards. The rising standard of living would stimulate the attraction of foreign investments, resulting in more business-friendly environment.

*Keywords:* Business environment, macroeconomic indicator, standards of living of the population, employment level, level of economic activity, the MAX-MIN method.

## ԶԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԷԿՈԼՅՈՒԹԻԱՆ ԱԿՏԻՉԱՅԻՆ ԶԱՐԿԻ ՄԱՍՈՎ

*Հարկային օրենսդրության ձևավորման էվոյուցիան ակցիզային հարկի մասով:* Հայաստանի Հանրապետությունում գործող հարկային համակարգում իր ուրույն տեղն ունի նաև ակցիզային հարկը: Ակցիզային հարկը, չնայած որ այն շատ լայն տարածում ունի աշխարհում, նույնպես անծանոթ էր Հայաստանի Հանրապետության հարկային պրակտիկային և որպես նորություն ներդրվեց Հայաստանի Հանրապետությունում անկախացման տարիների սկզբից: Ակցիզային հարկի ներդրումը պայմանավորված էր տնտեսության շուկայական վերափոխումների պահանջով և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների ապահովման անհրաժեշտությամբ:

Ակցիզային հարկը կիրառվում է որոշակի ապրանքների կամ ապրանքների խմբերի նկատմամբ՝ հիմք ընդունելով նրանց շահութաբերության մակարդակը կամ սպառման նպատակը:

Ակցիզային հարկը հանրապետությունում կիրառվեց Հայաստանի Հանրապետության նախագահի՝ 1992 թվականի հունվարի 27-ի «Ակցիզային հարկի մասին» հրամանագրով, որով ակցիզային հարկ սահմանվեց արտադրատեսակների իրացման գնի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում ակցիզային հարկով հարկված ենթակա առաջին ենթաակցիզային ապրանքներն են:

Ակցիզային հարկը սկսեց կիրառվել սեփական արտադրության ենթակցիզային ապրանքների նկատմամբ: Ընդ որում, ակցիզային հարկ վճարողներն էին ենթակցիզային ապրանքներ ինքնուրույն արտադրող և իրացնող Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունները և կազմակերպությունները: Այնուհետև 1992 թվականի մարտի 25-ին Հայաստանի Հանրապետության հարկային պետական տեսչության կողմից, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի և արդարադատության նախարարությունների հետ համաձայնեցված, հաստատվեց և գործողության մեջ դրվեց «Ակցիզային հարկի հաշվարկման ու վճարման կարգի մասին» թիվ 0949/1 հրահանգը, որում ներկայացվում էին ակցիզային հարկի էությունը, հարկման օբյեկտը, հարկվող շրջանառությունը, ակցիզային հարկի հաշվարկման և վճարման կարգը և ձևերը, հաշվարկների

ներկայացման ժամկետները, ակցիզային հարկի հաշվապահական հաշվառման վարման կարգը, վճարողների պարտականությունը և հարկային մարմինների վերահսկողությունը: Բացի վերոնշյալներից, ակցիզային հարկի ներդրման և կիրառման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության կողմից կազմվել են մի շարք ցուցումներ, շրջաբերական նամակներ:

Ակցիզային հարկի ներդրման գործում հաջորդ էական քայլը «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության առաջին օրենքն է (ՀՕ-33), որի համաձայն ակցիզային հարկի դրույքաչափերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ, իսկ անհամաձայնության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշմամբ:

«Ակցիզային հարկի մասին» օրենքը գործողության մեջ դրվեց Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի՝ 1992 թվականի մայիսի 20-ի «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառման մասին» որոշմամբ: Ըստ այդ որոշման առաջին կետի՝ «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը կիրարկվեց (ըստ օրենքի 5-րդ հոդվածի պահանջի) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ:

Ելնելով դրանից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1992 թվականի հունիսի 20-ին ընդունեց «Ակցիզային հարկի դրույքաչափերի մասին» թիվ 358 որոշումը, և սկսեց գործել «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Անհրաժեշտ է նշել, որ չնայած Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի վերը նշված որոշման պահանջին, Հայաստանի Հանրապետության կառավարությանը չհաջողվեց 1992 թվականի հուլիսի 1-ից ապահովել նախկին ԽՍՀՄ անդամ չհանդիսացող պետություններից ներմուծվող ենթաակցիզային ապրանքների ակցիզային հարկով հարկումը, քանի որ ՀՀ կառավարության՝ 20.06.1992թ. թիվ 358 որոշման 3-րդ կետով պահանջվող ներմուծվող ապրանքների ակցիզային հարկով հարկման կարգը սահմանվեց Հայաստանի Հանրապետության կառավարության միայն 1993 թվականի մայիսի 26-ի «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ակցիզային հարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» թիվ 278 որոշմամբ, որի 6-րդ կետով սահմանված կարգը

կիրառվեց 1993 թվականի հունիսի 1-ից: Իսկ մինչ այդ՝ դեռևս 1992 թվականի հոկտեմբերի 19-ին, ՀՀ կառավարությունը սահմանել էր ներմուծվող ենթաակցիզային ապրանքների՝ ակցիզային հարկի դրույքաչափերը «Ներմուծվող ապրանքների ակցիզային հարկի դրույքաչափերի մասին» թիվ 519 որոշմամբ: Ընդ որում, այդ որոշմամբ սահմանված ներմուծվող ենթաակցիզային ապրանքների ակցիզային հարկի դրույքաչափերը շատ ավելի ցածր էին սեփական արտադրության ենթաակցիզային ապրանքների համար սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերից:

Ըստ էության, «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ինչպես սեփական արտադրության, այնպես էլ նախկին ԽՍՀՄ անդամ չհանդիսացող պետություններից ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկման համար սկսեց ամբողջապես գործել ընդամենը 1993 թվականի հունիսի 1-ից՝ շուրջ մեկ տարի ներմուծվող ապրանքների գծով չզանձելով ակցիզային հարկ:

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը գործողության մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը (նպատակ ունենալով կարգավորել ակցիզային հարկի կիրարկումը) մի շարք որոշումներով փոփոխություններ է կատարել ենթաակցիզային ապրանքների դրույքաչափերի մեջ:

Այսպես, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 1992 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 564 որոշմամբ ակցիզային հարկի 25 տոկոս առանձնացված դրույքաչափ է սահմանվել «զինենյութի» համար, 1992 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 543 որոշմամբ սահմանվել է 5 տոկոս ակցիզային հարկի դրույքաչափ հանրապետությունում արտադրվող զինու-օդու ապրանքախմբին պատկանող «պտղահատապտղային թունդ ըմպելիքների» համար, 1993 թվականի ապրիլի 19-ի թիվ 174 որոշմամբ դադարեցվել է «ոչխարի մորթուց կարված բանվորական և զինվորական կիսավերարկունների» նկատմամբ ակցիզային հարկի կիրառումը, 1994 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 606 որոշմամբ սահմանվել են հավասար դրույքաչափեր Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների համար՝ վերացնելով գործող հարկային խտրականությունը սեփական արտադրության և ներմուծվող ենթաակցիզային ապրանքների ակցիզային հարկի դրույքաչափերում: Ընդ որում, ՀՀ կառավարության՝ 29.12.1994թ. թիվ 606 որոշման ընդունմամբ ապահովվում էր հարկման արդարության սկզբունքը՝ միաժամանակ ներմուծվող ապրանքների համար կիրառվող ակցիզային հարկի ցածր դրույքաչափերը փոխարինելով սեփական արտադրության ենթաակցիզային ապրանքների

համար սահմանված ակցիզային հարկի բարձր դրույթաչափերով: Դրանց հետ մեկտեղ 1993-1996 թվականներին «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում չորս դեպքով կատարվել են փոփոխություններ:

Առաջին փոփոխությունը կատարվել է «Ակցիզային հարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 1993 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքով (ՀՕ-53), որով փոփոխություններ կատարվեցին «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքի (ՀՕ-33) առանձին հոդվածներում: Այսպես.

- նշված օրենքի 3-րդ հոդվածում կատարված լրացմամբ Հայաստանի Հանրապետությունում արտադրված ենթակցիզային ապրանքների համար հարկման օբյեկտ սահմանվեց դրանց իրացման շրջանառությունը բաց թողնելու գներով (առանց ավելացված արժեքի հարկի), որով որոշակիացվեց նշված հարկման օբյեկտը, և հստակեցվեցին ակցիզային հարկի հարաբերությունները ավելացված արժեքի հարկի հետ:
- Նշված օրենքի 4-րդ հոդվածում կատարված լրացմամբ ակցիզային հարկից ազատվեցին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող և իրացնող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող վճարողներին արտադրական վերամշակման նպատակով որպես հումք (կիսաֆաբրիկատ) իրացվող ապրանքները՝ կանխելով կրկնակի հարկումը և խրախուսելով այդ ապրանքների արտադրությունը, իսկ 7-րդ հոդվածում սահմանվեց կանխավճարի սկզբունքը, որն արդարացված չէր:
- Օրենքում ավելացվեց հոդված, որով Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ, կարող էր սահմանել ակցիզային հարկի հաստատագրված վճարների չափեր, դրանց հաշվարկման և վճարման կարգ, ինչպես նաև արտոնություններ վճարողների համար, իսկ օրենքի կիրարկման հրահանգը մշակում է Հայաստանի Հանրապետության հարկային պետական տեսչությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և արդարադատության նախարարությունների հետ:

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-33) երկրորդ փոփոխությունը կատարվել է 1994 թվականի նոյեմբերի

30-ի ՇՕ-126 օրենքով, որով փոփոխություն է կատարվել ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկում՝ ավելացնելով գարեջուրը, զարդեղենը (բիժուտերիան), առանձին թվարկելով խաղողի գինիները և գինեկույթը, հանելով գորգագործական արտադրանքը և թողնելով միայն ձեռագործ գորգերը:

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՇՕ-33) երրորդ փոփոխությունը կատարվեց 1995 թվականի հոկտեմբերի 23-ին ընդունված ՇՕ-9 օրենքով, որով նորից ընդարձակվեց հարկման բազան, և ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկ ներառվեցին ձկան խավիարը և բենզինը, «նախկին ԽՍՀՄ անդամ չհանդիսացող պետություններից ներմուծման» սկզբունքը փոխարինվեց Հայաստանի Հանրապետության հետ ազատ առևտրի պայմանագիր չկնքած երկրներից ներմուծման սկզբունքով, որը ենթադրում է նաև նախկին ԽՍՀՄ անդամ որոշ երկրներից ներմուծվող ապրանքների ակցիզային հարկով հարկում:

Օրենքի այս փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունում արտադրված և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների ակցիզային հարկի դրույքաչափերն առանձին-առանձին առաջին անգամ սահմանվեցին օրենքով: Ընդ որում գինու-օղու արտադրանքի, գարեջրի, խաղողի գինիների, գինեկույթի համար Հայաստանի Հանրապետությունում արտադրվածի գծով սահմանվել է 50 տոկոս, իսկ ներմուծվողների համար 75 տոկոս կամ ներմուծվողների համար 50 տոկոսով ավելի բարձր դրույքաչափ, որը տեղական արտադրության խրախուսմանը և խթանմանն ուղղված պետության վարած քաղաքականության ակնհայտ դրսևորում էր և միաժամանակ պետական բյուջեի եկամուտների ավելացմանն ուղղված քայլ՝ ներմուծվող ապրանքներից վճարվող ակցիզային հարկի գծով:

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՇՕ-33) չորրորդ փոփոխությունը կատարվել է 1996 թվականի դեկտեմբերի 2-ի ՇՕ-88 օրենքով, որով ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկից հանվել են մարդատար ավտոմեքենաների անվադողերը և ձեռագործ գորգերը, իսկ ակցիզային հարկի դրույքաչափերը՝ միավորվել, և վերացվել են Հայաստանի Հանրապետությունում արտադրված ու ներմուծված ապրանքների համար առանձին-առանձին գործող դրույքաչափերը, և սահմանվել է մեկ միասնական դրույքաչափ Հայաստանի Հանրապետությունում արտադրված և Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների համար: Ընդ որում, կտրուկ բարձրացվել են մի շարք ենթաակցիզային ապրանքների ակցիզային հարկի դրույքաչափերը

(մասնավորապես գինու-օղու համար սահմանվեց 125 տոկոս՝ նախկին 50-75 տոկոսի փոխարեն, խաղողի գինիների համար 50 տոկոս՝ նախկին 25 տոկոսի փոխարեն, ձկան խավիարի համար 200 տոկոս՝ նախկին 50 տոկոսի փոխարեն, ծխախոտի արտադրանքի համար 100 տոկոս՝ նախկին 50 տոկոսի փոխարեն), որն ակնհայտորեն պետական բյուջեի եկամուտների ավելացման նպատակ էր հետապնդում:

Վերը շարադրվածից հետևում է, որ ակցիզային հարկի ներդրման և կայացման տարիներին ակցիզային հարկի բնագավառում հետապնդվում էին առավելապես ֆիսկալ նպատակներ:

Այդ ամենով հանդերձ ակցիզային հարկի օրենսդրությունը չէր կարելի բնութագրել որպես բավարար ու ամբողջական: Բանն այն էր, որ օրենքով դեռևս ԱՊՀ-ի անդամ-երկրների համար գործում էր «ծագման վայրի» սկզբունքը, որի համաձայն ԱՊՀ անդամ-երկրներից ներմուծված ապրանքների համար ակցիզային հարկը վճարվում էր արտադրող, այսինքն՝ ապրանքի «ծագման վայր» հանդիսացող երկրում, իսկ Հայաստանի Հանրապետություն ներմուծված այդ ապրանքները Հայաստանի Հանրապետությունում ակցիզային հարկով չէին հարկվում: Ստացվում էր, որ ապրանքի գնի մեջ ներառված ակցիզային հարկը, որը վճարում էր Հայաստանի Հանրապետության սպառողը, որպես ապրանքի գնի մի մաս, վճարվում է ԱՊՀ անդամ-երկրի արտադրողին, իսկ նա էլ իր հերթին այդ գումարը ակցիզային հարկի տեսքով վճարում էր արտադրող երկրի պետական բյուջե, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության սպառողը անարդարացիորեն հարկ էր վճարում ԱՊՀ անդամ և ակցիզային հարկով հարկման ենթակա ներմուծված ապրանքի «ծագման վայր» հանդիսացող երկրի պետական բյուջե: Եվ եթե նկատի ունենանք, որ այդ տարիներին տնտեսական խոր ճգնաժամի պատճառով և ԱՊՀ անդամ-պետությունների հետ դեռևս խորհրդային ժամանակներից մնացած տնտեսական ամուր կապերի հետևանքով ԱՊՀ անդամ-պետություններից ներմուծվող ենթակցիզային ապրանքներն ունեին մեծ տեսակարար կշիռ արտահանվող ենթակցիզային ապրանքների նկատմամբ, ապա ակնհայտ կլինի, թե որքան բյուջետային եկամուտներ, ակցիզային հարկի տեսքով, չէին մուտքագրվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Բացի այդ, գործող օրենքում ակցիզային հարկի հաշվարկման, վճարման, արտոնությունների տրամադրման, հաշվետվությունների ներկայացման բազմաթիվ դրույթներ հիմնովին վերանայման և բարեփոխման կարիք ունեին: Ակցիզային հարկի գործող տոկոսային դրույքաչափերի կիրառումն իրացման շրջանառության կամ ներմուծման արժեքի նկատմամբ հաճախ հանգեցնում էր հաշվարկման դժվարությունների՝ չարաշահում-

ների իրացման շրջանառության կամ ներմուծման արժեքի արհեստական և միտումնավոր իջեցման հնարավորություններով:

**Հարկային օրենսդրության բարեփոխման էվոյուցիան ակցիզային հարկի մասով:** Հայաստանի Հանրապետությունում սկսված հարկային բարեփոխումները շրջանցեցին նաև ակցիզային հարկի մասին օրենսդրությունը, և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1997թ. հունիսի 23-ին ընդունվեց և 1997թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտավ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ նոր օրենքը, որի արդյունքում հետագա տարիներին ակցիզային հարկի մեծությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների կազմում աճեց և 1997թ. կազմեց 18310.6 մլն դրամ, 1998թ.՝ 19875.4 մլն դրամ, 1999թ.՝ 21677.4 մլն դրամ և այլն:

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ նոր օրենքի առանձնահատկություններն են.

1. օրենքի առաջին հոդվածում տրվեց ակցիզային հարկի հստակ սահմանումը՝ նախկին սահմանումից հանելով այն ապրանքների գնի մեջ մտցնելու պարտադիր պայմանը, որը հաշվարկների իրականացման, ինչպես նաև հաշվարկային փաստաթղթերի կազմման համար կարևոր նշանակություն ունի և հնարավորություն է ստեղծում հաշվարկային փաստաթղթերում ակցիզային հարկը ոչ միայն ապրանքի գնի մեջ ներառելու, այլ նաև առանձին նշելու համար:

2. Նոր օրենքով ակցիզային հարկ վճարողներ էին ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող-իրացնող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն ներմուծող ֆիզիկական անձինք, իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները՝ ընդլայնելով հարկ վճարողների շրջանակը: Մինչդեռ նախկին օրենքում, ըստ էության, Հայաստանի Հանրապետությունը դեռևս դիտարկվում էր որպես նախկին ԽՍՀՄ երկրների տնտեսությունների հետ միասնական տնտեսական ամբողջություն, և ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող-իրացնողների համար օրենքում չկար որևէ սահմանափակում տնտեսական տարածքի կտրվածքով այն դեպքում, երբ օրենքը գործում էր միայն Հայաստանի Հանրապետության տարածքում և կարգավորում էր Հայաստանի Հանրապետության բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի հետ կապված հարաբերությունները: Նախկին ԽՍՀՄ-ի հետ միասնական տնտեսական տարածք համարվելու արդյունք էր նաև այն, որ նախկին օրենքում ակցիզային հարկ վճարողներ չէին նախկին ԽՍՀՄ անդամ-պետություններից ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ ներմուծողները, և ստացվում էր, որ Հայաստանի Հանրապետության սպառողները, գնելով

նախկին ԽՍՀՄ անդամ-երկրներում արտադրված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանք և այդ ապրանքի գնի մեջ վճարելով ակցիզային հարկ, հարկը վճարում էին այդ ապրանքն արտադրող նախկին ԽՍՀՄ անդամ-երկրի բյուջե՝ «ծագման վայր» սկզբունքով:

3. Նոր օրենքի երկրորդ հոդվածով, բացի հարկ վճարողների նորովի սահմանումից, վերանայվեց նաև ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկը, և նոր ցանկ ներառվեցին նոր ապրանքներ՝ «սպիրտը և սպիրտային խմիչքները», «դիզելային վառելիքը», «այլ գինիները»: Նոր օրենքի ցանկում տեղ չգտան նախկին օրենքի ցանկ ընդգրկված «գինու-օղու արտադրանքը», ինչպես նաև հստակեցվեցին մի շարք ապրանքախմբերի անվանումները: Այսպես, օրինակ, «մորթին» շարադրվեց «բնական մորթի», «մորթեղենը»՝ «բնական մորթուց պատրաստված իրեր», «ծխախոտի արտադրանքը»՝ «սիգարներ, սիգարելաներ և սիգարետներ՝ ծխախոտով կամ դրա փոխարինողներով», «բնական կաշվից հագուստը»՝ «բնական կաշվից հագուստ և հագուստի պարագաներ» և այլն: Դրա հետ մեկտեղ օրենքի երկրորդ հոդվածում ամրագրվեց, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցում չստացած պատվիրատուի կողմից տրված հումքից Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար հարկ վճարող է համարվում այդ ապրանքի արտադրողը:

Այսպիսով, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկից պարզ է դառնում, որ այդ ցանկ ընդգրկված ոչ բոլոր ապրանքներն են, որ դասական առումով «բավարարում» են ակցիզային հարկով հարկման ենթակա լինելուն, քանի որ դրանց մի մասը ճոխության կամ պերճանքի, մարդու առողջությանը վնաս հասցնող ապրանքներ չեն, իսկ մի շարք դեպքերում մարդու կենսագործունեության համար առաջին անհրաժեշտության ապրանքներ են: Նմանատիպ ապրանքների թվում կարելի է դասել ցանկ ընդգրկված բենզինը, դիզելային վառելիքը, բնական կաշվից հագուստը և հագուստի պարագաները, բյուրեղապակյա և ճենապակյա արտադրանքը, զարդեղենը (բիժուտերիա), մարդատար ավտոմեքենաները: Այլ կերպ ասած, նոր օրենքով սահմանված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկը ձևավորվել է ոչ թե «դասական» համարվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներից, այլ էլնելով պետական բյուջեի եկամուտների ավելացման անհրաժեշտությունից:

4. Նոր օրենքի երրորդ հոդվածը ամրագրել է մի շարք սկզբունքային և էական մոտեցումներ: Այսպես, եթե նախկին օրենքով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքի համար հարկման օբյեկտ էր այդ

«ապրանքների ներմուծման արժեքը», ապա նոր օրենքով հարկման օբյեկտ է «ներմուծողի կողմից հայտարարագրված մաքսային արժեքը», որը պայմանավորված էր նաև Հայաստանի Հանրապետությունում մաքսային համակարգի և մաքսային օրենսդրության կայացմամբ: Բացի այդ, օրենքի երրորդ հոդվածով սահմանվեց նաև մեկ այլ սկզբունքային դրույթ, որով ամրագրվեց, որ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներով աշխատանքի բնեղեն վարձատրության, դրանց փոխանակության, անհատույց կամ մասնակի հատուցմամբ տրամադրման դեպքերում հարկվող շրջանառությունը հաշվարկվում է՝ էլեելով տվյալ հարկ վճարողի գործունեությամբ ձևավորված բացթողնման գներից, իսկ դրանց բացակայության դեպքերում՝ սովորաբար կիրառվող գներից, որով կանխվեց նման դեպքերի համար ակցիզային հարկի վճարումից լրիվ խուսափելը, ինչպես նաև մասնակի խուսափելը՝ արհեստական ցածր գների կիրառման միջոցով:

5. Նոր օրենքով առաջին անգամ սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող «Ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման կարգ»:

Դրանով իսկ Հայաստանի Հանրապետությունում սկիզբ դրվեց ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների իրացման քանակական վերահսկողության, իսկ ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարը դիտարկվեց որպես ակցիզային հարկի կանխավճար: Օրենքի այս դրույթի հիման վրա էլ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1997թ. հունիսի 10-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման մասին» №175, իսկ 1997թ. հունիսի 12-ին՝ «Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման մասին» № 178 որոշումները, որոնցով սահմանվեցին ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգերը՝ կանոնակարգելով այդ ապրանքների քանակական հաշվումը և դրանց համար վճարվող կանխավճարները: Այդ որոշումներով մասնավորապես 1997թ. հուլիսի 1-ից արգելվեց չդրոշմավորված ոգելից խմիչքների, 1997թ. սեպտեմբերի 1-ից չդրոշմավորված ծխախոտի ներմուծումը, իսկ 1997թ. սեպտեմբերի 1-ից արգելվեց նաև Հայաստանի Հանրապետությունում արտադրված ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացումը: Միաժամանակ Հայաստանի Հանրապետությունում կեղծ դրոշմանիշերի կանխման նպա-

տակով ուժեղացվեցին պատասխանատվության նորմերը, մասնավորապես Հայաստանի Հանրապետության քրեական և վարչական օրենսգրքերում նախատեսվեցին ակցիզային դրոշմանիշերի կեղծման կամ առանց ակցիզային դրոշմանիշերի դրոշմավորված ապրանքների իրացման համար պատասխանատվության նորմեր:

## **ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՈՒ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԷԿՈՆՅՈՒՑԻԱՆ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ**

**ԴԱԿԻԹ ՎԱՂԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տ.գ.դ.,**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի առաջատար գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հնդվածում վերլուծվել է հարկային օրենսդրության ձևավորման ու բարեփոխման էվոյուցիան ակցիզային հարկի մասով: Ակցիզային հարկի ներդրումը պայմանավորված է տնտեսության շուկայական վերափոխումների պահանջով և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների ապահովման անհրաժեշտությամբ: Ակցիզային հարկը կիրառվում է որոշակի ապրանքների կամ ապրանքների խմբերի նկատմամբ՝ հիմք ընդունելով նրանց շահութաբերության մակարդակը կամ սպառման նպատակը:

*Բանալի բառեր. ակցիզային հարկ, պետական բյուջե, հարկային եկամուտներ, շահութաբերության մակարդակ:*

## **ЭВОЛЮЦИЯ ФОРМИРОВАНИЯ И РЕФОРМИРОВАНИЯ НАЛОГОВОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА В ОБЛАСТИ АКЦИЗНОГО НАЛОГА**

**ДАВИД ВЛАДИМИРОВИЧ АРУТЮНЯН** *ձ.Յ.Ո.*

*ведущий научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА*

**Аннотация:** В статье анализируется эволюция формирования и реформирования налогового законодательства в области акцизного налога. Введение акцизного налога обусловлено спросом на рыночные реформы в экономике и необходимостью получения доходов государственного бюджета. Акцизный налог применяется к определенным товарам или группам продуктов, исходя из их прибыльности или потребления.

*Ключевые слова:* Акцизный налог, государственный бюджет, налоговые доходы, уровень рентабельности.

## THE EVOLUTION OF TAX LEGISLATION WITH RESPECT TO THE EXCISE TAX

**DAVIT VLADIMIR HARUTYUNYAN**, *Doctor of Sciences (Economics)*  
*Leading Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article analyzes the evolution of tax legislation with respect to the excise tax. Introduction of the excise tax has been associated with the demand for market reforms and the need for ensuring the inflow of tax revenues into the state budget of the Republic of Armenia. The excise tax is applied with respect to certain types of goods or product groups based on the profit margin and level of consumption of thereof.

**Keywords:** *Excise tax, state budget, tax revenue, profit margin.*

## **ԶԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՈՒ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԷԿՈԼՅՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ԶԱՐԿԻ ՄԱՍՈՎ**

*Հարկային օրենսդրության ձևավորման էվոյուցիան ԱԱՀ-ի մասով:*  
Հայաստանի Հանրապետության ներկայիս օրենսդրությունում մեծ դեր է նշանակություն ունեցող ավելացված արժեքի հարկը, լինելով անուղղակի հարկ և իր բնույթով բարդ հարկատեսակ, ամբողջովին անծանոթ էր նախնական հանրապետության հարկային պրակտիկային: Ուստի ավելացված արժեքի հարկը ներդնելուց առաջ Հայաստանի Հանրապետությունը պետք է ընտրություն կատարեր աշխարհում կիրառվող ավելացված արժեքի հարկի տարբեր համակարգերի միջև, որոնց տարբերությունները պայմանավորված են «ավելացված արժեք» հասկացությամբ:

Հարկ է նշել, որ արտադրության և շրջանառության յուրաքանչյուր փուլում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ձևավորվող արժեքը ներառում է նախորդ փուլերում ստեղծված արժեքը և տվյալ փուլում նոր ստեղծվող կամ ավելացվող արժեքը, որը հաշվարկվում է կամ ավելացված արժեքի մեջ ներառվող բաղկացուցիչ մասերի (տարրերի) գումարման եղանակով, կամ իրացված ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) արժեքից դրանց արտադրության (մատուցման) համար օգտագործված նյութական ռեսուրսների, արտադրական բնույթի աշխատանքների, ծառայությունների արժեքը հանելու եղանակով, որով հաշվարկումը բարդ է և քիչ կիրառություն ունի աշխարհում: Այդ էր պատճառը, որ նորանկախ Հայաստանի Հանրապետությունն ընտրեց համաշխարհային պրակտիկայում առավել լայն տարածում ստացած և բազմաթիվ երկրների, այդ թվում նաև նախկին ԽՍՀՄ հանրապետությունների կողմից կիրառվող, հաշվանցման սկզբունքի վրա հիմնված ավելացված արժեքի հարկի համակարգը: Դրա էությունն այն է, որ վճարվող հարկի չափը հաշվետու ժամանակաշրջանում որոշվում է որպես ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման շրջանառության նկատմամբ հաշվարկված հարկի գումարի և արտադրական նշանակության ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ձեռքբերման ժամանակ մատակարարներին վճարած հարկի գումարների տարբերություն, որն ունի նաև էական առավելություններ այն առումով, որ այս դեպքում հարկի գումարը չի տարբալուծվում ապրանքների (աշ-

խատանքների, ծառայությունների) գների մեջ, և արտադրության ու շրջանառության յուրաքանչյուր փուլում հնարավոր է լինում պարզել հարկի մեծությունը (շնորհիվ հաշվարկային փաստաթղթերի մեջ հարկի գումարի առանձնացման)՝ հնարավորություն ստեղծելով բացառելու կրկնակի հարկումը<sup>1</sup>:

Դրանից ելնելով է, որ մի շարք երկրներում հաշվանցման սկզբունքի վրա հիմնված ավելացված արժեքի հարկն ունի այլ անվանում: Օրինակ՝ Լիտվայում, Լատվիայում և էստոնիայում այն անվանում են շրջանառության հարկ, իսկ Կանադայում և Նոր Զելանդիայում՝ ապրանքների և ծառայությունների հարկ:

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ-ից անկախացած անցումային մյուս երկրներում, սեփական հարկային համակարգի ձևավորման հրատապությունը պարտադրում էր, որ հարկերը, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկը, ներդրվեին և կիրառվեին հնարավորինս արագ: Այդ էր պատճառը, որ նորանկախ Հայաստանի Հանրապետությունում սկզբում հարկերը ներդրվեցին ոչ թե օրենքներով, ինչպես ընդունված է համաշխարհային պրակտիկայում, այլ Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերով՝ ընտրելով ավելի կարճ ճանապարհ:

Հայաստանի Հանրապետության առաջին նախագահի՝ 1992 թվականի հունվարի 4-ի «Ձեռնարկություններից, կազմակերպություններից և քաղաքացիներից գանձվող հարկերի մասին» ՆՀ-49 հրամանագրով, ի թիվս մի շարք հարկատեսակների, ամրագրվեցին նաև դրույթներ ավելացված արժեքի հարկի մասին:

1992 թվականի հունվարի 5-ից Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով ավելացված արժեքի հարկի ներդրումն իրականացվեց առանց նախապատրաստական աշխատանքների, քանի որ սկսվել էին տնտեսության շուկայական վերափոխումները, իսկ պետության բյուջեն եկամուտների ապահովման խիստ կարիք ուներ:

Ավելացված արժեքի հարկի ներդրմամբ հարկվող շրջանառությունը 28 տոկոսով հարկելու հետևանքով Հայաստանի Հանրապետությունում

---

<sup>1</sup> Ավելացված արժեքի հարկը առաջին անգամ անցած դարի կեսերից սկսել է կիրառվել Ֆրանսիայում: Այնուհետև, շնորհիվ հաշվարկման յուրահատկության, հարկման լայն բազայի և բարձր պետական եկամուտներ ապահովելու ներուժի, այն, լայն տարածում գտնելով, ներդրվել է բազմաթիվ երկրների հարկային համակարգերում: Ներկայումս ավելացված արժեքի հարկը կիրառվում է հարյուրից ավելի պետություններում՝ ապահովելով այդ երկրների պետական բյուջեի եկամուտների 12-30%-ը, որը կազմում է համախառն ազգային արդյունքի 5-10%-ը:

բարձրացան ապրանքների ու ծառայությունների գները և դեռևս գործող ռուբլու արժեզրկման հետ միաժամանակ առաջացրին սոցիալական լարումներ: Ուստի Հայաստանի Հանրապետության բնակչության սոցիալական պաշտպանվածության և հացաբուլկեղենի նկատմամբ պահանջմունքի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության նախագահի՝ 1992 թվականի ապրիլի 17-ի «Այուրից, հացից և հացաբուլկեղենի ապրանքատեսակներից ավելացված արժեքի հարկի գանձումը դադարեցնելու մասին» թիվ ՀՕ-90 հրամանագրով 1992 թվականի ապրիլի 17-ից դադարեցվեց «Հացաբուլկեղենի արտադրության համար բաց թողնված այուրից, ինչպես նաև հացից և հացաբուլկեղենի ապրանքատեսակներից ավելացված արժեքի հարկի գանձումը», իսկ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի՝ 1992 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ 1993 թվականի հունվարի 1-ից ավելացված արժեքի դրույքաչափը 28 տոկոսից իջեցվեց 20 տոկոսի:

Այնուհետև Հայաստանի Հանրապետության հարկային պետական տեսչության կողմից 1992 թվականի հունվարի 15-ին հաստատվեց և գործողության մեջ դրվեց «Ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» թիվ Հ.082/1 հրահանգը, որով տրված էին ավելացված արժեքի հարկի էությունը, հարկ վճարողները, հարկման օբյեկտը, հարկման դրույքաչափը, արտոնությունները, հարկի հաշվարկման և վճարման կարգն ու ժամկետները, հարկային մարմիններ հարկի հաշվարկի ներկայացման ժամկետները և ձևերը, ավելացված արժեքի հարկի հաշվապահական հաշվառման վարման կարգը, հարկ վճարողների պարտականություններն ու պատասխանատվությունը, հարկային մարմինների վերահսկողությունը, հարկային մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկումը: Այդ հրահանգը, ըստ էության, Հայաստանի Հանրապետությունում ավելացված արժեքի հարկի կիրառումը գործնականում ապահովող առաջին իրավական փաստաթուղթն էր, որն իր վրա դեռևս կրում էր ԽՍՀՄ-ի հարկային օրենսդրության դրոշմը:

Դեռ ավելին, օրենսդրական բազայի բացակայության պատճառով, ավելացված արժեքի հարկին վերաբերող իրավական ակտեր ընդունվում էին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների և Հայաստանի Հանրապետության հարկային պետական տեսչության հրահանգների, շրջաբերականների, պարզաբանումների ու ցուցումների տեսքով՝ անարդյունավետ դարձնելով ԱԱՀ-ի կիրառումն ապահովող օրենսդրական դաշտը:

Այդ իրավիճակից դուրս գալու հնարավոր ելքը ավելացված արժեքի հարկի մասին օրենքի ընդունումն էր: Ուստի 1993 թվականի հունվարի

30-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց և Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից վավերացվեց «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության առաջին օրենքը, որը 1993 թվականի հուլիսի 1-ից գործողության մեջ դրվեց Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառման մասին» որոշմամբ՝ ավելացված արժեքի հարկի կիրառման նորմերը բարձրացնելով օրենքի աստիճանի:

Ընդ որում, մինչև օրենքի ընդունումը ներմուծվող ապրանքների իրացման շրջանառությունը այդ ապրանքների անմիջական ներմուծողների կողմից, ավելացված արժեքի հարկման օբյեկտ չէր դիտարկվում, իսկ օրենքի ընդունումից հետո մաքսային ձևակերպումների ժամանակ դրանք հանդիսացան ավելացված արժեքի հարկման օբյեկտ՝ ընդլայնելով հարկման բազան:

Սակայն այս օրենքը ավելացված արժեքի հարկ վճարողներին զրկեց գների ճկուն քաղաքականություն վարելու հնարավորությունից, որը կործանարար ազդեցություն ունեցավ առանձին արտադրողների և ծառայություն մատուցողների վրա, քանի որ օրենքում ամրագրված էր, որ ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը չի կարող փոքր լինել արտադրության և շրջանառության ծախսերին վերագրվող ակտիվների արժեքից:

Մանրածախ առևտրի համար հարկվող շրջանառության իրացման և դրանց ձեռքբերման գների տարբերության սկզբունքով որոշումը հանգեցնում էր ավելացված արժեքի հարկի ոչ հստակ հաշվարկի: Բացի դրանից, օրենքով սահմանվել էին ավելացված արժեքի հարկից ազատման բազմաբնույթ, հաճախ անորոշ և մեծածավալ արտոնություններ, որոնք կիրառման առումով խրթին էին և ոչ միանշանակ: Արտոնությունների այդպիսի առատությունը հանգեցնում էր միայն ավելացված արժեքի հարկի՝ որպես բյուջետային եկամուտների աղբյուրի, դերի նվազեցման:

ԱՊՀ անդամ-երկրների հետ ավելացված արժեքի հարկի գծով հարաբերությունների կարգավորումը յուրաքանչյուր պետության հետ կնքվող պայմանագրով կարգավորելու օրենսդրական դրույթը չկիրառվեց, և ուժի մեջ թողնվեց 1992 թվականի հունվարի 15-ին Հայաստանի Հանրապետության հարկային պետական տեսչության կողմից հաստատված հրահանգով ամրագրված նախկին ԽՍՀՄ հանրապետություններ ապրանքների (աշխատանքների և ծառայությունների) արտահանման և ներմուծման ժամանակ կիրառվող «ծազման վայրի» սկզբունքը: Դա պայմանավորված էր նրանով, որ այդ ժամանակ ավելացված արժեքի հարկի գոր-

ծողության համար միասնական հարկային տարածք էին համարվում ԱՊՀ անդամ-երկրների տարածքները, և ԱՊՀ անդամ-երկրների միջև գործում էր ավելացված արժեքի հարկի գանձման «ծագման վայրի» սկզբունքը, որի էությունն այն էր, որ ԱՊՀ անդամ մի երկիր, մասնավորապես Հայաստանի Հանրապետություն ներմուծելու համար ԱՊՀ անդամ որևէ այլ երկրից ձեռք բերված ապրանքների և ծառայությունների համար ավելացված արժեքի հարկը գանձվում էր այդ ապրանքների և ծառայությունների վաճառքի (ծագման) վայր հանդիսացող ԱՊՀ անդամ-երկրում և վճարվում այդ երկրի պետական բյուջե:

Այլ կերպ ասած, ապրանքների և ծառայությունների սպառող ԱՊՀ անդամ-պետության մեջ առկա դրամական միջոցների մի մասը ԱՊՀ անդամ այլ պետությունից գնված ապրանքների և ծառայությունների գնից հաշվարկված ավելացված արժեքի հարկի տեսքով վճարվում էր ապրանքների և ծառայությունների վաճառքի (ծագման) վայր հանդիսացող ԱՊՀ անդամ-երկրի բյուջե, այսինքն՝ ավելացված արժեքի հարկի գանձման «ծագման վայրի» սկզբունքի կիրառման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում սպառված ապրանքների և ծառայությունների համար վճարած ավելացված արժեքի հարկի մի մասը մնում էր այդ ապրանքների և ծառայությունների վաճառքի (ծագման) վայր հանդիսացող ԱՊՀ անդամ-երկրներում՝ կորուստներ պատճառելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեին:

Ուստի ավելացված արժեքի հարկը կորցրել էր Հայաստանի Հանրապետության բյուջեն համալրելու իր տնտեսական նշանակությունը:

Վերը նշվածը հասկապես Հայաստանի Հանրապետության համար ուներ բացասական մեծ ազդեցություն նաև այն պատճառով, որ Հայաստանի Հանրապետության առևտրային հաշվեկշիռը ԱՊՀ անդամ-երկրների հետ ուներ բացասական մեծ մնացորդ (սալդո)՝ կապված Հայաստանի Հանրապետությունից արտահանված ապրանքների և ծառայությունների ծավալները ներմուծման ծավալների համեմատությամբ փոքր լինելու փաստի հետ: Այդ պատճառով Հայաստանի Հանրապետությունից ԱՊՀ անդամ-երկրներ արտահանված ապրանքների և ծառայությունների համար Հայաստանի Հանրապետությունում վճարված ավելացված արժեքի հարկի մեծությունները, անհամեմատ փոքր լինելով, չէին կարող փոխհատուցել ԱՊՀ անդամ-երկրներից ներմուծված ապրանքների և ծառայությունների համար այդ երկրներին վճարված ավելացված արժեքի հարկի մեծությունները:

Բավական է նշել, որ 1995-1996 թվականներին և 1997թ. առաջին կիսամյակում «ծագման վայրի» սկզբունքի կիրառման արդյունքում ավե-

լացված արժեքի հարկի գումարային կորուստը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համար կազմել է 44.2 մլրդ դրամ:

«ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 7-րդ գլուխը նույնպես պարունակում էր կիրառման համար անորոշ դրույթներ հարկի վճարման կարգի և ժամկետների մասով: Մասնավորապես պարզ չէր, թե ինչպես պետք է որոշվեր «միջին ամսական վճարումները», կամ որն էր այն սահմանված կարգը, որով իրացման օր է ընդունվում ապրանքների առաքման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման օրը: Բացի այդ, օրենքն ամրագրում էր ավելացված արժեքի հարկի «կանխավճարային մուծումների» չհիմնավորված, անարդարացի և անթույլատրելի սկզբունքը:

Օրենքի եզրափակիչ դրույթներում սահմանվում էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ կարող է սահմանել ավելացված արժեքի հարկի հաստատագրված վճարներ, դրույքաչափեր ու չափեր, հաշվարկման և վճարման կարգ և արտոնություններ, իսկ օրենքի կիրարկման հրահանգը մշակում է Հայաստանի Հանրապետության հարկային պետական տեսչությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և արդարադատության նախարարությունների հետ:

Փաստորեն օրենքի այս դրույթով սահմանվում էր, որ ավելացված արժեքի հարկի հաստատագրված վճարներ, դրույքաչափեր ու չափեր, հաշվարկման և վճարման կարգ և արտոնություններ կարող է սահմանել նաև Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որն ակնհայտորեն օրենքի թույլ լինելու, ոչ հուսալիության և անարդյունավետության արտահայտություն էր և հնարավոր էր դարձնում, որ օրենքի դրույթների փոխարեն գործնականում գործեին հանրապետության կառավարության կողմից ընդունված ավելացված արժեքի հարկի հաստատագրված վճարներ, դրույքաչափեր ու չափեր, հաշվարկման և վճարման կարգ և արտոնություններ՝ «խաղից» դուրս թողնելով օրենսդիր մարմինը:

Եվ պատահական չէր, որ այդ տարիներին, ինչպես մինչև օրենքի ընդունումը, այնպես էլ օրենքի ընդունումից հետո Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով բազմաթիվ արտոնություններ են սահմանվել ավելացված արժեքի հարկի գծով, որոնց մի մասը թելադրված է եղել տնտեսության ճգնաժամային և սոցիալական լարված իրավիճակով: Բավական է նշել, որ միայն 1992-1993 թվականներին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է ավելացված արժեքի հարկի հարկային արտոնություն սահմանող թվով 12 որոշում:

Սակայն որքան էլ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության առաջին օրենքը լիներ ոչ լիարժեք, պարունակեր ոչ բավարար մոտեցումներ, ունենար բացթողումներ, թերություններ, անորոշություններ, անարդյունավետ լուծումներ, այնուամենայնիվ դրա հետագա շտկումը, ուղղումը, վերացումը, լրամշակումն ու կատարելագործումը կատարվեցին օրենսդրական մշտական աշխատանքով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության առաջին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով:

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության առաջին օրենքում առաջին փոփոխությունները և լրացումները կատարվեցին 1994 թվականի դեկտեմբերի 10-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-127 օրենքով: Կատարված փոփոխությունները հիմնականում ունեին գործող օրենքի առանձին հոդվածների, դրոյթների և արտոնությունների հստակեցման և ավելացված արժեքի հարկի արտոնությունների կրճատման նպատակ: Մասնավորապես օրենքի այդ փոփոխություններով.

- ա) ավելացված արժեքի հարկի արտոնությունները դադարեցվեցին բնակչության զագամատակարարման ու էլեկտրամատակարարման համար, և օրենքի այդ փոփոխությունների արդյունքում բնակչությունը պետք է ավելացված արժեքի հարկ վճարեր նաև իր սպառած զազի և էլեկտրաէներգիայի համար:
- բ) Օրենքից հանվեցին այլուրի, հացի, հացաբուլկեղենի, կաթի, մածուկի, մանկական սննդի ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունները, և իրավունք վերապահվեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային մշտական հանձնաժողովի համաձայնությամբ, սահմանելու Հայաստանի Հանրապետության տարածքում ավելացված արժեքի հարկից ազատված իրացվող սննդամթերքի ցանկը:
- գ) Հիմնական միջոցների ձեռքբերման դեպքում մատակարարների վճարած ավելացված արժեքի հարկի գումարը, բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարից հանումը տարածվեցին միայն հիմնական միջոցների ակտիվ մասի վրա՝ ձեռքբերումից հետո վեց ամսվա ժամկետում, իսկ հիմնական միջոցների պասիվ մասի գծով վճարված ավելացված արժեքի հարկը պետք է միացվեր դրանց հաշվեկշռային արժեքին:

դ) Ավելացված արժեքի հարկի կանխավճարների վճարումը ամսական երեք անգամ կատարելու պահանջը փոխարինվեց ամսական երկու անգամ կատարելու պահանջով:

Չնայած ավելացված արժեքի հարկի ներդրումը և կիրառման պրակտիկան, նրա օրենսդրության ընդունումը և դրա փոփոխություններն ունեին պետության եկամուտներն ավելացնելու նպատակ և ուղղվածություն, այնուամենայնիվ ստեղծված իրավիճակը դեռևս հեռու էր այդ նպատակի բավարար իրագործումից, քանի որ պետական բյուջեի եկամուտների մեջ ավելացված արժեքի հարկը դեռևս ուներ փոքր տեսակարար կշիռ: Դա պայմանավորված էր ինչպես ավելացված արժեքի հարկի օրենսդրական դաշտի ոչ լիարժեքությամբ, անորոշություններով, թերություններով, անարդյունավետ լուծումներով, անկատարությամբ, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում առկա տնտեսական խոր ճգնաժամով, ցածր պահանջարկով ու բնակչության ցածր գնողունակությամբ:

Բավական է նշել, որ 1994 թվականին 20463 մլրդ դրամ հարկային ընդհանուր եկամուտների մեջ ավելացված արժեքի հարկի մասնաբաժինը կազմում էր ընդամենը 24.06 տոկոսը՝ 1995 թվականի 30.36 տոկոսի, 1996 թվականի 30.72 տոկոսի փոխարեն:

**Հարկային օրենսդրության բարեփոխման էվոյուցիան ԱԱՀ-ի մասով:** 1997 թվականին Հայաստանի Հանրապետությունում սկսված հարկային բարեփոխումներն առաջնահերթության կարգով անդրադարձան անուղղակի հարկերին և մասնավորապես ավելացված արժեքի հարկին:

1997 թվականի հուլիսի 1-ից գործողության մեջ դրվեց «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքը, որը սկզբունքորեն վերափոխեց ավելացված արժեքի հարկի հարկման մոտեցումները, ամբողջապես փոխեց և մեծացրեց ավելացված արժեքի հարկի դերը պետական բյուջեի եկամուտների համալրման գործում: Ավելացված արժեքի հարկը դարձավ պետական բյուջեի եկամուտների կարևորագույն և առանցքային աղբյուրը:

Այսպես, չնայած «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը գործողության մեջ մտավ 1997 թվականի կեսերին, բայց 1997 թվականի համար արդեն իսկ ակնհայտ էր նրա դրական ազդեցությունը հարկային եկամուտների վրա, և 102880.03 մլն դրամ հարկային ընդհանուր եկամուտների մեջ ավելացված արժեքի հարկը կազմեց 37408.6 մլն դրամ կամ հարկային ընդհանուր եկամուտների 36.0 տոկոսը, 1998 թվականին համապատասխանաբար 124973.0 մլն դրամ հարկային ընդհանուր եկամուտների մեջ ավելացված արժեքի հարկը կազմեց 595114.0 մլն դրամ կամ հարկային ընդհանուր եկամուտների 47.62

տոկոսը՝ հետագա տարիներին նույնպես ապահովելով աճ հարկային եկամուտների կազմում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ նոր օրենքի հիմնական առանձնահատկություններն են.

1. նախ, որ նոր օրենքի 1-ին հոդվածում տրված «ավելացված արժեքի հարկ» սահմանումը էապես տարբերվում է նախորդ՝ ուժը կորցրած օրենքի 1-ին հոդվածում ավելացված արժեքի հարկի տրված սահմանումից համաձայն որի. «...ավելացված արժեքի հարկը ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման բոլոր փուլերում ձևավորվող ավելացված արժեքից պետական բյուջե գանձվող պարտադիր վճար է»: Նոր բարեփոխված օրենքի ընդունմամբ ավելացված արժեքի հարկը ոչ թե «ավելացված արժեքից» պետական բյուջե գանձվող պարտադիր վճար է, այլ այն արտադրության, շրջանառության և ծառայության մատուցման բոլոր փուլերում պետական բյուջե վճարվող հարկ է:

Այլ կերպ ասած, նոր օրենքի 1-ին հոդվածով վերջնականորեն ճշգրտվեց և հստակեցվեց Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ավելացված արժեքի հարկի էության սկզբունքորեն նոր մոտեցում, որով և պայմանավորված էր ավելացված արժեքի հարկի վերաբերյալ հետագա մոտեցումների ամրագրումը օրենքում:

2. Նոր օրենքի 2-րդ հոդվածով ավելացված արժեքի հարկ վճարողների շրջանակն առավել հստակեցվեց: Բացի այդ, նոր օրենքի 2-րդ հոդվածում առաջին անգամ սահմանվեց, որ ֆիզիկական անձինք նույնպես ավելացված արժեքի հարկ վճարողներ են ներմուծվող ապրանքների օրենսդրությամբ սահմանված քանակը կամ արժեքը գերազանցող մասի համար, այսինքն՝ ոչ միայն հստակեցվեց ավելացված արժեքի հարկ վճարողների շրջանակը, այլև ընդլայնվեց այն՝ ի հաշիվ ֆիզիկական անձանց:

3. Նոր օրենքի 3-րդ հոդվածով առաջին անգամ ամրագրվեց ավելացված արժեքի հարկի չհարկման նվազագույն շեմը, որով հաշվետու որևէ եռամսյակին նախորդող տարվա ընթացքում մինչև մեկ միլիոն դրամ շրջանառություն ունեցող ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնողներն ազատվեցին ավելացված արժեքի հարկի վճարումից: Դրա մեծությունը հետագա փոփոխությամբ ավելացվեց:

4. Նոր օրենքի 4-րդ հոդվածով առաջին անգամ գործածության մեջ դրվեց «կենտրոնացված ավելացված արժեքի հարկ վճարողներ» հասկացությունը:

5. Նոր օրենքի 5-րդ հոդվածով ավելացված արժեքի հարկի հարկման (նախորդ օրենքով հարկման օբյեկտ էր «բոլոր ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառու-

թունը») օբյեկտ դիտարկվեց «օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը)», իսկ օրենքի 6-րդ հոդվածով ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ դիտարկվեցին ապրանքների մատակարարումը, ծառայությունների մատուցումը, անհատույց սպառումը, ապրանքների ներմուծումը:

Այլ կերպ ասած, նոր օրենքով ավելի որոշակիացվեց ավելացված արժեքի հարկի հարկման օբյեկտների շրջանակը:

6. Նոր օրենքի 7-րդ հոդվածով առաջին անգամ սահմանվեց այն գործարքների, դեպքերի և սուբյեկտների շրջանակը, որոնք ավելացված արժեքի հարկով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում), որոնց շարքում են դասվում այն ծառայությունները, որոնց համար գանձվում է պետական տուրք, ընկերությունների կանոնադրական կապիտալի ձևավորմանը և համալրմանն ուղղվող միջոցները, ձեռնարկությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված ստորաբաժանումների միջև ապրանքների և ծառայությունների փոխանցումը (ներքին շրջանառությունը), ձեռնարկությունների սեփականության իրավունքի (այդ թվում՝ սեփականաշնորհման), ապապետականացման, վերակազմակերպման գործարքները, պետական ձեռնարկությունների հիման վրա ստեղծված վարձակալական ձեռնարկությունների վարձակալական գործարքները, անվճարունակ ճանաչվելու վերաբերյալ դատարանի որոշմամբ գույքի իրացման գործարքները, տիրագուրկ, ժառանգության իրավունքով պետությանն անցած արժեքների, գանձերի և պետության կողմից գնված արժեքների իրացման շրջանառությունը, դրամական ձևով տրվող ֆինանսական օգնությունը և շահաբաժինները, բյուջետային հիմնարկները:

7. Նոր օրենքի 8-րդ հոդվածով հստակեցվեց և սահմանվեց հարկվող շրջանառության որոշման կարգը: Այսպես, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքում ավելացված արժեքի հարկով հարկման շրջանառություն էր համարվում դրանց արժեքը՝ առանց ավելացված արժեքի հարկի, ներմուծվող ապրանքների համար՝ դրանց մաքսային արժեքը ակցիզային հարկի հետ միասին, վերամշակման կամ նորոգման նպատակով արտահանված և հետագայում ներմուծվող ապրանքների համար՝ վերամշակման կամ նորոգման արժեքը, Հայաստանի Հանրապետությունում չգրանցված օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ապրանքների մատակարարմանը և ծառայությունների մատուցմանը մասնակցած Հայաստանի Հանրապետության ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից այդ գործարքների համար՝ այդ գործարքների արժեքը դրամական արտահայտությամբ՝ առանց ավելացված արժեքի հարկի, միջնորդական ծառայությունների համար՝ միջնոր-

ղավճարը, անհատույց մատակարարման կամ ծառայությունների մատուցման, ինչպես նաև փոխանակման գործարքների համար այդ պահին սովորաբար կիրառվող գները՝ առանց ավելացված արժեքի հարկի: Բացի այդ, հողվածի առանձին կետով հստակ ամրագրվեց, որ ակցիզային հարկով հարկվող ապրանքների մատակարարման դեպքում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառության մեջ ներառվում է նաև ակցիզային հարկը, և «ներմուծման արժեքը» արդարացիորեն փոխարինվեց «մաքսային արժեք» հասկացությամբ:

8. Նոր օրենքի 11-րդ հոդվածով սահմանվեց, որ առանձին վճարողների ու գործառույթների համար օրենքով կարող են սահմանվել ավելացված արժեքի հարկի հաստատագրված վճարներ, որը սկզբունքորեն նոր մտտեցում էր:

9. Նոր օրենքի 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածները վերաբերում են «Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման վայր» բաժնին, որը նախկին օրենքում գոյություն չուներ և նոր օրենքով սահմանվեց առաջին անգամ՝ հստակեցնելով ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման վայրեր և մի շարք առանձին ծառայությունների մատուցման վայր համարվելու առանձնահատկությունները, որոնց նպատակն ավելացված արժեքի հարկի ճիշտ հաշվարկումն է:

Մասնավորապես ապրանքների մատակարարման վայր համարվեց ապրանքների գտնվելու տեղը, որտեղից դրանք մատակարարվում են: Ընդ որում, ապրանքները համարվեցին մատակարարված Հայաստանի Հանրապետություն, եթե դրանք առաքվել կամ հանձնվել են գնորդին Հայաստանի Հանրապետությունում կամ արտահանվել են Հայաստանի Հանրապետությունից, իսկ ծառայությունները համարվեցին մատուցված Հայաստանի Հանրապետությունում, եթե դրանց մատուցման վայրը Հայաստանի Հանրապետությունն է: Բացի այդ, անշարժ գույքի հետ կապված ծառայությունների մատուցման վայր համարվեց անշարժ գույքի գտնվելու վայրը, իսկ տրանսպորտային ծառայության համար՝ այն տեղը, որտեղից սկսվում է բեռների, փոստի, ուղևորների և ուղեբեռների փոխադրումը և այլն:

10. Նոր օրենքի 15-րդ հոդվածով առաջին անգամ սահմանվեց, որ ավելացված արժեքի հարկից ազատելը հարկվող շրջանառության նկատմամբ ավելացված արժեքի հարկ չհաշվարկելն է՝ թվարկելով այդ գործարքների շրջանակը, որոնց վերաբերում են քաղաքային էլեկտրատրանսպորտով փոխադրումները, ուսումնական հաստատությունները՝ ուսման վարձի մասով, դասագրքերի, մանկական և դպրոցական գրականության, բուհերի և գիտական կազմակերպությունների հրատարակած գրականու-

թյան իրացումը, անասնաբուժական դեղամիջոցները և գյուղատնտեսական թունաքիմիկատները, Հայաստանի Հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումը, նախադպրոցական, տուն-ինտերնատների, մանկատների, արատներ ունեցող երեխաների, հաշմանդամներին խնամող հաստատությունների, ծերանոցներում գտնվող անձանց հետ կապված ծառայությունները, ռադիոհաղորդումները և սպառողների կողմից չհատուցվող հեռուստահաղորդումները, թերթերի և ամսագրերի իրացումը, թաղման բյուրոների, գերեզմանատների և մահվան ու հուղարկավորության հետ կապված ծառայություններն ու պարագաների իրացումը, կրոնական ծիսակատարությունները և կրոնական կազմակերպություններին մատակարարվող կրոնական պարագաների իրացումը, փոստային ծառայությունները և փոստային դրամանիշերի, բացիկների, ծրարների իրացումը, վիճակախաղերի տոմսերի անվանական արժեքով իրացումը, ապահովագրական և վերաապահովագրական գործառնությունները, ավանդների, բանկային հաշիվների, վարկերի, արժեթղթերի, մուրհակների, չեկերի, արտարժույթի, կանխիկի տրամադրման, թանկարժեք մետաղների գնման, ֆինանսական վարձակալության, բրոքերային և միջնորդական ծառայության, բանկի կողմից արժեթղթերի, թանկարժեք մետաղների ու քարերի գնման և գումարների ընդունման գործառույթները, բնակվարձը, դոնորային, դեղանյութերի, պրոթեզաօրթոպեդիկ ծառայությունները, բարեգործական և մարդասիրական օգնությունը, 50 տոկոս հաշմանդամ ունեցող հարկ վճարողների արտադրանքների իրացումը, արտոնագրերի և լիցենզիաների հետ կապված գործառույթները:

11. Նոր օրենքի 16-րդ հոդվածը առաջին անգամ սահմանեց զրոյական դրույքաչափով հարկումը, որն արտահանող երկրի տարածքում արտահանվող ապրանքները և ծառայությունները ավելացված արժեքի հարկով չհարկելը և ապրանքներ ու ծառայություններ արտահանող անձին արտահանվող ապրանքների ու ծառայությունների համար (գծով) արտահանող երկրի պետական բյուջե վճարած ավելացված արժեքի հարկի գումարների լրիվ փոխհատուցումն (հաշվանցումն) է: Բացի այդ, 16-րդ հոդվածով սահմանվեցին նաև զրոյական դրույքաչափի կիրառման առանձնահատկությունները, որով Հայաստանի Հանրապետությունում վերջնականապես դադարեցվեց ԱՊՀ երկրների համար 1992թ. ի վեր կիրառվող ավելացված արժեքի հարկի «ծազման վայրի» սկզբունքը՝ դադարեցնելով ավելացված արժեքի հարկը ապրանքների և ծառայությունների ձեռքբերման վայր հանդիսացող երկրի բյուջե վճարելու արատավոր պրակտիկան, և դրա փոխարեն գործողության մեջ դրվեց «սպառման վայրի» («նշանակման վայրի») սկզբունքը:

«Օժազման վայրի» սկզբունքի կիրառման հետևանքով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն միայն 1995-1997թթ. ավելացված արժեքի հարկի գծով եկամուտներից կորցրել է շուրջ 44.2 մլրդ դրամ գումար: Ուստի այս փոփոխությունը կարելի է համարել ավելացված արժեքի հարկի օրենսդրության ամենակարևոր բարեփոխումը, որը սկզբունքորեն փոխեց ավելացված արժեքի հարկի ունեցած դերը և տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հարկային եկամուտների մեջ՝ անարդյունավետ ու փոքր տեսակարար կշիռ ունեցող հարկից վերածվելով արդյունավետ և պետական բյուջեի եկամուտների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող հարկի:

Օրենքի 16-րդ հոդվածով զրոյական դրույքաչափեր էին կիրառվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանից դուրս մատակարարվող (արտահանվող) ապրանքների շրջանառության, միջազգային երթուղիներով թոփչքներ իրականացնող օդանավերի լցավորման համար վառելանյութի և այդ թոփչքների ընթացքում անձնակազմի և ուղևորների սպասարկման համար ապրանքների, օդանավակայաններում մաքսային հսկողության տարածքից հետո ապրանքների մանրածախ վաճառքի, ուղևորների, ուղեբեռների, բեռների և փոստի միջազգային փոխադրումների՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս իրականացվող փոխադրումների մատուցման, միջազգային երթուղիներով փոխադրումներ իրականացնող փոխադրամիջոցների մատակարարման, սպասարկման, նորոգման, վարձակալման ծառայությունների նկատմամբ այն ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, որոնց մատուցման վայրը Հայաստանի Հանրապետությունում չի գտնվում, տրված բարեգործական և մարդասիրական օգնության շրջանակներում կատարվող շինարարական աշխատանքների, դիվանագիտական և հյուպատոսական, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական կազմակերպությունների պաշտոնական օգտագործման նպատակով կամ Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների նկատմամբ, Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումների նկատմամբ:

12. Նոր օրենքի 17-րդ հոդվածով սահմանվեց, որ առանձին օրենքով կարող են սահմանվել ավելացված արժեքի հարկի այլ արտոնություններ՝ ՀՀ կառավարությանը զրկելով ավելացված արժեքի հարկի գծով արտոնություններ տալու մինչ այդ եղած հնարավորությունից:

13. Նոր օրենքի 18-րդ հոդվածով առաջին անգամ սահմանվեց «հարկային հաշիվը» որպես այդպիսին դիտարկելով հաշիվ-ֆակտուրան (հաշիվ-ապրանքագիրը) կամ սահմանված այլ հաշվարկային փաստաթուղթը,

որոնցում առանձնացված է ավելացված արժեքի հարկի գումարը, և ապահովվում է ավելացված արժեքի հարկի հաշվանցման սկզբունքի կիրառման հնարավորությունը: Դեռ ավելին, նոր օրենքի 19-րդ հոդվածով սահմանվեց, որ «հարկային հաշիվ» դուրս չի գրվում ավելացված արժեքի հարկ վճարող չհանդիսացող անձանց կողմից, ինչպես նաև ավելացված արժեքի հարկից ազատված ապրանքների և ծառայությունների, հարկման օբյեկտ չհանդիսացող կամ գրայական դրույքաչափով հարկվող գործարքների համար, որոնց համար կազմվում են ընդհանուր կարգով սահմանված այլ հաշվարկային և վճարային փաստաթղթեր:

14. Օրենքի 20-րդ հոդվածով սահմանվեցին «հարկային հաշիվ» մեջ նշվող պարտադիր տվյալները՝ միաժամանակ սահմանելով, որ առևտրի և սպասարկումների ոլորտում «հարկային հաշիվ» կարող են ճանաչվել նաև զևման չեկերը (կտրոնները), որոնք գնորդների պահանջով պարտավոր են դուրս գրել տնտեսվարող սուբյեկտները, իսկ 22-րդ հոդվածով սահմանվեց, որ ավելացված արժեքի հարկ վճարողները պարտավոր են ժամանակագրական կարգով հաշվառել և երեք տարի պահպանել «հարկային հաշիվները»:

15. Նոր օրենքի 24-րդ հոդվածում ավելացված արժեքի հարկի հաշվարկի սկզբունքային նոր վճարման դրամարկղային մեթոդ է ներմուծված, որով բյուջե վճարվող ավելացված արժեքի հարկը որոշվում է «իրացումից հասույթ» ցուցանիշի նկատմամբ՝ դրանից կատարելով վերը նշված հաշվանցումը: Այս սկզբունքը թույլատրվում է կիրառել բնական գազի, էլեկտրաէներգիայի, ջերմային էներգիայի, խմելու և ոռոգման ջրի արտադրության, տեղափոխման և վաճառքի գործարքների և գործառույթների, երկաթուղային փոխադրումների նկատմամբ և ՀՀ կառավարության կողմից սահմանված այլ դեպքերում՝ ըստ էության նշված գործարքների և գործառույթների գծով սահմանելով հարկային արտոնություն:

16. Օրենքի 25-րդ հոդվածով սահմանվեց, որ 23-րդ և 24-րդ հոդվածներով հաշվարկված և հաշվանցվող ավելացված արժեքի հարկի տարբերությունից առաջացած գերավճարը կամ հաշվանցվում է հետագա հաշվետու ժամանակաշրջանում, կամ վերադարձվում է հիմնավորող տեղեկանքի հիման վրա՝ 30-օրյա ժամկետում, իսկ օրենքի 26-րդ հոդվածով սահմանվեց, որ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածներով սահմանված հաշվանցման իրավունքը չունեն ավելացված արժեքի հարկ չվճարողների, ավելացված արժեքի հարկից ազատված և ավելացված արժեքի հարկի հարկման օբյեկտ չհանդիսացող գործարքները և ավելացված արժեքի հարկ վճարողներ չհանդիսացող անձանցից ձեռքբերումները, իսկ ձեռք-

բերման գներից ցածր գնով իրացնելու դեպքում առաջացած ավելացված արժեքի հարկի բացասական տարբերությունը ենթակա չէ հաշվանցման կամ վերադարձման և պետք է վերագրվի ավելացված արժեքի հարկ վճարողի տրամադրության տակ գտնվող շահույթին՝ տնտեսավարող սուբյեկտներին զրկելով գների նվազեցման (այդ թվում՝ մաքսային արժեքից հաշվարկված ավելացված արժեքի հարկի համար) հետևանքով ավելացված արժեքի հարկի արհեստական գերավճարների ստեղծման հնարավորությունից:

17. Օրենքի 29-րդ հոդվածով սահմանված էր, որ հարկային հաշվի դուրսգրման իրավունք չունենալու դեպքում հարկային հաշիվ դուրս գրելիս վճարողը պարտավոր է այդ հարկային հաշվում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները վճարել բյուջե՝ հաշվանցելով (սլակասեցնելով) մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում և մաքսային հայտարարագրերում առկա ավելացված արժեքի հարկի գումարները, իսկ 29-րդ հոդվածով սահմանվեց, որ գնորդներին դուրս գրված հարկային հաշիվներում կատարված խախտումների հետևանքով ավել(սխալ) հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները բյուջեից վերադարձման ենթակա չեն: Բնարկե, այս դեպքում չի պահպանվել արդարության սկզբունքը՝ վճարողին զրկելով սխալվելու հետևանքով ավել վճարած հարկի գումարը հետ ստանալու հնարավորությունից: Թեպետ մյուս կողմից վճարողները ստիպված կլինեն աշխատել ավելի աչալուրջ՝ սխալներ թույլ չտալու և դրա հետևանքով ավել հարկերի վճարումից խուսափելու համար: Միաժամանակ նոր օրենքի 30-րդ հոդվածով սահմանված էր, որ ներմուծման դեպքում ավելացված արժեքի հարկ վճարվում է ներմուծման օրվանից տաս օրվա ընթացքում:

18. Օրենքի 31-րդ հոդվածով սահմանվեց, որ ավելացված արժեքի հարկի հաշվարկման (ծազման) պահ է, երբ ապրանքներն առաքվել կամ հանձնվել են գնորդներին, կամ ծառայությունները մատուցվել են պատվիրատուներին: Վճարման դրամարկղային մեթոդի կիրառման դեպքում ավելացված արժեքի հարկի հաշվարկման (ծազման) պահ էր գնորդներից հատուցման (ստացման) պահը, իսկ անհատույցի (մասնակի հատուցման) դեպքում՝ դրանց իրականացման օրը:

19. Օրենքի 32-րդ հոդվածով սահմանվեցին ավելացված արժեքի հարկի գումարների՝ բյուջե վճարման ժամկետները՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը, իսկ տարվա համար՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 25-ը՝ հստակեցնելով ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետները, իսկ օրենքի 41-45-րդ հոդվածներով հստակեց-

վեցին «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի խախտման համար պատասխանատվության նորմերը:

1997թ. ընդունված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունմանն այնուհետև հաջորդեցին բազմաթիվ փոփոխություններ ու լրացումներ:

## **ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԷԿՈՆՅՈՒՑԻԱՆ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ**

**ԴԱՎԻԹ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տ.գ.դ.**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթակյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի առաջատար գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հոդվածում համակարգվել է ԱԱՀ-ի ձևավորման և զարգացման էվոլյուցիան ՀՀ հարկային օրենսդրության հիմքում: Ավելացված արժեքի հարկը անուղղակի հարկ է, որը վճարվում է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: ԱԱՀ վճարող են համարվում առևտրային գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձինք, ՀՀ տարածքում զբանցված օտարերկրյա իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումները, նոտարները և անհատ ձեռնարկատերերը:

*Բանալի բառեր. ավելացված արժեքի հարկ, պետական բյուջե, շրջանառություն, շուկայական վերափոխում:*

## **ЭВОЛЮЦИЯ ФОРМИРОВАНИЯ И РЕФОРМИРОВАНИЯ НАЛОГОВОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА В ОБЛАСТИ НДС**

**ДАВИД ВЛАДИМИРОВИЧ АРУТЮНЯН, д.э.н.**

*ведущий научный сотрудник Института экономики им. М.Котаяна НАН РА*

**Аннотация:** Статья посвящена эволюции формирования и развития НДС в соответствии с налоговым законодательством РА. Налог на добавленную стоимость - это косвенный налог, подлежащий уплате в государственную бюджет, импорт товаров, их производство и обращение на территории Республики Армения, а также на всех этапах оказания услуг. Плательщиками НДС являются юридические лица, занимающиеся коммерческой

деятельностью, отделенные подразделения иностранных юридических лиц, зарегистрированные в РА, нотариусы и индивидуальные предприниматели.

*Ключевые слова: Налог на добавленную стоимость, государственный бюджет, оборот, рыночная трансформация.*

## THE EVOLUTION OF TAX LEGISLATION WITH RESPECT TO THE VALUE ADDED TAX

**DAVIT VLADIMIR HARUTYUNYAN**, *Doctor of Sciences (Economics)*  
*Leading Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article presents the evolution of the tax legislation in the Republic of Armenia with respect to the value added tax (VAT). Value added tax is an indirect type of tax, a tax receipt available to the state budget that is paid in the case of importing goods, and at the various stages of producing and selling the items, and at the all stages of rendering services in the territory of the Republic of Armenia as well. VAT payers are legal entities engaged in a commercial activity, separate subdivisions of foreign legal entities registered in the Republic of Armenia, notaries and sole proprietors.

**Keywords:** *Value added tax, state budget, sales turnover, market transformation.*

**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ՄԻ ՄՈՏԵՑՄԱՆ ՇՈՒՐՁ**

**Ներածություն.** պետական եկամուտների չափերի հետազոտությունը ցույց է տալիս, որ դրանք պատահական բնույթ ունեցող մեծությունների բազմություններ են, որոնք կախված են ոչ միայն հարկային օրենքներից ու մյուս եկամուտների աղբյուրներից, տուրքերի հավաքագրման սահմանված չափերից, այլ նաև հարկման բազայի բնութագրերից, քանի որ եկամտի յուրաքանչյուր աղբյուր ունի իր բնորոշ բնութագրերը, որոնք ժամանակի ընթացքում այլնայլ պատճառներով կարող են կրել պատահական կամ նախատեսվող փոփոխություններ: Եկամուտների բազմություններից յուրաքանչյուրը կունենա հավանականությունների բաշխման թվային բնութագրեր, մասնավորապես մաթեմատիկական սպասում ու դիսպերսիա, իսկ ընդհանուր դեպքում՝ հավանականությունների բաշխման օրենք:

Սովորաբար եկամուտների քանակական գնահատման ու կանխատեսման պարզագույն կարգը դրանց միջին արժեքներից օգտվելն է, ինչը չի կարող լիովին համապատասխանել իրականությանը, այլ կլինի միայն մոտավոր արժեք: Այդ պատճառով էլ ներկայումս առավել հիմնավորված լուծումներ փնտրելու նպատակով մշակվում են նոր մոտեցումներ ու մեթոդներ: Հայտնի են մի քանի աշխատանքներ [1, 2, 3], որոնցում փորձ է արվում եկամուտների առավել ճշգրիտ գնահատականների և դրանց կանխատեսումների համար հաշվի առնել ինչպես գործող հարկային օրենքները, այնպես էլ եկամուտների աղբյուրների իրականում գոյություն ունեցող դետերմինացված և հավանականային բնութագրերը: Կարծում ենք, որ այդ մոտեցումներն իրատեսական են և կարող են տարածվել ոչ միայն մի հարկատեսակի, այլ նաև բոլոր աղբյուրներից կատարվող եկամուտների գումարային գնահատման և կանխատեսման վրա:

**Խնդրի դրվածքը.** որպես պետական եկամուտների գնահատման ու կանխատեսման մաթեմատիկական մոդել՝ հարմար է [1]-ում առաջարկվող ինտեգրալային չափանիշի օգտագործումը, որը միաժամանակ հաշվի է առնում ոչ միայն եկամուտների աղբյուրի մաթեմատիկական նկարագրությունը (մոդելը, հարկային օրենքը), այլ նաև եկամուտների հավանականությունների բաշխման օրենքի իրականում գոյություն ունեցող տեսքը:

Առաջարկվում է պետական եկամուտների գնահատման հետևյալ ընդհանրացված մոդելը.

$$\sum_{i=1}^n \int_{x_{i,\min}}^{x_{i,\max}} C_i(x_i) f(x_i, \alpha, \beta, \dots, \gamma) dx_i \quad i = 1, 2 \dots n \quad (1)$$

Որտեղ  $x_i$ -ը եկամտի  $i$ -րդ տեսակն է,

$f(x_i)$ -ն  $i$ -րդ աղբյուրի եկամուտների հավանականությունների բաշխման խտության ֆունկցիան է, որը որոշվում է վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման միջոցով,

$x_{i,\min}$ ,  $x_{i,\max}$  — ն եկամտի  $i$ -րդ աղբյուրի օրենքով սահմանված տիրույթն է,

$C_i(x_i)$  — ն եկամտի  $i$ -րդ աղբյուրի մաթեմատիկական մոդելն է,

$n$ -ը պետական եկամուտների աղբյուրների թիվն է:

Բերված (1) ինտեգրալային մոդելն ունի հետևյալ ֆինանսական իմաստը: Հայտնի է, որ եթե ենթաինտեգրալային ֆունկցիաներից մեկը պատահական մեծության հավանականությունների բաշխման խտության ֆունկցիան է, ապա անսահման տիրույթում այն ինտեգրելիս կստանանք մյուս ենթաինտեգրալային  $C_i(x_i)$  ֆունկցիայի մաթեմատիկական սպասման թվային արժեքը: Սակայն (1) մոդելում պետական եկամուտների հարցը քննարկելիս ինտեգրման սահմաններն անվերջ չեն, այլ սկսվում են կոորդինատների սկզբնակետից մինչև որևէ հնարավոր մեծագույն արժեք, հետևաբար ինտեգրալային չափանիշի թվային արժեքը կորոշվի շատ փոքր սխալով, քանի որ անսահման մեծ եկամուտների հանդես գալու հավանականությունը շատ փոքր է: Նշվածը ճիշտ է եկամուտների բոլոր աղբյուրների համար:

Առաջարկված ինտեգրալային մոդելը ճկուն է և ունի բազմաթիվ հնարավորություններ հարկային օրենքների մեծ թվով տարբերակների դիտարկման համար, եթե նպատակահարմար է դրանցում փոփոխություններ կատարելը:

Նշենք այդ հնարավորություններից մի քանիսը.

1. ստանալ եկամուտների յուրաքանչյուր աղբյուրից ակնկալվող չափերի իրատեսական գնահատականներ:
2. Քանի որ ենթաինտեգրալային երկու ֆունկցիաներն էլ ունեն թվային բնութագրեր, ապա դրանցից կամայականի որոշակի սահմաններում

փոփոխության դեպքում կարելի է ստանալ եկամուտների գնահատականը և կառուցել տվյալ բնութագրից կախված Ա.Լաֆֆերի կորը:

3. Կարելի է կամայական սահմաններում փոփոխել քննարկվող օրենքի սանդղակի կամ հարկման տոկոսադրույքների արժեքները իրատեսական սահմաններում և կատարել ակնկալվող եկամուտների համապատասխան կանխատեսումներ:
4. Հնարավոր է մոդելում միաժամանակ փոփոխել երկու ցուցանիշի թվային արժեքները կամայական սահմաններում և կամայական քայլով, ստանալ եկամուտների գնահատականները, կատարել կանխատեսումներ և կառուցել «Ա.Լաֆֆերի մակերևույթներ», դրանց անտարբերության զծերը:
5. Առաջարկվող մոդելն ընդհանրական է, կարող է հաջողությամբ կիրառվել ցանկացած երկրում՝ ցանկացած եկամտի քանակական գնահատականներ ստանալու կամ կանխատեսելու նպատակով:

**Օրինակ.** հետազոտենք ՀՀ եկամտային հարկի զծով պետական եկամուտների գնահատումներն ու կանխատեսումները:

Ներկայումս ՀՀ-ում վճարվող աշխատավարձերի չափերը բևեռացված են [1, 2,3], քանի որ հարկատուների շուրջ 85 տոկոսի աշխատավարձերը կազմում են մինչև 120-140 հազար դրամ, իսկ մնացածներինը զգալիորեն գերազանցում է այդ սահմանը, ուստի վճարվող աշխատավարձերի ստատիստիկական կառուցվածքը, ըստ [2,3]-ի, նպատակահարմար է ներկայացնել հավանականությունների բաշխման երկու ֆունկցիաների հետևյալ կշռված գումարի տեսքով.

$$f(x) = 0,85 \cdot \frac{x \cdot e^{-\frac{x^2}{2M^2}}}{M^2} + 0,15 \frac{e^{-\frac{(x-m_2)^2}{2\sigma_2^2}}}{\sigma_2 \sqrt{2\pi}}, \quad (2)$$

որտեղ առաջին բաղադրիչը հարկատուների առաջին խմբի, իսկ երկրորդը մյուս խմբի հավանականությունների բաշխման օրենքներն են: Ռելեական բաշխման դեպքում աշխատավարձի մոդան կազմել է  $M = \frac{m}{1,25} = 91,3$  հազար դրամ, իսկ երկրորդ խմբի հարկատուների բաշխման օրենքի թվային բնութագրերը եղել են՝  $m_2 \approx 800$  հազար դրամ,  $\sigma_2 = 500$  հազար դրամ:

ՀՀ զործող եկամտային հարկի մաթեմատիկական նկարագրությունը (մոդելը), որտեղ բոլոր տոկոսադրույքներն ու հարկման սանդղակի բաժանումները փոխկապակցված են, կունենա հետևյալ տեսքը.

$$c(x) = \begin{cases} K_1 x & 0 \leq x \leq a \\ K_2(x - a) + K_1 a & a < x \leq b \\ K_3(x - b) + K_2(b - a) + K_1 a, & x > b \end{cases} \quad (3)$$

որտեղ  $K_1 = 0,244, K_2 = 0,26, K_3 = 0,36, a = 120, b = 2000$ .

Լուծենք հետևյալ որոշակի խնդիրը. դիցուք նպատակահարմար է մինչև 120 հազար դրամ ստացող հարկատուների հարկային բեռը թեթևացնել, բայց որպեսզի պետական եկամուտները չնվազեն, մեծացնել 120 հազար դրամը գերազանցող եկամուտների հարկման տոկոսադրույքը: Այդ նպատակով մեկ տոկոս քայլով փոքրացնենք 24,4 տոկոսադրույքը 25-ից մինչև 15-ի սահմաններում, իսկ 26 տոկոսադրույքը մեկ տոկոս քայլով մեծացնենք մինչև 35-ի սահմանը:

Ինտեգրալային (1) մոդելով հետազոտվել է նշված խնդիրների բազմությունը, և գնահատվել են հարկային այդ օրենքի մեծ թվով տարբերակների հնարավորությունները:

Հաշվարկները կատարված են Mathcad-14 ծրագրային փաթեթի միջավայրում: Ստորև բերված աղյուսակ 1-ում թավ թվերով առանձնացված և ներկայացված են եկամտային հարկի այն տարբերակները, որոնց դեպքում եկամուտների չափերը մնում են հաստատուն՝ մոտավորապես 55,5 հազար դրամի սահմաններում: Տեսնում ենք, որ այս օրինակում հետազոտված է եկամտային հարկի  $10 \cdot 11 = 110$  տարբերակ:

*Աղյուսակ 1*

Լաֆֆերի մակերևույթի ընդհատ ներկայացումը

| K1 \ K2 | 0,25  | 0,24 | 0,23  | 0,22  | 0,21  | 0,20  | 0,19  | 0,18  | 0,17  | 0,16  | 0,15  |
|---------|-------|------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|
| 0,26    | 56,0  | 55,1 | 54,09 | 53,13 | 52,18 | 51,22 | 50,27 | 49,31 | 48,35 | 47,4  | 46,44 |
| 0,27    | 57,2  | 56,8 | 55,37 | 54,37 | 53,41 | 52,46 | 51,50 | 50,55 | 49,59 | 48,63 | 47,67 |
| 0,28    | 58,5  | 57,5 | 56,56 | 55,60 | 54,64 | 53,68 | 52,73 | 51,77 | 50,82 | 49,42 | 48    |
| 0,29    | 59,7  | 58,7 | 57,79 | 56,83 | 55,87 | 54,92 | 53,96 | 53,00 | 52,05 | 51,09 | 50,13 |
| 0,30    | 60,   | 59,9 | 59,02 | 58,06 | 57,10 | 56,15 | 55,19 | 54,25 | 53,28 | 52,32 | 51,37 |
| 0,31    | 62,19 | 61,2 | 60,25 | 59,24 | 58,34 | 57,38 | 56,42 | 55,47 | 54,51 | 53,55 | 52,60 |
| 0,32    | 63,4  | 62,4 | 61,48 | 60,52 | 59,57 | 58,61 | 57,65 | 56,70 | 55,74 | 54,79 | 53,83 |
| 0,33    | 64,6  | 63,6 | 62,71 | 61,76 | 60,80 | 59,84 | 58,89 | 57,93 | 56,9  | 56,02 | 55,06 |
| 0,34    | 65,8  | 64,9 | 63,94 | 62,99 | 62,03 | 61,07 | 60,12 | 59,16 | 58,21 | 57,25 | 56,29 |
| 0,35    | 67,1  | 66,1 | 65,18 | 64,22 | 63,26 | 62,31 | 61,35 | 60,39 | 59,44 | 58,48 | 57,52 |

Աղյուսակի յուրաքանչյուր վանդակին համապատասխանում է եկամտային հարկի մի տարբերակ, իսկ տվյալ վանդակում լրացված թիվը մի հարկատուի կողմից վճարվող պետական եկամուտն է: Աղյուսակում յուրաքանչյուր տողը կամ սյունը Ա. Լաֆֆերի կողերն են, իսկ ամբողջ աղյուսակը կարելի է անվանել Ա. Լաֆֆերի «մակերևույթ»:

Բերված աղյուսակը K\_1 K\_2, հարթության վրա Լաֆֆերի «մակերևույթի» ընդհատ ներկայացումն է:

Աղյուսակում առանձնացված անտարբերության գիծը ներկայացված է ընդհատ տեսքով, իսկ եթե կառուցվի բերված աղյուսակին համապատասխանող անընդհատ մակերևույթը, ապա եկամուտների հավասար մակարդակների գիծը կներկայացվի անընդհատ կորի տեսքով:

**Եզրակացություն.** առաջարկվող ինտեգրալային մոդելը ընդհանրական է, պահանջում է միայն նախնական փորձնական տվյալների հավաքագրում և մշակում, ունի ավտոմատացման լայն հնարավորություններ՝ պետական եկամուտների բոլոր աղբյուրներից ակնկալվող մուտքերի գնահատման, կանխատեսման և պահանջվող բարեփոխումներ կատարելու համար:

### Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք «Պաշտոնական տեղեկագիր», ՓԲԸ, Երևան, 2008, 239 էջ:
2. Նալչաջյան Թ.Ա., Հարությունյան Վ.Ռ., Պապոյան Վ.Ա., Պետական բյուջեի հարկային մուտքերի մոդելավորման մի խնդրի մասին// ՀՊՃՀ Լրաբեր 75. Գիտական և մեթոդական հոդվածների ժողովածու. Թ.2, Երևան, 2008, էջ 775-777:
3. Հարությունյան Վ.Ռ., Բյուջեի հարկային մուտքերի մոդելավորումն ու լավարկումը // Հայաստան, ֆինանսներ, էկոնոմիկա. Թ.2, Եր., 2007, էջ 10-11:
4. Налчаджян Т.А., Папоян В.А. Математическое моделирование налоговых поступлений в госбюджет // Вестник Инженерной академии Армении. – 2008. – Т.5, N3. – С. 401 – 403.
5. Вейтцель Е.С. Теория вероятностей. – М.: Наука, 2000. – 576с.

## ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ՄԻ ՄՈՏԵՑՄԱՆ ՇՈՒՐՁ

### ՈՌԻԲԵՆ ԿԱՐԴԱՆԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՀԱՊՀ մագիստրանտ*

Համառոտագիր: Ցույց է տրվել, որ պետական եկամուտների աղբյուրներն ունեն ընդհանրություններ, որոնք հնարավոր են դարձնում դրանց ընդհանրական մոդելների կառուցումը, հետազոտումն ու վերլուծումը, ինչը թույլ է տալիս հիմնավորված գնահատականներ ունենալ եկամուտների ծավալների և ակնկալվող կանխատեսումների մասին: Առա-

շարկվող ինտեգրալային մոդելների միջոցով կարող են միաժամանակ քննարկվել և միմյանց հետ համեմատվել հարկային օրենքների հարյուրավոր տարբերակներ, կանխատեսել դրանցում կատարվող բարեփոխումների հետևանքները, կառուցել Ա.Լաֆֆերի կորերն ու մակերևույթները, ընտրել դրանցից առավել նպատակահարմարները:

*Բանալի բառեր. սլետական եկամուտներ, գնահատում, կանխատեսում, ինտեգրալային մոդել, Լաֆֆերի կոր, մակերևույթ:*

## ОБ ОДНОМ ПОДХОДЕ ОЦЕНКИ ПРОГНОЗИРОВАНИЯ ГОСУДАРСТВЕННЫХ ДОХОДОВ

РУБЕН ВАРДАНОВИЧ АРУТЮНЯН

**Аннотация:** В статье показано, что все источники государственных доходов имеют общие особенности, учет которых допускает построение обобщенной интегральной модели для оценки и прогнозирования объемов ожидаемых доходов. Посредством предложенных моделей возможно одновременное рассмотрение и сравнение множество вариантов налогового закона, прогнозируя при этом последствия возможных изменений в налоговой политике, построения кривых и поверхностей А. Лаффера, при этом выбирая наиболее целесообразные и них.

*Ключевые слова: государственные доходы, оценка, прогнозирование, интегральные модели, кривые и поверхности А.Лаффера.*

## ON AN APPROACH TO ESTIMATING AND FORECASTING THE STATE REVENUES

ROBERT VARDAN HARUTYUNYAN

*Graduate Student, Armenian National Agrarian University*

**Abstract:** The article demonstrates that the sources of state revenues have similarities that enable constructing generalized models, studying and providing the analysis of thereof, thus helping have justified estimates of the revenues and expected predictions and/or forecasts of thereof. The proposed integral models enable to simultaneously discuss and compare with each other many variations of the of tax laws, to predict and/or forecast the consequences due to changes in the exiting legislation, to construct the Laffer curves and compute the surfaces, and to choose the most reasonable ones.

*Keywords: State revenue, estimation, forecasting, integral model, the Laffer curve, surface.*

## ԶԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԸ ԵՎ ԶԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հարկերից խուսափելու ձգտումը պետության ցանկացած ֆիսկալ միջոցառման հակազդեցության դրսևորումներից մեկն է: Այդ հակազդեցությունն իրական է՝ պայմանավորված այս կամ այն սեփականատիրոջ կողմից ցանկացած ոտնձգությունից այս կամ այն ձևով իր ունեցվածքը, կապիտալն ու եկամուտները պահպանելու ձգտմամբ: Քանի դեռ գոյություն ունեն պետությունը, մասնավոր սեփականությունը, պետությունից կպահանջվի այդ սեփականության հաշվին հարկերի ձևով ֆինանսավորում, իսկ հարկատուները դրան կհակազդեն իրենց հարկային բեռը թեթևացնելու փորձերով: Այն պայմանավորված է.

- հարկային արտոնությունների առկայությամբ,
- հարկման տարբեր դրույթների առկայությամբ,
- օրենսդրական դրույթների ձևակերպման անճշտությամբ և աղավաղվածությամբ: Այն թույլ է տալիս դատարաններում բավականին հաջող բողոքարկելու հարկային մարմինների գործողություններն ու որոշումները՝ հիմնվելով «ինչն օրենքով չի արգելվում, դա թույլատրելի է համարվում» սկզբունքի վրա:

Հարկային բեռի վերաբերյալ առկա մոտեցումների հստակեցման համար կարևոր նշանակություն ունի դրա տարբերակումն ըստ մակարդակների.

- հարկային բեռ միկրոմակարդակում,
- հարկային բեռ մակրոմակարդակում:

Միկրոմակարդակում հարկային բեռի որոշման կիրառվող մեթոդներից արժանահիշատակ է հարկային բեռի որոշման համընդհանուր մեթոդը, ըստ որի՝ հարկային բեռը կազմակերպության կողմից վճարվող բոլոր հարկատեսակների հարաբերությունն է հասույթին՝ ներառյալ նաև այլ իրացումներից հասույթը, որի հաշվարկը կարելի է ներկայացնել ստորև բերված բանաձևով<sup>1</sup>.

$$ՀԲ = \frac{ՎԲ}{ԱԻՀ + ՈՒԵ} \times 100\%$$

որտեղ՝

ՀԲ-ն՝ ձեռնարկության հարկային բեռն է,

ՎԶ-ն՝ բոլոր փաստացի վճարվող հարկերի ընդհանուր գումարը,

<sup>1</sup> Лукаш Ш.А. “Оптимизация налогов. Методы и схемы”: поли. практ. руководство. М., : Грос с Медия: РОСБУХ, 2008, стр. 23.

ԱԻՀ-ն՝ արտադրության (աշխատանքներ, ծառայություններ)  
իրացումից հասույթը,  
ՈՒԵ -ն՝ ոչ իրացվելի եկամուտները:

Սակայն պետք է փաստել, որ վերոնշյալ մեթոդով հաշվարկված հարկային բեռը բնութագրում է միայն արտադրված արտադրանքի կամ մատուցված ծառայության հարկատարությունը և իրական պատկերացում չի տալիս հարկատուի իրական հարկային բեռի մասին: Ուստի անհրաժեշտ է հարկային բեռի որոշման ժամանակ հաշվարկին մասնակից դարձնել նաև արտաբյուջետային ֆոնդեր վճարվող հարկերի և այլ վճարների, ինչպես նաև հաշվարկված, բայց չվճարված հարկերի գումարները: Ավելին, հարկային բեռի որոշման ժամանակ անհրաժեշտ է հաշվարկին մասնակից դարձնել նաև ձեռնարկության աշխատակիցների կողմից վճարվող եկամտահարկի և աշխատակիցների սոցվճարների գումարները, քանի որ դրանք ներառված են աշխատավարձերի գումարներում և, վերջին հաշվով, անուղղակիորեն վճարվում են գործատուների կողմից աշխատակիցներին վճարվող և գործատուի համար «ծախս», իսկ աշխատակցի համար «եկամուտ» համարվող միջոցների հաշվին: Նույն տրամաբանությամբ պետք է հարկային բեռի բաղադրիչ դիտարկել նաև գործատուի (ձեռնարկության կողմից) տրվող սոցվճարների գումարները, որը գործատուի համար ծախս է և բացասաբար է ազդում նրա ֆինանսական վիճակի վրա:

Վերոնշյալ մոտեցումներով հաշվարկվող հարկային բացարձակ կամ իրական բեռը գործատու համարվող ձեռնարկությունների կամ հարկ վճարող իրավաբանական անձանց համար կարելի է հաշվարկել ստորև բերված բանաձևի օգնությամբ.

$$ԲՀԲ = ՀՎ + ԱԲՖՎ + ՎԹ + ԵԿ + ԳՄ + ԱՍ,$$

որտեղ՝

ԲՀԲ-ն՝ հարկային բացարձակ կամ իրական բեռն է,

ՀՎ-ն՝ ձեռնարկության կողմից փաստացի վճարված հարկային գումարները,

ԱԲՖՎ-ն՝ արտաբյուջետային ֆոնդերում վճարումները,

ՎԹ-ն՝ վճարումներում թերացումները կամ հաշվարկված, բայց չվճարված հարկերի գումարները,

ԵԿ-ն՝ ձեռնարկության աշխատակիցների եկամտահարկի գումարները,

ԳՄ-ն՝ գործատուի սոցվճարների գումարները,

ԱՍ-ն՝ աշխատակցի սոցվճարների գումարները:

Քանի որ հարկային բացարձակ կամ իրական բեռն արտացոլում է տնտեսվարող սուբյեկտի գործունեությունից հարկային ողջ պարտակա-նությունների գումարը և պատկերացում չի տալիս հարկային բեռի ծանրության մասին, ապա հարկային բեռի մակարդակի որոշման համար անհրաժեշտ է կիրառել հարկային բեռի հարաբերական ցուցանիշը, որն անհրաժեշտ է հաշվարկել որպես հարկային բացարձակ կամ իրական բեռի հարաբերություն նոր ստեղծված արժեքին:

Նոր ստեղծված արժեքը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$\text{ՆՄԱ}=\text{Հ}-\text{ՆԾ}-\text{Ա}+\text{ՈԻԵ}-\text{ՈԻԾ}$$

կամ

$$\text{ՆՄԱ}=\text{ԱՎ}+\text{ՀՎ}-\text{ԱԲՖՎ}+\text{Ծ},$$

որտեղ՝

ՆՄԱ-ն նոր ստեղծված արժեքն է,

Հ-ն՝ արտադրանքի, աշխատանքների կամ ծառայությունների իրացումից հասույթը (ներառյալ ԱԱՀ-ն),

ՆԾ-ն՝ նյութական ծախսերը,

Ա-ն՝ ամորտիզացիան,

ՈԻԵ-ն՝ ոչ իրացվելի եկամուտները,

ՈԻԾ-ն՝ ոչ իրացվելի ծախսերը (առանց հարկային վճարների),

ԱՎ-ն՝ աշխատանքի վարձատրությունը,

ՀՎ-ն՝ հարկային վճարները,

ԱԲՖՎ-ն՝ արտաբյուջետային ֆոնդերում վճարումները,

Ծ-ն՝ ձեռնարկության շահույթը:

Հետևաբար, հարկային բեռի մակարդակը, որպես հարաբերական ցուցանիշ, կարելի է հաշվարկել ստորև բերված բանաձևի օգնությամբ.

$$\text{ՀՀԲ}=\text{ԲՀԲ}/\text{ՆՄԱ}\times 100\%$$

Ինչ վերաբերում է հարկային բեռի օպտիմալ մեծության որոշմանը, ապա հարկ է նշել, որ այդ հիմնախնդրի շուրջ տարակարծությունները շարունակվում են:

Տնտեսագետների մի մասը որպես հարկային բեռի սահմանաչափի որոշման միջոց առաջարկում է, այսպես կոչված, «կարմիր սահմանագծի կանոնը» (Պ.Մոստովոյ և ուրիշներ)<sup>1</sup>, համաձայն որի՝ արդյունաբերական ձեռնարկություններից զանձվող հարկերի գումարը պետք է 3-5 տարի ընդհանուր շրջանառության նկատմամբ սահմանափակել որոշակի տո-

<sup>1</sup> Мостовой П. Произойдет ли "бостваннизация" России? Эксперт. 1997 . стр. 44.

կոսաչափով: Հիշյալ հեղինակների կարծիքով դա կնպաստի տնտեսության կայունության ապահովմանը և առաջարկի ու պահանջարկի իրական մակարդակների որոշմանը: Մեր կարծիքով նշված մոտեցման կիրառումն արդարացված կարող է լինել այն երկրներում, որտեղ տնտեսությունում արդյունաբերությունը կունենա գերակշռող մասնաբաժին, ինչպես նաև որոշված կլինի, այսպես կոչված, «կարմիր սահմանագծի» չափը, որին նշված հեղինակները լուծումներ չեն առաջարկում: Սակայն որպես խնդրի լուծման փորձ այն ուշադրության է արժանի: Գործնականում նմանատիպ չհաջողված փորձ պիտի դիտարկել Հայաստանի Հանրապետությունում հաստատագրված վճարների ու պարզեցված հարկի կիրառումը՝ որպես փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման խրախուսման միջոց, որը թեպետ նպաստեց գործարարությանը, բայց նշանակալիորեն խորացրեց հարկման բնագավառում առկա անարդարությունները: Նշված մոտեցման գործնական կիրառումը նպատակահարմար չէ, քանի որ հարկային բեռի բաշխվածությունը պետք է լինի հավասարաչափ, որի դեպքում յուրաքանչյուրը կվճարի այդ բեռի իր «արդարացի» բաժինը, որպեսզի նվազագույնի հասցվեն հարկման արդարության և համընդհանրության սկզբունքների խախտումները:

Տնտեսագետների մի ուրիշ խումբ, որպես հարկային բեռի որոշման միջոց, առաջարկում է «արդյունավետ դրույքաչափի» կիրառումը<sup>1</sup> (Յու. Պետրով, Ե.Եգորով), համաձայն որի՝ այն պետք է հաշվարկել հարկի ընդհանուր գումարի և ձեռնարկությունում ստեղծված հավելյալ արժեքի հարաբերությամբ:

Այս մեթոդաբանությամբ է բնութագրվում ընդհանուր հարկային ծանրության աստիճանը՝ ներդրումների կատարման նպատակահարմարության տեսանկյունից, և դրանով առաջարկվում է հարկային արդյունավետ դրույքաչափի սահմանում շահույթի մինչև 58.9 տոկոսի չափով: Տվյալ սահմանաչափը գերազանցելու դեպքում, ըստ հեղինակների, բացառվում է ներդրումային գործընթացների զարգացումն ընդհանրապես:

Մեր կարծիքով միայն շահույթը ձեռնարկության ֆինանսական վիճակի իրական պատկերը չի կարող տալ, հատկապես նման մոտեցմամբ հարկադրույթի չափի որոշումը և կիրառումն արդարացված չեն: Բացի այդ, հարց է առաջանում, թե արդյոք ձեռնարկության համար «արդյունավետ» համարվող դրույքաչափը ձեռնտու՞ է նաև պետությանը և վերջինիս ֆինանսական միջոցների նկատմամբ ունեցած պահանջարկին, թե՞ ոչ, հարց, որի պատասխանը «արդյունավետ դրույքաչափի» մեթոդը չի տալիս:

<sup>1</sup> Егорова Е., Петров Ю. «Сравнительный анализ эффективной ставки налогов в России и зарубежных странах», Налоговый вестник, 1995, №11, стр. 9-16.

Հետևաբար այս մեթոդը ևս գործնական կիրառության առումով արդարացված չէ, մանավանդ որ, որպես կանոն, չեն հարկվում ու չեն նորմավորվում ձեռնարկությունների կողմից կատարվող ծախսերը, որոնք «ուռճացնելով» հնարավոր է նվազագույնի հասցնել հարկվող շահույթի մեծությունը:

Հարկային «բեռի» սահմանման համար առաջարկվում է կիրառել նաև «հարկերի առաձգականության գործակիցը», որը բնութագրում է տնտեսական գործոնների (համախառն ներքին արդյունքի, ազգաբնակչության եկամուտների, մանրածախ կամ սպառողական զնի մակարդակի և այլնի) ազդեցությունը հարկերի ծավալների փոփոխությունների վրա: Այս գործակցով որոշվում է, թե յուրաքանչյուր մեկ միավոր փոփոխությունն ինչ ներգործություն է ունենալու բյուջե վճարվող հարկերի գումարների վրա:

Նկատենք, որ բյուջեի մուտքերի պլանային կամ փաստացի տվյալներով «հարկային բեռի» հաշվարկումը որոշակի ճշգրտումների կարիք ունի այն առումով, որ հստակեցման կարիք ունի հենց ինքը՝ «հարկային բեռ» հասկացությունը:

Բանն այն է, որ իրականում նշանակալիորեն միայնցից տարբերվում են փաստացի (նաև պլանային) ու հաշվարկված հարկային պարտավորությունները: Փաստացի ու պլանային վճարումների նկատմամբ հաշվարկվածի շարունակական ու մեծ չափերով գերազանցումը հանգեցնում է հարկային ապառքների կուտակման, ինչպես նաև վկայում է հարկային ոչ ճիշտ բաղաբանություն իրականացնելու մասին: ՀՀ իշխանությունների կողմից դրա ընդունման փաստ հանդիսացան 1996-1997թթ. հարկային համաներումները:

Հարկային ապառքները «հարկային բեռի» բաղկացուցիչ մասն են, և հարկատուների համար կարևոր է ոչ միայն այն, թե որքան վճարվեց բյուջե, այլև այն, թե որքան է նա ծանրաբեռնված հարկային պարտավորություններով: Ուստի «հարկային բեռը» պետք է ներառի նաև հարկային ապառքները, որոնց աճը վկայում է հարկային բեռի անարդարացիության մասին:

Բացի պետության հանդեպ ունեցած հարկային պարտավորությունների կատարումից, հարկատուները լրացուցիչ միջոցներ և ժամանակ են ծախսում նաև հարկային պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ հաշվարկների, հաշվետվությունների ու հայտարարագրերի լրացման, համակարգչային ծրագրերի ներդրման, խորհրդատվական ու փաստաբանական ծառայությունների ստացման և այլնի համար, որոնք բացասաբար են ազդում հարկատուների վճարունակության և պետական բյուջեի մուտքերի մակարդակի վրա:

Այդ առումով անհրաժեշտ է կարևորել առանձին երկրների առաջավոր փորձի կիրառումը, երբ պետություններն իրենք են զնահատում և հարկատուներին իրազեկում հարկային հաշվետվությունների փոփոխությունների արդյունքում ունենալիք լրացուցիչ ծախսերի մասին: Այսպես, օրինակ, Միացյալ Նահանգներում եկամտահարկի գանձման համակարգում ցանկացած լուրջ փոփոխություն իրականացնելու ժամանակ պարտադիր հաշվարկվում է ժամանակի այն զնահատականը, որը պահանջվում է յուրաքանչյուր հարկատուից՝ նոր կանոններով հարկային հայտարարագիր (դեկլարացիա) լրացնելու համար<sup>1</sup>: Մյուս կողմից, պետությունն իր հերթին հարկային եկամուտների հավաքագրումն իրականացնելու ընթացքում միջոցներ է ծախսում հարկային մարմինների պահպանման և հարկերի գանձման նկատմամբ վերահսկողության իրականացման, դատական համակարգի միջոցով անբարեխիղճ հարկատուներին պատասխանատվության ենթարկելու և այլնի համար, որոնց չարդարացված աճը սահմանափակում է ֆինանսական միջոցների նկատմամբ պետության ունեցած պահանջարկը: Նշված երկու դեպքերում էլ կատարված լրացուցիչ ծախսերը հասարակության համար ֆինանսական միջոցների կորուստներ են, քանի դեռ հավաքագրված միջոցների օգտագործումը չի ապահովում գոնե համարժեք արդյունավետություն: Բայց նույնիսկ վերջին պայմանի ապահովման դեպքում նախընտրելի է, որ պետությունը նպաստի նվազագույնի հասցնելու այդ ծախսերը, քանի որ այն անուղղակիորեն բխում է պետության շահերից և հարկման արդյունավետության բարձրացման պահանջներից: Սա այն դեպքն է, երբ պետական շահը հակամարտ հակասության մեջ է մտնում ծանր «հարկային բեռի» հետ, և վերջինս «խարխլում է» պետականության հիմքերը:

Ուստի, առաջին հերթին, պետությունը պետք է շահագրգռված լինի յուրաքանչյուր առանձին վերցրած հարկատուի հարկային բեռի կարգավորման հարցում, որի ուղիները կարող են հարկային լծակների ու գործիքների միջոցով հարկային բեռի տեղափոխումը ճյուղից ճյուղ, չունևորից ունևոր, արտադրությունից առևտուր, վնասաբեր, բայց անհրաժեշտ ձեռնարկությունից գերշահույթ ապահովող ձեռնարկություն և այլն, ինչպես նաև պետության կողմից հարկատուներին մատուցվող ծառայությունների բարելավումը՝ կապված հարկային օրենսդրության պարզաբանման ու հստակեցման, հարկատուներին աջակցելու և հարկային մարմինների նկատմամբ հարկատուների վստահությունն ամրապնդելու, հաշվետվու-

<sup>1</sup> Бобосв М., Кашин В., “Налоговая политика России на современном этапе”. Вопросы экономики, № 7, 2002, стр. 56, Горский И. “К оценке налоговой политики”. Вопросы экономики, № 7, 2002, стр. 46.


թյունների ներկայացման գործընթացը թեթևացնելու և այլնի հետ: Անհրաժեշտ է կարևորել նաև հարկ վճարողների ու հարկման օբյեկտների շրջանակների ընդլայնումը՝ ապահովելով հարկման համընդհանրության ու արդարության սկզբունքների կիրառումը, այսինքն՝ հարկման սկզբունքները պետք է փոխհամաձայնեցված գործեն ու միմյանց լրացնեն, որպեսզի հարկերին բնորոշ գործառույթներին «լիաթոք շնչելու» հնարավորություն տրվի:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հարկման արդյունավետությունը կարելի է սահմանել որպես հարկային եկամուտների նկատմամբ պետության ունեցած պահանջարկի այնպիսի ձևերի, մեթոդների ու մեխանիզմների միջոցով ապահովում, որոնք նվազագույնի են հասցնում պետության ու հարկատուների ծախսերի կորուստները՝ առանց վերջիններիս վարքագծի ձևախեղման:

Հարկման արդյունավետության գնահատականի հարցը նույնպես շարունակում է մնալ վիճահարույց, այսինքն՝ հստակ չէ այն հարցի պատասխանը, թե հարկատուի եկամտի որ մասի գանձումն է արդյունավետ, 30, 40, թե 50 տոկոսը: Այդ իսկ պատճառով հարկման արդյունավետության վերաբերյալ քննարկումները հաճախ կառուցվում են միջազգային համեմատությունների վրա՝ հիմք ընդունելով մակրոտնտեսական մակարդակում պլանային կամ փաստացի վճարված հարկերի ընդհանուր գումարի և համախառն ներքին արդյունքի, իսկ միկրոմակարդակում՝ պլանային կամ փաստացի վճարված հարկերի ու համախառն եկամտի տոկոսային հարաբերակցության ցուցանիշները:

Մեր կարծիքով այդ ցուցանիշները նշված մոտեցմամբ հաշվարկելու դեպքերում հարկման իրական վիճակն արտացոլել չեն կարող, քանի որ հաշվարկին մասնակից չի դարձվում հարկային մուտքերի աղբյուր հանդիսացող հարկային ապառքների ներուժը, որի հաշվառման և միջազգային համեմատությունների պարագայում պատկերն էապես կարող է փոխվել: Այդ առումով պետք է միջազգային համեմատությունների դաշտ սեղափոխել նաև փաստացի գանձված հարկերի ու հարկային ողջ պոտենցիալի (փաստացի գանձված հարկեր/փաստացի գանձված հարկեր+հարկային ապառքներ) տոկոսային հարաբերակցության ցուցանիշները, որոնք պատկերացում են տալիս անբարեխիղճ հարկատուների վարքի, կոռուպցիայի չափերի, հարկային համակարգի արդյունավետության և այլնի մասին: Մինչդեռ միայն փաստացի գանձված հարկերի հաշվառմամբ որոշված ցուցանիշները պատկերացում են տալիս միայն օրինապահ հարկատուների և հարկային վարչարարության արդյունավետության մասին:

Հարկման արդյունավետությունը բնութագրող ու ընդհանրացնող և միջազգային համեմատություններում կիրառվող ցուցանիշ է համարվում սան Բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի ցուցանիշը: Որպես կանոն, որքան բարձր է վերջինս, այնքան մեծ է սան հարկային եկամուտների և համախառն ներքին արդյունքի տոկոսային հարաբերակցության ցուցանիշը: Դա վկայությունն է սան այն փաստի, որ հարկման արդյունավետության մակարդակը մեծապես պայմանավորված է երկրի զարգացածության ու հարկատուների վճարունակության աստիճանով, որն ապացուցվում է սան փաստացի տվյալներով (տես գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ<sup>1</sup>

Գծապատկեր 1-ում արտացոլված մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի ցուցանիշի և համախառն ներքին արդյունքում հարկային եկամուտների տեսակարար կշռի միջև ուղղակի կապի<sup>2</sup> առկայությունը վկայությունն է այն բանի, որ հարկման մակարդակը էապես կախված է երկրների զարգացածության մակարդակից:

<sup>1</sup> World Development Indicators, The World Bank, 2001: Երկրների յուրաքանչյուր խմբում ներառված են միայն որոշակի խումբ երկրներ:

<sup>2</sup> Չարգացած երկրների հարկային եկամուտներում արտացոլված են միայն կենտրոնական բյուջեների եկամուտները:

Հարկման արդյունավետությունը բնութագրող ընդհանրացնող և միջազգային համեմատություններում կիրառվող ցուցանիշներից է անուղղակի և ուղղակի հարկերի տոկոսային հարաբերակցության ցուցանիշը, որը պատկերացում է տալիս հարկման արդարացիության սկզբունքի կիրառման մասին: Որքան բարձր լինի անուղղակի հարկերի մասնաբաժինը, այնքան պակաս ուշադրություն դարձված կլինի հարկման արդարության սկզբունքի պահպանմանը, քանի որ անուղղակի հարկերը ներառվում են ապրանքների ու ծառայությունների գների մեջ՝ հարկային բեռը տեղափոխելով սպառողների վրա, որի գերակշիռ մասն ազգաբնակչությունն է:

Հարկման արդյունավետությունը բնութագրող ընդհանրացնող և միջազգային համեմատություններում կիրառվող ու ոչ ավանդական ցուցանիշներ են համարվում «ոչ թափանցիկ հարկերը», այսինքն՝ հարկատուների կողմից տրվող կաշառքներն ու պետական տարբեր մարմինների հետ շփումներում ժամանակի կորուստը, որոնց առկայությունը և, առավել ևս, դրանց աճը նվազեցնում են հարկման արդյունավետության մակարդակը:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գնահատականների համաձայն՝ անցումային տնտեսությամբ երկրներում հարկատուների եկամուտների 2.1-6.8 տոկոսը (ինչը կարելի է համարել կաշառային հարկի «դրույքաչափ»<sup>1</sup>) տարբեր երկրներում օգտագործվում է զանազան պաշտոնյաներին կաշառելու («կաշառային հարկ» վճարելու) համար, իսկ այդ հարկի վճարման հաճախականությունը<sup>2</sup> տատանվում է 8-60%-ի միջակայքում<sup>3</sup>:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գնահատականներով թե՛ կաշառային հարկի դրույքաչափը և թե՛ դրա վճարման հաճախականությունը հետազոտված բոլոր երկրներում առավել բարձր են փոքր և միջին ձեռնարկությունում, իսկ խոշոր ձեռնարկություններում այդ ցուցանիշները համեմատաբար ցածր են: Պակաս կարևոր չէ նաև այն ժամանակը, որը տնտեսվարող սուբյեկտների ղեկավար անձինք կորցնում են պետական պաշտոնյաների հետ տարբեր շփումներում: Անցումային տնտեսությամբ երկրների համար այդ ցուցանիշը, այսինքն՝ ժամանակային հարկի (որը բնութագրում է հարկատուի ղեկավար անձանց ընդհանուր աշխատածամանակում պետական պաշտոնյաներին հստակացվող

<sup>1</sup> Պետական պաշտոնյաներին տրվող ապօրինի վճարումների տեսակարար կշիռը հարկատուների ընդհանուր եկամուտներում:

<sup>2</sup> Պետական պաշտոնյաներին ապօրինի վճարումներ տվող հարկատուների տեսակարար կշիռը հարկատուների ընդհանուր թվում:

<sup>3</sup> "Transition report 1999. Ten years of transition", European bank for Reconstruction and Development, 1999, viii+288p.

աշխատաժամանակի տեսակարար կշիռը) գնահատականները ևս հաստատում են հարկման ոչ ավանդական եղանակներին պատշաճ ուշադրություն դարձնելու անհրաժեշտության մասին<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ հարկման արդյունավետությունը բնութագրող ընդհանրացնող և միջազգային համեմատություններում կիրառվող ցուցանիշների հաշվարկումն անհրաժեշտ է, բայց բավարար չէ հարկման արդյունավետության մակարդակն ըստ էության գնահատելու համար, քանի որ տարբեր երկրներում կիրառվող հարկման մեխանիզմները միմյանցից տարբերվում են նույնիսկ ըստ հարկատեսակների՝ կապված տվյալ երկրում կիրառվող հարկային արտոնությունների տեսակների և դրանց ընդգրկվածության աստիճանի, հարկման բազայի որոշման ու հարկման օբյեկտի ընդգրկման շրջանակների, հարկադրույթների տարբերակման ու հարկի մեծությունը կանխորոշող այլ գործոնների հետ: Այդ առումով անհրաժեշտ է կարևորել ու հաշվառել առանձին հարկատեսակների հաշվարկման առանձնահատկությունները, որոնք նվազեցնում կամ մեծացնում են հարկման արդյունավետությունն ըստ առանձին հարկատեսակների:

Վերոհիշյալ ցուցանիշների համակարգում հարկման արդյունավետության մակարդակը բնութագրող ամենաընդհանրական ու գործնական լայն կիրառություն ստացած ցուցանիշը հարկային եկամուտների և ՀՆԱ-ի տոկոսային հարաբերակցության ցուցանիշն է: Այդ ցուցանիշը 2005 թվականին ամենաբարձրը եղել է Մադագասկարում՝ 54.4%, Անգլիայում կազմել է 28.3%, Նոր Զելանդիայում՝ 31.8%, Նիդեռլանդներում՝ 23.2%, Իտալիայում՝ 21.3%, Պորտուգալիայում՝ 21.6%, Շվեդիայում՝ 20.8%, Դանիայում՝ 30.6%, Իսրայելում՝ 29.3%, Բելգիայում՝ 26.5% և այլն: Իրավիճակն այլ է զարգացող երկրներում, որտեղ այդ ցուցանիշը կազմել է. Բելառուսում՝ 20.6%, Բուլղարիայում՝ 23.4%, Էստոնիայում՝ 17.0%, Վրաստանում՝ 12.1%, Ղազախստանում՝ 20.6%, Լատվիայում՝ 15.3%, Լիտվայում՝ 17.5%, Սլովակիայում՝ 18.9%, ՌԴ-ում՝ 16.6%, Տաջիկստանում՝ 9.8%, Ուկրաինայում՝ 17.8%, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ 14.2%<sup>2</sup>, որն, իհարկե, բավականին ցածր ցուցանիշ է:

<sup>1</sup> “Transition report 1999. Ten years of transition”. European Bank for Reconstruction and Development, 1999, viii+288p.

<sup>2</sup> 2007 World Development Indicators, pos 284-286.

## ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՈՐ ԵՎ ՀԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ., դոցենտ,*  
*ԵՊՀ ղաաախոս*

**Համառոտագիր:** Հարկման արդյունավետությունը բնութագրող ընդհանրացնող և միջազգային համեմատություններում կիրառվող ցուցանիշների հաշվարկումն անհրաժեշտ է, բայց բավարար չէ հարկման արդյունավետության մակարդակն ըստ էության գնահատելու համար, քանի որ տարբեր երկրներում կիրառվող հարկման մեխանիզմները միմյանցից տարբերվում են, նույնիսկ ըստ հարկատեսակների՝ կապված տվյալ երկրում կիրառվող հարկային արտոնությունների տեսակների և դրանց ընդգրկվածության աստիճանի, հարկման բազայի որոշման ու հարկման օբյեկտի ընդգրկման շրջանակների, հարկադրույթների տարբերակման ու հարկի մեծությունը կանխորոշող այլ գործոնների հետ: Այդ առումով անհրաժեշտ է կարևորել ու հաշվառել առանձին հարկատեսակների հաշվարկման առանձնահատկությունները, որոնք նվազեցնում կամ մեծացնում են հարկման արդյունավետությունն ըստ առանձին հարկատեսակների:

*Բանալի բառեր. հարկման արդյունավետություն, հարկային բեռ, հարկատեսակներ, հարկման մեխանիզմներ, հարկային դրույքաչափ, ուղղակի հարկեր, անուղղակի հարկեր, հարկային մարմին, հարկային վարչարարություն:*

## НАЛОГОВАЯ НАГРУЗКА И НАЛОГОВАЯ ЭФФЕКТИВНОСТЬ

ТИГРАН ВЛАДИМИРОВИЧ АРУТЮНЯН, *д.э.н., доцент,*  
*преподаватель ЕГУ*

**Аннотация:** Подсчет показателей, используемых в обобщающих и международных сопоставлениях, характеризующих эффективность налогообложения необходим, но не достаточен для оценки уровня эффективности налогообложения. Поскольку в разных странах механизмы налогообложения различны, даже по типам налогов, связанных со степенью видов налоговых льгот и их вовлечений; определение налоговой базы и сферы действия объекта налогообложения, дифференциации поручений и других факторов, которые предопределяют ставку налога. Поэтому, необходимо выделить и рассмотреть особенности подсчета отдельных видов налогов, уменьшающих или повышающих эффективность налогообложения по их отдельным видам.

**Ключевые слова:** *эффективность налогообложения, налоговая нагрузка, налоги, механизмы налогообложения, налоговые ставки, прямые налоги, косвенные налоги, налоговые органы, налоговое администрирование.*

## **TAX BURDEN AND TAXATION EFFICACY**

**TIGRAN VLADIMIR HARUTYUNYAN**, *Doctor of Sciences (Economics), Associate Professor, Yerevan State University*

### **Abstract**

The calculation of the indicators used in general and international comparisons characterizing the efficacy of the tax is necessary, but not sufficient, for assessing the advantages of tax efficiency. In different countries, the mechanisms of taxation are related to the degree of types of tax benefits and/or incentives and their coverage; defining of the tax base and scope of the object of taxation, differentiation of tax rates and other factors predicting the amounts to be paid. In this case, it is important to highlight and consider the specifics of calculating certain types of taxes that reduce or increase the effectiveness of taxation for certain types of taxes.

**Keywords:** *Taxation efficacy, tax burden, taxes, taxation mechanisms, tax rates, direct taxes, indirect taxes, tax authority, tax administration.*

## ՀՀ ԶԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԲԱՂԿԱՅՈՒՅԻՉ ՏԱՐԵՐԸ

*Հարկային օրենսդրությունը* հարկային իրավունքի գոյության արտահայտման կոնկրետ ձև է և իշխանության պետական և տեղական մարմինների կողմից ընդունված և հարկային նորմեր պարունակող իրավական ակտերի ամբողջություն: Մինչդեռ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում հարկային օրենսդրությունը ներկայացված է որպես հարկային օրենքների ամբողջություն, որը սահմանափակում է «հարկային օրենսդրություն» հասկացության էությունը, քանի որ հարկային նորմեր պարունակող իրավական ակտեր ընդունում են նաև համայնքի ավագանիները: Դեռ ավելին, հարկային նորմեր պարունակող իրավական ակտեր ընդունվել են նաև ՀՀ առաջին նախագահի հրամանագրերի մակարդակով, այդպիսիք ընդունվել և շարունակում են ընդունվել ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ կառավարությանն առընթեր պետական հարկային ծառայության, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում պետական կառավարման այլ մարմինների կողմից ընդունված ակտերի մակարդակով՝ հարկային օրենքներով կամ ՀՀ կառավարության որոշումներով սահմանված դեպքերում և սահմաններում: Հետևաբար գործնականում *հարկային օրենսդրությունը* պետք է սահմանել որպես հարկային օրենքների, հարկային օրենքներում սահմանված դեպքերում և սահմաններում ՀՀ կառավարության որոշումների, պետական կառավարման այլ մարմինների (հարկային, մաքսային և այլն) կողմից ընդունված ակտերի ամբողջություն:

*Հարկային օրենքները* օրենսդրական մակարդակի բարձրացված այն իրավական ակտերն են, որոնք կարգավորում են պետության և հարկատուի փոխհարաբերությունների ողջ շրջանակը՝ սկսած օրենքի կարգավորման առարկայից և վերջացրած օրենքը խախտելու համար վճարողների և դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվությամբ: Հետևաբար, հարկային արդարացի օրենսդրության ձևավորումը պահանջում է. ա) հստակ ձևակերպել հարկման ոլորտում պետության նպատակները, խնդիրները և գործառույթները, բ) հաշվեկշռել պետության և հարկատուի իրավունքներն ու պարտավորությունները և գ) ապահովել իրավունքի ու պարտավորության նորմեր պարունակող կանոնների պահպանումը:

Հարկային օրենքների դաշտում իր ուրույն տեղն ունի հարկերի մասին օրենքը, որից պետք է բխեն հարկատեսակների մասին մնացած բոլոր

օրենքներն ու հարկման ոլորտին վերաբերող բոլոր ակտերը: Այն դերն ու նշանակությունը, որն ունի Սահմանադրությունը (այն պետության «մայր օրենքն է») երկրի համար, կարելի է ասել, ունի հարկային օրենսգիրքը, իսկ դրա բացակայության դեպքում՝ հարկերի մասին օրենքը հարկային օրենսդրության համար:

Հարկային օրենսդրությունը ներառում է հարկային օրենսդրության ինստիտուտների ու ենթաճյուղերի, հարկման սկզբունքների և հարկման ոլորտին առանձնահատուկ հասկացությունների ամբողջություն:

Հարկային օրենսդրության ինստիտուտը ներառում է.

*ա) Հարկ վճարողների ինստիտուտը*, որի ընդգրկման շրջանակներից է կախված հարկային մուտքերի ներուժը: ՀՀ-ում գոյություն ունի հարկ վճարողների թվով 27 խումբ, որոնցից 2-ականը վերաբերում է հողի հարկին և բենզինի ու դիզելային ֆուելի հաստատագրված վճարներին, 3-ականը՝ ԱԱՀ-ին, հաստատագրված վճարներին և պարզեցված հարկին, 2-ականը՝ շահութահարկին և եկամտահարկին, 4-ականը՝ ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարներին և ակցիզային հարկին, 5-ականը՝ գույքահարկին (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

**ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված հարկ վճարողների ցանկը<sup>1</sup>**

| №  | Հարկատեսակները և դրանց փոխարինիչները  | Հողի հարկ | ԱԱՀ | Շահութահարկ | Եկամտահարկ | Գույքահարկ | Հաստատագրված վճարներ | Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարներ | Պարզեցված հարկ | Ակցիզային հարկ | Բենզինի և դիզելային ֆուելի հաստատագրված վճարներ |
|----|---|-----------|-----|-------------|------------|------------|----------------------|---|----------------|----------------|---|
|    |   |           |     |             |            |            |                      |   |                |                |   |
| 1  | 2   | 3         | 4   | 5           | 6          | 7          | 8                    | 9                                       | 10             | 11             | 12  |
| 1. | Հողի սեփականատերերը   |           |     |             |            |            |                      |   |                |                |   |
| 2. | Պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողները |           |     |             |            |            |                      |   |                |                |   |
| 3. | Ֆիզիկական անձինք  |           |     |             |            |            |                      |   |                |                |   |
| 4. | Իրավաբանական անձինք   |           |     |             |            |            |                      |   |                |                |   |

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության հարկային օրենքները, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», Երևան, 2006, էջ 17, 36, 60, 88, 105, 129, 156, 169, 177, 254:

| 1   | 2  | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |  |
|-----|--|---|---|---|---|---|---|---|----|----|----|--|
| 5.  | Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները   |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 6.  | ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք   |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 7.  | ՀՀ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 8.  | ՀՀ քաղաքացիները  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 9.  | ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները   |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 10. | Միջազգային կազմակերպությունը և դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված կազմակերպությունները  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 11. | Օտարերկրյա քաղաքացիները  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 12. | Քաղաքացիություն չունեցող անձինք  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 13. | ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձինք  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 14. | ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք   |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 15. | Օխախտտի արտադրանք ներմուծող ֆիզիկական անձինք   |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 16. | Օխախտտի արտադրանք ներմուծող իրավաբանական անձինք  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 17. | Օխախտտի արտադրանք արտադրող ֆիզիկական անձինք  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 18. | Օխախտտի արտադրանք արտադրող իրավաբանական անձինք   |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 19. | Որոշակի պայմանների բավարարող առևտրային կազմակերպությունները  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 20. | Որոշակի պայմանների բավարարող անհատ ձեռնարկատերերը  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 21. | Նոտարները  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 22. | Ալցիզային հարկով հարկվող ապրանքներ ներմուծող (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանց ՀՀ-ում սահմանված կարգով գրանցված ներկայացուցությունները և մասնաճյուղերը) իրավաբանական անձինք |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |

| 1   | 2  | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
|-----|--|---|---|---|---|---|---|---|----|----|----|
| 23. | Ակցիզային հարկով հարկվող ապրանքներ արտադրող իրավաբանական (ներառյալ շալցնող կամ այլ կերպ տարայավորող) իրավաբանական անձինք   |   |   |   |   |   |   |   |    |    |    |
| 24. | Ակցիզային հարկով հարկվող ապրանքներ ներմուծող ֆիզիկական անձինք  |   |   |   |   |   |   |   |    |    |    |
| 25. | Ակցիզային հարկով հարկվող ապրանքներ արտադրող (ներառյալ շալցնող կամ այլ կերպ տարայավորող) ֆիզիկական անձինք   |   |   |   |   |   |   |   |    |    |    |
| 26. | ՀՀ բենզին և դիզելային վառելիք ներմուծող իրավաբանական անձինք (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանց ՀՀ-ում սահմանված կարգով գրանցված ներկայացուցչությունները և մասնաճյուղերը) |   |   |   |   |   |   |   |    |    |    |
| 27. | ՀՀ բենզին և դիզելային վառելիք ներմուծող անհատ ձեռնարկատերեր  |   |   |   |   |   |   |   |    |    |    |

Բացառություն են կազմում ՀՀ պետական կառավարչական հիմնարկները, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները, պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե փոխանցվող եկամուտների մասով և ՀՀ կենտրոնական բանկի:

Բացառություն են կազմում ՀՀ պետական մարմինները, ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները և հիմնարկները:

Բացառություն են կազմում.

ա) «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հաստատագրված վճար վճարող անձինք գործունեության այդ մասով.

բ) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողները,

գ) անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված և չիրացված այնպիսի ապրանքների մնացորդը, որոնց համար ավելացված արժեքի հարկը վճարված չի եղել ներմուծման պահին՝ գերազանցում է մեկ մլն դրամը,

դ) տվյալ տարվա հունվարի 1-ին 100 հազար և ավելի դրամը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ (այդ թվում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի ու տուգանքների գումարը) ունեցող անձինք,

- ե) բանկերը, գրավատները, վարկային կամ ապահովագրական կազմակերպությունները, ներդրումային հիմնադրամները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները, հանքագործական արդյունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման, կապիտալ շինարարության իրականացման, կապիտալ շինարարության բնագավառում քաղաքաշինության փաստաթղթերի մշակման կամ ինժեներական հետազննման և փորձաքննության, իրավունքի, հաշվապահական հաշվառման և առլիտի բնագավառի գործունեություն, առևտրային գործունեության և կառավարման հարցերով խորհրդատվություն իրականացնողները, բացառությամբ խորհրդատվական ծառայություն մատուցող նոտարների.
- զ) այն անձինք, որոնք դադարել են համարվել այդպիսիք՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը.
- է) գյուղատնտեսական արտադրանք արտադրողները.
- ը) համատեղ գործունեության պայմանագրի կողմ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը.
- թ) այն առևտրային կազմակերպությունները, որոնց կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է պարզեցված հարկ վճարողին կամ որոնց կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է այն անձին, որին միաժամանակ պատկանում է պարզեցված հարկ վճարող առևտրային այլ կազմակերպության կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը).
- ժ) այն առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը, որը փոխկապակցված է այլ պարզեցված հարկ վճարողի հետ:

**բ) Հարկվող օբյեկտի ինստիտուտը:** Հարկվող օբյեկտը արժեքային այն մեծությունն է, որի նկատմամբ օրենքով սահմանված դրույքաչափերը կիրառելով հաշվարկվում է հարկի չափը՝ բացառությամբ հաստատագրված վճարների, քանի որ վերջիններիս մասով, անհասկանալիորեն և տնտեսագիտական հիմնավորում չունեցող մոտեցումներով հարկվող օբյեկտ դիտարկվել է ոչ թե արժեքային մեծությունը, այլ գործունեության տեսակները: Ինչ վերաբերում է հարկման բազային, ապա դա հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչն է, որի հիման վրա օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է հարկի գումարը: ՀՀ-ում դա առկա է գույքահարկի և ակցիզային հարկի մասով, որոնց սահմանումը բարձրացված է օրենսդրական մակարդակի: Ինչպես հարկվող օբյեկտը, այնպես էլ հարկման բազան այն սուբստանցն են, որոնց մեծությունից կախված է հարկի չափը:

ՀՀ-ում գոյություն ունի հարկվող օբյեկտի թվով 13 խումբ, որոնցից 2-ականը վերաբերում են հողի հարկին, շահութահարկին, եկամտահարկին, գույքահարկին և ակցիզային հարկին, մեկականը՝ ԱԱՀ-ին, հաստատագրված վճարներին ու պարզեցված հարկին (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված հարկվող օբյեկտների ցանկը<sup>1</sup>

| №  | Հարկատեսակները և դրանց փոխարինիչները  | Հարկ հարկ | ՀԱՊ | Շահութահարկ | Եկամտահարկ | Գույքահարկ | Հաստատագրված վճարներ | Օխախտի սրտայանկի միջնաբերանի հատման արտադրանքի վճարում | Պարզեցված հարկ | Ակցիզային հարկ | Բենզինի և դիզելային լիտրի հատման արտադրված վճար |
|----|---|-----------|-----|-------------|------------|------------|----------------------|--|----------------|----------------|---|
|    |   |           |     |             |            |            |                      |  |                |                |   |
| 1  | 2   | 3         | 4   | 5           | 6          | 7          | 8                    | 9  | 10             | 11             | 12  |
| 1. | Հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային գուտ եկամուտը գյուղատնտեսական և շանակության հողերի համար  |           |     |             |            |            |                      |  |                |                |   |
| 2. | Հողի կադաստրային գնահատման արժեքը ոչ գյուղատնտեսական և շանակության հողերի համար   |           |     |             |            |            |                      |  |                |                |   |
| 3. | ՀՀ տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող և «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը) |           |     |             |            |            |                      |  |                |                |   |
| 4. | ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը ռեզիդենտների համար  |           |     |             |            |            |                      |  |                |                |   |
| 5. | Հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը ոչ ռեզիդենտների համար   |           |     |             |            |            |                      |  |                |                |   |

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության հարկային օրենքները, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», Երևան, 2006, էջ 17, 37, 60, 89, 105, 130, 172, 178:

| 1   | 2   | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |  |
|-----|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|--|
| 6.  | ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը ռեզիդենտների համար  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 7.  | Հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը ոչ ռեզիդենտների համար   |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 8.  | Շենքերը և շինությունները  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 9.  | Փոխադրամիջոցները  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 10. | Գործունեության թվով 19 տեսակները  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 11. | Հարկ վճարողի կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառությունը  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 12. | «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքուր ալյումիումի ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծումը ՀՀ  |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |
| 13. | ՀՀ տարածքում արտադրողների (ներառյալ շալցնողների կամ այլ կերպ տարայավորողների) կողմից ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների օտարումը (այդ թվում՝ անհատույց) |   |   |   |   |   |   |   |    |    |    |  |

**զ) Հարկային արտոնությունների ինստիտուտը:** Գոյություն ունեն հարկային արտոնությունների մի քանի տեսակներ, որոնց ճիշտ ընտրությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարևոր նշանակություն ունի տնտեսության համար:

Ընդհանուր առմամբ հարկային արտոնությունները սահմանվում են օրենքներով: Կարող են սահմանվել հարկային արտոնությունների հետևյալ տեսակները՝ հարկվող օբյեկտի նվազեցում, հարկի դրույքաչափի նվազեցում, հարկի նվազեցում, հարկի հաշվարկման ժամկետի հետաձգում, հարկի վճարման ժամկետի հետաձգում, հարկային օրենսդրությունը և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված տույժերից և տուգանքներից

ազատում, նվազեցում, վճարման ժամկետի հետաձգում, բանկի կամ վարկային կազմակերպության կողմից հարկային պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար տուգանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների վճարման պարտավորության հետաձգում՝ ՀՀ կ/բ կողմից բանկի կամ վարկային կազմակերպության պարտավորների պահանջների ստեղծման ժամանակահատվածում, հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հարկ վճարողներին փոխհատուցում վճարված հարկի գումարի չափով:

Հարկային արտոնության տեսակներից «հարկից ազատումը» և «գրոյական դրույքաչափով հարկումը» ունեն էական տարբերություններ:

Բանն այն է, որ «հարկից ազատումն» իրականում նշանակում է, որ «հարկից ազատված» հարկատուն պետք է վճարի ԱԱՀ իր կողմից կատարված գնումներից՝ չունենալով վճարված հարկի դիմաց հաշվանցում պահանջելու հնարավորություն, իսկ «գրոյական դրույքաչափով հարկման» դեպքում հարկ վճարողին լիովին փոխհատուցվում է գնումներից վճարված ԱԱՀ-ի դիմաց՝ ԱԱՀ-ից ազատելով նրա կողմից իրականացված գործարքները: Այլ կերպ ասած, «հարկային ազատման» դեպքերում հարկատուն հարկի բեռը փոխանցում է գնորդին ապրանքը վաճառելիս և զրկվում է հաշվանցում պահանջելու հնարավորությունից, իսկ «գրոյական դրույքաչափի կիրառման» դեպքում այն ընկնում է հարկատուի վրա (գնորդը ազատվում է հարկումից), բայց հարկատուին այն փոխհատուցվում է պետության կողմից: Վերջին հաշվով ինչպես «հարկից ազատման», այնպես էլ «գրոյական դրույքաչափով» հարկման դեպքում ծառայությունն ստացողը կամ գնորդը շահում են, բայց եթե «գրոյական դրույքաչափով հարկման» դեպքում գնորդը լրիվությամբ է շահում, ապա «հարկից ազատման» դեպքում գնորդը շահում է ոչ այնքան, որքան հասկացվում է «հարկից ազատում» ասելով, քանի որ ավելացած արժեքը, որը կազմում է վերջնական գնի մեծ մասը, ԱԱՀ-ով ոչ լրիվությամբ է հարկվում գնորդի հաշվին: Իրավիճակը մի փոքր այլ է հարկատուների պարագայում: Վերջիններս «գրոյական դրույքաչափով հարկման» դեպքում շահում են, քանի որ նրանք ազատվում են հարկի գումարը գնորդից գանձելու և պետական բյուջե փոխանցելու պարտականությունից, և դեռ ավելին, այս դեպքում հարկատուն լիովին փոխհատուցվում է գնումներից վճարված ԱԱՀ-ի դիմաց, մինչդեռ նրա կողմից իրականացված գործարքներն ազատվում են ԱԱՀ-ից: Դա այն դեպքում, երբ հարկ վճարողներին գումարների վերադարձման համակարգի կիրառումը պետությունից պահանջում է վարչա-րարական մեծ ծախսեր, որոնք կատարվում են ոչ թե որևէ եկամուտ ստանալու, այլ միայն «գրոյական դրույքաչափով հարկման» դաշտում գտնվող

հարկատուներին փոխհատուցելու նպատակով: Ուստի ԱԱՀ-ի արդյունավետ վարչարարություն ապահովելու տեսակետից տնտեսագիտորեն հիմնավորված պետք է համարել «գրոյական դրույքաչափի հարկումով» սահմանված արտոնության փոխարինումը «հարկից ազատման» արտոնությանը՝ կապված փոստային ծառայությունների իրացման, միջազգային երթուղիներով փոխադրումներ իրականացնող փոխադրամիջոցների սպասարկման, կորոզման, ինչպես նաև փոխադրման ընթացքում ուղևորներին մատուցվող ծառայությունների հետ, քանի որ մոնոպոլ վիճակում գտնվող և նշանակալի գերշահույթներ ապահովող այս ոլորտները մասնավորեցված են կամ հանձնված հավատարմագրային կառավարման և գործունեություն են իրականացնում շուկային բնորոշ մեխանիզմներով:

Գործնականում, ընդհանրապես, «հարկից ազատումը» (որը նշանակում է հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկել) և «գրոյական դրույքաչափով հարկումը» (որը նշանակում է հարկվող շրջանառության նկատմամբ գրոյական դրույքաչափի կիրառում) կիրառում են հիմնականում երեք մոտեցումներից էլնելով, որոնց վերաբերում են.

- հարկման սանդղակի աճողական բնույթի (պրոգրեսիվության) ապահովումը,
- օգտակարության սկզբունքի կիրառումը,
- վարչարարության արդյունավետության բարձրացումը:

Վերոհիշյալ մոտեցումների համատեքստում փորձենք գնահատել ԱԱՀ-ից ազատված և ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող մնացած ապրանքների ու ծառայությունների շրջանակը դրանց հիմնավորվածության տեսանկյունից՝ վնասվանդ որ դրանց կիրառումը նվազեցնում է հարկային բազան և կրճատում հարկային մուտքերը: Ուստի ԱԱՀ-ի արդյունավետ վարչարարություն ապահովելու համար անհրաժեշտ է հարկային արտոնությունները քանակային ու ծավալային առումով հասցնել նվազագույնի: Այդ առումով ստորև ներկայացվում են ԱԱՀ-ից ազատված ապրանքների ու ծառայությունների (հավելված 1), ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող ապրանքների և ծառայությունների (հավելված 2), ԱԱՀ-ի դաշտից դուրս ապրանքների ու ծառայությունների (հավելված 3) ցանկերը և դրանց մեկնաբանությունները:

*դ) Հարկման առանձնահատկությունների ինստիտուտը*, որը սահմանում է առանձին հարկատեսակների հարկվող օբյեկտի, հարկման բազայի, հարկի գումարի հաշվարկման, հաշվետվությունների ներկայացման, հարկի վճարման ու այլ փոխհարաբերությունների առանձնահատկությունները, այդ թվում՝ ըստ տնտեսության ճյուղերի:

**ե) Հարկային պարտավորությունների ինտոխտուտը:** Հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և ՀՀ հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված, հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

Հայտնի է, որ իրավաբանական անձի, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության լուծարման կամ անհատ ձեռներեցի գործունեության դադարեցման վերաբերյալ որոշումներն ընդունող լիազորված մարմինները լուծարման որոշման ընդունման մասին 7-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնում են ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության մարմիններին:

Իրավաբանական անձի լուծարումից հետո հարկային պարտավորությունների հայտնաբերման դեպքում, հարկային ծառայության ներկայացրած հայցի հիման վրա, դրանք դատարանի որոշումով կարող են դրվել այդ իրավաբանական անձի որոշումների ընդունման վրա ազդելու հնարավորություն ունեցող սեփականատերերի և (կամ) ղեկավար մարմնի անդամների վրա՝ լուծարմանը նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային ծառայությունից թաքցրած հարկման օբյեկտներից վճարման ենթակա հարկային պարտավորությունների չափով, եթե նշված պարտավորությունները ծագել են այդ անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով:

Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության լուծարումից կամ անհատ ձեռներեցի գործունեության դադարումից հետո հարկային պարտավորությունների հայտնաբերման դեպքում, հարկային ծառայության ներկայացրած հայցի հիման վրա, դրանք դատարանի որոշումով կարող են դրվել այն ձեռնարկության սեփականատերերի կամ անհատ ձեռներեցի վրա՝ լուծարմանը նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային ծառայությունից թաքցրած հարկման օբյեկտներից վճարման ենթակա հարկային պարտավորությունների չափով:

Հարկային պարտավորությունը դադարում է դրա կատարման, հարկի վերացման, հարկից ազատելու արտոնության սահմանման, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, իսկ ֆիզիկական անձի համար՝ նաև նրա մահվան դեպքում, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

**զ) Հարկային հարաբերությունների մասնակիցների պատասխանատվության ինտոխտուտը:** Խոսքը, մասնավորապես, վերաբերում է.

- Հարկերի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքերին, երբ հարկատուն ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15%-ի չափով: Նշված չափերով օրական տույժերը կիրառվում են, եթե հարկային օրենսդրությամբ ավելի նվազ չափ սահմանված չէ: Նշված տույժերը կիրառվում են ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում հարկային օրենսդրությամբ նախատեսված հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:
- Հարկվող օբյեկտը թաքցնելուն կամ պակաս ցույց տալուն: Դա փաստորեն հարկային ծառայություն ներկայացված տվյալ հարկատեսակի հաշվարկներում (հայտարարագրերում) հարկվող օբյեկտը ցույց չտալը, պակաս ցույց տալը կամ էլ գործունեություն չիրականացնելու (հարկվող օբյեկտներ չառաջանալու) մասին կեղծ տվյալներ ներկայացնելն է:

Գործունեություն չիրականացնելու, ինչպես նաև հարկվող օբյեկտ հանդիսացող գույք չունենալու մասին հայտարարությունը հարկային ծառայություն ներկայացվող հաշվարկի (հայտարարագրի) ամփոփ ձևն է:

Հարկվող օբյեկտը թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում հարկ վճարողներից զանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված (հարկային ծառայության կողմից հաշվարկված) հարկի գումարը, ինչպես նաև տուգանք:

Հարկային հարաբերությունների մասնակիցների պատասխանատվության ինստիտուտը ներառում է պատասխանատվության նաև այլ ու շատ նորմեր:

*է) Հարկ վճարողի իրավունքների պաշտպանության ինստիտուտը,* որը կոչված է երաշխավորելու ու պաշտպանելու հարկ վճարողների իրավունքները:

*ը) Հարկային մարմնի ինստիտուտը,* որն ուղղված է հարկային ծառայության մարմնի գործունեության կազմակերպման, գործառույթների ու լիազորությունների սահմանման հետ կապված հարաբերությունների կարգավորմանը:

*թ) Հաշվետվությունների ու հաշվարկների ներկայացման, գերավճարների վերադարձման և այլ ինստիտուտներ:*

Հարկային օրենսդրության ենթաճյուղերը դասակարգվում են տարբեր հիմքերով, որոնց վերաբերում են.

- ա) Հարկի գործառույթները: Ըստ հարկի գործառույթների բնույթի՝ հարկային օրենսդրության ենթաճյուղի ակտերը լինում են ֆիսկալ, կարգավորող, բաշխող, խթանող, սոցիալական և վերարտադրական բնույթի՝ կախված այն բանից, թե հարկի նշված գործառույթներից որն է առավել գերիշխողը:
- բ) Հարկվող օբյեկտը: Ըստ հարկվող օբյեկտի՝ հարկային օրենսդրության ենթաճյուղի ակտերը լինում են ըստ հարկվող շահույթի, հարկվող եկամտի, հարկվող շրջանառության և այլն, որոնց մասին համառոտ ներկայացված է «հարկվող օբյեկտի ինստիտուտ» մասում:
- գ) Պետության իրավաստեղծ գործունեության սուբյեկտները, ըստ որոնց հարկային օրենսդրության ակտերը բաժանվում են 2 խմբի՝ իշխանության հանրապետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ակտերի:

Հարկային օրենսդրության բաղկացուցիչ տարրերից են ինչպես հարկման սկզբունքները, այնպես էլ հարկման ոլորտին առանձնահատուկ տերմիններն ու հասկացությունները, որոնց հստակ սահմանումը և տարընթերցումներից ու երկիմաստ մեկնաբանություններից խուսափելը միաժամանակ հարկային օրենսդրության բարեփոխումների հիմքն են:

## **ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՏԱՐՐԵՐԸ**

**ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տ.գ.դ., դոցենտ,**  
*ԵՊՀ դասախոս*

**Համառոտագիր:** Հոդվածում վերլուծվել են հարկային օրենսդրությունն ու նրա բաղկացուցիչ տարրերը, որոնք ներառում են հարկային համակարգի ձևավորման բոլոր փուլերում ընդունված հարկային օրենքներն ու հարկային նորմերը: Մասնավորապես, հիմնավորվել է այն, որ հարկային օրենքները օրենսդրական մակարդակի բարձրացված այն իրավական ակտերն են, որոնք կարգավորում են պետության և հարկատուի փոխհարաբերությունների ողջ շրջանակը՝ սկսած օրենքի կարգավորման առարկայից և վերջացրած օրենքը խախտելու համար վճարողների և դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվությամբ:

*Բանալի բառեր: հարկային օրենսդրություն, հարկային նորմեր, պետական  
լիազմարման համակարգ, հարկային օրենքներ:*

## НАЛОГОВОЕ ЗАКОНОДАТЕЛЬСТВО РА И ЕГО КОМПОНЕНТЫ

**ТИГРАН ВЛАДИМИРОВИЧ АРУТЮНЯН**, *д.э.н., доцент,  
преподаватель ЕГУ*

**Аннотация:** В статье анализируется налоговое законодательство и его составляющие элементы, в том числе налоговое законодательство и налоговые правила, принятые на всех этапах формирования налоговой системы. В частности, это подтверждается тем фактом, что налоговым законодательством являются законодательные акты, поднятые на законодательном уровне, которые регулируют весь объем отношений между государством и налогоплательщиком, начиная с субъекта права и заканчивая ответственностью плательщиков и их должностных лиц за нарушение закона.

**Ключевые слова:** *налоговое законодательство, налоговое право, система государственного управления, налоговое законодательство.*

## TAX LEGISLATION AND ITS COMPONENTS IN THE REPUBLIC OF ARMENIA

**TIGRAN VLADIMIR HARUTYUNYAN**, *Doctor of Sciences (Economics), Associate  
Professor  
Yerevan State University*

**Abstrac:** The tax legislation and its constituent elements have been analyzed in the article, which included tax laws and tax rules adopted at all stages of the tax system. Particularly, it has been substantiated by the fact that tax laws were the legal acts of the legal framework that describe the entire circle of state and taxpayer exchanges, starting with the subject of regulation of the law and the ending with the responsibilities and fines to be charged, and legal persecutions for violating of the law by the taxpayers and officials.

**Keywords:** *Tax legislation, tax norms, public administration system, tax laws.*

## ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԵՐՈՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ներմուծման ծավալների աճը մի շարք երկրների պարագայում հանգեցրել է տնտեսական աճի: Այսպիսի երկրների թվին են պատկանում «տնտեսական հրաշք» համարվող Ճապոնիան<sup>1</sup>, Հարավային Կորեան<sup>2</sup>, ըստ Սաքսի «Ջարգացած երկրների եկամուտների և տեխնոլոգիաների մակարդակին հասնելու» (Catching-up) տնտեսական աճի մոդելով<sup>3</sup> առաջնորդվող երկրները (որոնց հաջողությունը պայմանավորված է եղել արտահանման խթանման քաղաքականությամբ, ինչպես նաև մեծ ծավալների հասնող օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմամբ), ինչպիսիք են Մալայզիան, Ինդոնեզիան, Ֆիլիպինները և Թաիլանդը<sup>4</sup>, ինչպես նաև Արգենտինան, Կոլումբիան, Պերուն<sup>5</sup>, Պարագվայը, Չիլին, Կոստա Ռիկան, Գվատեմալան, Հոնդուրասը<sup>6</sup>, Հնդկաստանը<sup>7</sup>, Բելառուսը, Բուլղարիան, Չեխիան, Էստոնիան, Ղազախստանը, Լատվիան, Լիտվան, Լեհաստանը,

<sup>1</sup> Wenyu Zang & Mark Bainbridge (2012) Exports, imports and economic growth in South Korea and Japan: a tale of two economies, Applied Economics, 44:3, p.368, DOI: 10.1080/00036846.2010.508722.

<sup>2</sup> Լույն տեղում: Sangho Kim, Hyunjoon Lim & Donghyun Park (2009) Imports, exports and total factor productivity in Korea, Applied Economics, 41:14, p.1831, DOI: 10.1080/00036840601032243:

<sup>3</sup> Sachs, J. D. (2000). Globalization and patterns of economic development, Weltwirtschaftliches Archiv, 136(4), p.581, DOI: 10.1007/BF02707644.

<sup>4</sup> Marwah, K. and Tavakoli, A. (2004) The effect of foreign capital and imports on economic growth: further evidence from four Asian countries (1970–1998), Journal of Asian Economics, 15, p.400, 411 DOI: 10.1016/j.asieco.2004.02.008.

<sup>5</sup> Titus O. Awokuse (2008) Trade openness and economic growth: is growth export-led or import-led?, Applied Economics, 40:2, p.172, DOI: 10.1080/00036840600749490.:

<sup>6</sup> Werner Kristjanpoller R & Josephine E. Olson (2014) Economic Growth in Latin American Countries: Is It Based on Export-Led or Import-Led Growth?, Emerging Markets Finance and Trade, 50:sup1, p.16, DOI: 10.2753/REE1540-496X5001S101:

<sup>7</sup> Shandre Mugan Thangavelu & Gulasekaran Rajaguru (2004) Is there an export or import-led productivity growth in rapidly developing Asian countries? a multivariate VAR analysis, Applied Economics, 36:10, p.1089, DOI:10.1080/0003684042000246795.

Ռուսաստանը, Մլովակիան, Մլովենիան<sup>1</sup> և այլն: Այս երկրներից որոշների պարագայում հաստատվել է «ներմուծմամբ պայմանավորված տնտեսական աճի» վարկածի գոյությունը («import-led growth hypothesis»):

Տնտեսական աճի վրա ներմուծման ծավալների աճի դրական ազդեցությունը բացատրվում է նրանով, որ կապիտալի, ինչպես նաև միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանքների ներմուծումը ավելացնում է տեղական արտադրության ծավալների աճը, իսկ հատկապես ժամանակակից տեխնոլոգիաների ներմուծումը բարձրացնում է ամբողջ տնտեսության արտադրողականությունը<sup>2</sup>: Ջարգացող երկրների դեպքում միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանքների ներմուծումը թույլ է տալիս տեղական արտադրողներին օգտագործել ավելի բարձրորակ հումք և այլ հավելյալ ապրանքներ արտադրության մեջ, ինչպես նաև օգտվել տեխնոլոգիաների փոխանցումից (զարգացած երկրներից)՝ «սովորել ներմուծման միջոցով» (learning by importing) երևույթի առկայության շնորհիվ, որի հետևանքով ևս բարձրանում է տեղական ընկերությունների արտադրողականությունը (Թոնթի և այլոք)<sup>3</sup>:

Մյուս կողմից՝ ըստ Թանգավելուի և Ռաջանգուրուի, եթե երկրները (հատկապես զարգացող երկրները) հիմնականում արտահանում են աշխատատար ապրանքներ, ինչը համարվում է արտարժույթի աղբյուր, ապա այդ գումարները կարող են ուղղվել համապատասխան տեխնոլոգիաների ներմուծման վրա և այս պարագայում արտադրողականության աճի վրա ավելի մեծ ազդեցություն կարող է թողնել ներմուծման ծավալների, քան արտահանման ծավալների փոփոխությունը, որի արդյունքում արտադրողականության աճը պայմանավորված է ներմուծման ծավալ-

---

<sup>1</sup> Çetintas, H. & Barışık, S. (2009) Export, Import and Economic Growth: The Case of Transition Economies, *Transition Studies Review*, 15, p.645, 647, DOI:10.1007/s11300-008-0043-0

<sup>2</sup> Werner Kristjanpoller R & Josephine E. Olson (2014) Economic Growth in Latin American Countries: Is It Based on Export-Led or Import-Led Growth?, *Emerging Markets Finance and Trade*, 50:sup1, p.16, DOI: 10.2753/REE1540-496X5001S101: Titus O. Awokuse (2008) Trade openness and economic growth: is growth export-led or import-led?, *Applied Economics*, 40:2, p.172, DOI: 10.1080/00036840600749490.

<sup>3</sup> Wenyu Zang & Mark Bainbridge (2012) Exports, imports and economic growth in South Korea and Japan: a tale of two economies, *Applied Economics*, 44:3, pp.368-369, DOI: 10.1080/00036846.2010.508722:

<sup>4</sup> Conti, G., Lo Turco, A. & Maggioni, D. *Empirica* (2014) Rethinking the import-productivity nexus for Italian manufacturing, *Empirica*, Volume 41, Issue 4, p. 590, DOI:10.1007/s10663-013-9215-1

ների աճով<sup>1</sup>: Այս դեպքում մեքենաների և սարքավորումների ներմուծումը ավելացնում է աշխատուժի արտադրողականությունը, երբ աշխատողները ձեռք են բերում համապատասխան գիտելիք վերջիններս յուրացնելու (unbundle) նպատակով (մարդկային կապիտալի զարգացման միջոցով), իսկ նոր տեխնոլոգիաների յուրացում կարող է արձանագրվել նաև առանձին ընկերությունների կողմից, երբ պատրաստի վերջնական սպառման համար նախատեսված ապրանքների լայն տեսականու ներմուծումը հայրենական արտադրողներին հնարավորություն է տալիս ավելացնելու իրենց նորարարություններ անելու կարողությունը<sup>2</sup>: Մյուս կողմից միջանկյալ և վերջնական սպառման համար նախատեսված ապրանքների ներմուծումը կարող է ստիպել տեղական արտադրողներին նորարարություններով զբաղվել և դառնալ ավելի արդյունավետ, որպեսզի կարողանան մրցակցել ներմուծվող ապրանքների հետ<sup>3</sup>: Մպատողական ապրանքների ներմուծումը հանգեցնում է նրան, որ նույն ոլորտի տեղական արտադրողները, նորարարություններ իրականացնեն և վերանայեն մի շարք գործառույթներ և գործընթացներ, որպեսզի կարողանան մրցակցել օտարերկրյա մրցակիցների հետ<sup>4</sup>: Արդյունքում նրանք սկսում են գործել առավել արդյունավետ, ինչն էլ, ի վերջո, բերում է արտադրողականության աճի<sup>5</sup>: Իսկ, ընդհանուր առմամբ, ներմուծման ազդեցությունը արտադրողականության աճի վրա կախված է ինչպես շուկայի կառուցվածքից, այնպես էլ ինստիտուցիոնալ գործոններից<sup>6</sup>: Ոչ կատարյալ մրցակցության դեպքում տեղական արտադրության ծավալները կարող են կրճատվել ներմուծման ծավալների աճին գուզընթաց, որի արդյունքում. ներդրումների ծավալները ևս կարող են նվազել, ինչն էլ իր հերթին կհանգեցնի արտադրողականության կրճատմանը<sup>7</sup>: Մյուս կողմից կապիտալ և միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանք-

---

<sup>1</sup> Shandre Mugan Thangavelu & Gulasekaran Rajaguru (2004) Is there an export or imported productivity growth in rapidly developing Asian countries? a multivariate VAR analysis, *Applied Economics*, 36:10, p.1084, DOI:10.1080/0003684042000246795.

<sup>2</sup> Shandre Mugan Thangavelu & Gulasekaran Rajaguru (2004) Is there an export or imported productivity growth in rapidly developing Asian countries? a multivariate VAR analysis, *Applied Economics*, 36:10, p.1084, DOI:10.1080/0003684042000246795.

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Sangho Kim, Hyunjoon Lim & Donghyun Park (2009) Imports, exports and total factor productivity in Korea, *Applied Economics*, 41:14, p.1821, DOI: 10.1080/00036840601032243.

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում:

ների ներմուծումը, որոնք չեն կարող արտադրվել տեղական շուկայում, հայրենական արտադրողներին հնարավորություն է ընձեռում տեղական ընկերություններին բարձրացնել արտադրողականությունը<sup>1</sup>:

Իսկ, ընդհանուր առմամբ, արտադրողականության տեսանկյունից կարևոր գործոն է համարվում մասշտաբի էֆեկտին հասնելը, որի վրա հիմնականում ազդում է ներքին շուկայի չափը: Մեծ չափերի հասնող շուկան հնարավորություն է տալիս ընկերություններին հասնել մասշտաբի էֆեկտի և օգտվել դրա ընձեռած հնարավորություններից, իսկ զլոբալացման պայմաններում օտարերկրյա շուկաները հանդես են գալիս որպես տվյալ երկրի ներքին շուկայի փոխարինողներ, հատկապես փոքր երկրների համար, քանի որ արտաքին առևտուրն, ընդհանուր առմամբ, դրական ազդեցություն է գործում տնտեսական աճի վրա<sup>2</sup>: Մակայն միայն ներքին շուկան չի կարող ապահովել մասշտաբի էֆեկտ (տնտեսապես հիմնավորված չի լինի նոր տեխնոլոգիաների ներմուծումը և ներդրումն ու արտադրական գործընթացների արդիականացումը, եթե տվյալ շուկայում մրցակցությունն ուժեղ չէ): Իսկ օտարերկրյա շուկաներում մրցակցությունը կարող է ստիպել ընկերություններին էլ ավելի բարձրացնել արտադրանքի որակը, նոր և ավելի արդյունավետ գործընթացներ ներդնել (նոր տեխնոլոգիաների ներմուծմամբ և կիրառմամբ) գործառնական արդյունավետություն («operational effectiveness», երբ ընկերությունը նույն գործունեությունն ավելի լավ է իրականացնում, քան մրցակիցները<sup>3</sup>) ապահովելու նպատակով, ինչի հետևանքով էլ կնվազի մեկ միավորի ինքնարժեքը, և ընկերությունները գնային առումով էլ ավելի մրցունակ կարող են դառնալ և մրցակցել օտարերկրյա շուկաներում ինչպես տվյալ երկրի, այնպես էլ այլ երկրների արտադրողների հետ: Դեռ ավելին ակնկալվող ապագա շահույթը կարող է հանգեցնել նրան, որ ընկերությունները ավելացնեն հետազոտությունների ու մշակումների (Research & Development) վրա ուղղվող ծախսերը և ավելի շատ նորարարություններով զբաղվեն, որն ավելի շատ կնկատվի արտահանման ուղղվածություն ունեցող ընկե-

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Sala-i-Martin, Xavier, Bilbao-Osorio, Beñat, Di Battista, Attilio, Drzeniek Hanouz, Margareta, Geiger, Thierry and Galvan, Caroline (2014). "The Global Competitiveness Index 2014–2015: Accelerating a Robust Recovery to Create Productive Jobs and Support Inclusive Growth," Chapter 1.1 in *The Global Competitiveness Report 2014–2015: Full Data Edition*, ed. Klaus Schwab, Geneva, Switzerland: World Economic Forum, p.8.

<sup>3</sup> Porter, Michael (1998). *On Competition*, A Harvard Business Review Book, Harvard Business School Press, Boston, MA: United States pp.40, 42–46.

րությունների պարագայում, քան ներմուծման փոխարինմամբ զբաղվող ընկերությունների մոտ<sup>1</sup>:

Մյուս կողմից՝ ավելի բարդ և ժամանակակից տեխնոլոգիաների ներմուծումը և կիրառումը տվյալ երկրում պայմանավորված է երկրների կլանման, յուրացման կարողությունից (absorptive capacity): Գլխաք և այլոք ցույց են տվել, որ Բրազիլիայի, Ռուսաստանի, Հնդկաստանի և Չինաստանի պարագայում կապիտալի (դասվող որպես բարձր տեխնոլոգիա) ներմուծումը ասոցացվում է համեմատաբար ավելի բարձր ընդհանուր գործոնային արտադրողականության հետ, իսկ այդ ապրանքների ներմուծման ազդեցությունը կախված է նշված երկրների կլանման, յուրացման կարողությունից<sup>2</sup>:

Կիմը և այլոք Հարավային Կորեայի օրինակով վերլուծության արդյունքում պարզել են, որ կապիտալ և սպառողական ապրանքների ներմուծումը, Մեծ յոթնակից («G7» երկրներից) դրական ազդեցություն են թողնում ընդհանուր գործոնային արտադրողականության վրա, մինչդեռ հումքի ներմուծման պարագայում որևիցե ազդեցություն չի արձանագրվել<sup>3</sup>: Հեղինակները նաև եզրահանգում են, որ սպառողական ապրանքների ներմուծումը ավելի ուժեղ է դարձնում մրցակցությունը Կորեայում և ստիպում ներմուծման փոխարինմամբ զբաղվող կորեական ընկերություններին դառնալու ավելի մրցունակ՝ բարելավելով ապրանքների որակը, կրճատելով ծախսերը կամ երկուսը միաժամանակ (և որ և արդյունավետ տեխնոլոգիաների ներմուծում, նորարարություններ և այլն)<sup>4</sup>: Իսկ կապիտալ ապրանքները օգնում են կորեական ընկերություններին ավելի արտադրողական դառնալ<sup>5</sup>: Եվ եթե որոշ կապիտալ ապրանքներ չեն արտադրվում Կորեայում, ապա վերջիններիս ներմուծումը ընկերությանը հնարավորություն է ընձեռում ոչ միայն ավելի արտադրողական դառնալ, այլ նաև ընդլայնել արտադրվող ապրանքների տեսականին, ինչպես նաև հանդես են գալիս որպես նոր տեխնոլոգիաների փո-

<sup>1</sup> Sangho Kim, Hyunjoon Lim & Donghyun Park (2009) Imports, exports and total factor productivity in Korea, *Applied Economics*, 41:14, p.1821, DOI: 10.1080/00036840601032243.

<sup>2</sup> Alexander Glas, Michael Hübler & Peter Nunnenkamp (2016) Catching up of emerging economies: the role of capital goods imports, FDI inflows, domestic investment and absorptive capacity, *Applied Economics Letters*, 23:2, p.120, DOI: 10.1080/13504851.2015.1054065.

<sup>3</sup> Sangho Kim, Hyunjoon Lim & Donghyun Park (2009) Imports, exports and total factor productivity in Korea, *Applied Economics*, 41:14, pp.1828-1829, DOI: 10.1080/00036840601032243.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 1829-1830:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 1830:

խանցման աղբյուր<sup>1</sup>: Ներմուծումը դրական ազդեցություն է ունենում ՀՆԱ-ի աճի վրա, իսկ տեխնոլոգիաների փոխանցումը ավելի մեծ ազդեցություն է թողնում ընդհանուր գործունային արտադրողականության, քան ՀՆԱ-ի վրա<sup>2</sup>:

Թանգավելուն և Ռաջանգուրուն Արնեյան Ասիայի երկրների (Ֆիլիպիններ, Նիդկաստան, Ինդոնեզիա, Մալայզիա, Մինգապուր, Տայվան, Հոնգ Կոնգ, Ճապոնիա, Թայլանդ) տվյալների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում պարզել են, որ երկարաժամկետ հատվածում ներմուծումը, ընդհանուր առմամբ, դրական ազդեցություն է ունեցել աշխատուժի արտադրողականության վրա, որի արդյունքում եզրահանգել են, որ ներմուծումը դրական է ազդում տնտեսական աճի վրա երկարաժամկետ հատվածում<sup>3</sup>: Ուսումնասիրվող 9 երկրներից՝ Նիդկաստանի, Ինդոնեզիայի, Մալայզիայի և Տայվանի դեպքում աշխատուժի արտադրողականության և ներմուծման միջև փոխառնչություններն ուսումնասիրելիս հեղինակները եզրակացրել են, որ այդ երկրներում գոյություն ունի, այսպես կոչված, «արդյունավետ պարբերաշրջան» (virtuous cycle) աշխատուժի արտադրողականության և ներմուծման միջև<sup>4</sup>:

Իսկ ըստ Ավոկուզեի ներմուծումը կարող է հանդիսանալ կարևոր գործոն տնտեսական աճի ապահովման գործում, քանի որ արտահանման ծավալների աճի զգալի մասը սովորաբար պայմանավորված է ներմուծման ծավալների արագ աճով<sup>5</sup>: Լատինական Ամերիկայի երեք երկրների (Արգենտինա, Կոլումբիա և Պերու) պարագայում վերջինս ցույց է տվել, որ ներմուծման ազդեցության չափը տնտեսական աճի վրա համեմատաբար ավելի ուժեղ է, քան արտահանման ազդեցության չափը, որի արդյունքում Ավոկուզեն եզրահանգել է, որ ինչպես արտահանումը, այնպես էլ ներմուծումը կարևոր դեր են խաղում տնտեսական աճի ապահովման գործում<sup>6</sup>: Հեղինակի վերլուծության մեկ այլ արդյունքն է համարվում այն, որ երեք երկրներում նկատվել է տնտեսական աճով

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 1831:

<sup>3</sup> Shandre Muga Thangavelu & Gulasekaran Rajaguru (2004) Is there an export or import-led productivity growth in rapidly developing Asian countries? a multivariate VAR analysis, *Applied Economics*, 36:10, p.1089, DOI:10.1080/0003684042000246795.

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Titus O. Awokuse (2008) Trade openness and economic growth: is growth export-led or import-led?, *Applied Economics*, 40:2, p.161, DOI: 10.1080/00036840600749490.

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 172:

պայմանավորված արտահանման և ներմուծման ծավալների փոփոխություն<sup>1</sup>:

Ֆոսուն<sup>2</sup> Ենթասահարյան Աֆրիկայի 33 երկրների տվյալների հիման վրա կատարված վերլուծության արդյունքում եզրահանգել էր, որ ներմուծման անկայուն հոսքերը բացասաբար են ազդել ՀՆԱ-ի աճի վրա, ուստի պետք է կարևորել ներմուծման կայուն հոսքերի առկայությունը, որի արդյունքում հնարավոր կլինի տնտեսական աճը Ենթասահարյան Աֆրիկայում, իսկ արտահանման կայուն հոսքերը կարևորություն են ստանում միայն այն դեպքում, երբ դրանք իրենց հետևից հանգեցնում են ներդրումների և ներմուծման հոսքերի ավելացմանը: Ներմուծման ծավալների ավելացման տեսանկյունից համապատասխան քաղաքականության միջոցառումներից մեկը կարող է լինել ֆինանսավորման առկայության խնդրի լուծումը՝ ներառյալ արտարժույթի կայուն հոսքերի ապահովումը (արտահանման ծավալների աճը)<sup>3</sup>:

Քրիստիանֆոլլերը և Օլսոնը վերլուծությունների արդյունքում եզրահանգել են, որ Լատինական Ամերիկայի մի շարք երկրների պարագայում գոյություն չունի հստակ և ընդհանուր մտտեցում տնտեսական քաղաքականության հանդեպ՝ մի շարք երկրներ կարող են տնտեսական աճ ապահովել խրախուսելով արտահանման ծավալների աճը, մինչդեռ այլ երկրների պարագայում տնտեսական աճ կարող է ապահովվել ներմուծման ծավալների աճով պայմանավորված<sup>4</sup>: Իսկ կարճաժամկետ ժամանակահատվածում ներմուծման ծավալների փոփոխության վրա ազդում են արտահանման և կապիտալի աճի տեմպերը<sup>5</sup>: Մահադևանը և Մուրադին էլ նմանատիպ վերլուծության արդյունքում շեշտադրել են կայուն ՀՆԱ-ի աճի ապահովմանն ուղղված երկրի ներսում իրականացվող

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> A.K. Fosu (2001) Economic Fluctuations and Growth in Sub-Saharan Africa: The Importance of Import Instability, *The Journal of Development Studies*, 37:3, p.80, DOI: 10.1080/00220380412331321971.

<sup>3</sup> A.K. Fosu (2001) Economic Fluctuations and Growth in Sub-Saharan Africa: The Importance of Import Instability, *The Journal of Development Studies*, 37:3, p.80, DOI: 10.1080/00220380412331321971.

<sup>4</sup> Werner Kristjanpoller R & Josephine E. Olson (2014) Economic Growth in Latin American Countries: Is It Based on Export-Led or Import-Led Growth?, *Emerging Markets Finance and Trade*, 50:sup1, p.16, DOI: 10.2753/REE1540-496X5001S101

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 17:

քաղաքականության կարևորությունը, որի շնորհիվ հնարավոր է ապահովել ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման ծավալների աճ<sup>1</sup>:

Փաշեքո-Լոփեզը<sup>2</sup> Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագրում տեղ գտած ազատականացումից հետո, պարզել է, որ Մեքսիկայի պարագայում թեպետ երկիրը համարվում է առաջատար արտահանողներից մեկը, ներմուծման և արտահանման հավասարակշռումը և ընթացիկ հաշվի հաշվեկշիռը կարևոր դեր են խաղում տնտեսական աճի կայունության ապահովման գործում: Իսկ առևտրի ազատականացումը պետք է ուղեկցվի այնպիսի քաղաքականությամբ, որը համակարգում է առևտրի և արդյունաբերական քաղաքականությունները ներքին և արտաքին հավասարակշռություն ապահովելու նպատակով<sup>3</sup>:

Մյուս կողմից՝ ըստ Գլիսոսի արտասահմանից ստացվող դրամական փոխանցումներ ստացող երկրների պարագայում (հատկապես ՀՆԱ-ի հանդեպ որոշակի մասնաբաժին կազմելու դեպքում), վերջիններիս ծավալների աճը կարող է հանգեցնել ներմուծվող ապրանքների նկատմամբ պահանջարկի ավելացմանը<sup>4</sup>, ինչն էլ իր հերթին կարող է ավելացնել ինչպես առևտրի, այնպես էլ ընթացիկ հաշվի պակասուրդները (հատկապես վերջնական սպառման համար նախատեսված՝ սպառողական ապրանքների ներմուծման ծավալների փոփոխության պարագայում):

Վերը նշվածից կարելի է եզրահանգել, որ կախված երկրի չափից, տնտեսական զարգացման համապատասխան փուլում գտնվելու հանգամանքից, ներքին շուկաներում առկա մրցակցության աստիճանից, ինչպես նաև դրամական փոխանցումներ ստացող երկրի կարգավիճակից տարբեր տեսակի (կապիտալ, միջանկյալ սպառման համար նախատեսված և սպառողական կամ վերջնական սպառման համար նախատեսված ապրանքներ) ներմուծվող ապրանքների ծավալների փոփոխությունը տարբեր կերպ է ազդում երկրների տնտեսական աճի, արտադ-

<sup>1</sup> Renuka Mahadevan and Sandy Suardi (2008) A dynamic analysis of the impact of uncertainty on import- and/or export-led growth: The experience of Japan and the Asian Tigers, Japan and the World Economy, 20, p.172, DOI: 10.1016/j.japwor.2006.10.001

<sup>2</sup> Penélope Pacheco-López (2005) The effect of trade liberalization on exports, imports, the balance of trade, and growth: the case of Mexico, Journal of Post Keynesian Economics, 27:4, pp.613-614, DOI: 10.1080/01603477.2005.11051459

<sup>3</sup> Penélope Pacheco-López (2005) The effect of trade liberalization on exports, imports, the balance of trade, and growth: the case of Mexico, Journal of Post Keynesian Economics, 27:4, p.614, DOI: 10.1080/01603477.2005.11051459:

<sup>4</sup> Nicholas P. Glytsos, (2005), "The contribution of remittances to growth", Journal of Economic Studies, Vol. 32, Iss 6, p. 469, DOI: 10.1108/01443580510631379.

րողականության (հատկապես ընդհանուր գործոնային արտադրողականության), արտահանման ծավալների փոփոխության, ներքին շուկայում մրցակցության, ինչպես նաև նորարարությունների վրա:

## ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԵՐԸ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԱՆՆԱ ՌՈՒԶՎԵԼՏԻ ՄԱԿԱՐՅԱՆ, տ.գ.թ.

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**Համառոտագիր:** Գրականության վերլուծության հիման վրա փորձ է արվել հողվածում բացահայտել ներմուծման դերը երկրների տնտեսական աճի ապահովման գործում: Արդյունքում ստացվել է, որ կախված երկրի չափից, տնտեսական զարգացման համապատասխան փուլում գտնվելու հանգամանքից, ներքին շուկաներում մրցակցությունից, ինչպես նաև դրամական փոխանցումներ ստացող երկրի կարգավիճակից տարբեր տեսակի ներմուծվող ապրանքների ծավալների փոփոխությունը տարբեր կերպ է ազդում տնտեսական աճի, արտադրողականության, արտահանման ծավալների փոփոխության, ներքին շուկայում մրցակցության և նորարարությունների վրա:

*Բանալի բառեր. ներմուծում, տնտեսական աճ, արտադրողականություն, մրցակցություն, արտահանում, կապիտալ, միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանք, վերջնական սպառման համար նախատեսված ապրանք:*

## РОЛЬ ИМПОРТА В ОБЕСПЕЧЕНИИ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА В РАЗЛИЧНЫХ СТРАНАХ

АННА РУЗВЕЛЬТОВНА МАКАРЯН, к.э.н.

*научный сотрудник Института  
экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** На основе обзора литературы предпринята попытка определить роль импорта в обеспечении экономического роста в различных странах. Автор приходит к выводу, что в зависимости от размера экономики страны, стадии экономического развития, факта того, что данная страна является “получателем денежных переводов” или нет, различные виды импортируемых товаров по-разному влияют на экономический рост, производительность, экспорт, конкуренцию на местном рынке, а также на инновации.

11  
**Ключевые слова:** *Импорт, экономический рост, производительность, экспорт, конкуренция, инновации, капитал, промежуточные товары, конечные товары.*

## **THE ROLE OF IMPORTS IN ENSURING ECONOMIC GROWTH IN VARIOUS NATIONS**

**ANNA ROOSEVELT MAKARYAN, Ph.D. in Economics**

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The author attempts to identify the role of imports in ensuring economic growth in various nations based on the literature review. The author concludes that depending on the size of the economy, stage of economic development, the fact of being considered as a “remittance-recipient” nation, various types of imported goods differently affect the economic growth, productivity, exports, competition in the local market, and innovations.

**Keywords:** *Import, economic growth, productivity, export, competition, innovation, capital, intermediary goods, final goods.*

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՌԴ-ում 2014թ.-ին արձանագրված արժութային ճգնաժամից հետո, որպես հետևանք, ՀՀ ընթացիկ հաշվի պակասուրդը 2015-2016թթ.-ին զգալիորեն կրճատվեց՝ կազմելով 272.4 և 238.1 մլն ԱՄՆ դոլար (աղյուսակ 1): 2017թ.-ին 2016թ.-ի համեմատ պակասուրդը խորացավ՝ կազմելով մոտ 400 մլն ԱՄՆ դոլար, որը զիջում էր 2012-2014թթ. պակասուրդի չափին (աղյուսակ 1): 2017թ.-ին ընթացիկ հաշվի պակասուրդը հիմնականում պայմանավորված էր առևտրային հաշվի պակասուրդի խորացմամբ՝ պայմանավորված ներմուծման ծավալների աճով (աղյուսակ 1): Ներմուծման ամենամեծ ծավալները 2012-2017թթ. ժամանակահատվածում արձանագրվել է 2017թ.-ին (աղյուսակ 1): Ընթացիկ հաշվի պակասուրդը հիմնականում մեղմվել էր սկզբնական (աշխատողների վարձատրություն) և երկրորդային եկամուտների (անձնական տրանսֆերտներ) հաշիվների ավելցուկով, որը հիմնականում պայմանավորված է դրամական փոխանցումների ծավալների աճով (աղյուսակ 1): Եթե համեմատենք դրամական փոխանցումների դինամիկան ներմուծման ծավալների փոփոխության հետ (աղյուսակ 1), ապա երկու փոփոխականներն էլ համատեղ ունեն կամ աճի կամ նվազման միտում: Այստեղից կարելի է ենթադրել, որ դիտարկվող ժամանակահատվածում դրամական փոխանցումների ծավալների աճն իր հերթին հանգեցրել է նաև ներմուծման ծավալների աճի: Մյուս կողմից՝ ՀՀ պարագայում արտահանման ծավալների աճն ուղեկցվել է ներմուծման ծավալների աճով (աղյուսակ 1), ինչից կարելի է եզրակացնել, որ Հայաստանի պարագայում ներմուծման ծավալների փոփոխությունը ասոցացվում է արտահանման ծավալների և դրամական փոխանցումների ծավալների փոփոխության հետ, որի հետևանքով ներմուծման ծավալների աճը հնարավորություն է տալիս տեղական արտադրողներին ձեռք բերել կապիտալ սարքավորումներ, միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանքներ, որի շնորհիվ կրթարձրանա արտադրողականությունը, և Հայաստանում արտադրված ապրանքներն ավելի մրցունակ կդառնան արտերկրում: Իսկ դրամական փոխանցումների աճը կհանգեցնի վերջնական սպառման համար նախատեսված ապրանքների ներմուծման ծավալների աճին:

ՀՀ ընթացիկ հաշվի կառուցվածքը 2012-2017թթ. (մլն ԱՄՆ դոլար)<sup>1</sup>

|                                    | 2012     | 2013     | 2014     | 2015     | 2016     | 2017     |
|------------------------------------|----------|----------|----------|----------|----------|----------|
| <b>ԸՆԹԱՑԻՎ ՀԱՇԻՎ</b>               | -1,057.9 | -813.0   | -882.9   | -272.4   | -238.1   | -399.9   |
| կրեդիտ                             | 5,023.4  | 5,533.3  | 5,588.4  | 4,926.3  | 5,234.3  | 6,354.9  |
| դեբետ                              | 6,081.3  | 6,346.4  | 6,471.3  | 5,198.8  | 5,472.4  | 6,754.8  |
| <b>Ապրանքներ և ծառայություններ</b> | -2,214.0 | -2,321.1 | -2,168.9 | -1,281.8 | -1,015.8 | -1,544.7 |
| կրեդիտ                             | 2,917.4  | 3,155.3  | 3,318.3  | 3,136.3  | 3,500.4  | 4,273.3  |
| դեբետ                              | 5,131.4  | 5,476.4  | 5,487.3  | 4,418.2  | 4,516.2  | 5,818.0  |
| <b>Ապրանքներ</b>                   | -2,111.9 | -2,196.2 | -2,055.4 | -1,186.4 | -944.4   | -1,482.1 |
| կրեդիտ                             | 1,515.7  | 1,635.9  | 1,698.1  | 1,623.9  | 1,890.7  | 2,378.3  |
| դեբետ                              | 3,627.6  | 3,832.0  | 3,753.6  | 2,810.3  | 2,835.1  | 3,860.4  |
| <b>Ծառայություններ</b>             | -102.1   | -125.0   | -113.5   | -95.4    | -71.4    | -62.5    |
| կրեդիտ                             | 1,401.7  | 1,519.4  | 1,620.2  | 1,512.4  | 1,609.7  | 1,895.0  |
| դեբետ                              | 1,503.8  | 1,644.4  | 1,733.7  | 1,607.9  | 1,681.1  | 1,957.6  |
| <b>Սկզբնական եկամուտներ</b>        | 423.0    | 682.5    | 541.1    | 442.9    | 224.2    | 497.7    |
| կրեդիտ                             | 1,115.2  | 1,259.1  | 1,212.9  | 885.9    | 851.0    | 1,063.8  |
| դեբետ                              | 692.2    | 576.6    | 671.8    | 443.0    | 626.8    | 566.1    |
| <b>Աշխատողների վարձատրություն</b>  | 915.0    | 1,051.0  | 975.4    | 661.7    | 597.3    | 682.8    |
| կրեդիտ                             | 1,071.2  | 1,228.3  | 1,168.9  | 842.4    | 773.7    | 858.1    |
| դեբետ                              | 156.1    | 177.3    | 193.5    | 180.6    | 176.4    | 175.4    |
| <b>Երկրորդային եկամուտներ</b>      | 733.1    | 825.6    | 744.9    | 566.5    | 553.4    | 647.1    |
| կրեդիտ                             | 990.8    | 1,118.9  | 1,057.2  | 904.1    | 882.9    | 1,017.8  |
| դեբետ                              | 257.7    | 293.4    | 312.3    | 337.6    | 329.5    | 370.7    |
| <b>Անձնական տրանսֆերտներ</b>       | 685.1    | 785.9    | 712.6    | 466.0    | 427.1    | 488.7    |
| կրեդիտ                             | 843.8    | 963.9    | 909.7    | 649.1    | 608.7    | 680.9    |
| դեբետ                              | 158.6    | 178.0    | 197.1    | 183.2    | 181.6    | 192.2    |

Ըստ Գլխաթղթի՝ արտասահմանից ստացվող դրամական փոխանցումները, հատկապես աշխատուժ արտահանող երկրների պարագայում, արտարժույթի ներհոսքում բարձր են: Վերջիններս կարող են փոխարինել և լրացնել այլ աղբյուրներից ստացվող արտարժույթի սահմանափակ լինելը (արտահանում կամ միջազգային օգնություն) և որպես լրացուցիչ տնօրինվող եկամտի աղբյուր՝ ավելացնել պահանջարկը (ներառյալ՝ ներ-

<sup>1</sup> ՀՀ ԱԿԾ, «Վճարային հաշվեկշիռ 6» առցանց տվյալների բազա, <http://armstat.am/am/?nid=203>:

մուծվող ապրանքների նկատմամբ պահանջարկը)<sup>1</sup>: Մեծ ծավալի դրամական փոխանցումները կարող են հանգեցնել փակ շրջապատույտի՝ «ներմուծման ծավալների աճ-արտարժույթի նկատմամբ ավելի մեծ պահանջ-ավելի մեծ ծավալների հասնող դրամական փոխանցումների կարիք», որի արդյունքում դրամական փոխանցումների տատանումները կբերեն այնպիսի իրավիճակի, երբ տրանսֆերտներ ստացող երկրների կառավարությունները պատրաստ չեն լինի կարգավորելու այդ տատանումների ազդեցությունը, ինչն էլ կավելացնի ընթացիկ հաշվի պակասուրդը<sup>2</sup>:

Գլխաթոսի վերլուծության արդյունքները նաև փաստում են, որ դրամական փոխանցումները կարող են տեղական արտադրողների համար կապիտալ ապրանքների աղբյուր հանդիսանալ, իսկ հաշվի առնելով ներմուծվող սպառողական ապրանքների միջոցով կենսամակարդակի բարձրացման փաստը՝ ներմուծման քաղաքականություն մշակողների հիմնական առաջնայնությունը չպետք է լինի միայն ներմուծման ծավալների կրճատումը և դրամական փոխանցումների ուղղումը դեպի հայրենական արտադրողների կողմից արտադրվող ապրանքները, այլ այդ գումարների ուղղումը դեպի հիմնական միջոց համարվող ապրանքներ՝ սպառողական ապրանքների փոխարեն<sup>3</sup>:

Չեթինթասը և Բարիշիկը պարզել են, որ արտահանումը, ներմուծումը և տնտեսական աճը երկարաժամկետ հատվածում 13 անցումային տնտեսություն ունեցող երկրների պարագայում, որոնց մեջ է նաև Հայաստանը<sup>4</sup>, կապված են ուղիղ համեմատական կապով, այսինքն՝ միաժամանակ կա մ' աճում են, կա մ' նվազում<sup>5</sup>: Կարճաժամկետ հատվածում տնտեսական աճը հանգեցնում է արտահանման ծավալների աճի, մինչդեռ ներմուծման պարագայում՝ վերջինիս ծավալների աճը հանգեցնում է տնտեսական աճի, իսկ տնտեսական աճն իր հերթին խթանում է ներմուծման ծավալների աճը<sup>6</sup>: Նմանատիպ փոխառնչություն արձանագրվում է նաև արտահանման և ներմուծման միջև<sup>7</sup>: Երկարաժամկետ հատվածում ևս

<sup>1</sup> Nicholas P. Glytsos, (2005), "The contribution of remittances to growth", *Journal of Economic Studies*, Vol. 32, Iss 6, p. 469, DOI: 10.1108/01443580510631379.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 481:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 486:

<sup>4</sup> 12 երկրներ՝ Բելառուս, Բուլղարիա, Չեխիա, Էստոնիա, Ղազախստան, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Ռուսաստան, Սլովակիա և Սլովենիա:

<sup>5</sup> Çerintaş, H. & Barışık, S. (2009) Export, Import and Economic Growth: The Case of Transition Economies, *Transition Studies Review*, 15, p.645, DOI:10.1007/s11300-008-0043-0.

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում:

նույն միտումներն են նկատվել, որի արդյունքում հեղինակները եզրահանգել են, որ այդ երկրներում արտադրողականության աճը բարձրացնում է երկրի մրցունակությունը զնի և որակի տեսանկյունից, որի արդյունքում երկարաժամկետ հատվածում ավելանում են արտահանման ծավալները<sup>1</sup>: Այս երկրներում արտադրության ծավալների աճը հանգեցնում է եկամուտների աճին, ինչ էլ իր հերթին ավելի է մեծացնում ներմուծման ծավալների աճի տեմպերը այլ զարգացած երկրների համեմատ, իսկ արտահանման ծավալների աճը էապես ազդում է տնտեսական աճի վրա՝ ներմուծման ծավալների փոփոխության միջոցով: Հետևաբար, այս երկրներում տնտեսական աճը պայմանավորված է եղել ներմուծման նկատմամբ պահանջարկի աճով՝ կապիտալի և միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանքների ներմուծման միջոցով արագացված տնտեսական աճով<sup>2</sup>: Այդ պատճառով, եթե արտաքին առևտրային քաղաքականությունը հիմնականում կենտրոնացված է արտահանման վրա՝ անտեսելով ներմուծման որպես տնտեսական աճի շարժիչ ուժի կարևորությունը, կհանգեցնի ոչ միայն տնտեսական աճի տեմպերի դանդաղեցմանը, այլև տնտեսության վերակառուցման գործընթացի ձգձգմանը<sup>3</sup>: Իսկ ինքնին ներմուծմամբ պայմանավորված տնտեսական աճը կհանգեցնի ներմուծվող ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճի, ինչն էլ իր հերթին աստիճանաբար կավելացնի առևտրային և ընթացիկ հաշվի պակասուրդը<sup>4</sup>: Հետևաբար, այլ խնդիրներից խուսափելու և կայուն տնտեսական աճն ապահովելու տեսանկյունից կարևորվում է արտահանման ծավալների աճը՝ աճող ներմուծման պահանջարկը ֆինանսավորելու նպատակով<sup>5</sup>:

Ինչ վերաբերում է ներմուծման նկատմամբ պահանջարկին՝ ապա ըստ Բուգաուշինայի՝ կարճաժամկետ հատվածում անցումային տնտեսությամբ 22 երկրներում, որոնց մեջ է նաև Հայաստանը, և հատկապես ԱՊՀ երկրներում իրական ներքին պահանջարկի փոփոխությունը ավելի մեծ չափերի հասնող փոփոխության է հանգեցնում ներմուծման կտրվածքով (տոկոսային փոփոխության առումով), մինչդեռ երկարաժամկետ հատ-

<sup>1</sup> Çetintaş, H. & Barişik, S. (2009) Export, Import and Economic Growth: The Case of Transition Economies, *Transition Studies Review*, 15, p.647, DOI:10.1007/s11300-008-0043-0:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 648:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

վածում այդ փոփոխությունը համեմատաբար ավելի փոքր է (գրեթե հավասարաչափ)¹:

Աղյուսակ 2

ՀՀ համախառն արտաքին պարտքի տարեկան դիրքերը 2012-2017թթ.  
(ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն ԱՄՆ դոլար)²

|   | 2012            | 2013            | 2014            | 2015            | 2016            | 2017            |
|---|-----------------|-----------------|-----------------|-----------------|-----------------|-----------------|
| <b>Համախառն արտաքին պարտք</b>                                 | <b>7,673.9</b>  | <b>8,732.8</b>  | <b>8,540.5</b>  | <b>8,918.8</b>  | <b>9,953.1</b>  | <b>10,528.7</b> |
| <i>Այդ թվում՝</i>   |                 |                 |                 |                 |                 |                 |
| <b>Ավանդային կազմակերպություններ, Բացի կենտրոնական բանկից</b> | <b>1,923.50</b> | <b>2,329.70</b> | <b>2,241.70</b> | <b>2,070.90</b> | <b>2,328.30</b> | <b>1,994.00</b> |
| <i>Կարճաժամկետ</i>  | <i>617.5</i>    | <i>947.9</i>    | <i>770.2</i>    | <i>514.5</i>    | <i>874.1</i>    | <i>670.4</i>    |
| <i>Երկարաժամկետ</i>   | <i>1,306.00</i> | <i>1,381.80</i> | <i>1,471.50</i> | <i>1,556.40</i> | <i>1,454.20</i> | <i>1,323.60</i> |
| <b>Այ հատվածներ</b>   | <b>899.2</b>    | <b>1,356.00</b> | <b>1,384.30</b> | <b>1,449.30</b> | <b>1,547.40</b> | <b>1,443.00</b> |
| <i>Կարճաժամկետ</i>  | <i>224.2</i>    | <i>176.9</i>    | <i>137.7</i>    | <i>148.3</i>    | <i>196.5</i>    | <i>219.8</i>    |
| <i>Երկարաժամկետ</i>   | <i>675</i>      | <i>1,179.10</i> | <i>1,246.60</i> | <i>1,301.00</i> | <i>1,350.80</i> | <i>1,223.30</i> |
| <b>Ուղղակի ներդրումներ՝ միջֆիրմային վարկեր</b>                | <b>964.3</b>    | <b>995</b>      | <b>983</b>      | <b>944.4</b>    | <b>1,044.20</b> | <b>1,300.50</b> |
| <i>Այդ թվում՝</i>   |                 |                 |                 |                 |                 |                 |
| <i>Ուղղակի ներդրողը ուղղակի ներդրմամբ՝ ձեռնարկությունում</i>  | <i>964.3</i>    | <i>926.0</i>    | <i>508.0</i>    | <i>469.7</i>    | <i>564.6</i>    | <i>763.1</i>    |
| <i>Փոխկապակցված կազմակերպությունների միջև</i>                 | <i>-</i>        | <i>69.0</i>     | <i>438.1</i>    | <i>438.4</i>    | <i>443.5</i>    | <i>501.2</i>    |

Հետևաբար, հաշվի առնելով վերը նշվածը, Հայաստանում պետք է կարևորվի առևտրային և ընթացիկ հաշվի պակասուրդի պահպանման կամ կրճատման հարցը: Իսկ եթե հաշվի առնվի այն հանգամանքը, որ մասնավորապես 2012-2016թթ.-ին պակասուրդի ֆինանսավորումը (հատկապես մասնավոր հատվածի կտրվածքով) հանգեցրել է արտաքին պարտքի ավելացմանը (աղյուսակ 2), ՀՀ-ի համար պետք է կարևորվի օտարերկրյա ներդրումների ներգրավման խնդիրը (պակասուրդի առնվազն պահպանման տեսանկյունից) և արտահանման ծավալների աճը: Թեպետ 2017թ.-ին որոշակիորեն կրճատվել են ավանդային կազմա-

¹ Buzaushina, A. (2015) Trade elasticities in transition countries, International Economics and Economic Policy, Volume 12, Issue 2, pp.321–322, DOI: <https://doi.org/10.1007/s10368-014-0273-z>.

² ՀՀ ԱՎԾ, «Համախառն արտաքին պարտք 6» աղյուսակ տվյալների բազա, <http://armstat.am/am/?nid=203>:

կերպությունների, այլ հատվածների, համախառն արտաքին պարտքի տարեկան դիրքերը 2012-2016թթ.-ի համեմատ՝ աճ է արձանագրվել ուղղակի ներդրումների՝ միջֆիրմային վարկերի կտրվածքով (հատկապես փոխկապակցված կազմակերպությունների միջև և ուղղակի ներդրող ուղղակի ներդրմամբ ձեռնարկության պարագայում) այդ նույն ժամանակահատվածում (աղյուսակ 2):

Ինչ վերաբերում է օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ-երի) ներգրավմանը, ապա 2012-2017թթ. ժամանակահատվածում 2015թ.-ից հետո (178.3 մլն ԱՄՆ դոլար) 2017թ.-ին արձանագրվել է երկրորդ նվազագույն չափը՝ 245.7 մլն ԱՄՆ դոլար (աղյուսակ 3): Իսկ առավելագույն չափը գրանցվել է 2012թ.-ին՝ 496.6 (աղյուսակ 3): Դիտարկվող ժամանակահատվածում բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցության նվազագույն արժեքը գրանցվել է 2017թ.-ին (68.8 մլն ԱՄՆ դոլար), նմանատիպ պատկեր է արձանագրվել նաև վերաներդրված եկամուտների կտրվածքով: 2017թ.-ին զուտ պարտավորությունների ստանձնումը հիմնականում եղել է պարտքային գործիքների տեսքով (աղյուսակ 3), որը կազմել է ուղղակի ներդրումների մոտ 72%, Իսկ պարտքային գործիքներում ներդրումները հիմնականում եղել են միջֆիրմային վարկերի տեսքով (198.5 մլն ԱՄՆ դոլար՝ ուղղակի ներդրող ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունում) (աղյուսակ 2 և 3):

*Աղյուսակ 3*

**Ուղղակի ներդրումները ՀՀ-ում 2012-2017թթ. (մլն ԱՄՆ դոլար)<sup>1</sup>**

|  | 2012  | 2013  | 2014  | 2015  | 2016  | 2017  |
|--|-------|-------|-------|-------|-------|-------|
| <b>Զուտ պարտավորությունների ստանձնում</b>                              | 496.6 | 346.1 | 403.9 | 178.3 | 338.1 | 245.7 |
| <b>Բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն</b> | 589.0 | 329.5 | 331.2 | 148.6 | 223.7 | 68.8  |
| <i>Բաժնետիրական կապիտալ, առանց վերաներդրված եկամտի</i>                 | 328.3 | 260.6 | 177.5 | 245.7 | 184.8 | 65.1  |
| <i>Վերաներդրված եկամուտ</i>  | 260.8 | 68.9  | 153.6 | -97.2 | 38.9  | 3.7   |
| <b>Պարտքի գործիքներ</b>  | -92.4 | 16.6  | 72.7  | 29.7  | 114.4 | 176.9 |
| <i>Այդ թվում՝</i>  |       |       |       |       |       |       |
| <b>Ուղղակի ներդրող ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունում</b>             | -92.4 | -6.0  | 124.8 | 49.6  | 100.7 | 198.5 |

<sup>1</sup> ՀՀ ԱՎԾ, «Վճարային հաշվեկշիռ 6» առցանց տվյալների բազա, <http://armstat.am/am/?nid=203>:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանում դրամական փոխանցումների շարունակական աճը կարող է հանգեցնել փակ շրջապտույտի՝ «ներմուծման ծավալների աճ-արտար-ժույթի նկատմամբ ավելի մեծ պահանջ-ավելի մեծ ծավալների հասնող դրամական փոխանցումների կարիք», որի արդյունքում կավելանա ընթացիկ հաշվի պակասուրդը՝ հիմնականում սպառողական կամ վերջնական սպառման համար նախատեսված ապրանքների ծավալների արտահանման ծավալների աճը գերազանցող աճի տեմպեր գրանցելու պարագայում (կենսամակարդակի բարձրացման շնորհիվ), ինչն էլ կազդի տնտեսական աճի կայունության վրա:

Արտադրության ծավալների աճը կհանգեցնի եկամուտների աճին, ինչն էլ գրեթե նույն չափով կմեծացնի ներմուծման ծավալները՝ կախված ժամանակահատվածից (կարճաժամկետ թե երկարաժամկետ հատված)՝ հիմնվելով Բուզաուշինայի վերլուծության արդյունքների վրա<sup>1</sup>: Արտահանման ծավալների աճը ներմուծման ծավալների աճով պայմանավորված դրականորեն կազդի տնտեսական աճի վրա՝ կապիտալի և միջակայալ սպառման համար նախատեսված ապրանքների ներմուծման միջոցով, ինչն էլ կավելացնի ՀՀ տնտեսության արտադրողականությունը (ընդհանուր գործոնային արտադրողականություն): Կապիտալի և միջակայալ սպառման համար նախատեսված ապրանքների ներմուծման ծավալների աճ կգրանցվի ներքին պահանջարկի ավելացմամբ պայմանավորված, որն էլ իր հերթին կազդի ՀՀ տարբեր ապրանքների շուկաներում մրցակցության մակարդակի վրա, ինչ էլ իր հերթին ՀՀ ընկերություններին հնարավորություն կտա մրցակցել ներմուծվող ապրանքների և հայրենական մյուս արտադրողների հետ (շուկայի կառուցվածքից կախված):

Ներմուծման ծավալների աճն առաջացնում է առևտրային և, հատկապես, ընթացիկ հաշվի պակասուրդի պահպանման կամ կրճատման խնդիր, քանի որ արտաքին շուկերը կարող են հանգեցնել ճգնաժամի (հատկապես արժութային ճգնաժամի, ինչն էլ վատագույն դեպքում կարող է վերածվել տնտեսականի և առաջացնել այլ տիպի ֆինանսական ճգնաժամեր): Քանի որ ընթացիկ հաշվի պակասուրդը կարող է պահպանվել օտարերկրյա կապիտալի ներհոսքով, այստեղ կարևոր է, թե ՀՀ-ն ինչ տեսակի ներդրումներ կներգրավի: Ցանկալի կլինի, որ ուղղակի ներդրումները հիմնականում լինեն ներդրումներ բաժնետիրական

<sup>1</sup> Buzaushina, A. (2015) Trade elasticities in transition countries, *International Economics and Economic Policy*, Volume 12, Issue 2, pp.321–322, DOI: <https://doi.org/10.1007/s10368-014-0273-z>.

կայախտալի և ոչ թե պարտաբային գործիքների տեսքով, որպեսզի էլ ավելի չվատթարանան ՀՀ համախառն արտաքին պարտքի տարեկան դիքքերը: Մակայն, անկախ նրանից, թե ինչ տիպի ներդրումներ է ՀՀ-ն ներգրավում, ընթացիկ հաշվի պակասուրդի աճին զուգընթաց կավելանա երկրի կախվածությունը կապիտալի արտաքին աղբյուրներից, եթե ընթացիկ հաշվի կայունությունը պահպանվելու է ՕՈՒՆ-երի ներգրավմամբ պայմանավորված: Այդ դեպքում միայն հոսքերի կայուն մակարդակը հնարավորություն կտա պահպանել կամ ծածկել պակասուրդը, ինչպես նաև որոշակիորեն ավելացնել այն:

Պարզապես օտարերկրյա ընկերությունների ներգրավումը (հատկապես «շուկա փնտրող») կնպաստի միայն ընթացիկ հաշվի պակասուրդի առկա մակարդակի պահպանմանը, մինչդեռ ներդրված արտահանման մտադրությամբ «ոեսուրս» և/կամ միսմամանակ «արդյունավետություն փնտրող» օտարերկրյա ընկերությունների ներգրավման դեպքում, ընթացիկ հաշվի պակասուրդի պահպանումից բացի, կարձանագրվի արտահանման ծավալների աճ, ինչն էլ թույլ կտա կրճատել ընթացիկ հաշվի պակասուրդը:

Այստեղ առաջնային է դառնում ՀՀ կառավարության կողմից մշակվող և իրականացվող արտահանման խթանմանն ուղղված միջոցառումների հաջողությունը, որի շնորհիվ արտահանման ծավալների աճ կգրանցվի, ինչն էլ իր հերթին կկրճատի ընթացիկ հաշվի պակասուրդը: Կարևոր է նաև արտահանողների, ինչպես նաև տեղական արտադրողների պարագայում պետական աջակցությունը (օրինակ՝ վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը), ինչպես նաև համապատասխան միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանքների և կապիտալի ընտրության և ներմուծման գերծում տեղեկատվական աջակցությունը: Լոպեզի և Յադավի կողմից քննարկված տեղեկատվական աջակցությունը Զիլիի պարագայում լավ օրինակ է՝ հատկապես ներմուծելիս<sup>1</sup>:

Տեղական ընկերությունների կողմից ավելի արդյունավետ տեխնոլոգիաների ներմուծումը և յուրացումը տեղական շուկայում մրցակցությանը դիմակայելու նպատակով, ինչպես նաև հետագայում արտահանելու դեպքում բոլոր շուկաներում ավելի բարձր մրցակցության մակարդակը կստիպեն ընկերություններին արտադրողական դառնալ, նորարարություններով զբաղվել, ինչն էլ ընդհանուր առմամբ ՀՀ ընկերություններին ավելի մրցունակ կդարձնի:

<sup>1</sup> Ricardo A. López & Niru Yadav (2010) Imports of Intermediate Inputs and Spillover Effects: Evidence from Chilean Plants, *The Journal of Development Studies*, 46:8, p. 1388, DOI: 10.1080/00220380903428423.

Թեպետ կապիտալ և միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանքների ներմուծումը ՀՀ-ում կարող է նպաստել արտադրողականության (ընդհանուր գործոնային արտադրողականության), ինչպես նաև տնտեսական աճի ավելի բարձր տեմպերի ապահովմանը (հատկապես ուժեղ մրցակցության առկայության դեպքում) երկարաժամկետ հատվածում կարևորը սպառողական կամ վերջնական սպառման համար նախատեսված ապրանքների ներմուծման ծավալների աճի տեմպերն են, որի ազդեցությունը կարելի է կրճատել կամ մեղմել արտահանման ավելի բարձր և ավելի բարձր ավելացված արժեք ստեղծող ապրանքների արտահանման ծավալների աճի պարագայում: Հետևաբար՝ ներմուծման ծավալների աճին զուգընթաց (անկախ վերջիններիս օգտագործման նպատակից) անհրաժեշտ է ավելացնել արտահանման ծավալները և ներգրավել օտարերկրյա ուղղակի ներդրումներ՝ բաժնետիրական կապիտալում (ոչ պարտքային գործիքների տեսքով և հատկապես «ոեսուրս» և/կամ միաժամանակ «արդյունավետություն փնտրող» օտարերկրյա ընկերություններ):

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿՐԱ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԴԴ-ՈՒՄ

ԱՆՆԱ ՌՈՒԶՎԵԼՏԻ ՄԱԿԱՐՅԱՆ, տ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող

**Համառոտագիր:** Ընթացիկ հաշվի կառուցվածքի, համախառն արտաքին պարտքի տարեկան դիրքերի, ինչպես նաև գրականության վերլուծության հիման վրա հողվածում ներկայացվել է ներմուծման դերը և վերջինիս ազդեցությունը Հայաստանի տնտեսական աճի ապահովման գործում: Ներմուծման ազդեցության ուղիների համակարգման տեսանկյունից առաջարկվել է ներմուծման ծավալների աճին զուգընթաց ավելացնել արտահանման ծավալները և ներգրավել ՕՈՒՆ-երը բաժնետիրական կապիտալում (ոչ պարտքային գործիքների տեսքով և «ոեսուրս» և/կամ միաժամանակ «արդյունավետություն փնտրող» ընկերություններ):

**Բանալի բառեր.** ներմուծում, ՕՈՒՆ, արտահանում, արտաքին պարտք, առևտրային հաշվեկշիռ, ընթացիկ հաշվի պակասուրդ, պարտքային գործիք, բաժնետիրական կապիտալ:

## МЕХАНИЗМЫ ВЛИЯНИЯ ИМПОРТА НА ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ В РА

**АННА РУЗВЕЛЬТОВНА МАКАРЯН, к.э.н.**

*научный сотрудник Института  
экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация:** На основе анализа структуры текущего счета, позиций годового валового внешнего долга и обзора литературы в статье предпринята попытка определить роль и влияние импорта в обеспечении экономического роста Армении. С целью координации возможного воздействия импорта, предложено увеличить экспорт и привлечь ПИИ в акционерный капитал (а не в долговые ценные бумаги и ресурсо-ориентированные и/или одновременно затратно-ориентированные компании) при росте объемов импорта.

**Ключевые слова:** *Импорт, ПИИ, экспорт, внешний долг, торговый баланс, дефицит текущего счета, долговые ценные бумаги, акционерный капитал.*

## MECHANISMS OF THE IMPACT OF IMPORTS ON THE ECONOMIC GROWTH IN THE REPUBLIC OF ARMENIA

**ANNA ROOSEVELT MAKARYAN, Ph.D. in Economics**

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Based on the analysis of the structure of current account, annual gross external debt positions, and literature review the author attempts to provide the role and the impact of imports in ensuring the economic growth in Armenia. With respect to coordinating the possible impact of imports, the author proposes to increase exports and attract FDI in equity (not in debt securities and resource-seeking and/or simultaneously efficiency seeking companies) along with increase reported in imports.

**Keywords:** *Import, FDI, export, external debt, trade balance, current account deficit, debt securities, equity.*

## ՏԱԹԵՎԻԿ ՎԱՉԳԵՆԻ ՇԱՅԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթուսյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր  
գիտաշխատող

### ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԴԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Ազգային տնտեսության կայուն զարգացումն ուղեկցվում է ֆինանսական գործարքների ծավալների աճով և, որպես հետևանք, բանկային համակարգի կարևորության բարձրացմամբ: Բանկային համակարգը, լինելով շուկայական տնտեսության ամենակարևոր օղակներից մեկը, բազմակողմանի ազդեցություն ունի հասարակական կյանքի վրա: Այն ոչ միայն ապահովում է դրամական կապիտալի վերաբաշխման գործիքակազմը, այլև երկրի տնտեսական համակարգի վճարահաշվարկային համակարգի առանցքային տարրն է:

Այս փաստը պայմանավորում է բանկային համակարգի կարևորությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Իր հերթին, բանկային գործունեության որակի բարելավումը, ողն իր մեջ ներառում է բանկային ծառայությունների ընդլայնումն ու դրանց տրամադրման մոտեցումների կատարելագործումը, կկարողանա ապահովել ազգային վարկային կազմակերպությունների արդյունավետությունն ու կայունությունը: Բանկային ծառայությունների որակը կարևոր ռիսկային գործոն է, որը սահմանում է բանկային համակարգի արդյունավետությունը՝ որպես տնտեսության կայուն զարգացումն ապահովող ֆինանսական միջնորդության համակարգի տարր: Դա պայմանավորված է նրանով, որ բանկային կազմակերպությունների կողմից տարատեսակ ժամանակակից ծառայությունների տրամադրումը բանկային գործունեության գործառության հիմքն է: Այլ կերպ ասած, բանկային կազմակերպությունների գործառության իրականացումը տեղի է ունենում հաճախորդներին բանկային ծառայությունների մատուցման միջոցով: Բանկային համակարգը կորցնում է իր կայունությունը այն դեպքում, երբ այն ի վիճակի չէ լիարժեք կատարել իր գործառությունները և, հետևաբար, բանկային ծառայությունների շուկայում հաճախորդներին մատուցել բանկային արտադրանքը<sup>1</sup>:

<sup>1</sup> Семенюта, О.Г., Данченко Е.А., Панченко Н.О. Рынок банковских продуктов как фактор устойчивости банковской системы//Финансы и кредит. 2014.- № 2. -С. 2-9.

Ժամանակակից բանկային գործի ու բանկային մարքեթինգի տեսությունները հիմնված են մի շարք հիմնական հասկացությունների վրա: Դրանց թվին կարելի է դասել «բանկային արտադրանք» և «բանկային ծառայություններ» հասկացությունները: Հարկ է նշել, որ մեթոդաբանական, տեսական և գործնական ասպեկտներում այս հասկացությունները նախորդում են բանկային մարքեթինգին: Այնուամենայնիվ, չնայած տարածվածությանն ու նույնիսկ ընդհանրությանը, վերոնշյալ հասկացությունների հստակ սահմանումներ ու տարբերություններ դեռևս գոյություն չունեն:

Համառոտ նկարագրենք բանկային արտադրանքի և բանկային ծառայությունների տեսական հիմքերի ձևավորման ժամանակագրությունը:

«Հարստության հայրն ու ամենաակտիվ սկզբունքը աշխատանքն է, իսկ հողը նրա մայրն է» հայտնի ասույթի հեղինակ Ուիլյամ Պեթին դեռևս 17-րդ դարում հարկերի և տուրքերի մասին իր գիտական աշխատության մեջ տոկոսների բռնագանձումը բացատրել է նրանով, որ վարկատուի մոտ մինչև վարկի ժամկետի ավարտը կարող է առաջանալ դրամական միջոցների պահանջարկ՝ վարկատուին պատճառելով անհարմարություններ: Այդ անհարմարությունների փոխհատուցումը հանդիսանում է տոկոսը<sup>1</sup>:

Տևտեսագիտական մտքի մեկ այլ դասական Ադամ Սմիթը ծառայությունների մատուցումը շահադիտական հետաքրքրություններին հասնելու միջոց էր համարում. «Մենք մեր ճաշն ակնկալում ենք ստանալ ոչ թե մսագործի, զարեջրագործի կամ հացթուխի բարեհոգությունից, այլ նրանց կողմից սեփական շահերի պաշտպանությունից: Մենք առնչվում ենք ոչ թե նրանց մարդասիրության, այլ նրանց եսասիրության հետ, և երբեք չենք ասում նրանց մեր կարիքների մասին»<sup>2</sup>:

Արդյունաբերական կազմավորումների տարածմանը համընթաց ծառայությունների մասին պատկերացումներն ավելի հստակ են դառնում: Տ. Ա. Լոբաչևան, անդրադառնալով Կ. Մարքսին, նշել է. «Մարքսը կարծել է, որ սպառողական արժեքի մարմնավորում է հանդիսանում ոչ միայն արտադրանքը, այլ նաև, այսպես կոչված, «մարդ» ծառայությունը»<sup>3</sup>: Այսպիսով, արտադրանքը ներառում է ոչ նյութական բաղադրիչ՝ ծառայություն, քանի որ այն ձեռք է բերվում որոշակի օգուտ, ծառայություն ստանալու նպատակով, այսինքն «արտադրանք» հասկացությունը են-

<sup>1</sup> Петти У., Трактат о налогах и сборах. Глава V. О проценте// <http://www.ek-lit.org/pett006.htm>

<sup>2</sup> Смит А., Исследование о природе и причинах богатства народов. М.: Соцэкгиз, 1962, стр. 28.

<sup>3</sup> Маркс К., Энгельс Ф. Сочинения. 2-е изд., т. 26, ч. 1., стр. 139–149.

թաղրում է երկու՝ նյութական և ոչ նյութական բաղադրիչների համադրությունը:

Չնայած այն բանին, որ բանկային գործի պատմությունը հազարամյակների պատմություն ունի, այնուամենայնիվ, բանկային ծառայությունների տեսության զարգացումը հետազոտողները համարում են 20-րդ դարի 60-ական թվականների վերջից մինչև 70-ական թվականների սկիզբը:

20-րդ դարում համաշխարհային բանկային գործը ենթարկվել է երկու խոշոր կառուցվածքային վերակազմակերպման, որոնք արմատապես փոխել են բանկային գործի փիլիսոփայությունը, տեսքն ու բովանդակությունը: Ընդունված է առանձնացնել բանկային գործի վերակազմակերպման հետևյալ փուլերը.

- 1920-ական թվականներ՝ բանկային գործում բարելավման ալիք, նոր տեխնոլոգիաների ներդրում: Արդյունքում փոքր, անմրցունակ բանկերը սնանկացան,
- 1960-ական թվականներ՝ բնակչության բարեկեցության աճ, մասնավոր հաճախորդների գրավչության բարձրացում: Արդյունքում բնակչության համար ծառայությունների շուկայում մրցակցությունն աճեց, առաջացավ բանկային մարքեթինգը:

Պետք է նշել, որ զարգացած կապիտալիստական երկրներում բանկային գործառնությունները ավանդաբար համարվում են որպես բանկային ծառայությունների տարատեսակ, քանի որ կապիտալիստական բանկը բնութագրվում է որպես ֆինանսաբանկային ծառայությունների մատուցման մեջ մասնագիտացած շուկայական կառուցվածք: Մասնավորապես, հետխորհրդային տարածաշրջանում արևմտյան ամենանշանավոր հեղինակներից մեկը՝ Պ. Ռոուզը, բանկային ծառայությունների շարքին է դասում բանկի գործունեության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են դրամական միջոցների կառավարումը, սպառողական վարկը, կանխիկ դրամական հոսքերի կառավարումը, լիզինգը, կենսաթոշակային ծրագրերի վաճառքը<sup>2</sup>:

Գերմանացի հեղինակները, բանկային գործառնությունների մեջ են ներառում բանկային գործունեության բոլոր տեսակները, իսկ բանկային ծառայությունները ներկայացնում են որպես բանկային գործունեության տարատեսակ<sup>3</sup>:

<sup>1</sup> Лобачева Т.А., Сюляргина А.Ю. Оценка качества банковских услуг. Екатеринбург: ИЭУРОРАН, 2008. стр. 28.

<sup>2</sup> Роуз П.С., Банковский менеджмент. Предоставление финансовых услуг - М.: Издательство «Дело», 1997. стр. 5-6.

<sup>3</sup> Бухвальд Б., Техника банковского дела. Москва, Сирин, 2002. - 256 с.

Ֆրանսիացի հետազոտող Ժ. Մաթուլը նշում է, որ բանկային ծառայությունը հանդիսանում է հաճախորդների ֆինանսական պահանջարկի բավարարում՝ հաշվի առնելով բանկի ֆինանսական հնարավորությունները<sup>1</sup>:

Կրկին ֆրանսիացիներ Կ. Գավալը և Ջ.Սթյուֆլը ընդգծում են, որ ավանդների ներգրավումը և վարկերի բաշխումը բանկային գործունեության հիմքն են հանդիսանում, սակայն, այսօր այս տեսակները հարստացել են տարատեսակ ծառայություններով, որոնց տրամադրման դիմաց բանկի փոխհատուցումը սեփական միջոցների աճող մասն է<sup>2</sup>:

1990-ական թվականների երկրորդ կեսից սկսած բանկային արտադրանքի և ծառայությունների տեսության ու մատուցման փորձի տարբեր տեսակետների ուսումնասիրությանը միացան հետխորհրդային երկրների հեղինակները:

Մի շարք հետխորհրդային հետազոտողներ (օրինակ, Ա.Ս. Տավասիևը, Յու Վ. Գոլովինը, Օ. Բ. Լավրուշինը) բանկային ծառայությունները դիտարկում են որպես բանկային գործառնությունների տարատեսակ և, միաժամանակ, բանկային գործառնությունների շարքին են դասում ծառայությունների ողջ տեսականին: Հետաքրքիր է, որ այս մոտեցման կողմնակիցները, ի տարբերություն բանկային ծառայությունների, բանկային գործառնություններն իրականացնում են դրամական տեսքով<sup>3</sup>:

Ժամանակակից բանկային գրականության համաձայն բանկային ծառայությունը (գործառնությունը) ազգային օրենսդրության շրջանակներում վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող համաձայնագրերի ամբողջություն է. օրենսդրությամբ ամրագրվում է դրանց իրավունակությունը՝ շնորհելով այնպիսի համաձայնագրերի իրականացման բացառիկ իրավունք, որոնց իրականացման առարկաներն են փողը, արժեթղթերը, թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը և ուղղված են հաճախորդների կարիքների բավարարմանն ու շահույթ ստանալուն<sup>4</sup>:

Նյութական արտադրության ոլորտում գործունեության արդյունք է հանդիսանում պատրաստի արտադրանքը, իսկ բանկային ոլորտում գոր-

<sup>1</sup> Матук Ж., Финансовые системы Франции и других стран: Под общ. ред. проф. Л. П. Павловой. – Т. 1 Банки. Книга 1. – М.: АО «Финста-тинформ», 2004., стр. 11.

<sup>2</sup> Гавальд К., Стюфле Ж., Банковское право (Учреждения – Счета – Операции – Услуги). Пер. с фр. / Под ред. В. Я. Лисняка. – М., 1996, стр. 12-13.

<sup>3</sup> Банковское дело: Учебник / Под ред. О.И. Лаврушина. М.: КНОРУС, 2009, стр. 27.

<sup>4</sup> Виколин А. Ю., Определение себестоимости и установление тарифов на банковские услуги // Банковские технологии. – 2010. – № 4. – С. 56 – 57.

ծունեության արդյունքը բանկային ծառայությունն է: Հարկ է նշել, որ տնտեսագիտությունը ծառայություններ ասելով հասկանում է աշխատանքի յուրօրինակ օգտակար արդյունք, որը չի ստեղծում նյութական արդյունք, բայց օգտակար է որպես գործընթաց: Ծառայությունը դա գործունեության տեսակ է, աշխատանք, որի իրականացման արդյունքում չեն ստեղծվում նոր, նախկինում գոյություն չունեցող նյութաիրային արտադրանք, բայց փոփոխվում է արդեն գոյություն ունեցող, ստեղծված արտադրանքի որակը<sup>1</sup>: Այլ կերպ ասած ծառայությունը ոչ նյութական օգուտ է՝ աշխատանքի արդյունքի հատուկ տեսակ: Այսինքն, այս տեսակկյունից բանկային գործառնություններն էլ հանդիսանում են հաճախորդներին ծառայությունների մատուցումը: Հենց հաճախորդի ներկայությունն է պայմանավորում բանկային գործառնության վերափոխումը բանկային ծառայության<sup>2</sup>:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ բանկը դա բանկային ծառայություններ մատուցող ձեռնարկություն է: Բանկային ծառայությունն ընկալվում է որպես հաճախորդի հանձնարարությամբ և վերջինիս օգտին որոշակի վճարի դիմաց իրականացվող բանկային գործառնություն:

Առանձնացնելով բանկային ծառայությունն ու բանկային արտադրանքը որպես բանկային գործունեության առարկա՝ գիտության մեջ չկա ընդհանուր կարծիք, թե արդյոք այդ հասկացությունները նույնական են կամ դրսևորվում են իրենց հաճախորդների նկատմամբ բանկային գործունեության տարբեր տեսակներով: Որոշ գիտնականներ նշում են, որ «բանկային ծառայություն» և «բանկային արտադրանք» հասկացությունները նույնական են, մյուսներն առանձնացնում են բանկային ծառայությունը որպես առավել ընդհանրական հասկացություն՝ նշելով, որ բանկային ծառայությունը կարող է ներառել բանկի կողմից հաճախորդին տարատեսակ բանկային արտադրանքի տրամադրումը:

Տնտեսագետների մի մասն էլ նշում է, որ բանկային ծառայությունները բանկային արտադրանքի մասն են կազմում, որոնց ձևավորումն ու ստեղծումն իրականացվում է շուկայի և հաճախորդների պահանջ-մուտքների փուլային մարքեթինգային ուսումնասիրությունների հիման վրա: Այն բաղկացած է մի շարք բանկային գործառնություններից, որոնք անհրաժեշտ են փոխադարձ շահերի բավարարման շուկայում հաճա-


<sup>1</sup> Гамзунов А. Г., Банковская услуга, как предмет деятельности банка // Архив научных публикаций URL: [http://www.rusnauka.com/11\\_NPRT\\_2007/Economics/21947.doc.htm](http://www.rusnauka.com/11_NPRT_2007/Economics/21947.doc.htm)

<sup>2</sup> Гамзунов А. Г., «Банковская услуга, как предмет деятельности банка» // Архив научных публикаций URL: [http://www.rusnauka.com/11\\_NPRT\\_2007/Economics/21947.doc.htm](http://www.rusnauka.com/11_NPRT_2007/Economics/21947.doc.htm)

խորդի՝ որոշակի ծառայության իրականացման պահանջմունքները բավարարելու համար և նպատակաուղղված են շահույթ ստանալուն:

Հետևաբար բանկային ծառայությունների շուկան հարաբերությունների ամբողջություն է, որն առաջանում է որոշակի ծառայությունների համապատասխան, սահմանված տարածքում բանկերի հաճախորդների պահանջմունքների բավարարման պատճառով<sup>1</sup>:

Բանկային ծառայությունների շուկայի կառուցվածքն ու մասնակիցների միջև փոխհարաբերությունները կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով.



**Գծապատկեր 1. Բանկային ծառայությունների շուկայի կառուցվածքն ու մասնակիցների միջև փոխհարաբերությունները<sup>2</sup>**

Գրականության վերլուծությունների հիման վրա առաջարկվում են բանկային գործի մաս հանդիսացող «բանկային ծառայություն», «բանկային գործառնություն» և «բանկային արտադրանք» հասկացությունների հետևյալ սահմանումները:

<sup>1</sup> Ильясов, С. Банковские услуги и их сущность и перспективы развития «Банковское дело в Москве». [Электронный ресурс] URL: [www.klerk.ru](http://www.klerk.ru)

<sup>2</sup> Կազմվել է հեղինակի կողմից:

Բանկային ծառայությունը բանկի փաստացի և (կամ) իրավաբանական գործողությունների ամբողջությունն է, որն ուղղված է հաճախորդների կարիքների բավարարմանը:

Բանկային գոծառնությունը բանկի կամ նրա մասնաճյուղի կողմից ծառայությունների մատուցման ավարտուն գործողությունն է կամ գործողությունների շարքը, որոնք վարկային կազմակերպությունների աշխատանքի տեխնոլոգիական գործընթացի մասն են կազմում:

Բանկային արտադրանքը բանկային ծառայության արտաքին արտահայտությունն է, որն ունի ապրանքի տեսք և հարմարեցված է հաճախորդների պահանջմունքների բավարարմանը:

Բանկային ծառայությունը կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի բանկային գործառնություններից: Մեկ գործառնության միջոցով բանկային ծառայության իրականացման դեպքում բովանդակությունն ու անվանումը համապատասխանում են: Օրինակ, կանխիկ արտարժույթի փոխանակումը: Սակայն, որոշ դեպքերում, մեկ ծառայության մատուցման համար պահանջվում է իրականացնել մի քանի բանկային գործառնություններ: Այսպիսով, վարկի տրամադրման ծառայություն մատուցելու դեպքում նախ և առաջ բացվում է հաշիվ, այնուհետև իրականացվում է դրամական միջոցների փոխանցումն այդ հաշվին և անհրաժեշտության դեպքում նաև արժույթի փոխարկում:

Այնուամենայնիվ, բանկային ծառայությունը՝ հաճախորդների պահանջմունքների բավարարմանն ուղղված բանկային մասնագետների գործունեության հանրագումարն է և, հետևաբար, համապատասխան բանկային գործառնությունների իրականացման արդյունքը: Սա կարելի է հիմնավորել նրանով, որ բանկային ծառայությունը որոշակի որակների ամբողջություն է (զին, որակ, ժամկետներ, լրացուցիչ ծառայություններ և այլն), որոնք բացարձակապես անհրաժեշտ և պարտադիր են, որպեսզի տեղի ունենան բանկի՝ որպես ֆինանսական միջնորդի, հիմնական գործունեության շրջանակներում որոշակի գործողություններ՝ ուղղված նախապես սահմանված արդյունքներին հասնելուն:

Բանկային ձեռնարկատիրությունը մշտապես ընդլայնման և լրացուցիչ ծառայություններ առաջարկելու կարիք ունի՝ ներառելով իրական հատվածին և տնային տնտեսություններին մատուցվող նոր բանկային ծառայություններն ու կազմակերպելով դրանց վաճառքը վերջնական սպառողին:

Ինչպես ցույց են տալիս քաղաքական և տնտեսական հետազոտությունները, պետության կայունությունն ու նրա քաղաքականության

սոցիալ-տնտեսական ուղղվածությունը դրական ազդեցություն են ունենում բանկային ծառայությունների շուկայի վրա, քանի որ հասարակության բոլոր անդամների համար հուսալի սոցիալական և տնտեսական երաշխիքների առկայությունը հնարավորություն է տալիս վստահորեն նայել ապագային, իրականացնել մտածված նախագծերը՝ ակտիվորեն դիմելով բանկերի ծառայություններին (սպառողական վարկեր, բիզնեսի ընդլայնման վարկեր և այլն):

**ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԴԵՐԸ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ**

**ՏԱԹԵՎԻԿ ՎԱԶԳԵՆԻ ՇԱԳԻՆՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հոդվածում ուսումնասիրվել է բանկային գործի պատմությունը, հետազոտվել են մի շարք օտարերկրյա հեղինակների կողմից բանկային ծառայությունների մասին արված դիտարկումները: Գծապատկերի միջոցով ներկայացվել է բանկային ծառայությունների շուկան և շուկայի մասնակիցների միջև փոխհարաբերությունները: Չունենալով բանկային ծառայությունների պատմություն՝ կարևորվում է այլ երկրների բանկային համակարգի ու ոլորտին առնչվող տեսական հարցերի ուսումնասիրությունը: Դրանց միջոցով կարելի է հասնել բանկային ծառայությունների մատուցման որակական նոր հարթության:

*Բանալի բառեր. բանկային համակարգ, բանկային գործ, բանկային արտադրանք, բանկային ծառայություններ, բանկային գործառնություններ, ֆինանսական պահանջարկ:*

**ЭКОНОМИЧЕСКОЕ СОДЕРЖАНИЕ И РОЛЬ БАНКОВСКИХ УСЛУГ В  
СОВРЕМЕННЫХ КОММЕРЧЕСКИХ БАНКАХ**

**ТАТЕВИК ВАЗГЕНОВНА ШАГИНЯН**

*младший научный сотрудник Института экономики имени М. Котаняна НАН РА*

**Аннотация:** В статье рассматривалась история банковского дела, исследовались наблюдения ряда зарубежных авторов о банковских услугах. С помощью иллюстрации показан рынок банковских услуг и взаимосвязь между участниками рынка. Не имея историю банковских услуг, становится важным изучение банковской системы и связанных с нею теоретических

вопросов. С помощью этого можно достичь нового качественного уровня обеспечения банковских услуг.

*Ключевые слова:* банковская система, банковское дело, банковский продукт, банковские услуги, банковские операции, финансовый спрос.

## THE ECONOMIC MEANING AND THE ROLE OF BANKING SERVICES IN CONTEMPORARY COMMERCIAL BANKS

**TATEVIK VAZGEN SHAHINYAN**

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article examines the history of banking, investigates the statements made by various foreign scholars with respect to banking services. The figure proposed by the author illustrates how the markets of banking services function and how the market agents interact. Without having the history of banking services, the study of theory on the issues related with banking and banking system in other nations is stressed. The study could ensure rendering of higher quality and/or new banking services.

**Keywords:** *Banking system, banking, banking product, banking services, banking operations, financial demand.*

## ՏԱԹԵՎԻԿ ՎԱՉԳԵՆԻ ՀԱՅԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթայանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

### ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետության ժամանակակից բանկային համակարգի ձևավորումն համընկավ ԽՍՀՄ փլուզման, անցումային շրջանի խոչընդոտների հաղթահարման և երկրում տիրող պատերազմական իրադրության հետ: Երկրում տիրող սոցիալ-տնտեսական վիճակի կտրուկ վատթարացմանը զուգահեռ բանկերն այլևս չէին կարողանում լիարժեք իրականացնել իրենց գործառույթներն ու կորցնում էին իրենց տեղը տնտեսական համակարգում: Այս պայմաններում բանկային համակարգի կարգավորման և զարգացման համար հիմք է հանդիսանում ազգային արժույթի ստեղծումը: 1993 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ ՀՀ տարածքում շրջանառության մեջ է դրվում ազգային արժույթը՝ դրամը:

Բանկային օրենսդրության ընդունումը տնտեսական բարեփոխումների գործընթացի կարևորագույն նախապայմաններից էր:

Հայաստանում բանկային համակարգի զարգացման և հավասարակշռված մակրոտնտեսական քաղաքականության իրականացման համար առանձնահատուկ նշանակություն ունեցավ բանկային գործունեության օրենսդրական կարգավորումը: Համապատասխան օրենքների ընդունումը խթանեց երկմակարդակ բանկային համակարգին բնորոշ իրավահարաբերությունների կարգավորումն ու ժամանակակից բանկային օրենսդրության ստեղծումը<sup>1</sup>:

1996 թվականին են ընդունվել ՀՀ բանկային համակարգում ձևավորված հարաբերությունները կարգավորող հիմնական՝ «ՀՀ կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ նոր օրենքները<sup>2</sup>:

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով ամրագրված է, որ կենտրոնական բանկի հիմնական նպատակը ՀՀ-ում գների կայունության ապահովումն է, որի իրագործման նպատակով բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագիրը:

Վերջին տարիների ընթացքում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ցույց տվեց, որ մակրոտնտեսական կայունության

<sup>1</sup> Բագրատ Ասատրյան, «Բանկային գործ»//ուսումնական ձեռնարկ, Եր.: «Սարվարդ» հրատ., 2004, էջ 80:

<sup>2</sup> Տվյալները՝ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք՝ <https://www.cba.am/am/SitePages/Default.aspx>.

պահպանման համար անհրաժեշտ է, որպեսզի կենտրոնական բանկերը գների կայունության նպատակին զուգահեռ կարևորեն նաև ֆինանսական կայունությունը:

ՀՀ կենտրոնական բանկը մշտապես կարևորել է ֆինանսական կայունությունը: Այն որպես խնդիր ամրագրված է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում, սակայն 2018 թվականի ապրիլի 9-ից՝ համաձայն 2015 թվականին իրականացված Սահմանադրական փոփոխությունների, գների կայունության հիմնական նպատակին զուգահեռ՝ ֆինանսական կայունությունը նույնպես դառնում է կենտրոնական բանկի հիմնական նպատակը<sup>1</sup>:

ՀՀ կենտրոնական բանկի բնորոշմամբ ֆինանսական կայունությունը իրավիճակ է, երբ ֆինանսական համակարգը բնականոն կերպով իրականացնում է ֆինանսական միջնորդի իր գործառույթը՝ չվտանգելով տնտեսության զարգացման հեռանկարը՝ դիմակայելով բացասական ցնցումներին: Ֆինանսական կայունության ապահովման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող քաղաքականության համար բանկը մշակել է համապատասխան գործիքակազմ: Հիմնական գործիքները սահմանված են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում, որոնք բանկին հնարավորություն են տալիս անհրաժեշտության դեպքում ընտրել և կիրառել գործիքները, որոնք առավելագույնս կարող են նպաստել ֆինանսական կայունության ամրապնդմանը: Գործիքներն են՝ կապիտալի և իրացվելիության պահանջները, փոխառության պայմանների սահմանափակումները և այլն<sup>2</sup>:

Բանկային համակարգը Հայաստանի ֆինանսական շուկայի ամենամեծ ոլորտն է: Ըստ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի սահմանված կարգով և տրված լիցենզիաների հիման վրա իրականացնել բանկային գործունեություն:

Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը, ավանդն ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու, ներդրումներ կատարելու միջոցով<sup>3</sup>:

2008 թվականի հունվարին ՀՀ-ում գործել են 22 բանկեր՝ իրենց 380 մասնաճյուղերով: Բանկերի ընդհանուր կապիտալը կազմում էր 235690

<sup>1</sup> ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 06.12.2015թ., հոդված 200.2:


<sup>2</sup> Տվյալները՝ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք՝ <https://www.cba.am/am/SitePages/Default.aspx>.

<sup>3</sup> «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 30.06.1996թ.:

մլն դրամ, ընդհանուր ակտիվներն ու պարտավորությունները՝ համապատասխանաբար 1024232 մլն դրամ և 788542 մլն դրամ<sup>1</sup>:

Ի հաշիվ բանկերի խոշորացման՝ 2016 թվականին բանկերի թիվը Հայաստանում կրճատվեց: 2017 թվականի հունվարին Հայաստանում գործում էր 17 բանկ՝ իրենց 526 մասնաճյուղերով, որոնց ընդհանուր կապիտալը հասնում էր 686274 մլն դրամի: Բանկերի ընդհանուր ակտիվները 4364375 մլն դրամ էին կազմում, իսկ պարտավորությունները՝ 3678102 մլն դրամ<sup>2</sup>:

Փորձենք գծապատկերի միջոցով ներկայացնել Հայաստանի բանկային ոլորտի հիմնական ֆինանսական ցուցանիշները վերջին երեք տարիների ընթացքում:



Գծապատկեր 1. ՀՀ բանկային ոլորտի հիմնական ֆինանսական ցուցանիշները 2015-2017 թթ. ( մլն ՀՀ դրամ)<sup>3</sup>

<sup>1</sup> Տվյալները՝ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք՝

<https://www.cba.am/am/SitePages/achfinancialbankingsystem.aspx>.

<sup>2</sup> Տվյալները՝ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք՝

<https://www.cba.am/am/SitePages/achfinancialbankingsystem.aspx>.

<sup>3</sup> Տվյալները՝ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք՝ <https://www.cba.am/AM/SitePages/Default.aspx>.

Ինչպես կարելի է նկատել գծապատկերից դիտարկվող ժամանակահատվածում աճ է գրանցվել ներկայացված բոլոր ֆինանսական ցուցանիշների մասով: Ինչպես ցույց են տալիս «ԱՌԿԱ» գործակալության վերլուծությունները 2017 թվականին 2016 թվականի համեմատությամբ բանկային ակտիվներն ավելացել են 6.67%-ով՝ կազմելով 4,362 մլրդ ՀՀ դրամ: ՀՀ բանկային ոլորտի զարգացումները հիմնականում արտացոլում են կենտրոնական բանկի կողմից իրականացվող շարունակական բարեփոխումները, որոնք սկիզբ են առել դեռևս 2014 թվականի վերջում: Բանկերի միաձուլումները, որոնք արդյունք էին ՀՀ բանկերի կայունության բարձրացմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների, բարձրացրեցին բանկերի կապիտալացվածության մակարդակը:

2015 թվականին կենտրոնական բանկը հայտարարեց, որ խստացնում է կանոնները՝ բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն մակարդակը 2017 թ. հունվարի 1-ից սահմանելով 30 մլրդ ՀՀ դրամ: 2017 թվականին բանկերի ընդհանուր կապիտալը կազմում էր գրեթե 701 մլրդ ՀՀ դրամ՝ 5.8%-ով գերազանցելով 2016 թվականի ցուցանիշը<sup>1</sup>:

2015-2016 թթ. ընթացքում փոփոխություններ են կատարվել նաև «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում, որոնց համաձայն բարձրացվել են երաշխավորված ավանդների սահմանաչափերը: Մասնավորապես, ֆիզիկական անձանց դրամային բանկային ավանդները երաշխավորվում են 10 միլիոն ՀՀ դրամի չափով, իսկ արտարժույթային ավանդները՝ 5 միլիոն դրամի չափով<sup>2</sup>: 2016 թվականի համեմատությամբ 2017 թվականին բանկերի ավանդների հաշվեկշիռը 9.9%-ով աճել է՝ կազմելով 2,556 մլրդ ՀՀ դրամ:

ՀՀ բանկային համակարգի 2017 թվականի զարգացումները մեծամասամբ պայմանավորված են կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործողություններով, որոնց հիմնական նպատակը բանկային համակարգի կայունության ապահովումն է:

Աղյուսակ 1-ի միջոցով ներկայացված են ՀՀ տարածքում գործող բանկերի առաջատար սասնյակի ֆինանսական ցուցանիշներն ու դրանց աճը 2016-2017 թթ. ընթացքում:

<sup>1</sup> [https://home.kpmg.com/content/dam/kpmg/am/pdf/2017/Armenian%20Banking%20Sector%20Overview\\_2017%20Q4\\_Arm.pdf](https://home.kpmg.com/content/dam/kpmg/am/pdf/2017/Armenian%20Banking%20Sector%20Overview_2017%20Q4_Arm.pdf).

<sup>2</sup> Տվյալները՝ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք՝ <https://www.cba.am/AM/SitePages/Default.aspx>.

**ՀՀ բանկերի առաջատար տասնյակի ֆինանսական  
ցուցանիշներն ու դրանց աճը<sup>1</sup>**

| Բանկեր        | Ակտիվներ<br>(մլն ՀՀ դրամ) |         | Վարկային պորտֆել <sup>2</sup><br>(մլն ՀՀ դրամ) |         | Պարտավորություն-<br>ներ (մլն ՀՀ դրամ) |         | Ավանդներ <sup>3</sup><br>(մլն ՀՀ դրամ) |         | Կապիտալ<br>(մլն ՀՀ դրամ) |        |
|---------------|---------------------------|---------|--|---------|---------------------------------------|---------|--|---------|--------------------------|--------|
|               | 2016                      | 2017    | 2016   | 2017    | 2016                                  | 2017    | 2016                                   | 2017    | 2016                     | 2017   |
| Ամերիա        | 719,363                   | 677,722 | 513,219  | 479,641 | 654,966                               | 607,781 | 414,609                                | 375,171 | 64,398                   | 69,941 |
| Հայֆինեսթրանկ | 404,413                   | 574,944 | 268,469  | 375,983 | 367,618                               | 535,828 | 261,334                                | 401,210 | 36,795                   | 39,116 |
| ԱՇԻԲ          | 548,410                   | 568,273 | 358,005  | 392,528 | 476,942                               | 501,664 | 297,676                                | 344,969 | 71,468                   | 66,609 |
| ԱԿԲԱ          | 283,272                   | 311,023 | 174,983  | 187,381 | 226,677                               | 250,806 | 135,309                                | 172,604 | 56,595                   | 60,217 |
| Ինկոբանկ      | 236,196                   | 277,842 | 160,155  | 173,066 | 192,731                               | 229,599 | 110,360                                | 140,774 | 43,465                   | 48,243 |
| Կոնվերսբանկ   | 190,993                   | 252,736 | 119,025  | 165,168 | 158,815                               | 216,736 | 139,680                                | 173,914 | 32,178                   | 36,000 |
| ՎՏԲ           | 232,672                   | 216,060 | 141,543  | 134,806 | 198,761                               | 175,351 | 161,316                                | 152,179 | 33,911                   | 40,710 |
| Արարարտ       | 215,560                   | 212,602 | 104,880  | 119,167 | 182,430                               | 177,319 | 107,122                                | 87,190  | 33,131                   | 35,283 |
| Էյ-Էս-Բի-Սի   | 215,161                   | 208,649 | 119,590  | 95,431  | 168,154                               | 169,663 | 149,833                                | 158,579 | 47,007                   | 38,986 |
| Ցոնիփոսկ      | 185,396                   | 203,221 | 118,627  | 135,285 | 150,553                               | 167,633 | 131,138                                | 133,882 | 34,843                   | 35,588 |

Վերջին տարիների ընթացքում ՀՀ բանկային համակարգում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով գործունեություն ծավալող 21 բանկերից մնացին 17-ը: Աղյուսակում ներկայացված տվյալներից կարելի է նկատել, որ բանկային համակարգի միանձնյա առաջատարը Ամերիաբանկն է: Անկախ այն հանգամանքից, որ 2017 թվականի ընթացքում գրեթե բոլոր ցուցանիշները նվազել են, բանկը գերազանցում է մրցակիցներին ներկայացված բոլոր ֆինանսական ցուցանիշների մասով: Ակնհայտ է, որ 2016 թվականի համեմատությամբ 2017 թվականին բանկերից 5-ի մոտ նվազել են ակտիվները: Վարկային պորտֆելի մեծությամբ 2-րդ հորիզոնականում Արդշինբանկն է: Բանկն առաջատար եռյակում է՝ ըստ ներկայացված բոլոր ցուցանիշների:

Moody's միջազգային վարկանիշային գործակալությունը բանկի 2017 թվականի վերջի ցուցանիշներից դատելով նշել է, որ Արդշինբանկը հանդիսանում է Հայաստանի համակարգային բանկերից մեկը: Moody's-ը վերահաստատել է բանկի վարկանիշները, բարձրացրել է դրանց հեռանկարը՝ «կայուն»-ից դարձնելով «դրական»: Էյ-Էս-Բի-Սի բանկը, որն ունեցել է վարկային պորտֆելի անկում, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությանը 55 միլիոն եվրո վարկ է տրամադրել: Պարտավորությունների աճ է գրանցվել բանկերից 7-ի մոտ: Դիտարկվող ժամանակահատ-

<sup>1</sup> Տվյալները վերցված են բանկերի միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից:

<sup>2</sup> Ներառում է վարկերը, ակրեդիտիվների, ֆինանսական վարձակալության (լիզինգ) և ֆակտորինգի գծով դեբիտորական պարտավորությունները:

<sup>3</sup> Ներառում են նաև հաճախորդների ընթացիկ հաշիվները:

վածում Հայքիզներանկը, Ակբա-Կրեդի Ագրիկոլ բանկը, Ինեկոբանկը, Կոնվերսբանկն ու Յունիբանկը աճ են գրանցել բոլոր ցուցանիշների մասով: Յունիբանկը հաջողությամբ անցել է SWIFT -ի ատեստավորումը: Ավանդների մասով պատկերը վատթարացել է բանկերից 3-ի մոտ: Կապիտալի աճ են գրանցել ներկայացված բանկերից 7-ը, որն իհարկե պայմանավորված է ԿԲ-ի կողմից նվազագույն կապիտալի մակարդակի բարձրացմամբ:

Վերլուծությունների արդյունքում կարելի է վստահորեն փաստել, որ ՀՀ ԿԲ-ի կողմից ձեռնարկած քայլերը տվել են իրենց դրական արդյունքները՝ մեծապես նպաստելով բանկային համակարգի կայունացմանն ու շուկայի վերածնունդին:

2016-2018 թթ. հեռանկարային զարգացման ծրագրերով ՀՀ առևտրային բանկերի նպատակներից կարելի է առանձնացնել հետևյալները<sup>1</sup>.

- ներգրավված միջոցների ծավալների ավելացում,
- ընդհանուր ակտիվների աճ,
- ընդհանուր կապիտալի ավելացում,
- հաշվեկշռային ցուցանիշների աճ:

2017 թվականի ընթացքում Ամերիաբանկն ու Հոլանդիայի զարգացման բանկը (FMO) կնքել են ԱՄՆ 30 միլիոն դոլարի վարկային պայմանագիր՝ ուղղված երիտասարդ ձեռներեցների ՓՄՁ-ների ֆինանսավորմանը, Արդշինբանկն էլ Սիթիբանկի և Ասիական զարգացման բանկի հետ ստորագրել է ԱՄՆ 25 միլիոն դոլարի առևտրի ֆինանսավորման պայմանագիր: Ինեկոբանկն էլ առաջնորդվելով իր առջև դրված նպատակներով Symbiotics հիմնադրամից միկրոֆինանսավորման նպատակով 9 միլիոն ԱՄՆ դոլար վարկային միջոցներ է ստացել: Հայէկոնոմբանկը ՓՄՁ-ների ֆինանսավորմանն ուղղելու նպատակով ԱՄՆ 10 միլիոնական դոլարի վարկային միջոցներ է ստացել համապատասխանաբար բեկզիական INCOFIN CVBA ներդրումային ընկերությունից և գերմանական DEG զարգացման ֆինանսավորման ընկերությունից:

Մրցակցության խստացման նման պայմաններում ՀՀ բանկային համակարգը դիմամիկ կերպով զարգանում է, իսկ համակարգում օրեցօր սրվող մրցակցությունը բանկերին ստիպում է գործունեությունը տեղափոխել որակական նոր հարթություններ:

<sup>1</sup> [https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/BizPlaN2016\\_%20Final%20%20Public25.07.pdf](https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/BizPlaN2016_%20Final%20%20Public25.07.pdf)

### ՏԱԹԵՎԻԿ ՎԱՉՁԲԵՆԻ ՇԱՅԻՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**Համառոտագիր:** Բանկային համակարգը ՀՀ ֆինանսական շուկայի ամենախոշոր ոլորտն է: Հողվածում ներկայացվել է խորհրդային իշխանության փլուզումից հետո Հայաստանում ժամանակակից բանկային համակարգի ձևավորման ու զարգացման պատմությունը: Ուսումնասիրվել են ՀՀ ԿԲ կողմից իրականացված փոփոխությունները, դրանց ազդեցությունները: Վերլուծվել են ՀՀ բանկային ոլորտը բնութագրող հիմնական ֆինանսական ցուցանիշները, ՀՀ տարածքում գործող բանկերի գրանցած արդյունքներն ու դրանց փոփոխությունները:

*Բանալի բառեր. բանկային համակարգ, բանկային գործունեություն,  
ֆինանսական ցուցանիշներ, ավանդներ, կապիտալ,  
բանկային ոլորտ:*

## ОБЩЕЕ ОПИСАНИЕ БАНКОВСКОГО СЕКТОРА АРМЕНИИ

### ТАТЕВИК ВАЗГЕНОВНА ШАГИНЯН

*младший научный сотрудник Института экономики имени М. Котаняна ИАН РА*

**Аннотация:** Банковская система является самым крупным сектором финансового рынка Армении. В статье представлена история формирования и развития современной банковской системы в Армении после распада советской власти. Были изучены изменения, осуществляемые Центральным банком, их воздействия. Проанализированы основные финансовые показатели, характеризующие банковский сектор Армении, результаты деятельности банков, действующих на территории Армении, и их изменения.

*Ключевые слова: Банковская система, банковская деятельность, финансовые показатели, депозиты, капитал, банковский сектор.*

## GENERAL OVERVIEW OF THE BANKING SECTOR IN THE REPUBLIC OF ARMENIA

TATEVIK VAZGEN SHAHINYAN

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The banking system is the largest sector of the financial market in the Republic of Armenia. The article presents the evolution of the modern banking system in Armenia upon the collapse of Soviet Union. The changes undertaken by the Central Bank and the impacts and or consequences of thereof have been studied. The main financial indicators characterizing the banking sector in the Republic of Armenia, the performance and the progress reported by the banks operating in the territory of the Republic of Armenia have been analyzed as well.

**Keywords:** *Banking system, banking activities, financial indicators, deposits, capital, banking sector.*

## ՔՆԱՐԻԿ ՎԱՆԵՐԻ ԶԱՆԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության

ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ

### ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՎՎԱՅՐԻ ԻՐԱՎԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրավաօրենսդրական դաշտը ներդրումային միջավայրի վրա ազդող կարևորագույն գործոններից է: Օրենքների և իրավական ակտերի հաճախակի փոփոխությունները կարող են անկայունություն մտցնել ներդրումային դաշտում՝ խոչընդոտելով նոր ներդրողների ներգրավմանը: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ իրավաօրենսդրական դաշտում չպետք է իրականացվեն բարեփոխումներ: Դիտարկենք ՀՀ ներդրումային միջավայրը պայմանավորող օրենսդրաիրավական դաշտի ներկա վիճակը և դրա հնարավոր ազդեցությունը ներդրումների ներգրավման վրա:

«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 31.07.94թ.: Ներդրողների համար նշված օրենքը սահմանում է մի շարք իրավունքներ: Դրանք են<sup>1</sup>

- «Ազգային ռեժիմ» օտարերկրյա ներդրողների և նրանց ներդրումների համար, որը բացառում է որևէ խտրականություն հոգուտ տեղական ներդրողների: Իրենց սեփականության, սեփականության իրավունքների (ներառյալ մտավոր սեփականության իրավունքների) և ներդրումային գործունեության հետ կապված օտարերկրյա ներդրողները գործում են այնպիսի իրավական ռեժիմում, որը չի կարող նվազ բարենպաստ լինել տեղական ձեռներեցների համար սահմանված ռեժիմից: Հայաստանն ունի ազատականացված արտաքին առևտրային ռեժիմ, որը ներառում է ներմուծման ժամանակ կիրառվող պարզեցված երկտարիֆային համակարգը (0% և 10%), չհարկվող արտահանումը, ինչպես նաև չկան առևտրի քանակական սահմանափակումներ: Ներմուծման, արտահանման և տեղական ապրանքների արտադրության համար լիցենզիաներ պահանջվում են միայն առողջապահական, անվտանգության և էկոլոգիական նկատառումներով: Չկան սահմանափակումներ ներմուծվող կանխիկ արժույթի հանդեպ:

- «Կայունության երաշխիք» (հայտնի է որպես «Պալիկի դրույթ»): Օտարերկրյա ներդրումները կարգավորող օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում օտարերկրյա

<sup>1</sup> «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ 31.07.94թ. ՀՕ-115 օրենք, հոդված 6, 7, 8, 9, 11, 15, 21:

ներդրողի ցանկությամբ կիրառվում է նախկինում գործող օրենսդրությունը:

- Օտարերկրյա ներդրումների ազգայնացումը և բռնագրավումն արգելված է: Առգրավումը, որպես բացառիկ միջոց, թույլատրվում է միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտակարգ դրության պայմաններում՝ դատարանի վճռով և լրիվ փոխհատուցմամբ:

- Օտարերկրյա ներդրողներն ունեն նյութական և բարոյական վնասների, ներառյալ բաց թողնված օգուտի դատական կարգով փոխհատուցման իրավունք, որոնք հասցվել են ՀՀ պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ՀՀ օրենսդրությանը հակասող գործողությունների, ինչպես նաև օտարերկրյա ներդրողի կամ օտարերկրյա ներդրումներով ձեռնարկության նկատմամբ նշված մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով:

- Օտարերկրյա ներդրողին և օտարերկրյա վարձու աշխատողներին իրավունք է տրվում և երաշխավորվում է ազատորեն արտահանել իրենց սեփականությունը, ներդրման արդյունքում ստացված շահույթը (եկամուտը) և այլ միջոցներ, որոնք օրինական կերպով ստացվել են որպես ներդրումների արդյունք կամ որպես աշխատանքի դիմաց վճար, կամ որպես սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված փոխհատուցում:

- Մաքսային արտոնություններ: Օտարերկրյա ներդրողներն ազատվում են մաքսատուրք վճարելուց, երբ ներմուծում են կանոնադրական կապիտալի համալրման համար նախատեսված գույք, ինչպես նաև սեփական արտադրության համար նախատեսված գույք՝ հումք, կիսաֆաբրիկատներ, լրակազմող իրեր, պահեստամասեր և այլն: Բացի այդ, նրանք կարիք չունեն ստանալու արտոնագրեր իրենց արտադրանքի, աշխատանքի և ծառայության արտահանման համար, եթե այլ բան չի նախատեսում օրենսդրությունը:

- Օտարերկրյա ներդրողները կարող են ներգրավվել բնական պաշարների շահագործման աշխատանքներում: Սա պետք է իրականացվի ՀՀ կառավարության կամ լիազորված մարմնի հետ ստորագրված կոնցեսիոն պայմանագրով:

- Ներդրումային վեճերի լուծումը: Սա հնարավոր է իրականացնել ներդրողների ազգային օրենսդրության կամ ընդունող երկրի օրենսդրության հիման վրա, ինչպես նաև միջազգային արբիտրաժի և տնտեսական վեճերը լուծող այլ մարմինների միջոցով: Լուրջ ձեռքբերում է հանդիսանում այն, որ առանձնացվել են տնտեսական դատարանները, որոնք մասնագիտանում են տնտեսական գործերի դատավարման մեջ: Ավելին,

Հայաստանը միացել և վավերացրել է «Պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի կարգավորման մասին» կոնվենցիան և հանդիսանում է Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ՆՎԿՄԿ) անդամ: Այն լրացուցիչ վստահություն է ներշնչում օտարերկրյա ներդրողներին՝ ապահովելով ներդրումային վեճերի արագ, արդյունավետ և որակյալ լուծում:

- Կրկնակի հարկման բացառումը: Սա գործում է միայն այն երկրների դեպքում, որոնց հետ ՀՀ-ն ունի կնքված համաձայնագիր: Փոխադարձ մեծածավալ ներդրումներ կատարող երկրների ընկերությունները հաճախ կնքում են կրկնակի հարկման բացառման համաձայնագրեր, որոնք հատկապես վերաբերում են օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների շահույթին: Ընկերությունը ներդրման երկրում վճարում է հարկի այն մասը, որը մայր երկրում չի գանձվել: Հարկ է նշել, որ միջազգային մակարդակով ներդրումային երաշխիքներով զբաղվում է Համաշխարհային բանկի բազմակողմ ներդրումային երաշխիքների գործակալությունը:

Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքը սահմանում է բարենպաստ պայմաններ ներդրողների համար:

2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «ՀՀ հարկային օրենսգիրքը», որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի և օրենսգրքով նախատեսված վճարների հետ կապված հարաբերությունները:

Նախքան ՀՀ հարկային օրենսգրքի ուժի մեջ մտնելը, գործում էր «Շահութահարկի մասին» օրենքը, որն ընդունվել է 27.11.97թ.: Այժմ, ինչպես և նախկին օրենքում, շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, իսկ ներդրումային ֆոնդերի համար՝ զուտ ակտիվների նկատմամբ 0.01 տոկոս դրույքաչափով (վերջինս ավելացել է 22.12.10 թ.-ին): Շահութահարկը ենթակա է վճարման մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը ներառյալ<sup>1</sup>:

ՀՀ-ում ոչ ռեզիդենտների կողմից հայաստանյան աղբյուրներից ստացած եկամտից շահութահարկը գանձվում է հետևյալ չափերով՝

- ապահովագրական հատուցումներ, վերաապահովագրական վճարներ և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ՝ 5 տոկոս,

<sup>1</sup> «ՀՀ հարկային օրենսգիրք» ՀՀ 01.11.16թ-ի ՉՕ-165-Ն օրենք, հոդված 125, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109017>.

- շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ, գույքը վարձակալության տալուց ստացած եկամուտ և այլ պասիվ եկամուտներ (բացի փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից), ինչպես նաև այլ հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ՝ 10 տոկոս (մինչև 29.12.2000թ.՝ 15 տոկոս):

Նախկինում շահութահարկի կանխավճարները իրականացվում էին յուրաքանչյուր եռամսյակ՝ նախորդ տարվա շահութահարկի մեծության 18,75 տոկոսի չափով: Ըստ 01.01.2018թ. ուժի մեջ մտած «ՀՀ հարկային օրենսգրքի», շահութահարկի կանխավճարները իրականացվելու են յուրաքանչյուր եռամսյակ՝ նախորդ տարվա շահութահարկի մեծության 20 տոկոսի չափով: Ներդրվել է նաև այլընտրանքային տարբերակ, որը ուժի մեջ է մտել 2017թ. հունվարի 1-ից, ըստ որի՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները կարող են ընտրել և շահութահարկի կանխավճարները կատարել նախորդ եռամսյակի ընթացքում ստացվող եկամուտների 2 տոկոսի չափով, եթե մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը ներառյալ ներկայացնեն հայտարարություն՝ շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակի վերաբերյալ՝:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ, համաձայն նոր օրենսգրքի, դրույքաչափերի հետ կապված դրական փոփոխություն է արձանագրվել շահութահարկի կանխավճարների այլընտրանքային տարբերակի մասով:

**«Եկամտահարկի մասին»** օրենքը ընդունվել է 30.12.97թ., սակայն ուժը կորցրած է համարվել և 30.12.10թ. ընդունվել է հաջորդ օրենքը, որը կոչվում է «Եկամտային հարկի մասին» օրենք և ուժի մեջ է մտել 01.01.13թ.: Այն իր մեջ պարունակում է որոշակի փոփոխություններ և լրացումներ: 01.01.13թ. ուժի մեջ մտած օրենքը սահմանում էր հետևյալ դրույքաչափերը<sup>2</sup>

- Մինչև 120 հազ. դրամ՝ հարկվող եկամտի 24,4 տոկոսը,
- 120 հազ.- 2 մլն. դրամ՝ 29280 դրամին գումարած 120 հազ. դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը,
- 2 մլն. դրամից ավելի՝ 518080 դրամին գումարած 2 մլն. դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը:

2018թ.-ին ընդունված ՀՀ հարկային օրենսգիրքը նախատեսում է եկամտահարկի վճարման մասով հետևյալ փոփոխությունները<sup>1</sup>.

<sup>1</sup> «ՀՀ հարկային օրենսգիրք» ՀՀ 01.11.16թ-ի ՀՕ-165-Ն օրենք, հոդված 135, 1 և 4 կետեր <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109017>.

<sup>2</sup> «Եկամտային հարկի մասին» ՀՀ 30.12.10թ-ի ՀՕ-246-Ն օրենք, հոդված 10 <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80486>.

- Մինչև 150 հազ. դրամը ներառյալ՝ 23 տոկոս,
- 150 հազ.-2 մլն. դրամը ներառյալ՝ 34500 դրամ՝ գումարած 150 հազ. դրամը գերազանցող գումարի 28 տոկոսը,
- 2 մլն. դրամից ավել՝ 552 500՝ գումարած 2 մլն. գերազանցող գումարի 36 տոկոսը:

Այսպիսով, եթե դիտարկենք այժմ գործող դրույքաչափերը և այն դրույքաչափերը, որոնք գործել են նախկինում, ապա կտեսնենք հետևյալ պատկերը՝

- 120 հազ. - եկամտահարկ (24.4%՝ 2018թ. առաջ) = 90720,
- 120 հազ. - եկամտահարկ (23%՝ 2018թ. հունվարի 1-ից) = 92400,
- 280 հազ.- եկամտահարկ (26%՝ 2018թ. առաջ) =209120,
- 280 հազ. - եկամտահարկ (23%՝ 2018թ. հունվարի 1-ից)= 209100,
- 290 հազ.- եկամտահարկ (26%՝ 2018թ. առաջ)=216520
- 290 հազ.- եկամտահարկ (23%՝ 2018թ. հունվարի 1-ից)=216300

Այսպես՝ տեսնում ենք, որ հատկապես շահում են 120 հազ.-280 հազ. դրամ աշխատավարձ ստացող անձինք, իսկ 280 հազ. դրամից ավել աշխատավարձ ստացող աշխատողների տեսանկյունից օրենքի փոփոխությունը շահավետ չէ:

Ուշագրավ է 2017թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած «ՀՀ հարկային օրենսգրքի» այն դրույթը, ըստ որի օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց շահաբաժինների մասով եկամտային հարկը հարկվելու է 10 տոկոսով, իսկ ՀՀ քաղաքացիների ստացած շահաբաժինների մասով եկամտային հարկը՝ 5 տոկոսով<sup>1</sup>: Այսինքն, սակարոգ է օտարերկրյա քաղաքացիների համար խոչընդոտ հանդիսանալ ՀՀ-ում գործունեություն ծավալելու համար:

«Ավելացված արժեքի մասին» օրենքը ընդունվել է 16.06.97թ.: Ավելացված արժեքի հարկը անուղղակի հարկ է, որը վճարվում է պետական բյուջե՝ ապրանքի ներմուծման, արտադրության, ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Օրենքով սահմանված է ԱԱՀ-ի երկու դրույքաչափ<sup>3</sup>

- 20% (եթե հարկի գումարը ներառված է ապրանքի կամ ծառայության գնի մեջ, ապա ԱԱՀ-ն հաշվարկվում է ապրանքների և ծառայու-

<sup>1</sup> «ՀՀ հարկային օրենսգիրք» ՀՀ 01.11.16թ-ի ՀՕ-165-Ն օրենք, հոդված 150  
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109017>.

<sup>2</sup> «ՀՀ հարկային օրենսգիրք» ՀՀ 01.11.16թ-ի ՀՕ-165-Ն օրենք, հոդված 150, 8-րդ կետ  
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109017>.

<sup>3</sup> «ՀՀ հարկային օրենսգիրք» ՀՀ 01.11.16թ-ի ՀՕ-165-Ն օրենք, հոդված 63  
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109017>.

թյունների ամբողջ արժեքի նկատմամբ 16.67% հաշվարկային դրույքաչափով),

- 0%, այսինքն՝ զրոյական դրույքաչափ (այս դրույքաչափը սովորաբար կիրառվում է ապրանքների կամ ծառայությունների արտահանման դեպքում, ինչպես նաև այն ապրանքների և ծառայությունների համար, որոնք ձեռք են բերվում Հայաստանում դիվանագիտական և նրանց հավասարեցված կազմակերպությունների կողմից պաշտոնական օգտագործման համար):

2018 թ. հունվարի 1-ից ըստ «ՀՀ հարկային օրենսգրքի» ԱԱՀ-ի մասով դիտվել են որոշակի փոփոխություններ<sup>1</sup>

- ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը մուտքագրվելու է միասնական հաշվին ՀՀ կառավարության սահմանած ընթացակարգով և ժամկետներում, եթե՝ հարկ վճարողը բավարարում է ՀՀ կառավարության կողմից սահմանած չափաբաժինները, և ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը կազմում է մինչև 20 մլն. ՀՀ դրամ,
- Մեքենա-սարքավորումների և հումքի ներմուծման դեպքում ԱԱՀ չի վճարվելու: ԱԱՀ վճարվելու է միայն դրանցով արտադրված ապրանքների իրացման դեպքում,
- Արտահանողների համար ԱԱՀ-ի հետ վերադարձը լինելու է 4 օրում, նախկին 90 օրվա փոխարեն:

**«Հաստատագրված վճարների մասին»** օրենքը ընդունվել է 22.07.98թ., որն իրենից ենթադրում է ԱԱՀ և շահութահարկը փոխարինող պարտադիր և անհատույց վճար: Հաստատագրված վճար իրականացնող են համարվում իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք իրականացնում են՝ ավտոտրանսպորտային գործունեություն, վիճակախաղերի կազմակերպումը, ավտոտրանսպորտային միջոցների գազայցման գործունեությունը<sup>2</sup>:

2017թ. հունվարի 1-ից գործում է **«Ինքնագրաված անձանց հարկային արտոնությունների մասին»** ՀՀ օրենքը, ըստ որի գործունեության որոշ տեսակների համար գործում են հարկային արտոնություններ<sup>3</sup>.

<sup>1</sup> «ՀՀ հարկային օրենսգրք» ՀՀ 01.11.16թ-ի ՀՕ-165-Ն օրենք, հոդված 348, 10-րդ կետ, հոդված 62, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109017>.

<sup>2</sup> «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ 22.07.98թ-ի ՀՕ-238 օրենք, հոդված 7 <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=87126>

<sup>3</sup> «Ինքնագրաված անձանց հարկային արտոնությունների մասին» ՀՀ 30.12.06թ. ՀՕ-261-Ն օրենք, հոդված 7: <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110550>.

1. Բնակչության պատվերով կատարվող՝
  - կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում,
  - հագուստի արտադրություն և նորոգում,
  - փայտյա իրերի պատրաստում, կահույքի և տան կահավորանքի նորոգում,
  - ոչ թանկարժեք զարդերի արտադրություն և նորոգում,
  - համակարգչային տեխնիկայի, հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում,
  - հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում,
  - տնտեսական և զեղազարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն,
  - այլ ճենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն,
  - թիթեղագործական գործունեություն և այլն:
2. Ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում,
3. Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման այլ դասընթացներ,
4. Լեզուների ուսուցման դասընթացներ,
5. Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ,
6. Պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն,
7. Մտեղծագործական գործունեություն,
8. Կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում,
9. Զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում և այլն:

Այսպիսով, վերոնշյալ փոփոխությունները ամփոփելով, կարող ենք գալ այն եզրակացության, որ 1998թ.-ից սկսած ՀՀ-ում օրենքներում փոփոխություններ իրականացնելը կրում է պարբերական բնույթ: Ինչը կարող է բերել ներդրողների մոտ անվստահության առաջացմանը: Մակայն, ուսումնասիրելով ներդրումային միջավայրի վրա ազդող օրենսդրական դաշտը, տեսնում ենք, որ որոշակի փոփոխություններ, այնուամենայնիվ,

դրական ուղղությամբ են իրականացվել: Հատկապես դրական փոփոխություններ են նկատվում «ՀՀ հարկային օրենսգրքի» ԱԱՀ-ի մասով և «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» ՀՀ օրենքում, և այս փոփոխությունները կարող են նպաստել նոր ներդրողների ներգրավմանը:

### ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՎԱՅՐԻ ԻՐԱՎԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

#### ՔՆԱՐԻԿ ՎԱԼԵՐԻԻ ԶԱԼԱԼՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ*

**Չամառոտագիր:** Հռվածում ներկայացված է ներդրումային միջավայրը պայմանավորող օրենսդրական դաշտի ներկա վիճակը և ազդեցությունը ներդրումների ներգրավման վրա: 1998թ.-ից սկսած ՀՀ ում կարծես ավանդույթ է դարձել օրենքներում փոփոխություններ իրականացնելը: Սակայն, ուսումնասիրելով ներդրումային միջավայրի վրա ազդող օրենսդրական դաշտը տեսնում ենք, որ որոշակի փոփոխություններ, այնուամենայնիվ, դրական ուղղությամբ են իրականացվել և կարող են նպաստել նոր ներդրողների ներգրավմանը:

*Բանալի բառեր. օտարերկրյա ներդրումներ, ներդրումային միջավայր, օրենսդրական դաշտ, տնտեսվարող սուբյեկտներ, կրկնակի հարկում, շահութահարկ, եկամտահարկ, հարկային արտոնություններ:*

### АНАЛИЗ ЗАКОНОДАТЕЛЬНО-ПРАВОВОЙ БАЗЫ ИНВЕСТИЦИОННОЙ СРЕДЫ РА

#### КНАРИК ВАЛЕРЬЕВНА ДЖАЛАЛЯН

*экономист первой категории Института Экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** В статье рассматривается нынешнее состояние законодательной базы, которая является составляющей инвестиционной среды, и ее влияние на привлечение инвестиций. С 1998 года в Армении стало традицией вносить изменения в законы. Однако, изучая законодательную базу, влияющую на инвестиционную среду, мы видим, что определенные изменения были сделаны в положительном направлении и могут способствовать привлечению новых инвесторов.

*Ключевые слова: иностранные инвестиции, инвестиционная среда, законодательная база, бизнес-субъекты, двойное налогообложение, налог на прибыль, подоходный налог, налоговые льготы.*

## **ANALYSIS OF THE LEGISLATION REGULATING THE INVESTMENT ENVIRONMENT IN THE REPUBLIC OF ARMENIA**

**KNARIK VALERI JALALYAN**

*First Level Economist, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article illustrates the existing legislation that regulates the investment environment, and the impact of thereof on attracting investments. Since 1998, initiating and undergoing changes in laws have become a tradition practiced in the Republic of Armenia. However, by reviewing the legislation that affects the investment environment one can conclude that some changes, nevertheless, have positively affected the investment climate and could help attract new investors.

**Keywords:** *Foreign investments, investment environment, legislative framework, legal entities, double taxation, profit tax, income tax, tax incentives.*

**ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍԱՏԱՐՈՂՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

Առևտրային բանկերի գործունեության ռեսուրսների առանցքը ներգրավվող ֆինանսական միջոցներն են, որոնք, համակցվելով ոչ նյութական ակտիվների և աշխատակազմի հետ, ձևավորում են անհրաժեշտ ռեսուրսային բազան: Բանկերը մեծ ուշադրություն են արժանացնում ֆինանսական ռեսուրսների կառավարման հիմնահարցերին, քանի որ ռեսուրսային բազայի ձևավորման ճկուն քաղաքականության կիրառումը գերակա դիրքեր է ապահովում ֆինանսավարկային շուկայի մրցակցային միջավայրում: Հետևաբար՝ ռեսուրսների ներգրավման քաղաքականության մշակումը թիրախավորվում է ոչ միայն առևտրային բանկերի գործունեության անընդհատության ապահովմանը, այլև շուկայում մրցակցային դիրքերի բարձրացմանը: Ֆինանսական շուկաներում մրցունակության ապահովման նպատակով բանկերը ձգտում են ոչ թե պարզապես ներգրավվող ռեսուրսների քանակական ավելացմանը, այլ ավելի շատ որակական բնութագրիչների բարելավմանը, որպեսզի հնարավորինս ապահովեն գործունեության առավել բարձր շահութաբերություն, ներդրողների շրջանում առանձնացող գրավչություն, զարգացման կայունություն և իրացվելիության բարձր մակարդակ<sup>1</sup>:

Այս առումով, բանկային գործունեության քննարկման ժամանակ արդեն իսկ կարևորվում է ռեսուրսատարողության գնահատումը, երբ պասիվները կառավարվում են ոչ միայն ռիսկերի կանխարգելման տեսանկյունից, այլև ֆինանսական շուկաներում բանկերի մրցակցային դիրքերի ապահովման նպատակադրումներով: Սակայն, մյուս կողմից, մասնագիտական գրականությունում «ռեսուրսատարողություն» տերմինը դեռևս լայն գործածություն չի ստանում և, մեր կարծիքով, մեկնաբանվում է ավելի նեղ ասպեկտով: Ռեսուրսատարողություն ասելով հիմնականում նկատի է առնվում առևտրային բանկերի պասիվների շրջանակը, որն ապահովում է առավել նվազ ռիսկային գործունեություն<sup>2</sup>:

<sup>1</sup> Годин А., Курилов Р., Ресурсная политика основа управления банков. //Вестник института экономики РАН, #2, 2009, стр. 38-42.

<sup>2</sup> Пронская Н.С., Гоголь Д.А., Оценка финансовой устойчивости банков с помощью математических моделей, //Финансы и кредит, # 8, 2010, стр. 26-29:

Սակայն, առևտրային բանկի կայուն զարգացման հայեցակարգը չպետք է կառուցել միայն ռիսկերի կառավարման բաղաճառականության սկզբունքներով, քանի որ, ունենալով Բազելյան սկզբունքներով սահմանված կապիտալի համարժեքության և իրացվելիության համապատասխան որակական բնութագրիչներ<sup>1</sup>, սակայն չձևավորելով մրցակցային ռիսկերին դիմակայելու ռեսուրսային որակական անհրաժեշտ մակարդակ, առևտրային բանկերը պարզապես դուրս են մղվում ֆինանսական շուկայից՝ չդիմանալով մրցակիցների ճնշումներին<sup>2</sup>:

Այս նկատառումով, մասնագիտական գրականությունում առաջարկվում է ՀՀ առևտրային բանկերում կենտրոնական բանկի կողմից սահմանված ֆինանսատնտեսական նորմատիվներին զուգահեռ կիրառել լրացուցիչ տնտեսական ցուցանիշներ, որոնք ոչ միայն կգնահատեն ճգնաժամերին դիմակայելու կազմակերպության ֆինանսական ռեսուրսները, այլև բանկի հետագա զարգացման հնարավորությունները (զծապատկեր 1): Բնականաբար, նման մոտեցումը պայմանավորված է ֆինանսական շուկայի զրբալացման ներկայիս տեմպերով, որը ստիպում է առևտրային բանկերին ֆինանսական շուկայում ներկայանալ ոչ միայն գործունեության կայունության, այլև գործարարության արդյունավետության տեսանկյունից:


Ընդ որում, դասական իմաստով բանկի կայուն զարգացումը պետք է դիտարկվի ոչ թե որպես բանկային գործունեության ֆինանսական բնութագրիչների ընդունելի ընթացիկ իրավիճակ, այլ որպես բանկի կողմից ֆինանսական ռեսուրսների ներգրավման և տեղաբաշխման այնպիսի որակական միջավայր, որը թույլ կտա տեսանելի ապագայում ապահովել մրցակցային տնտեսավարման ընթացք: Հենց այս առումով էլ մասնագիտական գրականությունում առաջարկվում է բանկային համակարգում կիրառել հեռանկարային կայունության ցուցանիշների համախումբ՝ ուղղված մրցունակության նպատակադրումների հասանելիության գնահատմանը<sup>3</sup>:

<sup>1</sup> ՀՀ ԿԲ խորհրդի 9 փետրվար 2007 թ. թիվ 39-Ն «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին որոշում:

<sup>2</sup> Корченко Ю. Е., Финансовые ресурсы банка в системе финансирования его деятельности, //Вестник Саратовского государственного социально-экономического университета, 2008, #3, стр. 44-46.

<sup>3</sup> Վարդապետյան Ն.Ս., Առևտրային բանկերի կայուն զարգացումը տնտեսական ցուցանիշներով գնահատելու մոտեցումները //Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա, #6 (156), 2013, էջ 38-39.

**Բանկային գործունեության կարգավորման տնտեսական ցուցանիշները**



**Գծապատկեր 1. Տնտեսական նորմատիվների դասակարգումը բանկի կայուն զարգացման տեսանկյունից<sup>1</sup>**

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին ՀՀ-ում գործող ոչ բոլոր առևտրային բանկերն են ապահովում շահույթի

<sup>1</sup> Վարդապետյան Ն.Ս., Առևտրային բանկերի կայուն զարգացումը տնտեսական ցուցանիշներով զնահատելու մոտեցումները // Չայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա, #6 (156), 2013, էջ 38-39:

կուտակման համարժեք դինամիկա (տե՛ս աղյուսակ 1): Նրան մի մասը, շահույթի կուտակումները ուղղորդում է նորարարական միջավայր, իսկ մյուս մասը ամրապնդում է ֆինանսական կայունության պաշարը:

*Աղյուսակ 1*

**Շահույթի կուտակման դինամիկան ՀՀ առևտրային բանկերում (%)<sup>1</sup>**

|    | Բանկեր               | Աճ/անկում<br>31.12.16 | Աճ/անկում<br>31.12.15 | Աճ/անկում<br>31.12.14 |
|----|----------------------|-----------------------|-----------------------|-----------------------|
| 1  | Ամերիաբանկ           | 23,89                 | 59,69                 | 7,56                  |
| 2  | Ինեկոբանկ            | 36,20                 | 45,86                 | 46,66                 |
| 3  | Արդշինբանկ           | -74,16                | 183,76                | 45,58                 |
| 4  | Ակբա-կոնեդիտ Ազրիկոլ | 205,18                | 13999,54              | 1718,93               |
| 5  | Անեյիք Բանկ          | 282,15                | 1882,92               | 1172,97               |
| 6  | Արմավիսբանկ          | 12,29                 | 97,90                 | 73,22                 |
| 7  | Կոնվերս Բանկ         | 131,70                | 646,45                | 75,81                 |
| 8  | Արցախբանկ            | 36,34                 | -53,24                | 311,40                |
| 9  | Արարատ բանկ          | 89,06                 | 118,73                | -27,56                |
| 10 | Հայբիզնեսբանկ        | 23,22                 | 45,88                 | -47,39                |
| 11 | Մեյլաթ բանկ          | 73,08                 | 162,56                | 707,46                |
| 12 | Արմէկոնոմ բանկ       | 162,45                | 244,88                | 89,69                 |
| 13 | Եվոկա բանկ           | -2,17                 | 3,41                  | -3,12                 |
| 14 | Բիբլոս Բանկ Արմենիա  | 515,57                | 130,23                | 158,77                |
| 15 | Յունիբանկ            | 173,90                | -33,59                | -38,49                |
| 16 | ՎՏԲ-Հայաստան Բանկ    | -53,35                | 13,49                 | -69,01                |
| 17 | HSBC Բանկ Հայաստան   | 19,11                 | -223,76               | -220,95               |
|    |                      | 15,56                 | 46,49                 | 87,27                 |

Այս առումով, բանկային համակարգում ռեսուրսատարողունակությունը մեր կողմից ընկալվում է որպես ֆինանսական ռեսուրսների ձևավորման որակական այնպիսի մակարդակ, որի դեպքում, կայունությունից բացի, ապահովվում է նաև գործունեության մրցունակությունը: Հետևաբար, արդյունավետ ռեսուրսատարողություն ասելով պետք է հասկանալ ֆինանսական ներգրավումների կազմի և կառուցվածքի որակական նոր մակարդակ, որը իր մեջ ներառում է բանկի մրցունակ գործունեության իրատեսական հնարավորություններ: Այս դեպքում արդեն առևտրային բանկերի ֆինանսական ռեսուրսները ներկայացվում են ոչ միան որպես

<sup>1</sup> Экспресс-рэкинг банков Армении, // Арминфо, #93, 24.01.2018.

դրամական միջոցների շրջանակ<sup>1</sup>, որոնք ուղղորդվում են բանկային կայուն գործունեության ապահովմանը և ձևավորում վերջինիս համար անհրաժեշտ ու բավարար ակտիվներ, այլև ռեսուրսային բազան գնահատվում է ըստ մրցունակության աստիճանի բարձրացման նպատակայնության: Ուստի, կառավարման արդյունավետության տեսանկյունից ռեսուրսատարողունակության գնահատման հիմքում պետք է դնել ոչ միայն ներգրավվող ֆինանսական միջոցների բավարար և անհրաժեշտ քանակը, այլ ներգրավման աղբյուրների որակը: Ներկայումս անգամ խոշոր առևտրային բանկերը, որոնք տիրապետում են համեմատաբար խոշոր ֆինանսական միջոցների, չեն կարողանում մրցակցային ճկունություն ցուցաբերել միջին բանկերի նկատմամբ, որոնք օպտիմալացրել են իրենց ֆինանսական ռեսուրսների փոքրածավալ կառուցվածքը և ստեղծել ֆինանսական միջոցների հավաքագրման գրավիչ միջավայր:


Ներկայումս առևտրային բանկերում արդիական է համարվում ֆինանսական ռեսուրսների դիվերսիֆիկացման շրջանակի ընդլայնումը, համեմատաբար էժան և հուսալի ռեսուրսային աղբյուրների որոնումը ինչպես նաև ռեսուրսային կայուն բազայի ապահովումը<sup>2</sup>: Այս առումով, կարևորվում է ռեսուրսների ներգրավման գրավչության մթնոլորտի ապահովումը, որին ձգտելիս առևտրային բանկերը պետք է կիրառեն ճկուն մարտավարական և ռազմավարական քաղաքականություն՝ հաշվի առնելով կառավարման թե՛ ներքին, և թե՛ արտաքին միջավայրի վրա ներազդելու ազդակները (տե՛ս գծապատկեր 2):

Առևտրային բանկերի ռեսուրսային բազայի կայունության նպատակով նպատակահարմար ենք համարում ֆինանսական ինովացիոն գործիքների կիրառման դեպքում կիրառել հարկային զիջումներ: Այսպես, ներկայումս «երկար փողերի» ձևավորման գործընթացում առանցքային է համարվում հիփոթեքային ակտիվների արժեթղթավորումը, որը ՀՀ-ում իրականացվում է մասնագիտացված հիմնադրամի միջոցով («Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ I»): ՀՀ օրենսդրությունն անդրադառնում է բանկերի կողմից թողարկվող արժեթղթերի գրավչության նշանակությանը, նշելով, որ գրավչության միջոցը չպետք է վտանգի

<sup>1</sup> Վարդապետյան Ն.Ս., Բանկի իրացվելիության նորմատիվները և դրանց դերը բանկի ֆինանսական կայունության ապահովման գործընթացում //Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, հանրապետական գիտաժողովի կյուրթեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 2011, էջ 144-149:

<sup>2</sup> Нетерина Е.А., Солдатова Е.В., Клиенториентированный подход к управлению коммерческим банком, //Финансы и кредит, #7, стр. 16-19, 2012.

ներդրողների շահերը<sup>1</sup>, սակայն հարկային քաղաքականությունը դեռևս չի օժանդակում ֆինանսական ռեսուրս հանդիսացող պարտատոմսերի վաճառքի խրախուսմանը՝ սահմանելով հարկման դրույքաչափերի որոշակի արտոնություններ:




**Գծապատկեր 2. Ֆինանսական ռեսուրսների ներգրավման գրավչության միջավայրի ապահովումը առևտրային բանկերում<sup>2</sup>**

Մյուս կողմից, եթե Հարկային օրենսգրքով սահմանվում են հարկային արտոնություններ արժեթղթավորող հիմնադրամի համար, ապա առևտրային բանկերին ակտիվների արժեթղթավորման հենքով պարտատոմսերի վաճառքից ստացվող եկամուտների գծով շահութահարկի արտոնություններ չեն տրամադրվում<sup>3</sup>: ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված է նաև, որ «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 0,01% դրույքաչափով<sup>4</sup>:

<sup>1</sup> «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենք, 2008, հոդված 32, կետ 2:  
<sup>2</sup> Կազմվել է հեղինակի կողմից:  
<sup>3</sup> ՀՀ Հարկային օրենսգիրք, հոդված 126:  
<sup>4</sup> ՀՀ Հարկային օրենսգիրք, հոդված 125, կետ 2:

Առևտրային բանկերի ռեսուրսների տեղաբաշխման գրավչության աստիճանը կբարձրանա նաև այն դեպքում, երբ հարկային արտոնություններ սահմանվեն լիզինգային պայմանագրերի, կրթական վարկերի տրամադրման, միկրովարկերի տեղաբաշխումների գծով, որոնք կնպաստեն ֆինանսական միջոցների տեղաբաշխումների դիվերսիֆիկացման ընդլայնմանը և նոր որակ կհաղորդեն ռեսուրսային բազայի տարողունակության ձևավորմանը:

Բանկային գործունեության ռեսուրսատարողունակության որակի վրա իր նշանակալից ազդեցությունն է թողնում մրցակցային տոկոսային մարժայի կիրառումը: Շահույթը մեծացնելու ակնկալիքներով առևտրային բանկերը ձգտում են ընդլայնել տոկոսային մարժայի սահմանները (տոկոսային ծախսերի գծով՝ դեպի ձախ, իսկ տոկոսային եկամուտների գծով՝ դեպի աջ):



Սակայն բանկի գերշահույթներ ստանալու «սխառժակը» զսպում է շուկայական մրցակցային միջավայրը: Եթե առևտրային բանկերը ներգրավվող միջոցների տոկոսային ծախսը տեղափոխում են դեպի ձախ, կորցնում են արտաքին գործընկերներից (ավանդատուներ, ներդրողներ, վարկատուներ) ֆինանսական ռեսուրսների բազայի ձևավորման գրավչությունը, քանի որ վերջիններս կորցնում են ակնկալվող եկամուտները, իսկ բանկը, իր հերթին, կորցնում է ֆինանսական ռեսուրսների ձևավորման աղբյուրներ: Մյուս կողմից, եթե առևտրային բանկերի կողմից տեղաբաշխվող միջոցների տոկոսային եկամտի դրույքաչափն է բարձրանում (տոկոսային մարժայի սահմանը մեծանում է՝ եկամտային դրույքաչափը տեղափոխելով դեպի աջ), ապա վարկառուները չեն ցանկանում բարձր տոկոսներով վարկ վերցնել և դիմում են այլ բանկերի:

Այս առումով կարևորվում է առևտրային բանկերի կողմից ներգրավվող և տեղաբաշխվող ֆինանսական ռեսուրսների մրցակցային դրույքաչափերի որոշումը, երբ բանկը սահմանում է ռեսուրսատարողունակության կոնկրետ շրջանակ և շուկայական միջավայրին համահունչ տոկոսային մարժա: Այսպես, եթե հաջորդ տարվա համար բանկը նպատակադրվում է տեղաբաշխել 320 մլն դրամի վարկ և ներգրավել առևժազկ 15%-ով ավելի ռեսուրսներ՝ սահմանելով տոկոսային մարժան 6% և

ակնկալվող տոկոսային եկամուտը 15 մլն դրամ,<sup>1</sup> ապա տեղաբաշխվող և ներգրավվող ռեսուրսների մրցակցային դրույքաչափերը (համապատասխանաբար X և Y ) կկազմեն երկու անհայտով ստորև հավասարումների համակարգի արմատները.

$$\begin{cases} x = y - 0,06 \\ 320y - 320.1,15.x = 15 \end{cases} \quad \begin{cases} y = 0,1475 \\ x = 0,0875 \end{cases}$$

Հետևաբար, նախատեսվող շահույթի և տոկոսային մարժայի պայմաններում առևտրային բանկը ռեսուրսատարողության որակական կազմի բարելավման ուղղությամբ ներգրավվող ֆինանսական միջոցների համար կսահմանի 8.75%, իսկ տեղաբաշխվող միջոցների համար՝ 14,75% մրցակցային դրույքաչափ:

Առևտրային բանկերի ռեսուրսային բազայի ձևավորման կարևորագույն աղբյուր են հանդիսանում հիմնադիրների կողմից կատարվող ֆինանսական ներարկումները: Սակայն, հիմնադիրները, ձգտելով բարձրացնել բաժնետոմսերի գրավչությունը և շահաբաժինների հատույցը, «գոհաբերում են» գործարարության զարգացման ֆինանսական հնարավորությունները: Ուստի, մի կողմից, հիմնադիրները փորձում են մեծացնել վճարվող շահաբաժինները, իսկ մյուս կողմից՝ բանկի մենեջմենթը ձգտում է ստացված շահույթը հնարավորինս ուղղորդել բանկային գործունեության ընդլայնմանը: Հետևաբար, անհրաժեշտություն է ձևավորվում առևտրային բանկերի ռեսուրսատարողությունը ձևավորել փոխզիջումային տարբերակով, ֆինանսական ռեսուրսների կազմն ու կառուցվածքը որոշելիս վարչական աշխատակազմի և հիմնադիրների շահերի ներդաշնակեցման ճանապարհով:

Ներտնտեսական շահերի փոխզիջումային հենքով ֆինանսական ռեսուրսների բազայի ձևավորումը մասնագիտական գրականությունում քննարկելիս բերվում են մի շարք սահմանափակումներ: Այս դեպքում առանցքային քննարկման առարկա է դառնում զուտ շահույթը, որը ձևավորվում է որոշակի սահմաններում՝ բավարարելով գործարարության տարբեր շահառուների նպատակադրումները:

Այսպես, առևտրային բանկի մենեջմենթը նպատակադրում է սահմանել տոկոսային ծախսերի փոխհատուցման առավելագույնը 2.0 գործակից, իսկ հիմնադիրները հակադարձում են՝ պնդելով, որ շահաբաժինների փոխհատուցման գործակիցը չպետք է փոքր լինի 3.5 գործակցից: Գործարարության ընդլայնման նպատակով բանկի խորհրդի նախագահը

<sup>1</sup> Խաչատրյան Ն., Հանրամատչելի տնտեսագիտություն, «Էդիթ Պրինտ», Երևան, 2017, էջ 98:

առաջադրում է գործարարության զարգացման համար ֆինանսական ռեսուրսների ապահովման նպատակով ինքնաբավարարության ցուցիչի առնվազն 45% հասանելիություն<sup>1</sup>: Եթե առևտրային բանկը նախատեսում է հաջորդ տարի ունենալ ֆինանսական արդյունքների ձևավորման հետևյալ պատկերը (մլն դրամ)՝

|                     |   |           |
|---------------------|---|-----------|
| տոկոսային ծախսեր    | - | 120 000   |
| տոկոսային ծախսեր    | - | (110 000) |
| ոչ տոկոսային ծախսեր | - | (8 000)   |
| շահութահարկ         | - | (400)     |
| զուտ շահույթ        | - | 1 600     |
| շահաբաժին           | - | (1 000)   |
| մնացորդային շահույթ | - | 600       |

ապա զուտ շահույթի սահմանները, որոնք փոխզիջումային միջավայր կձևավորեն ռեսուրսատարողունակության շրջանում, կորոշվեն հետևյալ անհավասարությունների համակարգով.

$$\left\{ \begin{array}{l} (\text{զուտ շահույթ} + 400 + 8000)/8000 < 2.0 \\ (\text{զուտ շահույթ}) / 1\,000 < 3.5 \\ (600 / (\text{զուտ շահույթ} + 1000)) > 0,45 \end{array} \right. \quad \left\{ \begin{array}{l} \text{զուտ շահույթ} < 7\,600 \\ \text{զուտ շահույթ} < 3\,500 \\ \text{զուտ շահույթ} > 555.5 \end{array} \right.$$

Այսպիսով, առևտրային բանկերում ֆինանսական ռեսուրսատարողության գնահատումը կառավարման արդյունավետության տեսանկյունից առաջարկում ենք իրականացնել հետևյալ ուղղություններով.

Առաջին. պասիվները անհրաժեշտ է կառավարել ոչ միայն ռեսուրսաբավության տեսանկյունից՝ դրանով մեղմելով բանկային գործունեության ռիսկերի ձևավորման կանխարգելումը, այլև իրականացնել կառավարչական որոշումներ՝ ուղղված ֆինանսական ռեսուրսների որակական կազմի բարելավմանը, մրցակցային տոկոսային մարժայի ձևավորմանը, տնտեսական ակտիվության և եկամտաբերության բարձրացմանը:

Երկրորդ. ֆինանսական ռեսուրսների ձևավորման գործընթացը պետք է կազմակերպել առևտրային բանկերի կառավարման տարբեր սուբյեկտների շահերի փոխզիջումային տարբերակների հենքով՝ բանկային գործունեության ռեսուրսային աճի հնարավորությունների օգտագործման գծով կառավարչական որոշումների ընտրություն իրականացնելով բանկի մրցունակության աստիճանի բարձրացման, ռեսուրսների ներգրավման

<sup>1</sup> Գևորգյան Զ., Ֆինանսական վերլուծության խեղիքներ, «Էդիթ Պրինտ», 2012, էջ 12-14:

արդյունավետ քաղաքականության իրականացման և շահաբաժինների բաշխման գրավչության ապահովման միջև:

## ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍԱՏԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՋԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

### ՄԻՔԱՅԵԼ ՍԵԴՐԱՎԿԻ ԶԱՎԱԴՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթրակյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

**Չամառոտագիր:** Մրցակցային գործունեության պայմաններում առևտրային բանկերն առավելապես շահագրգռված են ներգրավված ֆինանսական ռեսուրսների շրջանակների ընդլայնմամբ ֆինանսական կայունության բարելավման մեջ: Սակայն ներկայիս շուկայական պայմանները պահանջում են առևտրային բանկերի ֆինանսական ռեսուրսների ոչ միայն քանակական, այլև որակական բնութագրիչների բարելավում: Հնդվածում առաջարկվել են ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետության գնահատման եղանակներ՝ հիմնված առևտրային բանկերի մրցակցային դիրքերի բարելավման տեսանկյան վրա:

*Բանալի բառեր. կառավարման արդյունավետություն, ֆինանսական ռեսուրսներ, ֆինանսական շուկա, առևտրային բանկի մրցունակություն:*

## ПОДХОДЫ К ИЗМЕРЕНИЮ ЭФФЕКТИВНОСТИ РЕСУРСОЕМКОСТИ БАНКОВСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

### МИКАЕЛ СЕДРАКОВИЧ ДЖАВАДЯН

*аспирант Института экономики им. М. Котаняна ІІАІІ РА*

**Аннотация:** В условиях конкурентной деятельности коммерческие банки больше всего заинтересованы в улучшении финансовой устойчивости, путем расширения круга вовлеченных финансовых ресурсов. Однако нынешние условия финансового рынка требуют улучшения не только количественного, но и качественного состава финансовых ресурсов коммерческих банков. В статье предлагаются пути оценки эффективности управления финансовыми ресурсами с позиции улучшения конкурентности коммерческих банков.

**Ключевые слова:** эффективность управления, финансовые ресурсы, финансовый рынок, конкурентоспособность коммерческого банка.

## APPROACHES TO MEASURING THE EFFICACY OF RESOURCE-INTENSITY OF THE BANKING ACTIVITY

**MIKAEL SEDRAK JAVADYAN**

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** In a competitive environment, commercial banks are mostly interested in ensuring financial sustainability with respect to increasing the number of sources to attract financial resources. However, the current level of sophistication of the financial market requires not only improvement of quantitative, but also qualitative characteristics of the financial resources of commercial banks. The article proposes methods for estimating the efficacy of the financial resource management that rely on the prospects of improving the competitive position of commercial banks.

**Keywords:** *Management efficacy, financial resources, financial market, competitiveness of the commercial bank.*

## ԱՆՈՒՇ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՐԳՍՅԱԼ

22 ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, սուպիրանտ

### ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՐԳՎՎՈՐՈՒՄԸ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Հուսալի բանկային և ֆինանսական համակարգը յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման և կայունության ապահովման անհրաժեշտ նախապայման է: Միայն հասարակության կողմից վստահության պայմաններում բանկը կարող է իր առջև դրված խնդիրները և ապահովել իր ռազմավարական նպատակների իրականացումը: «Ռիսկ» եզրույթի առաջացումը սերտորեն կապված է անորոշության և ասիմետրիկ տեղեկատվության հետ, որն առաջանում է շուկայի սուբյեկտների կողմից բազմակողմ գործունեության արդյունքում:

Առևտրային բանկերի անհաջողությունների մեծ մասը պայմանավորված է բանկային ռիսկերի կառավարման նկատմամբ ոչ ճիշտ մոտեցումներով: Իրենց գործունեության ընթացքում բանկերը պետք է կարողանան սահմանել ռիսկայնության և շահութաբերության օպտիմալ մակարդակ, որը թույլ կտա ապահովել նախատեսված ցուցանիշների կատարումը՝ խուսափելով ռիսկերի թույլատրելի մակարդակի զերագանցումից:

1980-ականներից սկսած ֆինանսական շուկաներում տեղի ունեցող արագընթաց նորարարական գործընթացները և ֆինանսական հոսքերի միջազգայնացումը անճանաչելիության աստիճանի փոխեցին բանկային գործունեությունը: Տեխնոլոգիական առաջընթացը և պետության կողմից կարգավորման փոփոխությունները նոր հնարավորություններ ստեղծեցին բանկերի համար, ինչպես նաև ուժեղացրին բանկերի միջև մրցակցությունը: Միջազգային ֆինանսական շուկաների աճը և ֆինանսական գործիքների ավելի մեծ բազմազանությունը բանկերին ֆինանսավորման ավելի լայն հնարավորություններ ընձեռեցին, աճեցին նոր ծառայությունների մատուցման և բանկային նոր ծառայությունների ստեղծման հնարավորությունները:

Ներկայումս այս փոփոխությունների տեմպը չի դանդաղում, քանի որ բանկերն անընդհատ ներգրավվում են նոր գործիքների, ծառայությունների և ծառայությունների ստեղծման մեջ, իսկ ավանդական բանկային գործունեությունը (ավանդների ներգրավման հիման վրա փոխառությունների տրամադրումը) դարձել է բանկային գործունեության միայն

մի մասը, որն ամենևին ամենաշահութաբերը չէ: Տեղեկատվության վրա հիմնված գործունեությունը, ինչպիսիք են ֆինանսական շուկաներում առևտուրը և միջնորդավճարների միջոցով եկամտի ստեղծումը, բանկերի շահութաբերության կարևորագույն աղբյուր են հանդիսանում:

Բանկային գործունեության հաջողության համար անհրաժեշտ է, որ ռիսկերը լինեն խելամիտ, վերահսկելի և գտնվեն բանկի ֆինանսական հնարավորությունների սահմաններում: Ակտիվները պետք է ունենան իրացվելիության բավարար մակարդակ, որը թույլ կտա ծածկել ծախսերը, վնասները և միջոցների ցանկացած արտահոսք՝ միաժամանակ ապահովելով բաժնետերերի համար ընդունելի շահույթի չափ: Այս նպատակների իրականացումն ընկած է բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության հիմքում:

Իրենց գործունեության ընթացքում բանկերը ենթարկվում են մի շարք ռիսկերի: Գրականության մեջ գոյություն ունեն ռիսկերի դասակարգման տարբեր մոտեցումներ, որոնք, ընդհանուր առմամբ, կարելի է դասակարգել 3 խմբի՝ ֆինանսական, գործառնական և արտաքին միջավայրի:

1. Ֆինանսական ռիսկերն ընդգրկում են հաշվեկշռային, կապիտալի համարժեքության, վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արժույթային ռիսկերը:
2. Գործառնական ռիսկը սահմանվում է որպես արտաքին իրադարձությունների կամ ներքին գործընթացների, համակարգերի և մարդկանց ոչ ճշգրիտ կամ սխալ գործողությունների արդյունքում առաջացող կորստի ռիսկ, որը ներառում է իրավական ռիսկը, սակայն չի ընդգրկում ռազմավարական և հեղինակության ռիսկը<sup>1</sup>:
3. Արտաքին միջավայրի ռիսկերը կապված են բանկի գործարար միջավայրի հետ, ներառյալ մակրոտնտեսական և քաղաքական խնդիրները, պետական կարգավորումները, տարերային աղետները, ֆինանսական ենթակառուցվածքը, բանկային ճգնաժամն ու դրա տարածումը:

Բանկերի կողմից ակտիվների և պարտավորությունների կառավարման գործընթացում առաջնահերթ է իրացվելիության ռիսկի կառավարումը: Իրացվելիության տեսանկյունից բանկի ակտիվների կառուցվածքը պետք է կազմված լինի այնպես, որ ապահովի առավելագույն շահութաբերություն իրացվելիության անհրաժեշտ մակարդակի պայմաններում և

<sup>1</sup> Basel Committee on Banking Supervision. International Convergence of Capital Measurement and Capital Standards. A Revised Framework. June 2004, BIS p. 137.

նվազեցնի իրացվելիության ռիսկը՝ ֆինանսավորման աղբյուրների և ծավալների դիվերսիֆիկացման միջոցով:

Իրացվելիությունը բանկի ունակությունն է ժամանակի ցանկացած պահին ներգրավել միջոցներ և կատարել իր պարտավորությունները, երբ գալիս է դրանց վճարման ժամանակը առանց անթույլատրելի կորուստներ կրելու: Բանկի իրացվելիությունը նշանակում է, որ բանկը կամ ունի իրացվելի միջոցների անհրաժեշտ ծավալը, կամ կարող է տվյալ պահին դրանք ներգրավել խելամիտ զեռով ակտիվների վաճառքի կամ փոխառությունների ներգրավման միջոցով:

Ջ.Ֆ. Մարշալն ու Վ.Կ.Բանսալն առանձնացնում են իրացվելիության երկու տարատեսակ: Առաջին տեսակը կապված է գործողության ժամկետների հետ. այս դեպքում ակտիվը իրացվելի է համարվում, եթե դրա գործողության ժամկետն ավարտվում է շատ կարճ ժամանակահատվածում: Իսկ երկրորդ տեսակը կապված է ակտիվի շուկայում շրջանառելիության հետ. ակտիվը հանդիսանում է իրացվելի, եթե այն կարող է հեշտությամբ իրացվել երկրորդային շուկայում՝ առանց գնի էական կորստի: Այլ հավասար պայմաններում՝ ցածր իրացվելի ակտիվը ունի ավելի բարձր եկամտաբերություն, քան առավել իրացվելի ակտիվը: Այստեղ էլ առաջանում է իրացվելիության և եկամտաբերության միջև հավասարակշռվածության խնդիրը<sup>1</sup>:

Տարբերում են բանկի իրացվելիության ստատիկ և դինամիկ կողմեր<sup>2</sup>.

1. Ստատիկ կողմը բնորոշում է բանկի իրացվելիությունը որոշակի ամսաթվի դրությամբ և կախված է այն հանգամանքից, թե արդյոք տվյալ պահին առկա են բավականաչափ բարձր իրացվելի միջոցներ ցպահանջ պարտավորությունների մարման համար: Այս տեսանկյունից բանկի իրացվելիությունն ասելով՝ հասկանում ենք նրա ունակությունը կատարել իր պարտավորությունները ժամանակի կոնկրետ պահին ունենալով բավականաչափ կանխիկ և անկանխիկ դրամական միջոցներ:
2. Դինամիկ կողմն ավելի բարդ է և ընդգրկում է նաև բանկի իրացվելիության պահպանումը ապագայում: Այս տեսանկյունից բանկի իրացվելիությունը ներառում է նրա ունակությունը պահպանել իր սեփական արժեքը, ինչի շնորհիվ բանկը պահպանում է իր պարտավորությունները ժամանակին մարելու ունակությունը ապագայում: Իրացվելիության կառավարումը բանկային կարևորագույն գործա-

<sup>1</sup> Маршалл, Дж. Ф. Бансал К.В. Финансовая инженерия: Полное руководство по финансовым нововведениям [пер. с англ./ Инфра-М, 1998 стр. 533,534.

<sup>2</sup> Коробова Г.Г. Банковское Дело Экономист, Москва 2006 148-152.

ռույթ է, ինչպես նաև ակտիվների և պարտավորությունների կառավարման գործընթացի անբաժան մաս: Անկախ ռիսկի տեսակից իրացվելիության կարգավորումը նույնքան կարևոր է, որքան կապիտալի բավարարության կարգավորումը: Դրա կարգավորումը պետք է բանկին իրացվելիության բոլոր հնարավոր ռիսկերի բացահայտման և կառավարման արդյունավետ միջոցների ստեղծման հնարավորություն տա:

Իրացվելիության ռիսկը կարող է լինել.

- համակարգային ծագման, երբ առկա է ԿԲ-ից կամ միջբանկային շուկայից միջոցների ներհոսքի դեֆիցիտ՝ պայմանավորված կարգավորող մարմնի գործողություններով կամ շուկայի կտրուկ տատանումներով,
- մասնավոր ծագման, երբ ֆինանսավորման հնարավորությունները սահմանափակ են, օր. տվյալ բանկի վարկանիշի վերաբերյալ շուկայի կողմից բացասական ընկալման պատճառով,
- տեխնիկական, պայմանավորված ակտիվների և պարտավորությունների կառավարմամբ, երբ ռիսկն առաջանում է վճարումների կառուցվածքում անհամապատասխանության հետևանքով:

Իրացվելիության ռիսկի վրա ազդում են մի շարք գործոններ, որոնցից են.

- բանկային ակտիվների որակը (պորտֆելում չաշխատող ակտիվների զգալի ծավալը, ռեզերվներով դրանց ոչ բավարար ապահովվածությունը նվազեցնում է իրացվելիության մակարդակը),
- ակտիվների տարբերակումը, որի ցուցանիշներն են հանդիսանում ակտիվների կառուցվածքն ըստ ներդրումների հիմնական ուղղությունների, վարկային ներդրումների, արժեթղթերի պորտֆելի կառուցվածքը, արժույթների կառուցվածքը, որոնցով բանկն իրականացնում է արժուրային գործարքներ, թղթակից բանկերի կառուցվածքը և այլն
- բանկի սեփական կապիտալի չափը, որը հանդիսանում է ակտիվների ռիսկերի կլանման և հաճախորդների միջոցների երաշխավորության գլխավոր աղբյուրը,
- պարտավորությունների կայունությունը. կայուն ավանդների տեսակարար կշռի աճը նվազեցնում է իրացվելի միջոցների նկատմամբ բանկի պահանջարկը,
- արտաքին ֆինանսավորումից կախվածությունը. միջբանկային վարկավորման ոչ մեծ ծավալները և ոչ բարձր տոկոսադրույքը բացասական ազդեցություն չեն ունենում բանկի իրացվելիության վրա, ընդհակառակը, հնարավորություն են տալիս վերացնել միջոցների ան-

բավարարությունը առանց զգալի ծախսումների: Սակայն, եթե բանկի կողմից ներգրավված ռեսուրսների ծավալում միջբանկային վարկը գերակայում է, ապա միջբանկային շուկայում անբարենպաստ պայմանների դեպքում բանկը, չունենալով բավարար սեփական միջոցներ, կարող է բախվել ֆինանսավորման լուրջ խնդրի, ինչը կարող է նույնիսկ տանել սնանկության,

- ներգրավված միջոցների և ակտիվային գործարքներում այդ միջոցների տեղաբաշխման հավասարակշռվածությունը ըստ ժամկետների,
- բանկի հեղինակությունը. անհրաժեշտության դեպքում կողմնակի փոխառու միջոցների արագ ներգրավման հնարավորության ապահովումը,
- արտաքին գործոնների ազդեցությունը, որոնք ներառում են պետության դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները, արժեթղթերի շուկայի և միջբանկային շուկայի զարգացումը, վերաֆինանսավորման համակարգի փոփոխությունները, վերահսկող մարմնի աշխատանքի արդյունավետությունը, գործարար ակտիվության աճը կամ նվազումը, սեզոնային փոփոխությունները (հատկապես գյուղատնտեսության ոլորտում), տնտեսական ճգնաժամերը, արտակարգ իրավիճակները (քաղաքական անկայունություն, ռազմական կոնֆլիկտներ, հեղաշրջում, տարերային աղետներ): Նմանատիպ գործոնների ազդեցության արդյունքում իրացվելիության խնդիրներ կարող են առաջանալ նույնիսկ բանկի կողմից ռիսկերի կառավարման գործընթացում թերությունների բացակայության պայմաններում: Այսպիսի իրավիճակներում իրացվելիության խնդիր է առաջանում ոչ միայն առանձին բանկի մոտ, այլ ողջ բանկային համակարգում:

Իրացվելիության ռիսկը սերտորեն կապված է նաև վարկային, շուկայական, տոկոսադրույքի և արժույթային ռիսկերի հետ:

Բանկի իրացվելիության կառավարման քաղաքականությունը սովորաբար ներառում է որոշումների ընդունման մեխանիզմը, ֆինանսավորման և իրացվելիության մակարդակի կարգավորման մեթոդները, իրացվելիության ռիսկի սահմանափակումները, այլընտրանքային սցենարների ներքո իրացվելիության պլանավորման գործընթացները, ներառյալ ճգնաժամային իրավիճակները<sup>1</sup>: Ֆինանսավորման և իրացվելիության մակարդակի կարգավորման ռազմավարությունը սահմանում է հատուկ

<sup>1</sup> Greuning H. Bratanovic S.B. Analyzing Banking Risk A framework for Assessing Corporate Governance and Risk Management 3-rd edition The World Bank, Washington, D.C. 2009 p. 191-209.

նորմեր ռիսկի կառավարման տարբեր կողմերի համար, ինչպիսիք են պարտավորությունների նպատակային կառուցվածքը, որոշակի ֆինանսական գործիքների օգտագործումը, կամ ավանդների տոկոսադրույքների սահմանումը: Իրացվելիության պահանջը սովորաբար որոշվում է մարման ժամկետների աստիճանի կառուցման միջոցով, որն ընդգրկում է սահմանված ժամանակահատվածներում դրամական միջոցների սպասվող ներհոսքն ու արտահոսքը: Ներհոսքի և արտահոսքի տարբերությունը յուրաքանչյուր ժամանակահատվածում սահմանում է այն սկզբնակետը, որից հաշվարկվում է բանկի ապագա իրացվելիության ավելցուկը կամ պակասորդը այդ ժամանակահատվածի համար: Իրացվելիության պահանջը հաշվարկելուց հետո բանկը պետք է որոշում կայացնի դրա լրացման վերաբերյալ. բանկը կարող է մեծացնել իրացվելիությունը ակտիվների կառավարման միջոցով, պարտավորությունների կառավարման միջոցով կամ երկուսի համադրությամբ: Գործնականում բանկը կարող է վաճառել իր ցածր իրացվելի ակտիվները (օր. անշարժ գույքը), կամ իրացվելիության անհրաժեշտ մակարդակին հասնել բարձր իրացվելի ակտիվների իրացման միջոցով, իսկ պարտավորությունների կառավարման տեսանկյունից այն կարող է ավելացնել կարճաժամկետ ավանդները և պարտավորություններ, երկարաձգել պարտավորությունների մարման ժամկետները կամ մեծացնել կապիտալը:

Իրացվելի միջոցների բացակայությունը կամ անբավարարությունը կարող են հանգեցնել ֆինանսական կազմակերպության գործունեության խափանման և սևանկության, նույնիսկ եթե փաստացիորեն այն վճարունակ է (օր., երբ նրա ակտիվների արժեքը գերազանցում է պարտավորություններին): Առևտրային բանկերին բնորոշ է ակտիվների (երկարաժամկետ վարկեր) և պարտավորությունների (մանրածախ ավանդներ և կապիտալի շուկայի պարտավորություններ) միջև իրացվելիության անհավասարակշռվածությունը: Իրացվելիության ռիսկը կազմված է ակտիվների իրացվելիության ռիսկից և ֆինանսավորման իրացվելիության ռիսկից:

Իրացվելիության ռիսկը ընթացիկ կամ հնարավոր ռիսկն է, որն առաջանում է, երբ կազմակերպությունը ի վիճակի չէ առանց անթույլատրելի կորուստներից խուսափելու կատարել իր պարտավորությունները դրանց վճարման ժամկետը լրանալիս<sup>1</sup>: Այս սահմանումը սովորաբար վերաբերում է ֆինանսավորման իրացվելիության ռիսկին, իսկ ակտիվների իրացվելիության ռիսկը (նաև շուկայի/ապրանքի իրացվելիության ռիսկ) կայանում է նրանում, որ բանկը կորցնում է հնարավորությունը

<sup>1</sup> Committee Of European Banking Supervisor (CEBS), Second Part Of CEBS's Technical Advice To The European Commission On Liquidity Risk Management 2008 p.15.

հեշտությամբ փոխհատուցել կամ փակել հաշվեկշռային կամ արտահաշվեկշռային դիրքը շուկայական արժեքով՝ շուկայի ոչ բավարար խորության պատճառով (այսինքն մինչև այն աստիճանը, երբ շուկան կարող է կլանել դիրքերի գնումներն ու վաճառքները առանց գնի էական փոփոխության) կամ շուկայի անկայունության արդյունքում (օր., սթրեսային իրավիճակի կամ ֆինանսական ճգնաժամի դեպքում): Իրացվելիության ֆինանսավորման ռիսկը առաջանում է բանկային գործունեության հակասության արդյունքում, երբ բանկի կողմից ներգրավվում են կարճաժամկետ ավանդներ, սակայն դրանք տեղաբաշխվում են երկարաժամկետ ակտիվներում, ինչը հաստատում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և ծավալի վերահսկման անհրաժեշտությունը՝ պարտավորությունների ժամանակին կատարումն ապահովելու նպատակով: Ի տարբերություն իրացվելիության ֆինանսավորման ռիսկի, որին ենթակա է առանձին բանկը, իրացվելիության շուկայական ռիսկը ներկայացնում է շուկաներում իրացվելիության ծայրահեղ անբավարարությունը՝ պայմանավորված շուկայական պայմանների փոփոխությամբ: Իրացվելիության շուկայական ռիսկի ազդեցությունը առանձին բանկերի վրա դրսևորվում է ֆինանսական շուկայից միջոցների ներգրավման արժեքի բարձրացմամբ ընդհուպ մինչև նոր միջոցների ներգրավման կամ առկա ֆինանսավորման երկարաձգման անհնարինությունը, ինչպես նաև առանց էական կորուստների՝ որոշակի ակտիվների իրացման դժվարություններով:

Իրացվելիության շուկայական ռիսկի դրսևորման ձևերից կարող են լինել սթրեսային պայմանների վրա հասնելու դեպքում դրամական շուկայի գործիքներում ներդրում կատարած ներդրողների կողմից բանկին ներկայացվող ավելի բարձր փոխհատուցման պահանջը ռիսկի դիմաց, ներդրողների փորձը հասնելու ֆինանսավորման ժամկետների կրճատմանը կամ դրանից հրաժարվելուն, վարկերի (ավանդների) միջբանկային շուկայի փակումը, որը տանում է ռեսուրսների արժեքի կտրուկ աճի: Մթրեսային իրավիճակի ձևավորմանը կամ խորացմանը կարող է էապես նպաստել բանկի գործարար համբավը:

Իրացվելիության ֆինանսավորման ռիսկի շրջանակներում կարելի է առանձնացնել դրա չափման և պլանավորման հետևյալ մակարդակները.

- իրացվելիության կառուցվածքային ռիսկ, որը կապված է I տարուց ավելի ժամկետ ունեցող իրացվելիության երկարաժամկետ կամ ռազմավարական ցուցանիշների հետ: Դրա գնահատման համար հաշվարկվում են գործակիցներ և ճեղքվածքներ, ուսումնասիրվում են ֆինանսավորման աղբյուրները,

- իրացվելիության մարտավարական ռիսկ, որն անբաժան է նախորդ ռիսկից, սակայն վերաբերում է դրամական հոսքերի և օրական իրացվելիության (կանխիկ դրամի և գրավով ապահովման կառավարում) կարճաժամկետ (օպերատիվ) հատվածին,
- իրացվելիության անկանխատեսելի ռիսկ, որը ներառում է սթրես-թեսթավորումը զգայունության վերլուծության կիրառման միջոցով իրացվելիության գործակցի որոշման նպատակով ճգնաժամային իրավիճակներում գործողությունների համապատասխան ալգորիթմի ընտրության, ինչպես նաև իրացվելի ակտիվների անհրաժեշտ «բարձի» ստեղծման նպատակով:

Հաշվի առնելով իրացվելիության նշանակությունը բանկերի համար՝ վերահսկող մարմինները պահանջում են, որպեսզի բանկերը ձևավորեն իրացվելիության ռիսկի ռազմավարություն, որն ընդգրկում է ռիսկերի բացահայտումը, չափումը, կառավարումն ու մակարդակի սահմանափակումը: Բանկերը պետք է ունենան իրացվելիության ճգնաժամին դիմակայելու պահուստային պլան, որը պետք է ներառի նոր հնարավոր շուկայական աղբյուրների գնահատական և մուտքի ռազմավարություն:

Իրացվելիության ռիսկի նկատմամբ հսկողության խստացում է նախատեսում Բազելյան 3-րդ համաձայնագիրը, որով սահմանվող կարգավորումների ամբողջական ներդրումը բանկերում նախատեսվում է ավարտել 2019թ.-ին: Նոր կարգավորումների նպատակը բանկային համակարգի կայունության ապահովումն է: Համաձայն Բազելյան 3-րդ համաձայնագրի՝ անհրաժեշտ է կիրառել իրացվելիության երկու կարգավորիչ գործակիցներ՝ իրացվելիության ծածկման գործակիցը (LCR, Liquidity Coverage Ratio) և զուտ կայուն ֆինանսավորման գործակիցը (NSFR, Net Stable Funding Ratio): Իրացվելիության ծածկման գործակցի նպատակն է որևէ պարտավորությամբ չչայանալավորված բարձր իրացվելի ակտիվների անհրաժեշտ մակարդակի ապահովումը բանկում, որոնք կարող են փոխարկվել կանխիկ միջոցների իրացվելիության ապահովման համար 30 օրվա ընթացքում՝ այն բնորոշում է կարճաժամկետ իրացվելիությունը (մինչև 30օր) և հաշվվում հետևյալ բանաձևով.

$$\frac{\text{Բարձր իրացվելի ակտիվներ}}{\text{առաջիկա 30 օրում դրամական միջոցների սպասվող զուտ արտահոսք}} \geq 100\%$$

Բարձր իրացվելի ակտիվները բաժանվում են 2 մակարդակի<sup>1</sup>.

- առաջին մակարդակին են վերաբերում կանխիկ դրամական միջոց-

<sup>1</sup> Նույն ստեղծում:

ները, պահուստները ԿԲ-ում, շրջանառվող պետական, ԿԲ-ի, պետական հաստատությունների և զարգացման բազմակողմ բանկերի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթերը, որոնք համապատասխանում են սահմանված պայմաններին (ունեն 0% ռիսկի կշիռ, չեն հանդիսանում ֆինանսական կազմակերպության պարտավորություն, ռեպոյի շուկայում երկար ժամանակ հանդես գալով իրացվելիության հուսալի աղբյուր են, շրջանառվում են կանխիկի կամ ռեպոյի խոշոր և ակտիվ շուկաներում, որոնք ունեն կոնցենտրացիայի ցածր մակարդակ) և այլն:

- երկրորդ մակարդակին են պատկանում պետական, ԿԲ, պետական հաստատությունների ակտիվները, որոնք ունեն 20% ռիսկի կշիռվածություն, համաձայնագրով սահմանված պայմաններին համապատասխանող ապահովվածություն ունեցող պարտատոմսերը, իրավաբանական անձանց պարտատոմսերը, AA- և բարձր վարկանիշ ունեցող պարտատոմսերը: Երկրորդ մակարդակին պատկանող ակտիվները չպետք է գերազանցեն առաջին մակարդակի՝ պետական մակարդակով կարգավորումներ իրականացնող մարմնի կողմից ճշգրտված արժեքի 2/3-ը:

Դրամական միջոցների արտահոսքի կազմի մեջ ընդգրկվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց ավանդները և ֆինանսավորման այլ աղբյուրները տարբեր կշիռներով՝ կախված աղբյուրի կարգավիճակից և ապահովման աստիճանից: Դրամական միջոցների սպասվող զուտ արտահոսքը հաշվարկվում է որպես դրամական միջոցների սպասվող արտահոսքի մեծություն և հետևյալ 2 մեծություններից նվազագույնի տարբերություն՝ դրամական միջոցների սպասվող ներհոսքի մեծություն և դրամական միջոցների սպասվող արտահոսքի մեծության 75%: Բանաձևը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Առաջիկա 30 օրում դրամական միջոցների սպասվող զուտ արտահոսք = արտահոսք – Min (ներհոսք; արտահոսքի 75%)

Զուտ կայունության ֆինանսավորման գործակցի ներդրման նպատակը ակտիվների և բասկի գործունեության միջին ժամկետային և երկարաժամկետ ֆինանսավորման ապահովումն է, այն բնորոշում է երկարաժամկետ իրացվելիությունը և հաշվարկվում հետևյալ բանաձևով<sup>1</sup>.

<sup>1</sup> Basel Committee on Banking Supervision Basel III: International framework for liquidity risk measurement, standards and monitoring December 2010 BIS p. 14.

$$\frac{\text{առկա կայուն ֆինանսավորում}}{\text{անհրաժեշտ կայուն ֆինանսավորում}} > 100\%$$

Կայուն ֆինանսավորում ասելով պետք է հասկանալ կապիտալի և պարտավորությունների գործիքների ամբողջությունը, որոնք միջոցների հուսալի աղբյուր են հանդիսանում մեկ տարուց ավելի ժամկետում երկարատև սթրեսի պայմաններում (մեկ տարուց ոչ պակաս, վարկային, շուկայական, գործառնական և այլ ռիսկերի հետևանքով եկամտաբերության կամ վճարունակության էական նվազմամբ):

Առկա ֆինանսավորման աղբյուրների կազմում ընդգրկվում են բանկի պարտավորությունները տարբեր կշիռներով՝ կախված դրանց կայունությունից և մարման ժամկետից (կապիտալի տարրերից մինչև այլ պարտավորություններ):

Բացի իրացվելիության նորմատիվների պարտադիր պահպանումը՝ վերահսկող մարմինների կողմից պետք է կիրառվեն իրացվելիության մոնիտորինգի գործիքներ, ներառյալ հարցում կատարել բանկերից տեղեկատվություն ըստ պայմանագրերի ժամկետների միջոցների ներհոսքերի և արտահոսքերի անհամապատասխանության վերաբերյալ, բանկի տրամադրության տակ եղած որևէ պարտավորվածություն չունեցող ակտիվների (unencumbered assets) մասին, որոնք կարող են օգտագործվել որպես ապահովվածություն երկրորդային շուկայում կամ ԿԲ-ի կողմից ֆինանսավորման տրամադրման համար, ըստ արժույթների իրացվելիության ծածկման գործակցի (LCR) հաշվարկ:

ՀՀ-ում դեռևս չեն կիրառվում Բազելյան համաձայնագրով սահմանված նոր ցուցանիշները: Ներկայումս ՀՀ ԿԲ կողմից սահմանվում են ընթացիկ և ընդհանուր իրացվելիության նորմատիվները, որոնց նվազագույն մակարդակի ապահովումը պարտադիր է ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերի համար: Ընդհանուր իրացվելիության նորմատիվը բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունն է, որի նվազագույն մակարդակը սահմանվում է 15%: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով<sup>1</sup>.

$$\text{Ընդհանուր իրացվելիության նորմատիվ} = \frac{\text{Բարձր իրացվելի ակտիվներ}}{\text{Ընդհանուր ակտիվներ}}$$

Ընթացիկ իրացվելիությունը բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցու-

<sup>1</sup> ՀՀ ԿԲ Կանոնակարգ 2, Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տևտեսական նորմատիվները:

թյունն է, որի նվազագույն մակարդակը սահմանվում է 60%: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով<sup>1</sup>.

$$\text{Ընթացիկ իրացվելիության նորմատիվ} = \frac{\text{Բարձր իրացվելի ակտիվներ}}{\text{Ցպահանջ պարտավորություններ}}$$

Նորմատիվների հաշվարկման նպատակով ՀՀ ԿԲ Կանոնակարգ 2-ով հստակ սահմանվում են այն ակտիվները, որոնք ընդգրկվում են բարձր իրացվելի ակտիվների կազմում, ինչպես նաև ցպահանջ պարտավորությունների կազմում ընդգրկվող պարտավորությունների ցանկը: Սահմանվում են նաև ընդհանուր ակտիվների կազմում ընդգրկվող ակտիվներն ու անհրաժեշտ նվազեցումները:

Այսպիսով, բանկի իրացվելիության մակարդակը հանդիսանում է բանկի վճարունակությունը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից մեկը: Դրանով է բացատրվում իրացվելիության ռիսկի կարգավորման առաջնահերթությունը բանկերի գործունեության բնականոն ընթացքի անխախտ ապահովման համար: Ֆինանսական շուկայում տեղի ունեցող արագընթաց փոփոխությունների ու տատանումների արդյունքում հնարավոր կորուստներից խուսափելու նպատակով ֆինանսական ոլորտը վերահսկող մարմինների կողմից խստացվում են բանկերում իրացվելիության անհրաժեշտ մակարդակին ուղղված կարգավորումները: Դրանց զլխավոր խնդիրը ֆինանսական համակարգի կայունության և ֆինանսական հաստատությունների գործունեության անընդհատության ապահովումն է:

## ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԲԱՆԿԵՐՈՒՄ

### ԱՆՈՒՇ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, սասյիրանտ*

**Համառոտագիր:** Իրացվելիության ռիսկը հանդիսանում է ֆինանսական ռիսկի հիմնական տեսակներից մեկը, իսկ դրա կառավարումը բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման գործընթացի անբաժանելի մասն է կազմում: Հոդվածում ներկայացվում են իրացվելիության ռիսկի դրսևորման առանձին ձևերը, դրա վրա ազդող գործոնները և ռիսկի կարգավորումը վերահսկող մարմնի կողմից: Հաշվի առնե-

<sup>1</sup> Նույն տեղում:

լով ցանկացած իրավիճակում բանկի իրացվելիության պահպանման նշանակությունը՝ կարևորվում է վերահսկող մարմնի կողմից իրացվելիության անհրաժեշտ մակարդակի ապահովմանն ուղղված կարգավորումների խստացումը:

*Բանալի բառեր. բանկային ռիսկ, իրացվելիության ռիսկ, իրացվելիություն, իրացվելիության ցուցանիշ, ակտիվներ, պարտավորություններ, վերահսկող մարմին:*

## РИСК ЛИКВИДНОСТИ И ЕГО РЕГУЛИРОВАНИЕ В БАНКАХ

**АНУШ ТИГРАНОВНА САРГСЯН**

*младший научный сотрудник, аспирант  
Института Экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация:** Риск ликвидности является одним из основных видов финансового риска, а управление им составляет неотъемлемую часть процесса управления активами и пассивами. В статье представлены разновидности риска ликвидности, факторы, влияющие на него и регулирование риска надзорными органами. Учитывая важность сохранения ликвидности банка в любой ситуации, возрастает значимость ужесточения регулирования контрольным органом, направленным на обеспечение надлежащего уровня ликвидности.

**Ключевые слова:** *банковский риск, риск ликвидности, ликвидность, показатели ликвидности, активы, обязательства, контрольный орган.*

## LIQUIDITY RISK AND ITS REGULATION AT BANKS

**ANUSH TIGRAN SARGSYAN**

*Ph.D. Student, Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Science, Republic of Armenia*

**Abstract:** Liquidity risk is one of the main types of financial risks, and liquidity risk management is an integral part of the asset and liability management process. The article presents variations of liquidity risk, factors affecting it and its regulation by supervisory body. By considering the importance of maintaining bank liquidity, regulation tightening by the supervisory body with respect to ensuring the required level of bank liquidity is stressed.

**Keywords:** *Bank risk, liquidity risk, liquidity, liquidity indicators, assets, liabilities, supervisory body.*

## ԱՆՈՒԵ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր զիտաշխատող, ասպիրանտ

### ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՊԱՍԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական շուկաներում տեղի ունեցող արագընթաց փոփոխությունները, ինչպես նաև արժուրային փոխարժեքների և տոկոսադրույքների աճող անկայունությունը բանկերից պահանջում են ունենալ ակտիվների և պարտավորությունների այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն կտա տեղի ունեցող փոփոխությունների պայմաններում ապահովել շահութաբերության ցանկալի մակարդակ՝ ռիսկի ընդունելի մակարդակի պահպանմամբ: Ակտիվների և պարտավորությունների օպտիմալ կառուցվածքի ապահովումը հնարավոր է բանկի կողմից ակտիվների և պարտավորությունների կառավարման մեթոդների և քաղաքականությունների կիրառման միջոցով: Ակտիվների և պարտավորությունների կառավարման գործընթացն իրականացնելիս բանկերի առջև ծառայող խնդիրները տարբեր են եղել՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանում ֆինանսական շուկայում տեղի ունեցող իրադարձություններով և մարտահրավերներով: Այդ պատճառով ակտիվների և պարտավորությունների կառավարման մեթոդներն ու մոտեցումները ևս փոփոխվել և կատարելագործվել են՝ այդ խնդիրների լուծման արդյունավետ ուղիների ձևավորման նպատակով:

Արևմտյան երկրներում մինչև 1960-ական թթ. պարտավորությունների կառավարման անհրաժեշտություն ընդհանրապես չի եղել, բանկերն իրենց տրամադրության տակ ունեին անսահմանափակ քանակության միջոցներ, որոնք հիմնականում գոյանում էին բնակչության ավանդների, երկարաժամկետ վարկերի և արժեթղթերի էմիսիայի հաշվին<sup>1</sup>: Այդ ժամանակ հասարակությունն ասես ինքն էր սահմանում պարտավորությունների կառուցվածքում ժամկետային, խնայողական և չեկային ավանդների հարաբերակցությունը: Սակայն 1960-ականներից սկսած վարկերի նկատմամբ պահանջարկը գերազանցեց բանկերի վարկեր տրամադրելու հնարավորություններին, հետևաբար առաջացավ պարտավորությունների կառավարման անհրաժեշտություն: Խնդրի լուծումը հնարավոր դարձավ Միթի Բանկի կողմից կիրառվող շրջանառու դեպոզիտային սեր-

<sup>1</sup> Кулаков А.Е Управление активами и пассивами банка., БДЦ-пресс Москва 2004 стр. 2,3

տիֆիկատների (negotiable certificate of deposits) շնորհիվ<sup>1</sup>, որոնք արդյունավետ ֆինանսական գործիք էին խոշոր դրամական միջոցներ ներգրավելիս: Ֆինանսական շուկայում իրավիճակի փոփոխությունը ստիպեց բանկերին իրականացնել ակտիվների և պարտավորությունների համատեղ կառավարում, որն այժմ հանդիսանում է ֆինանսական կառավարման անբաժան մասը և բանկի արդյունավետ և անխափան գործունեության կարևորագույն գործոնը:

Ակտիվային գործառնություններ իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսները ձևավորվում են բանկի սեփական և փոխառու միջոցներից: Առևտրային բանկերի ռեսուրսային բազան է կանխորոշում ակտիվային գործառնությունների ուղղությունն ու մասշտաբները, հետևաբար բանկերի ռեսուրսների կազմն ու կառուցվածքը էապես ազդում են նրա իրացվելիության և ընդհանուր գործունեության ֆինանսական արդյունքների վրա: Բանկային պարտավորությունները հանդիսանում են բանկերի ռեսուրսների ձևավորման կարևորագույն աղբյուր: Հաշվի առնելով ճգնաժամերի ընթացքում բանկերի դժվարությունները իրացվելիության և վճարունակության հետ կապված ներկայումս արևմտյան մի շարք երկրներում քննարկվում է բանկային լներեջի սահմանափակման հարցը: Այսպես, տնտեսագետների մի մասը պնդում է, որ բանկի ռեսուրսների աճը պետք է լինի սեփական միջոցների և ոչ թե փոխառու միջոցների տեսակարար կշռի մեծացման հաշվին: Ըստ Ա.Ադամսթիի և Մ.Հելվիգի սեփական կապիտալի տեսակարար կշռի մեծացումը ոչ մի կերպ չի սահմանափակում բանկային գործունեությունը<sup>2</sup>: Վ.Թակորի կարծիքով բարձր լներեջը հանգեցնում է համակարգային ռիսկի, կործանարար տնտեսական հետևանքներով ճգնաժամի հավանականության մեծացման<sup>3</sup>:

ՀՀ առևտրային բանկերի պասիվների կառուցվածքում ընդհանուր կապիտալի տեսակարար կշիռը ներկայացված է աղյուսակ 1-ով.

---

<sup>1</sup> Summers B.J. "Negotiable Certificates of Deposit" ECONOMIC REVIEW, JULY/AUGUST 1980 p. 8.

<sup>2</sup> Admati A. Hellwig M. - The bankers' new clothes: What's wrong with Banking and what to do about it, Princeton University Press 2014 p.16.

<sup>3</sup> Thakor A.V. FTG Summer School: Bank Capital and Financial Stability Washington University in St. Louis 2015 p. 95.

**ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի մասնաբաժինը  
ընդհանուր պասիվներում<sup>1</sup>**

|    | Բանկ                     | Ընդհանուր կապիտալը<br>պասիվների կազմում (%) |
|----|--------------------------|---|
| 1  | Հայֆիզնեսբանկ            | 6.8   |
| 2  | Ամերիաբանկ               | 10.32                                       |
| 3  | Արդշինբանկ               | 11.72                                       |
| 4  | Կոնվերս Բանկ             | 14.24                                       |
| 5  | Հայեկոնոմբանկ            | 15.21                                       |
| 6  | Արարատբանկ               | 16.6  |
| 7  | Ինեկոբանկ                | 17.36                                       |
| 8  | Յունիբանկ                | 17.51                                       |
| 9  | HSBC բանկ Հայաստան       | 18.69                                       |
| 10 | ՎՏԲ-Բանկ Հայաստան        | 18.84                                       |
| 11 | Ալբա-Գրեդիտ Ագրիկոլ Բանկ | 19.36                                       |
| 12 | Արցախբանկ                | 21.78                                       |
| 13 | Արմավիսբանկ              | 22.83                                       |
| 14 | Բիբոս Բանկ Հայաստան      | 27.22                                       |
| 15 | Էվոկաբանկ                | 28.6  |
| 16 | Անելիք Բանկ              | 35.48                                       |
| 17 | Մեյլաթ Բանկ              | 74.02                                       |

ՀՀ առևտրային բանկերից 3-ին (Ամերիաբանկ, Արդշինբանկ, Հայֆիզնեսբանկ) բաժին է ընկնում ընդհանուր ՀՀ բանկերի պասիվների 41.7%-ը<sup>2</sup>: Աղյուսակ 1-ից երևում է, որ հենց այս բանկերի պասիվների կազմում ընդհանուր կապիտալն ունի ամենափոքր տեսակարար կշիռը: Դա նշանակում է, որ ՀՀ խոշոր բանկերում բանկային լներեջի մակարդակը չափազանց բարձր է, ինչը մեծացնում է նրանց գործունեության ռիսկայնության աստիճանը ոչ միայն առանձին բանկի, այլ ողջ բանկային համակարգի մակարդակով:

Բանկային ռիսկերի նվազման և իրացվելիության ապահովման համար անհրաժեշտ է սեփական կապիտալի նկատմամբ պահանջի խստացում, սակայն ներկայիս կարգավորումներով բանկային լներեջի սահման-

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ Արմինֆո գործակալության Հայաստանի բանկերի ֆինանսական վարկանիշի 31.12.2017թ. տվյալների հիման վրա:

<sup>2</sup> Արմինֆո գործակալության Հայաստանի բանկերի ֆինանսական վարկանիշի 31.12.2017թ. տվյալների հիման վրա:

նափակում չի նախատեսվում: Ուստի առաջնահերթ է դառնում ակտիվների և պարտավորությունների օպտիմալ կառուցվածքի ձևավորումը՝ ռիսկայնության մակարդակը հնարավորինս զսպելու նպատակով:

Բանկի պասիվային գործառնությունները ռեսուրսների ձևավորման գործառնություններն են, իսկ պարտավորությունների կառուցվածքը բանկի հաշվեկշռի պասիվային մասի առանձին հոդվածների հարաբերակցությունն է հաշվեկշռի ընդհանուր պարտավորություններին: Բանկային պարտավորությունների կազմում ընդգրկվում են.

- պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ, այդ թվում՝ ՀՀ ԿԲ-ից ստացված վարկեր և ռեպո համաձայնագրեր ՀՀ ԿԲ-ի հետ,
- այլ բանկերի նկատմամբ պարտավորություններ, այդ թվում՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերի թրթրակցային հաշիվներ – ցպահանջ ավանդներ, ներգրաված ժամկետային ավանդներ, վարկեր, ռեպո համաձայնագրեր – արժութային սվոպ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերի հետ, այլ պարտավորություններ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերի նկատմամբ,
- այլ փոխառություններ դրամական շուկայից, այդ թվում՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների բանկային հաշիվներ, ներգրաված ժամկետային ավանդներ և վարկեր, ռեպո համաձայնագրեր – արժութային սվոպ, այլ փոխառություններ,
- հաճախորդներից ներգրաված միջոցներ, այդ թվում՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց, հիմնարկների բանկային հաշիվներ – ցպահանջ ավանդներ, ժամկետային ավանդներ, ռեպո համաձայնագրեր – արժութային սվոպ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց և հիմնարկների հետ, այլ ոչ ռեզիդենտների ժամկետային և ցպահանջ ավանդներ,
- վարձակալության գծով վճարվելիք գումարներ,
- բանկի կողմից թողարկված այլ արժեթղթեր, այդ թվում՝ տոկոսային արժեթղթեր, ոչ տոկոսային արժեթղթեր, այլ արժեթղթեր,
- վճարվելիք գումարներ, այդ թվում՝ վճարման ենթակա շահաբաժիններ, հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ, պարտավորություններ ավանդների ապահովագրության գծով, այլ վճարվելիք գումարներ,
- այլ պարտավորություններ, այդ թվում՝ հաշվարկային պարտավորություններ վճարային փաստաթղթերով, կրեդիտորական պարտքեր – տարանցիկ հաշիվներ, ապագա ժամանակաշրջանի եկամուտ, այլ պարտավորություններ:

Բանկային պարտավորությունների կառուցվածքը կարող է տարբերվել ըստ առանձին բանկերի, սակայն բոլոր առևտրային բանկերի պարտավորությունների մեջ գերակշիռ մասը կազմում են հաճախորդներից ներգրաված ավանդները, որոնք էլ ձևավորում են ակտիվային գործառնություններ իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսների զգալի մասը: ԱՄՆ-ի առևտրային բանկերի պարտավորությունների կազմում հաճախորդների ավանդները կազմում են 80,6%<sup>1</sup>: Եվրոգոտու երկրներում այդ ցուցանիշը տատանվում է 65%-89%-ի սահմաններում: Բանկային պարտավորությունների կազմում ավանդների մասնաբաժինը ամենացածրն է Ֆրանսիայում (65%) և Գերմանիայում (66%), իսկ ամենաբարձրն է Մալթայում (89%), Լիտվայում (88%), Լատվիայում (88%), Կիպրոսում (87%): Պարտավորությունների երկրորդ ամենամեծ խումբը առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններն են, որոնց մասնաբաժինն ամենամեծն է Ֆրանսիայում և Գերմանիայում (մոտ 20%)<sup>2</sup>, որոնց հաջորդում են Իսպանիան, Իտալիան, Բելգիան և Նիդեռլանդները:


Ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ ՀՀ-ում հաճախորդներից ներգրաված միջոցները հանդիսանում են ակտիվային գործառնությունների ֆինանսավորման գլխավոր աղբյուրը:

Գծապատկեր 1-ը ցույց է տալիս ՀՀ բանկերի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը: Գծապատկերից երևում է, որ ՀՀ բանկերի պարտավորությունների կազմում գերակշիռ մաս են կազմում ժամկետային պարտավորությունները: Ընդ որում, ժամկետային պարտավորությունների մեջ 28.4%-ը իրավաբանական անձանց ավանդներն են, իսկ 71.6%-ը՝ ֆիզիկական անձանց: Ցպահանջ պարտավորությունների մեջ իրավաբանական անձանց հանդեպ պարտավորությունները կազմում են 63.7%, իսկ ֆիզիկական անձանց հանդեպ՝ 36.3%<sup>3</sup>:

<sup>1</sup> կայք <https://fred.stlouisfed.org/release/tables?rid=22&cid=5168&od=2018-01-01#>


<sup>2</sup> European Central Bank - Report on financial structure, October 2017.

<sup>3</sup> Արմինֆո գործակալության Հայաստանի բանկերի ֆինանսական վարկանիշի 31.12.2017թ. տվյալների հիման վրա:



**Գծապատկեր 1. ՀՀ առևտրային բանկերի պարտավորությունների կառուցվածքը 31.12.2017թ. դրությամբ<sup>1</sup>**


Իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդների համամասնությունն առավել պատկերավոր ներկայացնելու նպատակով կազմվել է գծապատկեր 2-ը: Ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային և ցյահանջ ավանդները ընդհանուր պարտավորությունների ամենամեծ խումբն են կազմում՝ 43%:



**Գծապատկեր 2. ՀՀ առևտրային բանկերի պարտավորությունների կառուցվածքը ըստ սուբյեկտների<sup>1</sup>**

<sup>1</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ Արմինֆո գործակալության Հայաստանի բանկերի ֆինանսական վարկանիշի 31.12.2017թ. տվյալների հիման վրա:

ՀՀ առևտրային բանկերի ընդհանրացված ցուցանիշները ներկայացնում են միայն ընդհանուր բանկային համակարգի միջինացված ցուցանիշները, ինչը հնարավորություն չի տալիս պատկերացնել ցուցանիշներն առանձին բանկի մակարդակով: Այդ պատճառով իրականացվել է նաև առանձին բանկերի մակարդակով պարտավորությունների կառուցվածքի վերլուծություն, որը ներկայացվում է գծապատկեր 3-ի միջոցով:



**Գծապատկեր 3. ՀՀ առևտրային բանկերի պարտավորությունների կառուցվածքն ըստ առանձին բանկերի<sup>2</sup>**

Գծապատկերից երևում է, որ ՀՀ բանկերից 8-ում ժամկետային ավանդների մասնաբաժինը 50%-ից բարձր է, ընդ որում այն ամենամեծն է Յոնիբանկում (73.6%), Անեխիբանկում (70%), Բիբլոս Բանկ Հայաստանում (63.9%) և Արցախբանկում (62%): Ցպահանջ ավանդների մասնա-

<sup>1</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ Արմինֆո գործակալության Հայաստանի բանկերի ֆինանսական վարկանիշի 31.12.2017թ. տվյալների հիման վրա:  
<sup>2</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ Արմինֆո գործակալության Հայաստանի բանկերի ֆինանսական վարկանիշի 31.12.2017թ. տվյալների հիման վրա:

բաժինն ամենամեծն է HSBC Բանկ Հայաստանում (44.5%), Մեյլաթբանկում (37.5%), Կոնվերսբանկում (35.7%) և ՎՏԲ-Հայաստան Բանկում (29.5%): Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցների տեսակարար կշռով առաջատարներն են Արարատբանկը (43.4%), Ինեկոբանկը (36.5%) Ամերիաբանկը (28.2%), Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը (26%) և Հայէկոնոմբանկը (23.6%):

Ինչպես տեսնում ենք ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրաված միջոցների հիմնական մասը կազմում են իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրաված ցպահանջ և ժամկետային ավանդները, որոնք էլ ձևավորում են ակտիվների համար անհրաժեշտ ռեսուրսների բազան: Բանկերի սեփական կապիտալի մասնաբաժինը բանկերի ընդհանուր պասիվների կառուցվածքում փոքր մաս է կազմում, ինչը մեծացնում է իրացվելիության ռիսկը, քանի որ տեղաբաշխված ակտիվների վերադարձելիության հետ կապված խնդիրների առաջացման պարագայում վտանգի են ենթարկվում հասարակության միջոցները: Այս ռիսկի զսպման նպատակով անհրաժեշտ է սահմանափակել բանկային լներեջը, այսինքն սեփական և փոխառու միջոցների միջև սահմանել առավել օպտիմալ հարաբերակցություն, որն էապես չի ազդի բանկի կողմից տեղաբաշխվող ակտիվների ծավալի վրա, սակայն կմեծացնի իրացվելիությունն ու լրացուցիչ ապահովություն կտրամադրի:

### **ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՊԱՍԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

#### **ԱՆՈՒԵ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՐԳՍՅԱԼ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթակյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ*

**Համառոտագիր:** Բանկային պասիվները հանդիսանում են ակտիվային գործառնությունների համար անհրաժեշտ ռեսուրսների ձևավորման հիմնական աղբյուրը և էական ազդեցություն կարող են ունենալ ռեսուրսների տեղաբաշխման վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Հոդվածում ներկայացվում է ՀՀ առևտրային բանկերի հաշվեկշռի պասիվային մասի կառուցվածքը, պարտավորությունների կազմը, իրականացվում է պարտավորությունների կառուցվածքի վերլուծություն: Վերլուծության արդյունքում ընդգծվում են բացահայտված խնդիրներն ու առաջարկվում դրանց լուծման ուղիներ:

*Բանալի բառեր. պարտավորություններ, ակտիվներ, սեփական կապիտալ, բանկային լիերեք, ցլահանք ավանդներ, ժամկետային ավանդներ:*

## АНАЛИЗ СТРУКТУРЫ ПАССИВОВ КОММЕРЧЕСКИХ БАНКОВ РА

**АНУШ ТИГРАНОВНА САРГСЯН**

*младший научный сотрудник, аспирант  
Института экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** Банковские пассивы являются главным источником формирования ресурсов, необходимых для осуществления активных операций. Они могут иметь значительное влияние при принятии решения о размещении банковских ресурсов. В статье представлена структура пассивов коммерческих банков РА и состав обязательств, проведен анализ структуры обязательств. В результате анализа представлены выявленные проблемы, и предлагаются пути решения этих проблем.

*Ключевые слова: обязательства, активы, собственный капитал, банковский леверидж, обязательства до востребования, срочные обязательства.*

## ANALYSIS OF THE LIABILITY PROFILE OF COMMERCIAL BANKS IN THE REPUBLIC OF ARMENIA

**ANUSH TIGRAN SARGSYAN**

*Ph.D. Student, Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Science, Republic of Armenia*

**Abstract:** Banks liabilities are the main source of funding asset operations. They might have a significant impact on the decision-making process concerning resource allocations. Structure and the composition of the Armenian commercial banks' liabilities are presented and analyzed in the article. As a result of the analysis the author identifies the issues and proposes approaches to address them.

*Keywords: Liabilities, assets, equity, bank leverage, demand deposits, term deposits.*

## ԱՐՏԱՅԱՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ ՀՀ-ՈՒՄ

Տնտեսական աճը համալիր հասկացություն է, որն արտահայտվում է ապրանքների և ծառայությունների ավելացմամբ և, որպես կանոն, հանգեցնում է հասարակության բարեկեցության բարձրացմանը<sup>1</sup>: Տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ դրա վրա ազդող գործոնների բնույթի և դրանց ազդեցության ձևերի մասին:

Ներկայիս տնտեսական պայմաններում տնտեսական աճի ներքին գործոններից բացի մեծ կարևորություն են ստանում արտաքին գործոնները: Տնտեսական աճի վրա ազդող հիմնական արտաքին գործոններն են՝ արտահանումը, ներմուծումը, օտարերկրյա ներդրումները, տրանսֆերտները և այլն:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր երկրի ներտնտեսական բարենպաստ զարգացումները իրենց արտացոլումն են ստանում արտաքին տնտեսական կապերում արտահանման բազմազանեցված (այսուհետ՝ դիվերսիֆիկացված) կառուցվածքի, դրա տեսական ու ղնդլայնման և որակի բարձրացման, զլոբալ մրցակցային առավելություններ ունեցող ապրանքների արտադրության և արտահանման միջոցով, ինչպես նաև ներմուծման կառուցվածքի արդյունավետացմանն ուղղված փոփոխությունների միջոցով:

Ժամանակակից տնտեսություններում կարևոր է համարվում կայուն և դինամիկ տնտեսական աճի ապահովումը, որի համար էլ անհրաժեշտ է բացահայտել տնտեսության մրցունակ և ոչ մրցունակ արտադրության ճյուղերը: Մրցունակ ճյուղերին անհրաժեշտ է պետական աջակցություն ցուցաբերել, որպեսզի դրանք զարգանան և իրենց ուրույն տեղը գտնեն համաշխարհային շուկայում, իսկ այն ճյուղերին, որոնք ռազմավարական նշանակություն չունեն և միևնույն ժամանակ օժտված չեն համեմատական կամ մրցակցային առավելությամբ, կարիք չկա պետական աջակցություն ցուցաբերել, կարելի է այդ արտադրանքի ներքին պահանջարկը բավարարել ներմուծման հաշվին, որը թե՛ որակական, և թե՛ գնային

<sup>1</sup> Perroux F., Dictionnaire economique et social, Hatier, 1990, p. 115.

հատկանիշներով ավելի ձեռնտու կլինի: Իսկ, այդ ճյուղերից ազատված ռեսուրսներն էլ կարելի է օգտագործել համեմատական առավելություն ունեցող ճյուղերի ընդլայնման նպատակով:

Հատկապես դա վերաբերում է փոքր տնտեսություն ունեցող երկրներին, ինչպիսին է, օրինակ, Հայաստանը, որի սահմանափակ ներքին պահանջարկը չի կարող հանդիսանալ երկարատև կայուն տնտեսական աճի գրավական, ուստի տնտեսական աճի հետագա տեմպերի պահպանման համար մեծ կարևորություն է ստանում արտաքին պահանջարկը: Այսինքն՝ արտահանումը կարող է դառնալ հետագա զարգացման հիմնական աղբյուր՝ հնարավորություն տալով արտադրողներին օգտվել մասշտաբի էֆեկտից:

Հայտնի է, որ յուրաքանչյուր երկիր՝ կախված իր զարգացման մակարդակից և այլ գործոններից տնտեսական քաղաքականություն վարելիս առաջնորդվում է արդյունաբերական 2 հիմնական քաղաքականություններից մեկով՝ արտահանման խթանում կամ ներմուծման փոխարինում, կամ զուգորդում է դրանց մի շարք գործիքների կիրառելու:

Վերջին 70 տարվա փորձը ցույց է տալիս, որ զարգացող այն երկրները, որոնք առևտրի միջոցով մեծացրել են համաշխարհային տնտեսությանն ինտեգրացման աստիճանը և որդեգրել են արտահանման խթանման քաղաքականություն, ձեռք են բերել տնտեսական աճի առավել բարձր տեմպեր:

Այսպիսով, վերոնշյալ գաղափարներից պարզ է դառնում, որ արտահանումը և տնտեսական աճը շաղկապված են, և տնտեսական աճի ապահովման գործում արտահանումը բավական կարևոր դեր է կատարում: Ուստի այդ կապը և դրա փոխանցման մեխանիզմները բացահայտելուց հետո է միայն հնարավոր մակրոտնտեսական մակարդակում տնտեսական աճին նպաստող առավել իրատեսական ուղիներ մշակել:

Հողվածի հիմնական նպատակն է բացահայտել արտահանման ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա և առաջարկել ուղիներ, որոնք կարող են բարձրացնել արտահանման դերը հետագա տնտեսական աճի ապահովման գործում:

Տնտեսական աճի և տնտեսության զարգացման վրա արտահանման ազդեցության ուղիները հետևյալն են.

- Արտահանումը, հատկապես փոքր տնտեսություն ունեցող երկրներում, ձեռնարկատերերին հնարավորություն է տալիս օգտվել մասշտաբի էֆեկտից, բարձրացնել արտադրության արդյունավետությունը և ապահովել արտադրության առավել մեծ ծավալ, ինչն էլ ընդհանուր

տնտեսության համար նշանակում է տնտեսական աճի բարձր տեմպեր<sup>1</sup>:

- Արտահանման աճի արդյունքում տնտեսություն է ներհոսում լրացուցիչ օտարերկրյա արժույթ, ինչն էլ, եթե ուղղվի արտերկրից միջանկյալ հումքի և մեքենա-սարքավորումների ներմուծմանը, կապահովի արտադրողականության աճ և տնտեսական աճ<sup>2</sup>:
- Արտահանման աճը պայմանավորում է ՀՆԱ-ի աճը՝ ռեսուրսների առավել արդյունավետ բաշխման միջոցով, ինչպես նաև արտադրությունում մասնագիտացման շնորհիվ մասշտաբի էֆեկտից օգտվելու միջոցով, մրցակցության մակարդակը բարձրացնելու շնորհիվ արտադրության արդյունավետությունը խթանելու միջոցով, նորարարության տարածմանը նպաստելու միջոցով<sup>3</sup>:

Արտաքին առևտուրն, ընդհանրապես, ենթադրում է, որ տնտեսությունում արտադրվում և արտահանվում են համեմատական կամ մրցակցային առավելություններ ունեցող ապրանքներ և ներմուծվում են այնպիսի ապրանքներ, որոնց արտադրությունը տեղում արդյունավետ չէ, այսինքն՝ տեղի է ունենում արտադրական ռեսուրսների արդյունավետ վերաբաշխում, ինչն էլ իր հերթին հանգեցնում է արտադրության ծավալի ավելացման, այսինքն՝ տնտեսական աճի: Պատկերը կարող է փոխվել բնակչության նախասիրություններից ելնելով, սակայն, ընդհանուր առմամբ, արտաքին առևտուրը նպաստում է ռեսուրսների արդյունավետ վերաբաշխմանը:

Բնականաբար յուրաքանչյուր երկրում արտահանումը տաքեր համամասնություններով է նպաստում տնտեսական աճի ձեռքբերմանը՝ կախված երկրի զարգացման մակարդակից, արտահանման կառուցվածքից և այլ գործոններից:

Մեր կողմից կատարված էկոնոմետրիկ վերլուծության արդյունքում բացահայտվել են ԱՊՀ երկրներում տնտեսական աճի վրա արտաքին առևտրի ազդեցության գործակիցները, համաձայն որի արտահանման 1% ավելացման դեպքում ՀՆԱ-ն ավելանում է 0.98%-ով, ներմուծման 1%

---

<sup>1</sup> Hausmann R., J. Hwang, and D. Rodrik. 2006. "What You Export Matters." Working Paper. Center for International Development, Harvard University, p.25-28.

<sup>2</sup> Singer H., The Distribution of Trade between Investing and Borrowing Countries, American Economic Review, 1950, p 473-485.

Prebish R., The Economic Development of Latin America and its Principal Problems, United Nations Department of Economic Affairs, 1950, p. 212.

<sup>3</sup> Krugman/Obstfeld. International Economics. 2003. Chapter 2: Labor Productivity and Comparative Advantage: The Ricardian Model. p. 10-38

Balassa B. (1978), Exports and economic growth: further evidence, Journal of Development Economics, 5, p.181-189.

աճի պարագայում ՀՆԱ-ն աճում է 0.27%-ով<sup>1</sup>: Հարկ է նշել, սակայն, որ ստացված ազդեցության գործակիցները միջինացված ցուցանիշներ են և կարող են չարտահայտել առանձին երկրի իրական պատկերը: Օրինակ՝ տնտեսական աճի վրա ներմուծման ազդեցության գործակիցը առավել բարձր կլինի այն երկրներում, որոնց ներմուծման մեջ 15 %-ից ավելին կազմում են մեքենա-սարքավորումներն ու հումքը (Հայաստան, Բելառուս, Ռուսաստան, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, Թուրքմենստան, Ուկրաինա, Ուզբեկստան), իսկ մյուս երկրներում (Ադրբեջան, Տաջիկստան)՝ նշված ցուցանիշը ավելի ցածր կլինի: Նույն գաղափարը կարող ենք ասել նաև արտահանման ազդեցության գործակիցի մասին: Այն երկրներում, որոնցում արտահանումն առավել տարբերակված է, կունենան ազդեցության ավելի բարձր գործակից և հակառակը: Ուստի, հարկ ենք համարում առավել մանրամասնորեն վերլուծել Հայաստանի տնտեսական աճն ու արտահանումը:

Արտաքին առևտրի ազդեցությունը ազգային տնտեսության վրա արտացոլվում է ՀՆԱ-ում արտահանման և ներմուծման տեսակարար կշիռների միջոցով: ՀՆԱ-ում արտահանման մեծ տեսակարար կշիռը վկայում է միջազգային շուկայում հայրենական տվյալ արտադրանքի մրցունակության մասին: ՀՀ-ում 2016թ. տվյալ ցուցանիշը կազմել է 17%: Առավել ակնառու կլինի դիտարկել 2000-2016թթ. տվյալ ցուցանիշի միջինը, որը կազմել է 15.7%:

Առևտրային հաշվեկշռի պակասորդը 2016թ. ՀՀ-ում կազմել է ՀՆԱ-ի ավելի քան 16%-ը, ինչը ցույց է տալիս արտաքին առևտրի զգալի անկատարությունը: ՀՀ-ում արտահանումը 2000-2016թթ. բավականին բարձր աստիճանի կենտրոնացվածություն ուներ՝ 4 ապրանքախմբերի (թանկարժեք քարեր և մետաղներ, ոչ թանկարժեք մետաղներ, պատրաստի սնունդ, հանքահումքային ապրանքներ) միջինում բաժին էր ընկնում արտահանման 82.9%-ը: Ընդ որում, արտահանման կենտրոնացվածությունից բացի հարկ է նշել, որ արտահանման մեջ գերակշռում է միջանկյալ հումքը, որի արտադրությունում ստեղծվող ավելացված արժեքի կշիռը խիստ սահմանափակ է և բացի այդ, այն ենթակա է միջազգային գների նշանակալի տատանումներին, ինչն էլ ավելի է մեծացնում արտահանման խոցելիությունը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովում են այն երկրները, որոնց արտահանման կառուցվածքը փոփոխվել է ցածր տեխնոլոգիատարության ապրանքներից դեպի

<sup>1</sup> Էկոնոմետրիկ վերլուծությունը կատարվել է հեղինակի կողմից Համաշխարհային բանկի վիճակագրական տվյալների հիման վրա՝ <http://www.worldbank.org/>

բարձր տեխնոլոգիատարության ապրանքներ: Իսկ բնական ռեսուրսների վրա հիմնված ապրանքների արտահանման ուղղությամբ մասնագիտացումը ամենևին էլ բարձր տնտեսական աճի գրավական չէ: Այս տեսանկյունից ՀՀ արտահանման մեջ ցածր, միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքների տեսակարար կշիռը 2016թ.-ին 2001թ.-ի համեմատ նվազել է, իսկ փոխարենը աճել է ռեսուրսատար ապրանքների տեսակարար կշիռը: Այդուհանդերձ, դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ արտահանման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեցել են ցածր տեխնոլոգիատարության ապրանքները (նշված ժամանակահատվածում՝ ավելի քան 60%<sup>1</sup>):

Այսպիսով, տնտեսական աճի և արտահանման առավել կայուն կապ պայահովելու համար մեր կողմից առաջարկվում է ՀՀ արտահանման կառուցվածքում ռեսուրսատար և ցածր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումից աստիճանաբար անցում կատարել դեպի միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքների արտադրություն և արտահանում: Հայաստանը չունի մեծաքանակ ռեսուրսներ, ուստի հետագա կայուն տնտեսական աճի համար անհրաժեշտ է տնտեսության զարգացումն ապահովել ռեսուրսների ոչ թե քանակական, այլ որակական ընդլայնման միջոցով, ինչն էլ հնարավոր է իրականացնել միայն առավել բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտադրությամբ:

Մեր կողմից էկոնոմետրիկ վերլուծություն է կատարվել նաև ՀՀ արտահանման, օտարերկրյա ուղղակի ներդրումների և տնտեսական աճի միջև առկա կապը բացահայտելու նպատակով: Արդյունքում ստացվել է, որ ՀՀ-ում շՆԱ-ն ավելանում է 1.1 միավորով՝ 1 միավոր ՕՈՒՆ աճի, և 6.3 միավորով՝ 1 միավոր արտահանման աճի պարագայում<sup>2</sup>:

Այսպիսով, ստացվում է, որ ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում արտահանումն ունի բավական մեծ դերակատարություն: Ուստի, այս տեսանկյունից հետագայում պետության կողմից ճիշտ մշակված արտահանման խթանման քաղաքականությունը կարող է հանդիսանալ կայուն տնտեսական աճի ապահովման գրավական: Դրա համար նախ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել արտահանման կառուցվածքի փոփոխությանը, ինչպես նաև մշակել արտահանման խթանման առավել արդյունավետ գործիքակազմ:

<sup>1</sup> Վիճակագրական տվյալները վերցված են ՀՀ ԱԿԾ պաշտոնական կայք-էջից՝ [www.armstat.am](http://www.armstat.am)

<sup>2</sup> Էկոնոմետրիկ վերլուծությունը կատարվել է հեղինակի կողմից ՀՀ ԱԿԾ վիճակագրական տվյալների հիման վրա՝ [www.armstat.am](http://www.armstat.am)

Բնական է, որ պետությունը չի կարող խթանել տնտեսության բոլոր ճյուղերի արտահանումը: Առավել խելամիտ կլինի բացահայտել համեմատական կամ մրցակցային առավելություն ունեցող ճյուղերը, գնահատել դրանց արտահանման հնարավորությունները, որից հետո էլ անցնել արտահանման խրախուսման ռազմավարությանը: Փորձելով պատասխանել վերոնշյալ հարցին՝ մենք բացահայտել ենք ՀՀ-ում արտահանման տեսանկյունից համեմատական առավելություններ ունեցող ճյուղերն ու ապրանքատեսակները՝ օգտագործելով Բելլա Բալասայի կողմից մշակված մեթոդաբանությունը և հաշվարկելով բացահայտված համեմատական առավելությունների (ԲՀԱ) ինդեքսը՝ Հայաստանի համար հետևյալ բանաձևով.

$$ԲՀԱ_i = (x_i : X) / (x_{iw} : X_w),$$

որտեղ՝  $x_i$ -ն ՀՀ-ում  $i$ -րդ ապրանքի արտահանումն է,  $X$ -ը՝ ՀՀ ընդհանուր արտահանումը,  $x_{iw}$ -ն՝  $i$ -րդ ապրանքի համաշխարհային արտահանումը, իսկ  $X_w$ -ն ընդհանուր համաշխարհային արտահանումը: Համաձայն Բելլա Բալասայի՝ երկիրն ունի  $i$ -րդ ապրանքի արտահանման գծով բացահայտ համեմատական առավելություն, եթե  $ԲՀԱ_i > 1$ :

Այսպիսով, ստացվել է, որ 2012-2016թթ. ՀՀ-ն մշտապես համեմատական առավելություն է ունեցել հետևյալ ապրանքախմբերի արտահանման տեսանկյունից՝ կենդանի կենդանիներ, կաթնամթերք, ձու, մեղր, մրգեր, բանջարեղեն, պահածոներ, ակոհոլային և ոչ ակոհոլային խմիչքներ, քացախ, ծխախոտ, աղ, ցեմենտ, հանքաքար, հազուստ՝ քարից և գիպսից արտադրանք, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ, սև մետաղներ, պղինձ, ալյումին և իրեր դրանցից, ինչպես նաև ժամացույցներ ապրանքախմբերում<sup>2</sup>:

Առավել զգալի արդյունք ստանալու համար նշված ապրանքախմբերի արտահանման խթանմանը զուգահեռ անհրաժեշտ է խթանել հայկական գյուղատնտեսությունում շատ քիչ մշակվող այնպիսի մշակաբույսերի արտադրությունը, ինչպիսիք են գետնախնձորը, մասուրն ու թեյի վարդը: Ինչպես գիտենք, Հայաստանում առկա է գյուղատնտեսական հողերի թերզբաղվածություն, հետևաբար լրիվ իրատեսական է գետնախնձորի և մասուրի ու թեյի վարդի պլանտացիաներ ստեղծելու գաղափարը, առավել ևս, որ նշված մշակաբույսերի աճեցումը հնարավորու-

<sup>1</sup> Balassa, B. (1965), Trade Liberalisation and Revealed Comparative Advantage, The Manchester School, V 33, May 1965, pp. 99-123.

<sup>2</sup> Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից Համաշխարհային բանկի վիճակագրական տվյալների հիման վրա՝ <http://www.worldbank.org/>.

թյուն կտա զարգացնելու նաև դրանց հետ առնչվող շատ հարակից ճյուղեր: Մասուրի և վարդի հասունացումը Հայաստանում համընկնում է իսլամական երկրներում ռամադանի շրջանի հետ (մասուրի և վարդի թերթիկների հյութերը, հատկապես Ռամադանի ժամանակ, որպես ըմպելիք լայնորեն օգտագործվում են Պարսից ծոցի երկրներում), ուստի առկա է բավականին մեծ ծավալով դրանց արտահանման իրական հնարավորություն: Գետնախնձորը շատ երկրներում անփոխարինելի միջոց է, ինչպես սննդում կիրառության, այնպես էլ բժշկության մեջ, քիմիական արտադրությունում՝ հատկապես կոսմետիկայի բնագավառում, ավելին՝ գետնախնձորի աճեցումը օգտակար է նաև գյուղատնտեսական հողերի որակի բարելավման տեսանկյունից, հետևաբար դրա արտադրությունը կարևորում ենք ոչ միայն արտահանման, այլ ավելի շուտ բազմաթիվ հարակից ճյուղերի զարգացման նկատառումներով:

Բազմիցս քննարկվել է ՀՀ հանքահումքային մթերքների արտահանման սահմանափակման խնդիրը, բանզի անգամ մեծ ռեսուրսային հնարավորություններ ունեցող երկրներն այսօր հրաժարվում են հումքի արտահանումից՝ փոխարինելով այն պատրաստի ապրանքների արտահանմամբ, որոնց պարագայում ստեղծվում է ավելի մեծ չափի ավելացված արժեք: Սակայն ավանդական հանքահումքային մթերքներից գատմենք կարևորում ենք տվյալ խնդրի հրատապությունը նաև պեոլիտի արտահանման տեսանկյունից: Ինչպես գիտենք, Հայաստանը ունի պեոլիտի զգալի պաշարներ, որը հնարավոր է կիրառել ամենատարբեր արտադրություններում, սկսած շինարարականից մինչև կենցաղային սնունդ ու բժշկություն: Այսպիսով, լայն հնարավորություն է ընձեռվում պեոլիտի արդյունահանման արդյունքում տնտեսության բազմաթիվ ոլորտների զարգացման համար: Այդ նպատակով արտահանող ձեռնարկություններին պետք է տրամադրել նպատակային արտոնյալ վարկային ռեսուրսներ՝ հանքաքարի վերամշակման հզորությունների ստեղծման ու արդիականացման նպատակով, ինչպես նաև աստիճանաբար ւնցում կատարել հանքաքարի արտահանումը կանխող ոչ արտոնյալ հարկային դաշտի ձևավորմանը:

Հաջորդ կարևոր ուղղությունը կոշկեղենի և կաշվե իրերի արտադրությունն է: Երևան քաղաքի խանութներում և տոնավաճառներում մեր կողմից կատարված հարցումները ցույց տվեցին, որ կոշկեղենի արտադրության ոլորտում առկա են բազմաթիվ փոքր ընկերություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնցից շատերը, ի դեպ, աշխատում են արտաքին պահանջարկի բավարարման ուղղությամբ, սակայն ոլորտում առկա լրջագույն խնդիր է այն, որ գործող փոքր ընկերություններն ու

անհատ ձեռնարկատերերը չեն կարող օգտվել մասշտաբի էֆեկտից, որի պարագայում առավել արդյունավետ կօգտագործվեին առկա ռեսուրսները: Ուստի այստեղ ևս, կարծում ենք ճիշտ կլինի պետական ոչ պարտադրողական քաղաքականության միջոցով խթանել առավելապես միջին ու խոշոր ընկերությունների ստեղծումը (օրինակ՝ կարելի է ոլորտին պետական աջակցություն տրամադրելիս նախապատվությունը տալ առավել խոշոր ընկերություններին):

Անդրադառնալով ադամանդագործության և ոսկերչության ոլորտին՝ պետք է նշել, որ այստեղ մասնագիտացումը պետք է ընթանա առավելապես ոսկերչական իրերի, քան ադամանդի վերամշակման արտադրությունում, քանի որ այստեղ առկա են բազմաթիվ առավելություններ՝ աշխատուժի որակ, հումքային ներուժ, համաշխարհային շուկայում բարձր պահանջարկ և այլն: Ոսկերչական իրերի արտահանումը ընդլայնելու և նաև ոսկու փոշու արտահանումը պատրաստի արտադրանքի արտահանմամբ փոխարինելու համար անհրաժեշտ է ստեղծել այս ճյուղի զարգացման բարենպաստ միջավայր: Այդ առումով ճյուղի համար հատկապես կարևոր նշանակություն ունի ապրանքային հայտնի նշանի բացակայության խնդրի լուծումը: Հաշվի առնելով այս հանգամանքը, ՀՀ ձեռնարկությունների համար հիմնախնդիրների լուծման հեռանկարային տարբերակ կարող է լինել արտասահմանյան ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների ստեղծումը: Սրանից բացի կարելի է ոսկերչության ոլորտի արտահանման և արտադրության միջև ամուրկապ ստեղծելու նպատակով կիրառել համաշխարհային պրակտիկայում բազմիցս օգտագործվող մոդել՝ ոսկերչական կլաստերի հիմնում: Շատ երկրներում ոսկերչական կլաստերները հիմնվում են ոսկու հանքերի հարևանությամբ գտնվող տարածքներում, որտեղ և տեղփոխվում են բնակվելու ոսկերիչները: Ինչպես նաև կարելի է ստեղծել պարզապես արտահանման արդյունաբերական գոտիներ այս ոլորտի համար, որոնք կհամապատասխանեն համաշխարհային արտահանման արտադրական գոտիների սահմանմանը, այսինքն՝ տվյալ տարածքում կգործի հատուկ մաքսային ռեժիմ արտահանման ուղղվածության արտադրանք թողարկող արդյունաբերական ձեռնարկությունների համար, ինչպես նաև կգործեն գիտահետազոտական և գիտաարտադրական ձեռնարկություններ, որոնք անհրաժեշտ ծառայություններ կմատուցեն ոլորտի ձեռնարկություններին: Հարկ է նշել նաև, որ վերոնշյալ մոդելները կիրառելի են վերամշակող արդյունաբերության այլ ոլորտներում ևս, բացառությամբ սննդի արդյունաբերության՝ հաշվի առնելով հանրապետության ողջ տարածքում գյուղատնտեսական պլիտանի հողերի առկայությունն ու ցրվածությունը:

Մեքենաշինության ոլորտում կարծում ենք առավել մեծ արտահանման պոտենցիալ ունեն էլեկտրական կենցաղային տեխնիկայի, էլեկտրական մեկուսիչների, ռադիոսարքերի, օպտիկական մանրաթելի, ավտոմատ դեկավարման և կարգավորման սարքերի, հսկման և չափման այլ սարքերի, թռչող սարքերի և ապարատների մասերի պարագայում:

Որպես ոլորտի արտահանման հնարավոր շուկաներ կարող ենք նշել ԱՄՆ-ի, Եվրոպայի և Ճապոնիայի շուկաները, քանզի այստեղ են գտնվում ոլորտի առաջատար վերագգային ընկերությունների մեծ մասը, որոնց հետ համագործակցությունն էլ կարող է հիմք հանդիսանալ ոլորտի զարգացման: Ոլորտի կարողություններից էլնելով՝ բավականին իրատեսական է համարվում վերագգային կազմակերպությունների և օտարերկրյա ընկերությունների կողմից արդյունաբերական սարքավորումների և ավիաարդյունաբերության առանձին մասերի արտապատվիրումը: Իսկ ոլորտի առավել ցածր տեխնոլոգիատար ապրանքների (օրինակ՝ կենցաղային տեխնիկա և այլն) արտահանման տեսանկյունից կարևորում ենք Վրաստանի և ԱՊՀ շուկաների մեծ մասը, որոնց հետ Հայաստանն ունի ազատ առևտրային ռեժիմ: Ներկայում մասնավոր ձեռնարկությունների կողմից որոշակի քանակությամբ արտադրանք թողարկվում է նշված ոլորտում. օրինակ՝ 2006թ. ի վեր «Արմենմոտոր» ընկերության կողմից արտադրվում և Ռուսաստան է արտահանվում «Դոբրիկուշկա» պիտակով էլեկտրական մսադացներ, սակայն այս երևույթը կրում է ավելի շատ պատահական և ոչ համակարգված բնույթ:

Քիմիական արդյունաբերության զարգացման հեռանկարները դիտարկելիս անհրաժեշտ ենք համարում առանձնացնել քիմիական և տեքստիլ արդյունաբերությունների փոխկապակցված զարգացումը, որն, իր մեջ ներառելով քիմիական վերամշակման տարրեր, դիտարկվում է որպես միջին և բարձր տեխնոլոգիատարության արտադրություն: Այս ուղղությամբ զարգացումը լայն հնարավորություն է ստեղծում նաև՝ քիմիական արհեստական մանրաթելերի և դրանցից այլ արտադրանքի արտադրության և արտահանման ծավալների մեծացման համար: Ոլորտի զարգացման առանձնահատկություններից է այն, որ արտադրության ծավալների աճը կարող է նպաստել ոչ միայն արտահանման ընդլայնմանը, այլև ներմուծման կրճատմանը: Վերոնշյալից բացի կարելի է գուզահեռաբար սկսել համաշխարհային շուկայում այս ոլորտի համեմատաբար նոր ճյուղի զարգացումը՝ չիրկիզվող պոլիմերային նյութերի և կտորների արտադրություն (նախապես հաշվարկելով երկարաժամկետ հատվածի համար դրա արտադրության արդյունավետությունը ՀՀ տնտեսության համար), որոնք օգտագործվում են մեքենաների, ինքնաթիռների, նավերի

ներքին սրահների երեսպատման, հյուրանոցների, դպրոցների և այլ կառույցների շինարարության մեջ, ինչպես նաև վարագույրների, գորգերի արտադրության մեջ: Նշենք, որ այս նյութերը ներկայումս չունեն այլ փոխարինիչներ: Ընդ որում, բացի պոլիմերային կտորներից ներկայումս համաշխարհային շուկայում առավել մեծ թափով զարգանում են պոլիմերային նյութերի արտադրությունը, չիրկիզվող ապակե-պլաստիկայի արտադրությունը և նմանատիպ՝ այլ ոլորտներում լայն կիրառություն ունեցող նյութերի արտադրությունները: Այս համեմատաբար նոր ուղղությունների արտադրանքները առանձնանում են հատկապես նրանով, որ կարող են առավել արդյունավետորեն փոխարինել մինչ այժմ օգտագործվող ավանդական նյութերին՝ իրենց ջերմադիմացկունության, առավել թեթև բաշի (հատկապես ավիացիայի ոլորտում կիրառություն ունեցող արտադրությունում), կորոզիայի հակադեպ ունեցած դիմացկունության, ջերմային ազդեցության արդյունքում ընդարձակման փոքր գործակցի և այլ հատկությունների շնորհիվ:

Մրցունակ արտադրանք թողարկելուն զուգահեռ անհրաժեշտ է մտածել նաև դրա արտահանմանն օժանդակող մեխանիզմների մասին: Այդ նպատակով առաջարկվում է արտերկրում հայկական ներկայացուցչությունների ցանցի ընդլայնում, որոնք իրենց գտնվելու վայրերում կիրականացնեն մարքեթինգային հետազոտություն, պահանջարկի ուսումնասիրություն և իրացման կազմակերպումը: Ընդ որում ներկայացուցչությունները կարելի է ստեղծել արտերկրում գործող հայկական դեսպանատներին կամ հյուպատոսություններին կից: Ներկայացուցչությունը հայ արտադրողներին կտեղեկացնի նաև իր գտնվելու վայրում կազմակերպվող առևտրային ցուցահանդեսների, դրանց մասնակցության ձևերի մասին, ինչպես նաև միասնական հայկական տաղավարով հանդես կզա ցուցահանդեսին՝ ներկայացնելով այն հայկական ընկերությունների արտադրանքը, որոնք անձամբ ներկա չեն գտնվում:

Արտաքին շուկաներում ապրանքների, մատուցվող ծառայությունների առաջմղման կարևորագույն միջոցներից է մասնակցությունը միջազգային տոնավաճառներին և ցուցահանդեսներին: Հաշվի առնելով նման միջոցառումների մասնակցության ծախսատարությունը և փոքր և միջին ձեռնարկությունների համար դրանց անհասանելիությունը՝ առաջարկում ենք իրականացնել միջազգային տոնավաճառների մասնակցության ֆինանսավորում՝ անդամակցության վճարի, տաղավարի վարձակալության վճարի, ցուցահանդեսի պաշտոնական կատալոգում գովազդի համար ծախսերի գծով:

Համանման եղանակով գյուղմթերքի ոլորտի կազմակերպությունների համար միջազգային ցուցահանդեսի մասնակցության աջակցությունը կարող է փոխարինվել Մոսկվայում նորաբաց Food city հսկայական գյուղմթերքի շուկայում ներկայանալու հնարավորության ընձեռամբ հետևյալ մեխանիզմով. ՀՀ համապատասխան պետական կառույցը կվարձակալի Food city-ում օրինակ՝ 50-100քմ մեծությամբ տաղավար, որը վարձակալությամբ կտրամադրի գյուղմթերքի արտադրության կամ վերամշակման ոլորտում գործող մի քանի կազմակերպության միաժամանակ՝ 10-20քմ տարածքով՝ 1 ամսով՝ հերթափոխության սկզբունքով: Միննույն ժամանակ 20քմ տարածք կհատկացվի Մոսկվայում գործող ՀՀ առևտրային ներկայացուցչության ներկայացուցչի, որտեղ նա կներկայացնի այն կազմակերպությունների արտադրանքների օրինակները, որոնց վարձակալության 1 ամիսն արդեն լրացել է և նրանց փոխարինելու են եկել նոր կազմակերպություններ: Բնականաբար, Food city-ի առաջին հարկում գտնվող պահեստում վարձակալված տարածքում կպահվեն տարբեր կազմակերպությունների արտադրանքները, իսկ առևտրային ներկայացուցչի կողմից դրանց վաճառքի պարագայում այդ վաճառքի որոշակի տոկոս կտրամադրվի պետությանը՝ վարձակալած պահեստի գումարի փոխհատուցման համար:

Առաջարկվում է ՀՀ արտահանող կազմակերպություններին աջակցելու նպատակով ստեղծել ՀՀ արտահանման հարթակ, որտեղ կազմակերպությունների գրանցումը կլինի կամավոր և ոչ մեծ չափի անդամավճարի պայմանով: Արտահանման հատվածում գրանցվող կազմակերպությունները կներկայացնեն տվյալ հարթակում իրենց արտադրանքի տեսականին: Իսկ տվյալ կայքի առաջնդման գործառույթը կդրվի տարբեր երկրներում գործող ՀՀ առևտրային ներկայացուցչությունների վրա: Արտահանման հարթակի այցելությունների թվի աճի ցուցանիշը կվկայի այս կամ այն ներկայացուցչության լավ կամ վատ աշխատանքի մասին:

Այսպիսով, մենք բացահայտեցինք ՀՀ արտահանման ազդեցության չափը տնտեսական աճի վրա, վեր հանեցինք արտահանման կառուցվածքում առկա թերությունները, հաշվարկների միջոցով հիմնավորեցինք մի շարք ապրանքատեսակների տեսանկյունից ՀՀ արտահանման համեմատական առավելության առկայությունը, առաջարկեցինք համեմատաբար նոր և հեռանկարային ոլորտների արտադրության և արտահանման խրախուսման հնարավոր տարբերակներ, ինչպես նաև արտահանման խրախուսման քաղաքականության այնպիսի լծակներ, որոնք ներկայումս չեն կիրառվում ՀՀ-ում՝ հիմնավորելով ՀՀ-ում դրանցից յուրաքանչյուրի տեղայնացման նպատակահարմարությունը:

## ԱՐՏԱՅԱՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ ՀՀ-ՈՒՄ

ԼԻԼԻԹ ՆՈՐԱՅՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ, *տ. գ. թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան*

*տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**Համառոտագիր:** Միջազգային փորձը վկայում է, որ արտահանումը հանդիսանում է տնտեսական աճի ապահովման հիմնական գործոններից մեկը: Հողվածի նպատակն է բացահայտել ՀՀ արտահանման ազդեցությունը տնտեսական աճի վրա և առաջարկել ուղիներ արտահանման կառուցվածքի, ինչպես նաև արտահանման խթանման գործիքակազմի բարելավման տեսանկյունից:

Հողվածում մշակված դրույթները կարող են կիրառվել ՀՀ արտահանման ուղղված պետական քաղաքականության մշակման ժամանակ, ինչպես նաև տվյալ թեմայով զբաղվող ապագա վերլուծաբանների և բուհերի դասախոսների կողմից:

*Բանալի բառեր. արտահանում, տնտեսական աճ, առևտրային հաշվեկշիռ, էկոնոմետրիկ վերլուծություն, համեմատական առավելություն, առևտրային ներկայացուցչություններ:*

## ЭКСПОРТ КАК КЛЮЧЕВОЙ ФАКТОР ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА РА

ЛИЛИТ НОРАЙРОВАНА САРГСЯН, *к. э. н.*

*научный сотрудник Института экономики имени М. Котаняна, НАН РА*

**Аннотация:** Международный опыт показывает, что экспорт является одним из ключевых факторов экономического роста. Целью данной статьи является выявить влияние экспорта РА на экономический рост и предложить пути улучшения структуры экспорта, а также инструментарий для продвижения экспорта.

Тезисы, изложенные в статье, могут быть применены при разработке экспортноориентированной политики Армении, а также со стороны будущих аналитиков и преподавателей вузов.

**Ключевые слова:** *Экспорт, экономический рост, торговый баланс, эконометрический анализ, сравнительное преимущество, торговые представительства.*

## EXPORT AS THE KEY FACTOR OF ECONOMIC GROWTH IN THE REPUBLIC OF ARMENIA

LILIT NORAYR SARGSYAN, *Ph.D. in Economics*  
*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The international best practice shows that exports are one of the key drivers of economic growth. The purpose of the article is to identify the impact of the Armenian exports on the economic growth and propose approaches to improving the export composition, and tools for export promotion as well.

The statements discussed in the article can be used in elaborating the export-oriented policy in Armenia, and by those who are interested in this topic as well, namely by future analysts and university professors.

**Keywords:** *Export, economic growth, trade balance, econometric analysis, comparative advantage, trade representations.*

### ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՈՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐՈՒՄ

Տարբեր միջազգային կազմակերպությունների և համաշխարհային կառույցների կողմից անընդհատ փորձ է կատարվում տարաբնույթ ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվող տվյալների հիման վրա համեմատություններ անցկացնել տարբեր երկրների հարկային համակարգերի և հարկային բեռի միջև՝ բացահայտելով այդ առումով առավել բարենպաստ երկրները: Այդ ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվող տվյալները իրենց արտացոլումն են գտնում ամենամյա տարբեր վարկանիշներում, զեկույցներում և այլ հրապարակումներում:

Heritage foundation միջազգային կազմակերպության «Index of economic freedom» վարկանիշում Հայաստանը 2018թ.-ին 186 երկրների շարքում զբաղեցրել է 44-րդ տեղը՝ ունենալով 100 հնարավորից 68.7 գնահատական և զերազանցելով աշխարհի մակարդակով միջին գնահատականը, սակայն փոքր-ինչ զիջելով տարածաշրջանի մակարդակով միջին գնահատականին (համապատասխանաբար 61.1 և 68.8) ու դասվելով չափավոր ազատ երկրների շարքում, իսկ եվրոպական տարածաշրջանում՝ 20-րդ տեղը: Ընդհանուր գնահատականը որոշվում է 4 ոլորտներում ընդհանուր առմամբ 12 ցուցանիշներով արձանագրած արդյունքների հիման վրա: Այդ ցուցանիշները և դրանցում Հայաստանի զբաղեցրած դիրքն ու վաստակած գնահատականը ներկայացված են աղյուսակ 1-ում<sup>1</sup>:

Ինչպես երևում է աղյուսակից, Հայաստանը ֆինկալ առողջություն ցուցանիշով զբաղեցնում է 114-115-րդ տեղը աշխարհում և 37-38-րդ տեղը տարածաշրջանում: Ֆինկալ առողջության ցուցանիշը իր հերթին ձևավորվում է 3 ցուցանիշների հիման վրա: Դրանք են եկամտային հարկի սահմանային դրույքաչափը, որի համար հիմք է հանդիսացել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ընդունման ժամանակ գործող սահմանային դրույքաչափը՝ 26% (ներկայումս՝ 36%), շահութահարկի սահմանային դրույքաչափը և հարկային բեռը: Եկամտային հարկի սահմանային դրույքաչափով Հայաստանը զբաղեցնում է 49-րդ (տարածաշրջանում՝ 21-րդ)

<sup>1</sup> <http://www.heritage.org/index/country/armenia>

տեղը (սահմանային դրույքաչափը 36% համարելու դեպքում 61-րդ տեղը, իսկ տարածաշրջանում՝ 27-րդ տեղը), շահութահարկի դրույքաչափով՝ 47-64-րդ (տարածաշրջանում՝ 24-31-րդ) տեղը, իսկ հարկային բեռով՝ 81-83-րդ (տարածաշրջանում՝ 1-ին) տեղը:

*Աղյուսակ 1*

**Heritage foundation միջազգային կազմակերպության «Index of economic freedom» վարկանիշում Հայաստանի զբաղեցրած դիրքը 2018թ.-ին**

| Ցուցանիշ                              | Զբաղեցրած դիրք | Զբաղեցրած դիրքը տարածաշրջանում | Վաստակած միավոր |
|---------------------------------------|----------------|--------------------------------|-----------------|
| <b>Օրենքի գերակայություն</b>          |                |                                |                 |
| Գույրային իրավունքներ                 | 72-73          | 33                             | 55.3            |
| Կառավարության ներգրավվածություն       | 70-72          | 30-31                          | 40.5            |
| Ղատական արդյունավետություն            | 86             | 37                             | 47.4            |
| <b>Կառավարության սահմանափակումներ</b> |                |                                |                 |
| Կառավարության ծախսումներ              | 50-51          | 1                              | 80.0            |
| Հարկային բեռ                          | 50             | 12                             | 84.7            |
| Ֆինկալ առողջություն                   | 114-115        | 37-38                          | 67.2            |
| <b>Կարգավորման արդյունավետություն</b> |                |                                |                 |
| Գործարարության ազատություն            | 31-32          | 17                             | 78.7            |
| Աշխատանքային ազատություն              | 42             | 10                             | 69.9            |
| Դրամական ազատություն                  | 110            | 38                             | 75.8            |
| <b>Բաց շուկաներ</b>                   |                |                                |                 |
| Առևտրի ազատություն                    | 81-84          | 41                             | 80.0            |
| Ներդրումային ազատություն              | 39-58          | 23-32                          | 75.0            |
| Ֆինանսական ազատություն                | 18-39          | 11-23                          | 70.0            |
| <b>Ընդհանուր ցուցանիշ</b>             | <b>44</b>      | <b>20</b>                      | <b>68.7</b>     |

Համաշխարհային տնտեսական համագումարի կողմից հրապարակվող «The global competitiveness report» վարկանիշում Հայաստանը 2017-2018թթ. 137 երկրների շարքում զբաղեցրել է 73-րդ տեղը՝ 7 հնարավորից վաստակելով 4.2 միավոր և նախորդ տարվա համեմատ բարելավվելով իր դիրքը 6 կետով:

Ընդհանուր գնահատականը որոշվում է 12 ոլորտներում արձանագրած ընդհանուր առմամբ 114 ցուցանիշների հիման վրա: Այդ ոլորտները և դրանցում Հայաստանի զբաղեցրած դիրքն ու վաստակած գնահատականը ներկայացված են աղյուսակ 2-ում՝

Համաշխարհային տնտեսական համագումարի կողմից հրապարակվող «The global competitiveness report» վարկանիշում Հայաստանի զբաղեցրած դիրքը 2017-2018թթ.1 և 2016-2017թթ.<sup>2</sup>

| Ցուցանիշ                               | Վաստակած միավոր (1-7) | Զբաղեցրած դիրքը 138 երկրների շարքում | Զբաղեցրած դիրքը նախորդ տարի 138 երկրների շարքում (վաստակած միավոր) |
|--|-----------------------|--------------------------------------|--|
| Հաստատություններ                       | 4.1                   | 55                                   | 66 (4.0)   |
| Ենթակառուցվածք                         | 3.9                   | 80                                   | 82 (3.8)   |
| Սակրոտնտեսական միջավայրը               | 4.1                   | 101                                  | 88 (4.3)   |
| Առողջապահություն և տարրական կրթություն | 6.0                   | 55                                   | 93 (5.4)   |
| Բարձրագույն կրթություն և ուսուցում     | 4.4                   | 69                                   | 71 (4.4)   |
| Ապրանքային շուկայի արդյունավետություն  | 4.7                   | 35                                   | 45 (4.6)   |
| Աշխատանքի շուկայի արդյունավետություն   | 4.4                   | 51                                   | 55 (4.4)   |
| Ֆինանսական շուկայի զարգացվածություն    | 3.9                   | 78                                   | 90 (3.7)   |
| Տեխնոլոգիական պատրաստակալությունը      | 4.1                   | 77                                   | 71 (4.0)   |
| Շուկայի չափը                           | 2.8                   | 115                                  | 120 (2.7)  |
| Բիզնեսի զարգացվածություն               | 4.0                   | 68                                   | 81 (3.8)   |
| Նորարարություն                         | 3.3                   | 70                                   | 87 (3.2)   |
| Ընդհանուր ցուցանիշ                     | 4.2                   | 73                                   | 79 (4.1)   |

<sup>1</sup> World economic forum, «The global competitiveness report 2017-2018», page 48.

<sup>2</sup> World economic forum, «The global competitiveness report 2016-2017», page 100.

Գործարարությամբ զբաղվելու համար առավել պրոբլեմային գործոնների շարքում հարկերի դրույքաչափերը և հարկային օրենսդրության բարդությունը զբաղեցնում են համապատասխանաբար 4-րդ և 5-րդ տեղերը<sup>1</sup> (աղյուսակ 3)

Աղյուսակ 3

**Գործարարությամբ զբաղվելու համար առավել պրոբլեմային գործոնները**

| Ցուցանիշ  | Միավոր | Միավոր (նախորդ տարի) | Զբաղեցրած դիրքը նախորդ տարի |
|---|--------|----------------------|-----------------------------|
| Ֆինանսավորման մատչելիությունը                   | 13.0   | 15.3                 | 1                           |
| Հարկերի դրույքաչափերը                           | 12.9   | 10.5                 | 4                           |
| Հարկային օրենսդրության բարդությունը             | 11.5   | 10.1                 | 5                           |
| Կաշառակերություն                                | 9.9    | 11.3                 | 2                           |
| Կառավարության անարդյունավետ բյուրոկրատիան       | 8.5    | 10.6                 | 3                           |
| Արտարժույթային կարգավորումները                  | 8.5    | 7.9                  | 7                           |
| Ոչ պատշաճ կերպով կրթված աշխատուժ                | 7.7    | 8.9                  | 6                           |
| Ենթակառուցվածքների անհամաչափ առաջարկ            | 6.9    | 6.1                  | 9                           |
| Նորարարությունների անբավարար կարողությունը      | 6.2    | 3.7                  | 10                          |
| Գնաձ  | 5.9    | 6.8                  | 8                           |
| Քաղաքականության անկայունությունը                | 3.3    | 3.3                  | 11                          |
| Աշխատուժի աշխատանքային վատ էթիկան               | 2.5    | 2.8                  | 12                          |
| Աշխատանքային օրենսդրության սահմանափակող նորմերը | 1.3    | 1.3                  | 13                          |
| Կառավարության անկայունություն/հեղաշրջումներ     | 1.0    | 0.1                  | 16                          |
| Հանրային վատ առողջություն                       | 0.6    | 0.9                  | 14                          |
| Հանցագործություն և գողություն                   | 0.3    | 0.3                  | 15                          |

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, հարկերի դրույքաչափերի և հարկային օրենսդրության բարդության ունեցած բացասական ազդեցությունը գործարարությամբ զբաղվելու համար առավել պրոբլեմային գործոնների

<sup>1</sup> Հարցվածներին խնդրվել է ցուցանիշների ցանկից ընտրել իրենց երկրում գործունեության իրականացման համար 5 առավել պրոբլեմայինները և դասակարգել դրանք 1-ից (առավել պրոբլեմային) մինչև 5: Մտացված միավորը համապատասխանում է պատասխաններին՝ կշռված իրենց դասակարգմանը համապատասխան:

շարքում եականորեն աճել է՝ համապատասխանաբար 4-րդ և 5-րդ տեղից աճելով 2-րդ և 3-րդ տեղ:

Ինչպես նշվել է վերևում, վերը թվարկված ոլորտները բաղկացած են 114 ցուցանիշներից, որոնցից առանձնացնենք հետևյալները՝ հարկման ազդեցությունը ներդրումային խթանների վրա, ընդհանուր հարկային դրույքաչափը (% շահույթից), մաքսատուրքը, մաքսային ընթացակարգերի բեռը և հարկման ազդեցությունը աշխատելու խրախուսման վրա: Նշված ցուցանիշներով ՀՀ զբաղեցրած դիրքը և վաստակած միավորները ներկայացված են աղյուսակ 4-ում՝

*Աղյուսակ 4*

**Համաշխարհային տնտեսական համագումարի կողմից հրապարակվող «The global competitiveness report» վարկանիշի վերը նշված ցուցանիշներով Հայաստանի զբաղեցրած դիրքը 2017-2018թթ.<sup>1</sup> և 2016-2017թթ.<sup>2</sup>**

| Ցուցանիշ  | Վաստակած միավոր (1-7) | Զբաղեցրած դիրքը 138 երկրների շարքում | Զբաղեցրած դիրքը նախորդ տարի 138 երկրների շարքում (վաստակած միավոր) |
|---|-----------------------|--------------------------------------|--|
| Հարկման ազդեցությունը ներդրումային խթանների վրա | 3.7                   | 60                                   | 48 (3.9)   |
| Ընդհանուր հարկային դրույքաչափը (% շահույթից)    | 18.5%                 | 9                                    | 12 (19.9%)   |
| Մաքսատուրքը                                     | 4.0                   | 53                                   | 64 (4.6)   |
| Մաքսային ընթացակարգերի բեռը                     | 3.8                   | 91                                   | 95 (3.6)   |
| Հարկման ազդեցությունը աշխատելու խրախուսման վրա  | 4.1                   | 57                                   | 62 (4.0)   |

Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը 2018» զեկույցում Հայաստանը 190 երկրների շարքում զբաղեցրել է 47-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ վատացնելով իր ցուցանիշը 9 տեղով: Գործարարությամբ զբաղվելու ոյուրիևությունը որոշվում է 10 ցուցանիշների համադրման արդյունքում, որոնցից յուրաքանչյուրը իր հերթին բաղկացած է մի քանի ենթացուցանիշից: Այդ ցուցանիշները և դրանց մասով Հայաստանի զբաղեցրած դիրքը ներկայացված են աղյուսակ 5-ում<sup>3</sup>:

<sup>1</sup> World economic forum, «The global competitiveness report 2017-2018», page 49.

<sup>2</sup> World economic forum, «The global competitiveness report 2016-2017», page 101.

<sup>3</sup> <http://www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia>

Համաշխարհային բանկի «Գործարարությանը զբաղվելը 2018» գեկույցում  
Հայաստանի զբաղեցրած դիրքը

| Ցուցանիշ                            | Զբաղեցրած դիրքը | Փոփոխությունը նախորդ տարվա համեմատ |
|-------------------------------------|-----------------|------------------------------------|
| Ձեռնարկությունների գրանցում         | 15              | -6                                 |
| Շինարարության թույլտվության ստացում | 89              | -8                                 |
| Էլեկտրականության համակարգին միացում | 66              | 10                                 |
| Մեփականության գրանցում              | 13              | -                                  |
| Վարկերի ստացում                     | 42              | -22                                |
| Փոքր ներդրողների պաշտպանություն     | 62              | -9                                 |
| Հարկազանձում                        | 87              | 1                                  |
| Միջազգային առևտուր                  | 52              | -4                                 |
| Պայմանագրերի կատարման ապահովում     | 47              | -19                                |
| Սնանկության ճանաչում                | 97              | -19                                |
| Ընդհանուր                           | 47              | -9                                 |

Հարկազանձում ցուցանիշը իր հերթին բաղկացած է մի բանի ցուցանիշից: Այդ ցուցանիշների մասով Հայաստանի տվյալները ներկայացված են աղյուսակ 6-ում՝

## Աղյուսակ 6

Համաշխարհային բանկի «Գործարարությանը զբաղվելը 2018» գեկույցի  
հարկազանձման ցուցանիշները Հայաստանի օրինակով

| Ցուցանիշ                                   | Հայաստան | Եվրոպա և Կենտրոնական Ասիա | ՏՀԶԿ  |
|--|----------|---------------------------|-------|
| Վճարումներ (քանակ/տարի)                    | 14       | 16.5                      | 10.9  |
| Ժամանակ (ժամ/տարի)                         | 313      | 218.4                     | 160.7 |
| Ընդհանուր հարկային դրույր<br>(% շահույթից) | 18.5     | 33.1                      | 40.1  |

Աղյուսակ 6-ի որոշ ցուցանիշներ բացված տեսքով ներկայացնենք աղյուսակ 7-ի միջոցով՝

## Աղյուսակ 6-ի տվյալները բացված տեսքով

| Ցուցանիշ  | Վճարումներ<br>(քանակ/տարի) | Ժամանակ<br>(ժամ/տարի) | Ընդհանուր<br>հարկային դրույք<br>(% շահույթից) |
|---|----------------------------|-----------------------|---|
| Շահութահարկ   | 1                          | 113                   | 17.63   |
| Հողի հարկ   | 2                          | -                     | 0.51  |
| Անշարժ գույքի գույքահարկ                                      | 2                          | -                     | 0.29  |
| Տրանսպորտային միջոցի հարկ                                     | 2                          | -                     | 0.02  |
| Բնապահպանական վճար  | 4                          | -                     | 0.02  |
| Շրջակա միջավայրի աղտոտման վճարը տրանսպորտային միջոցների համար | 1                          | -                     | 0.01  |
| Եկամտային հարկ (ներառյալ սոցիալական վճար)                     | 1                          | 103                   | Չի ներառվում հաշվարկի մեջ                     |
| ԱԱՀ   | 1                          | 97                    | Չի ներառվում հաշվարկի մեջ                     |

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների և մեր հարևան երկրների շարքում Հայաստանի զբաղեցրած դիրքը ներկայացված է աղյուսակ 8-ում<sup>1</sup>

## Աղյուսակ 8

Համաշխարհային բանկի «Գործարարությանը զբաղվելը 2018» զեկույցում նախկին ԽՍՀՄ հանրապետությունների և ՀՀ հարևան երկրների շարքում Հայաստանի զբաղեցրած դիրքը հարկային բեռի տեսանկյունից

| Երկիր    | Գործարարյ.<br>զբաղվելու<br>դյուրինություն.<br>(զբաղ. դիրք) | Հարկա-<br>գանձում<br>(զբաղ. դիրք) | Վճարումներ<br>(քանակ/տարի) | Ժամանակ<br>(ժամ/տարի) | Ընդհ.<br>հարկ.<br>դրույք<br>(%) |
|----------|--|-----------------------------------|----------------------------|-----------------------|---------------------------------|
| Լատվիա   | 19   | 13                                | 7                          | 168.5                 | 35.9                            |
| Էստոնիա  | 12   | 14                                | 8                          | 50                    | 48.7                            |
| Լիտվա    | 16   | 18                                | 11                         | 109.3                 | 42.7                            |
| Վրաստան  | 9  | 22                                | 5                          | 269                   | 16.4                            |
| Սլովակիա | 44   | 32                                | 10                         | 181                   | 40.5                            |
| Ադրբեջան | 57   | 35                                | 6                          | 195                   | 39.8                            |
| Ուկրաինա | 76   | 43                                | 5                          | 327.5                 | 37.8                            |

<sup>1</sup> <http://www.doingbusiness.org/data/exploretopics/paying-taxes>

| Երկիր      | Գործարարության գրադվելու դյուրիանություն (գրադ. դիրք) | Հարկազանձում (գրադ. դիրք) | Վճարումներ (քանակ/տարի) | Ժամանակ (ժամ/տարի) | Ընդհ. հարկ. դրույք (%) |
|------------|---|---------------------------|-------------------------|--------------------|------------------------|
| Ղազախստան  | 36  | 50                        | 7                       | 178                | 29.2                   |
| ՌԴ         | 35  | 52                        | 7                       | 168                | 47.5                   |
| Ուզբեկստան | 74  | 78                        | 10                      | 181                | 38.3                   |
| Հայաստան   | 47  | 87                        | 14                      | 313                | 18.5                   |
| Թուրքիա    | 60  | 88                        | 11                      | 215.5              | 41.1                   |
| Բելառուս   | 38  | 96                        | 7                       | 184                | 52.9                   |
| Տաջիկստան  | 123   | 132                       | 6                       | 224                | 65.2                   |
| Իրան       | 124   | 150                       | 20                      | 344                | 44.7                   |
| Ղրղզստան   | 77  | 151                       | 51                      | 225                | 29                     |

Նշված ցուցակում Հայաստանը հարկազանձման առումով զբաղեցնում է 11-րդ տեղը, հարկային վճարումների քանակով՝ 14-րդ տեղը, ծախսվող ժամանակով՝ 14-րդ տեղը, իսկ ընդհանուր հարկային դրույքով՝ 2-րդ տեղը:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ հարկային բեռի առումով ավելի մրցունակ երկիր դառնալու համար առաջին հերթին պետք է քայլեր ձեռնարկվեն նվազեցնելու, այսպես կոչված, լրացուցիչ հարկային բեռը, որը առաջանում է հարկային վճարումները կատարելու և հարկային հաշվետվությունները ներկայացնելու համար ծախսվող ժամանակի, ինչպես նաև հարկային վճարումների քանակի պատճառով:

### ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐՈՒՄ

#### ՆԱՐԵԿ ԳՐԻԳՈՐԻԻ ԶԱՐԴՈՒՄՅԱԼ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթրակյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

**Համառոտագիր:** Մույն հոդվածի շրջանակներում տարբեր միջազգային կազմակերպությունների և համաշխարհային կառույցների ամենամյա զեկույցների և հրապարակումների վերլուծության միջոցով փորձ է կատարվել ներկայացնելու ՀՀ հարկային բեռը միջազգային վարկանիշներում: Այդ նպատակով ուսումնասիրվել են մասնավորապես Heritage foundation միջազգային կազմակերպության «Index of economic freedom» վարկանիշը, Համաշխարհային տնտեսական համագումարի կողմից հրա-

սարակվող «The global competitiveness report» վարկանիշը և Համաշխարհային Բանկի «Գործարարության գրադվելը» զեկույցը:

*Բանալի բառեր. հարկային բեռ, վարկանիշ, հարկ, միջազգային կազմակերպություն:*

## НАЛОГОВОЕ БРЕМЯ РА В МЕЖДУНАРОДНЫХ РЕЙТИНГАХ

**НАРЕК ГРИГОРЬЕВИЧ КАРДУМЯН**

*аспирант Института экономики им. М.Котаяна ИАН РА*

**Аннотация:** В рамках этой статьи с помощью анализа годовых отчетов и публикаций различных международных организаций была предпринята попытка представить налоговое бремя РА в международных рейтингах. С этой целью были изучены рейтинги “Index of economic freedom” международной организации Heritage Foundation, “The global competitiveness report”, опубликованный Всемирным экономическим форумом и отчет Всемирного банка “Ведение бизнеса”.

*Ключевые слова:* налоговое бремя, рейтинг, налог, международная организация.

## THE TAX BURDEN IN THE REPUBLIC OF ARMENIA ACCORDING TO THE INTERNATIONAL RANKINGS

**NAREK GRIGORI QARDUMYAN**

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

### **Abstract**

The article attempts to present the tax burden in the Republic of Armenia based on the analysis of international rankings released by international organizations and donors in annual reports and various publications. For this purpose, namely the Index of Economic Freedom of the Heritage Foundation, the Global Competitiveness Report published by the World Economic Forum and the Doing Business Report prepared by the World Bank have been studied.

*Keywords:* Tax burden, ranking, tax, international organization.

**ԱՆԿԱՆՆԻԿ ԴՐԱՄԱՇԵՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՅ-ՈՒՄ**

Դրամաշրջանառությունը ցանկացած երկրի, այդ թվում Հայաստանի համար մեծ նշանակություն ունի հատկապես դրամավարկային քաղաքականության կարգավորման գործընթացում: Դրամաշրջանառությունն ըստ էության ունի տարբեր սահմանումներ: Այսպես՝ դրամաշրջանառությունը կարելի է սահմանել նաև որպես<sup>1</sup>.

1. դրամի անընդհատ շարժ, շրջանառության և վճարման ոլորտում կանխիկ և անկանխիկ ձևերով, որը պայմանավորված է՝ աշխատանքի, ծառայությունների մատուցման դիմաց վճարման, ապրանքների գնման, տարբեր տեսակի վճարումների և հաշվարկների իրականացման, թոշակների տրամադրման, պարտքերի վերադարձման գործընթացով: Դրամաշրջանառությունը սպասարկվում է թղթադրամներով (բանկնոտներով), մետաղադրամներով, չեկերով, վարկային (կրեդիտային) քարտերով և այլն:

Գոյություն ունեի դրամաշրջանառության երկու տեսակ: Առաջինը՝ դա կանխիկ դրամի, այսինքն՝ դրամանիշերի (բանկնոտների և մետաղադրամի) շրջանառությունն է: Այս դեպքում որպես վճարամիջոց հանդես են գալիս իրական դրամանիշերը, որոնք մի սուբյեկտի կողմից փոխանցվում են մյուսին՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դիմաց կամ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում (օրինակ՝ տուգանքները և սույժերը): Երկրորդը՝ անկանխիկ դրամաշրջանառությունն է: Այն դրսևորվում է մի սուբյեկտի բանկային հաշվից որոշակի դրամական գումար դուրս հանելու և այն տվյալ բանկում կամ այլ բանկում մեկ այլ սուբյեկտի հաշվին հաշվեգրելու, կամ այլ ձևով, որի դեպքում կանխիկ դրամական միջոցները որպես վճարամիջոց բացակայում են:

2. Դա կանխիկ և անկանխիկ դրամի անընդմեջ շարժն է՝ արտադրանքի, ապրանքների շրջանառության, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման և բազմապիսի վճարումների իրականացման գործընթացում:

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նրա խնդիրներից է հանդիսանում նաև գործուն վճարահաշվարկային համա-

<sup>1</sup> Բայադյան Ա.Զ., Ֆինանսավիճակագրական բացատրական բառարան, Եր., «Լիմուշ», 2008 էջ 171:

կարգի ստեղծումն ու զարգացումը<sup>1</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ դրույթը ամրագրված է օրենսդրորեն դեռևս 1996 թ.-ից, այդուհանդերձ մինչև 2004թ. նոյեմբերը չկար հստակ օրենսդրական սահմանում, թե ինչ ենք հասկանում «վճարահաշվարկային համակարգ» ասելով: Կային մի շարք մեկնաբանություններ, բայց չկար հստակ սահմանում, իսկ ահա 2004 թ. նոյեմբերից ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց և 2005 թ.-ից ուժի մեջ է «Վճարահաշվարկային համակարգի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որի հիմնական նպատակներից մեկը վճարահաշվարկային բնագավառում կիրառվող հիմնական հասկացությունների իրավական սահմանումն էր:

Համաձայն օրենքի՝ վճարահաշվարկային համակարգը վճարային գործիքների, քլիրինգի իրականացման, միջոցների փոխանցման և վերջնահաշվարկի կատարման ընդհանուր կանոնների, ընթացակարգերի և վերջիններս ապահովող տեխնիկածրագրային միջոցների ամբողջությունն է, որի միջոցով ապահովվում է վճարման կատարումը շահառուին<sup>2</sup>:

Վճարային համակարգերը հանդիսանում են տնտեսության և ֆինանսական համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկը և որոնք օգտագործվում են ՀՀ կառավարության կողմից հարկային վճարումներ, նպաստներ, թոշակներ, սոցիալական այլ վճարումներ կատարելու, ֆինանսական շուկայի գործարքների վերջնահաշվարկներն ապահովելու, ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությունն իրականացնելու, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից միմյանց նկատմամբ եղած դրամական պարտավորությունները մարելու համար: «Թույլ» վճարային համակարգերը կարող են խոչընդոտել տնտեսության ֆինանսական կայունությանը և զարգացմանը, ինչպես նաև հանգեցնել ֆինանսական ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործմանը, գործակալների միջև ռիսկերի անհամաչափ բաշխմանը, մասնակիցների մոտ իրական կորուստների առաջացմանը և ի վերջո հանգեցնել ֆինանսական համակարգի ու փողի նկատմամբ վստահության կորստին:

Այս իմաստով կարևոր են երկրի վճարահաշվարկային համակարգի ուսումնասիրության, դրա հիմնական ցուցանիշների վերլուծության և գնահատման հարցերը:

<sup>1</sup> «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 30.06.1996 թ., հոդված 5:

<sup>2</sup> «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 24.11.2004 թ., հոդված 3:

Վճարային համակարգերը կարող են հանդիսանալ համակարգային ռիսկերի առաջացման և տարածման միջավայր<sup>1</sup>: Համակարգային ռիսկեր կարող են առաջանալ, երբ օրինակ տեխնիկական վթարի հետևանքով խափանվում է համակարգի սահուն գործունեությունը, կամ երբ համակարգի մասնակիցներից մեկը անկարող է կատարել իր ֆինանսական պարտավորությունները, և համակարգում բացակայում են հատուկ մեխանիզմներ, որոնք կարող են սահմանափակել տեխնիկական վթարի կամ ֆինանսական խնդիրների բացասական հետևանքների շրթայական տարածումը այլ մասնակիցների վրա: Վճարահաշվարկային համակարգերի կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որ ՀՀ ԿԲ-ն ապահովի, որ համակարգերի կազմակերպման և գործունեության կանոնները չնպաստեն ֆինանսական և գործառնական ռիսկերի գոյացմանը կամ տարածմանը, համակարգում սահմանված լինեն ռիսկերի կառավարման մեխանիզմներ, իսկ վճարային համակարգի մասնակիցներն ունենան հնարավորություններ և խթաններ զսպելու հնարավոր ռիսկերը: Հենց այս նպատակով է կենտրոնական բանկի կողմից իրականացվում վճարահաշվարկային համակարգերի հսկողություն (այսուհետ՝ ՎՀՀ):

ՎՀՀ-ն ապահովում է, որ վճարային համակարգի ենթակառուցվածքները և վճարային ծառայություններ մատուցող շուկաները՝

- աշխատեն անխափան, արդյունավետ ու բոլոր մասնակիցների և օգտագործողների համար ազնիվ ձևով,
- նվազեցնեն և վերահսկեն այն ռիսկերը, որոնք առաջանում են վճարային համակարգի առանձին մասնակցի կողմից իր պարտավորությունների վերջնահաշվարկը ապահովելու անկարողության հետևանքով և որոնք կարող են տնտեսությունում ցնցումների տարածման պատճառ հանդիսանալ,
- ապահովեն տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ զարգացման այնպիսի մակարդակ, որը կարող է բավարարել զարգացող տնտեսության կարիքները վճարահաշվարկային բնագավառում:

Պարզաբանման համար ուսումնասիրենք ՀՀ վճարահաշվարկային համակարգի մի քանի վիճակագրական կարևորագույն ցուցանիշներ: Ուստի այդ նպատակով վերլուծենք ՀՀ կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումների դինամիկան ըստ վերջին 2012-2016 թթ. տվյալների (տե՛ս աղյուսակ 1-ը)<sup>2</sup>:

<sup>1</sup> Ադրյուրը՝ Վճարահաշվարկային համակարգերի հսկողությունը (oversight)՝ որպես ՀՀ կենտրոնական բանկերի նորագույն ֆունկցիա, [www.cba.am](http://www.cba.am)

<sup>2</sup> Ադրյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք-էջ, [www.cba.am](http://www.cba.am)

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ 22 կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումների ծավալները և քանակները ուսումնասիրվող 5 տարիների ընթացքում արձանագրել են աճ, բացառությամբ չեկերով վճարումների: Այսպես՝ էլեկտրոնային վճարային հանձնարարականներով վճարումների ծավալները 2016 թ.-ին կազմել են 21961,7 մլրդ դրամ 2012 թ.-ի համեմատությամբ արձանագրելով ավելի քան կրկնակի աճ: Միևնույն ժամանակ, ավելի քան 1,5 անգամ աճ ենթ կատարում վճարումների քանակի առումով:

*Աղյուսակ 1*

**22 կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումները՝ ըստ 2012-2016 թթ.**

|  | 2012 թ.   | 2013 թ.   | 2014 թ.   | 2015թ.    | 2016թ.    |
|--|-----------|-----------|-----------|-----------|-----------|
| <b>Վճարումներ էլեկտրոնային վճարային հանձնարարականներով</b> |           |           |           |           |           |
| Օավալ (մլն. դրամ)  | 10568,616 | 12103,431 | 18297,163 | 19605,411 | 21961,715 |
| Քանակ, հատ   | 8710,110  | 9479,553  | 9754,949  | 11755,269 | 13996,725 |
| <b>Վճարումներ չեկերով</b>                                  |           |           |           |           |           |
| Օավալ (մլն. դրամ)  | 30,291    | 24,276    | 6,994     | 11,771    | 4,622     |
| Քանակ, հատ   | 12,042    | 10,750    | 3,923     | 6,434     | 2,059     |
| <b>Վճարումներ այլ դեբետային գործիքներով</b>                |           |           |           |           |           |
| Օավալ (մլն. դրամ)  | 0         | 0         | 0         | 0         | 0         |
| Քանակ, հատ   | 0         | 0         | 0         | 0         | 0         |
| <b>Քարտերով անկանխիկ գործառնություններ</b>                 |           |           |           |           |           |
| Օավալ (մլն. դրամ)  | 89,745    | 105,786   | 132,217   | 165,139   | 218,525   |
| Քանակ, հատ   | 2805,023  | 3496,610  | 4565,205  | 6104,910  | 8195,997  |
| <b>Քարտերով կատարված գործառնություններ</b>                 |           |           |           |           |           |
| Օավալ (մլն. դրամ)  | 986,107   | 1,108,032 | 1,275,470 | 1,363,389 | 1,381,842 |
| Քանակ, հատ   | 18800,105 | 20540,950 | 24824,677 | 27942,967 | 29994,635 |

Չեկերով վճարումների ծավալներն ու քանակը, ունենալով տատանողական միտումներ, 2016 թ. ուսումնասիրվող 5 տարիների առումով եղել են ամենացածրը՝ համապատասխանաբար 4,6 մլրդ դրամ և 2059 հատ:

Ակնառու է պլաստիկ քարտերով անկանխիկ գործառնությունների քանակային (ավելի քան 2,9 անգամ) և ծավալային (2,4 անգամ) աճը, ինչպես նաև ընդհանրապես պլաստիկ քարտերով կատարված գործառ-

նությունների քանակային և ծավալային աճը՝ համապատասխանաբար 1,6 և 1,4 անգամ:

Հավելենք, որ այլ դեբետային գործիքներով վճարումներ (ուղղակի դեբետագրում) ուսումնասիրվող ժամանակահատվածում չեն իրականացվել:

Ընդհանրացնելով նշենք, որ ըստ պաշտոնական տվյալների՝ ՀՀ-ում անկանխիկ վճարումները կատարվում են վճարման հանձնարարականներով, պահանջագրերով, չեկերով, վճարային քարտերով և էլեկտրոնային փողերով: 2016 թվականին անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 24,2 տրլն դրամ, իսկ քանակը՝ 28,2 մլն հատ: Վճարումների ծավալի գերակշռող մասը՝ 99,0%-ը, բաժին է ընկնում վճարման հանձնարարականներին, 0,9%-ը՝ քարտերով անկանխիկ գործառնություններին, իսկ մնացածը՝ չեկերին, պահանջագրերին և էլեկտրոնային փողերին: Վճարային գործիքների տարածվածության տեսանկյունից կարևորվում են վճարային քարտերը, որոնցով իրականացված անկանխիկ վճարումները կազմում են ընդհանուր անկանխիկ վճարումների քանակի 29,0 %-ը<sup>1</sup>:

Այժմ վերլուծենք շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը և դրանցով կատարված գործառնությունների քանակը և ծավալը:

Տվյալները ներկայացնենք համապատասխանաբար աղյուսակ 2-ի և աղյուսակ 3-ի տեսքով<sup>2</sup>:

*Աղյուսակ 2*

**Շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը՝  
ըստ 2012-2016 թթ.**

| Վճարային քարտեր       | 2012թ.    | 2013թ.    | 2014թ.    | 2015թ.    | 2016թ.    |
|-----------------------|-----------|-----------|-----------|-----------|-----------|
| ԱՐՔԱ քարտեր           | 492,126   | 564,503   | 546,509   | 548,521   | 521,273   |
| VISA                  | 520,703   | 652,398   | 712,211   | 789,150   | 587,671   |
| MasterCard            | 264,539   | 299,815   | 320,653   | 344,365   | 416,147   |
| Միջազգային այլ քարտեր | 45,581    | 46,019    | 44,684    | 47,321    | 45,667    |
| Ընդամենը              | 1,322,949 | 1,562,735 | 1,624,057 | 1,729,357 | 1,570,758 |

<sup>1</sup> ՀՀ կենտրոնական բանկ «Հայաստանի ֆինանսական համակարգը», 2016 թ., [www.cba.am](http://www.cba.am)

<sup>2</sup> Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք-էջ, [www.cba.am](http://www.cba.am)

**Քարտերով կատարված գործառնությունների քանակը և ծավալը՝  
ըստ 2012-2016 թթ.**

| Վճարային քարտեր              | 2012 թ.    | 2013 թ.    | 2014 թ.    | 2015 թ.    | 2016 թ.    |
|------------------------------|------------|------------|------------|------------|------------|
| <b>ԱՐՔԱ քարտեր</b>           |            |            |            |            |            |
| Ծավալ (մլն. դրամ)            | 290,959    | 281,662    | 347,667    | 362,457    | 360,868    |
| Քանակ                        | 7,031,742  | 6,615,934  | 7,492,928  | 8,001,877  | 8,129,825  |
| <b>VISA</b>                  |            |            |            |            |            |
| Ծավալ (մլն. դրամ)            | 392,341    | 472,012    | 596,111    | 679,953    | 676,026    |
| Քանակ                        | 7,100,688  | 8,925,914  | 10,903,282 | 13,678,706 | 14,381,291 |
| <b>MasterCard</b>            |            |            |            |            |            |
| Ծավալ (մլն. դրամ)            | 161,988    | 180,117    | 249,104    | 296,409    | 340,715    |
| Քանակ                        | 3,401,588  | 3,859,421  | 5,065,481  | 6,439,633  | 8,098,560  |
| <b>Միջազգային այլ քարտեր</b> |            |            |            |            |            |
| Ծավալ (մլն. դրամ)            | 70,727     | 75,888     | 81,924     | 101,235    | 32,658     |
| Քանակ                        | 1,074,069  | 1,116,940  | 1,361,032  | 1,627,691  | 676,272    |
| <b>Ընդամենը</b>              |            |            |            |            |            |
| Ծավալ (մլն. դրամ)            | 916,016    | 1,009,679  | 1,274,806  | 1,440,055  | 1,410,268  |
| Քանակ                        | 18,608,087 | 20,518,209 | 24,822,723 | 29,747,907 | 31,285,948 |

Աղյուսակ 2-ի տվյալներից ակնհայտ է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը շարունակաբար ավելացել է, բացառությամբ վերջին՝ 2016 թ.-ի: Համեմատության առումով նշենք, որ 2015 թ. քարտերի քանակը բազիսային 2012 թ.-ի նկատմամբ աճել է շուրջ 30,7%-ով, իսկ 2016 թ.-ին՝ շուրջ 18,7%-ով:

Աղյուսակ 2-ի տվյալներից նկատում ենք նաև, որ ԱՐՔԱ քարտի նկատմամբ բնակչության հետաքրքրությունն աճել է հատկապես 2012-2013 թթ., սակայն 2014-2016 թթ. այդ հետաքրքրությունն աստիճանաբար նվազել է: Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ հետաքրքրությունը դեպի հայկական քարտատեսակը չափավոր աճ է ունեցել (մոտ 6,0 %):

Հակառակ պատկերն ենք տեսնում միջազգային քարտատեսակների դեպքում: Այսպես, VISA միջազգային քարտատեսակի քանակը շրջանառության մեջ շարունակաբար աճել է 2012-2015 թթ. ընթացքում (51,6 %), իսկ 2016 թ.-ին քանակը նվազել է նախորդ տարվա համեմատությամբ, սակայն այդուհանդերձ բազիսային 2012 թ.-ի համեմատությամբ շրջանառության մեջ գտնվող վճարային այս քարտի քանակը աճել է մոտ 13 %-ով: MasterCard-ի դեպքում շարունակական աճման միտում ենք տեսնում

ուումնասիրվող 5 տարիների ընթացքում (2016 թ. այս քարտատեսակի քանակը բազիսային 2012 թ.-ի նկատմամբ աճել է շուրջ 57,3 %-ով):

Միջազգային այլ քարտատեսակների նկատմամբ բնակչության հետաքրքրությունը կարող ենք ասել, եղել է չափավոր, ինչը կարելի է բացատրել այս քարտատեսակների թանկ լինելու հանգամանքով:

Աղյուսակ 3-ի տվյալներից ակնառու է, որ 2012-2016 թթ. ընթացքում ՀՀ-ում քարտերով կատարված գործառնությունների քանակի և ծավալի առումով ունեցել ենք աճ: Այսպես, 2016 թ. 2012 թ.-ի համեմատությամբ քարտերով կատարված գործարքների ծավալն աճել է շուրջ 495 միլիարդ դրամով (54,0 %), իսկ գործարքների քանակը՝ 68,1 %-ով: Համադրելով այս 2 ցուցանիշների դինամիկան՝ կարող ենք փաստել, որ քարտերով կատարված գործարքների ծավալային աճը գլխավորապես պայմանավորված է այդ գործարքների քանակային աճով և ոչ թե մեկ գործարքի ծավալի աճով: Այսպիսով ընդհանրական առումով նշենք, որ ՀՀ բնակչությունը սկսել է աստիճանաբար ավելի շատ գործարքներ կատարել քարտերով, սակայն դեռևս յուրաքանչյուր գործարքի ծավալը փոքր է, այլ խոսքով՝ մեծ գումարների գործարքները դեռևս կանխիկ են:

## ԱՆԿԱՆԻԿ ԴՐԱՄԱԵՐԶԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՄ

### ՈՌԲԵՐՏ ՍՈՍԻ ԸՈՉԱՐՅԱՆ

*Հայաստանի ազգային ագրարային համալսարան, ասպիրանտ*

**Համառոտագիր:** Դրամաշրջանառությունը ցանկացած երկրի, այդ թվում Հայաստանի համար մեծ նշանակություն ունի հատկապես դրամավարկային քաղաքականության կարգավորման գործընթացում: Գոյություն ունի դրամաշրջանառության երկու տեսակ: Առաջինը կանխիկ դրամի, այսինքն՝ թղթադրամների և մետաղադրամների շրջանառությունն է, երկրորդը՝ անկանխիկ դրամաշրջանառությունն է: Ներկայացվող հոդվածում կատարվել է ՀՀ անկանխիկ դրամաշրջանառության դինամիկ փոփոխությունների վերլուծություն՝ հիմնված վիճակագրական տվյալների վրա: Հետազոտությունն ամփոփված է տնտեսագիտական մեկնաբանություններով և եզրակացություններով:

*Բանալի բառեր.* դրամաշրջանառություն, անկանխիկ շրջանառություն, վճարահաշվարկային համակարգ, դինամիկ վերլուծություն,

*դրամական փոխանցումներ, վճարային քարտեր, գործարարությունների քանակ, գործարարությունների ծավալ:*

## **АНАЛИЗ ВРЕМЕННЫХ ИЗМЕНЕНИЙ БЕЗНАЛИЧНОГО ДЕНЕЖНОГО ОБОРОТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

**РОБЕРТ СОСОВИЧ КОЧАРЯН**

*Национальный аграрный университет Армении, аспирант*

**Аннотация:** Денежный оборот имеет большое значение для любой страны, включая Армению, особенно в деле регулирования денежно-кредитной политики. Существует два типа денежного обращения: первый - это движение наличных денег, то есть обращение банкнот и монет, а второй - безналичный оборот. В статье представлен анализ динамических изменений безналичного оборота Армении на основе статистических данных. Обзор обобщен экономическими комментариями и выводами.

**Ключевые слова:** *денежное обращение, безналичный оборот, платежная система, динамический анализ, денежные переводы, платежные карты, количество транзакций, объем транзакций.*

## **ANALYSIS OF TEMPORAL CHANGES IN THE NON-CASH IN CIRCULATION IN THE REPUBLIC OF ARMENIA**

**ROBERT SOS KOCHARYAN**

*Ph.D. Student, Agrarian National University of Armenia*

**Abstract** Money in circulation is of a great importance to any country, including Armenia, namely, in the process of regulating the monetary policy. Two types of money in circulation could be distinguished: first, cash in circulation, that is currency and coins in circulation; and second, non-cash in circulation. The article presents an analysis of the dynamics on Armenia's non-cash in circulation based on the statistical data. The study provides respective economic interpretations and conclusions.

**Keywords:** *Money in circulation, non-cash in circulation, payment system, dynamic analysis, money transfers, payment cards, number of transactions, volume of transactions.*

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏԵԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՈՐԲԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱԼ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթայանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող*

**«ԱԶՆԻՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ»  
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԶՈՐԱՅԱՆԻ ՀԱՅԵՑՈՒԹՅԱՄԲ**

Նիկողայոս Զորայանը առաջին հայ տնտեսագետն է, որը, ըստ էության, քննության առարկա է դարձրել քաղաքատնտեսության հիմնական կատեգորիաները և, որպես ազատամտական ուղղության ներկայացուցիչ, դրվատել արևմտյան տնտեսաձևի սկզբունքները: Տնտեսագիտությունը նրա լուսավորչական ծրագրի բաղկացուցիչներից է: Ն.Զորայանի գլխավոր աշխատությունը՝ «Քաղաքական տնտեսության վրա տեղեկություններ», լույս է տեսել 1849-ին: Դա մի ժամանակաշրջան էր, երբ հայ իրականության մեջ աշխուժանում էին դրամատիքական հարաբերությունները՝ պայմանավորելով հասարակության պահվածքի նոր շփումների անհրաժեշտությունն ու ձևավորումը: Այդտեղից էլ աշխատության նպատակը այդ «ազնիվ գիտության օգուտներուն ազգակիցներինս մասնակից ընեն», «մատաղ հասակեն» ծանոթացնելու այդ «հարկավոր գիտութեան» սկզբունքներին<sup>1</sup>, վկայակոչելով Ժ.Բ.Սեյի այն միտքը, թե մինչև ժողովրդի մեծ մասը տեղյակ չլինի դրանց «ազգաց իրական օգուտ մը չի կրնար ընել»<sup>2</sup>: Եվ ահա նա ուրվագծում է տնտեսական գիտության ուսումնասիրության այն բաղադրիչները, որոնք պայմանավորում են ազգի տնտեսական բարեկեցությունը: Ինչպես հայտնի է, մերկանտիլիստները որպես հարստության աղբյուր հռչակում էին շրջանառության ոլորտը, ֆիզիկոկրատները այդպիսին դիտում էին գյուղատնտեսությունը, Ա.Սմիթը տնտեսական գիտության մեջ մտցրեց այն պարզ գաղափարը, թե ժողովուրդների հարստության աղբյուրը աշխատանքն է: Ն.Զորայանի տնտեսական գիտության վերաբերյալ մտածողությունը ելնում է

<sup>1</sup> Նիկողայոս Զորայան, Քաղաքական տնտեսության վրա տեղեկություններ, Կոստանդնուպոլիս, 1849, առաջաբան:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 336:

հարստության ստեղծման մասին հենց այս վերջին ըմբռնումից. «Արդ, ի՞նչ կը սովորվեցունէ բաղաքական տնտեսությունը. - արդար ճամբով հարստանալ: -Ո՞րն է հարստանալու ընտրած արդար ճամբան.-աշխատությունը: Քաղաքական տնտեսությունը մեզի կը սովորեցունէ նախ, որ հարստման ամենահարկավոր պատճառներուն մեկը աշխատությունն է, առանց անոր կամ հարստում չըլլար...» և ապա «թե որոնք են աշխատութեան նյութ տալու աղբյուրները, և անոնք ինչ կերպով բանեցնելու է որ աշխատողին ջանքը բեղմնավորելով հասարակության մեծամեծ բարիք ծագին»<sup>1</sup>: Պատմությանը հայտնի այլ մեթոդներով՝ ինչպէս օրինակ պատերազմների միջոցով ձեռք բերած հարստությունը, հասարակությանը մղում է դեպի չարիքների, ծուլության, համիշտակությունների ու հակադրությունների ուղին: Աշխատանքը հարստության աղբյուր դիտելու Ն.Ջորայանի դիտարկումը, առիթ չի կարող դառնալ այնպիսի բանաձևումների համար, թե նա հետևել է դասական տնտեսագիտության արժեքի աշխատանքային տեսությանը: Դա եղել է ժամանակի տուրքը, երբ հայ տնտեսագիտական մտքի պատմաբանները պարզապէս դրանով մարքսիզմի տնտեսական ուսմունքի հետ համարժեք հասկացություններ էին փնտրում տնտեսագետների հայացքներում: Ինչպէս ավելի ուշ կնկատենք, նա բնավ չի եղել արժեքի աշխատանքային տեսության հետևորդը: Տնտեսական գիտության ուսումնասիրության ոլորտները շատ ընդգրկուն են և բոլորը թվարկել հնարավոր չէ, այնուամենայնիվ նա հատկապէս կարևորում է կապիտալի, մարդկանց «նյութական ու իմացական կարողությունների», տնտեսական ազատության, հարկահանության, սեփականության իրավունքի, «գործավարի ու ձեռնարկուի փոխադարձ առնչությունները կարգի կանոնի դնելու» հարցերը:

Ն.Ջորայանն իր աշխատությունը սկսում է փոխանակության վերլուծությունից: Տնտեսական էվոյուցիայի շրջաններում սահմանափակ էին մարդկանց պահանջմունքները: Մարդիկ միմյանց հետ հարաբերվելու կարիք չունեին, պահանջմունքների բավարարումը կատարվում էր բնության բարիքների սպառման միջոցով: Սակայն, «Մարդուս պիտույքը շատանալու սկսած վայրկեանեն, ուրիշի օգնութեանը չի բարոտիլ անհնար է»: Մարդն ամեն ինչ արտադրել չի կարող, ուստի փոխանակությունը դառնում է անխուսափելի, որպէս «հանգիստ ապրելու ու միանգամայն քիչ աշխատելու հնարք»: Այսինքն, Ն.Ջորայանը փոխանակությունը դիտում է ոչ միայն որպէս պահանջմունքների բավարարման, այլև աշխատանքի խնայողության կարևորագույն պայման: Այն դառնում

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 328-329:

է տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման, հասարակության պահվածքի հիմնարար հարաբերության ձևը, ինչպես առանձին երկրների ներսում՝ մարդկանց, այնպես էլ երկրների միջև: Որքան ընդլայնվում են աշխատանքի հասարակական բաժանման սահմանները, այնքան մարդիկ ավելի շատ պահանջմունքները բավարարում են փոխանակության միջոցով, այնքան փոխանակությունը դառնում է «շահավոր»<sup>1</sup>: Ազգերի միջև առևտուրը սահմաններ չի ճանաչում. «վաճառական ազգը բանաստեղծին երեվակայելը կընմանի, անոր սահմանը խիստ ընդարձակ է»<sup>2</sup>: Իսկ դրա համար պահանջվում են որոշակի պայմաններ, որոնցից ամենագլխավորներից մեկը, ինչպես կասեր Դիդլեյ Նորսը, խաղաղությունն է. «Մարդիկ,- գրում է Ն.Ջորայանը,- հայտնի բան է, որ առանց վաճառականության կատարյալ բարեկեցության ու հանգստության մեջ չեն կրնար ապրիլ. ուրեմն շատ ցանկալի է, որ ազգերը իրարու հետ միշտ սիրով վարվեն, խաղաղությամբ իրարու հետ միանան, բայց դժբաղդաբար նախանձը չարաշահությունը մարդու այն աստիճան կըկուրացնե, որ շատ ատեն սոսկալի պատերազմներ կուզան՝ ազգաց մեջ եղած վաճառականությունը՝ արյունահեղ թշնամություններով կըխափանեն, խաղաղությունը՝ վաճառականության հոգին է»<sup>3</sup>:

Առևտուրը հեշտացնող «ընդհանուր միջոցը» փողն է, որը թույլ է տալիս լուծելու այն դժվարությունները, եթե փոխանակությունն իրականացվեր բնաիրային հիմունքներով: Պարզապես շատ գործարքներ կմնային չիրացված:

Հայտնի է, որ պատմականորեն իբրև փոխանակության միջոց օգտագործել են տարբեր ապրանքներ, որոնք սակայն չունեին ոսկու կամ արծաթի «հարմարությունը»: Փողի ծագման ու իբրև փոխանակության միջոցի վերաբերյալ Ջորայանի դիտողությունները հանգում են հետևյալին. «... ոսկին, արծաթե ու պղնձե դրամներուն ամեն տեղ անցնելուն պատճառը՝ վրայի դրոշմը չէ, այլ ըստ ինքեան յարդ մը ունենալնին է. և ասոր փորձն ալ սա է որ, երբ որ քանի մը հինգնոց մեկտեղ հալեցնես ու ձոյլ մը ընելու ըլլաս ու ոսկերիչին տասիս, քիչ մը պակասով զիններին քեզի կվճարե: Նմանապես, պղինձը՝ ինչ ձևով ըլլա, հարզ մը ունի:

Դրամի համար ոսկին, արծաթը ու պղինձը չի գործածված, մարդիկ ուրիշ նյութեր գործածեցին. և մինչև հիմա ալ վայրենի ազգաց մեջ կը գործածին, ինչպես են տեսակ տեսակ խեցիկներ, ծխախոտ (թուրություն), աղ, կտավ, կով, ձի, ցորեն, մորթ, բեմեռ, երկաթ և այլն: Բայց ասոնց մեկը

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 4-6:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 13:

ուսկիին, արծաթին ու պղնձին հարմարությունը չունին: Ասոնք ոչ կը կոտրին, ոչ կը մաշին և ոչ կը փտտին: Իրենց հարգին նայելով՝ քիչ տեղ կրունեն. որչափ մանր ուզես կրնաս բաժանել...: Ահա այս պատճառներուն համար է, որ ոսկին, արծաթը ու պղինձը ամեն ազգ իրեն դրամ ըրեր է»<sup>1</sup>: Միակողմանի է ներկայանում այն կարծիքը, թե Ն.Ջորայանը փողը դիտում է միայն «շրջանառության հարմարության», այսինքն «փոխանակության միջոցի» տեսակետից: Նախ, ինչպես նկատել ենք, նա տեղին սահմանագատում է այն տարբերությունները, որ առկա է ոսկու և արծաթի՝ որպես փողի առավելությունները, փողի ֆունկցիա կատարող այլ ապրանքատեսակների նկատմամբ: Եվ, որ շատ կարևոր է, նա նշում է, որ ոսկին ու արծաթը ունենալով ներքին արժեք, դրամական միավորի իրենց բաժանումներով՝ որպես չափի մասշտաբ, օգտագործվում է այլ ապրանքների գնահատման՝ այսինքն դրանց համեմատական արժեքների չափակցման համար՝ որպես արժեչափի միջոց: Ինչ վերաբերում է թղթադրամին, այն իրական արժեք չունի ու «...թեպետ իբր իրական դրամ կառնեն կուտան, բայց իրոք դրամ չէ, այլ տեղը դրամ տալու խոստման գիր մը կամ մուրհակ...»<sup>2</sup>:

Ն.Ջորայանի այն միտքը, թե «Ասիկայ այնչափ ճշմարիտ է, որ հասարակորեն ոսկին արծաթեն զրեթե քսան անգամ ավելի շատ ծախքով ու աշխատությամբ ձեռք գալուն համար, ոսկին ալ արծաթեն քսան անգամ ավելի հարգ ունի»<sup>3</sup> միտքը հիմք է տվել այն հետևության համար, թե նա հարել է արժեքի աշխատանքային տեսությանը<sup>4</sup>: Մինչդեռ դրան անմիջապես հետևում է արժեքի աշխատանքային տեսությունը մերժող բացատրությունը. «Երբոր ցանկալի իր մը աշխատությամբ միայն կըստացվի, հարկավ մարդիկ այն իրը ստանալու համար կաշխատին. և հասարակաբար շատ հարգ ունեցող բաներն ալ շատ աշխատությամբ ձեռք ինկած բաներն են: Ասիկե ոմանք սխալելով կարծեցին որ բանի մը հարզը իր վրայ կատարված աշխատութենեն առաջ եկած է: Բայց աս սխալ կարծիք է, ինչպես որ տնտեսականին մեկը՝ սա հետևյալ օրինակովը աղէկ կը հաստատե: Ըսենք թե երկու ձկնորս ձուկ որսալու կերթան,

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 18-19:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 31-32:

<sup>4</sup> Խ.Գ. Գուլանյան, Ուրվագիծ հայ տնտեսագիտական մտքի պատմության, Եր., 1959, էջ 196, Ն.Ռ. Թովմայան, Հ.Հ. Թամրազյան, Գ.Թ. Պապիկյան, Հայ տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր, Եր., 1988, էջ 163-164: Այս հարցում ավելի իրավացի է Մ.Ջորայանը՝ տե՛ս Մ.Շ.Ջուրաբյան, «Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր», Եր., 1959, էջ 85-86:

ու անձրևին ու ցուրտին տակը՝ կաշխատին ձուկ բռնելու, հուսալով որ բռնածին շատ ստակի վաճառեն: Բայց թե որ ասոնց մեկը՝ բոլոր զիշերը աշխատելեն ետեվ միայն մեկ պզտիք ձուկ մը բռնե ու մեկալը հարյուր հատ բռնելու ըլլա, կըրնա՝ մի առաջինը իր մեկ ձուկը՝ մեկալին հարյուր ձկան գինովը ծախել: Թեպետ երկուքին աշխատությունը մեկ եղած է, բայց անհնար է որ մեկ ձուկը՝ հարյուրին հավասար բռնե:

Ըսածիս ճշմարտությունը հաստատելու համար ուրիշ ապացույց մըն ալ սա է: Երբոր մեկը ճամբան զացած տեղը գոհար մը կը գտնե, անիկա ըստանալու աշխատություն չի քաշելուն համար այն գոհարին հարզը կրնա մի պակսիլ: Ուրեմն պետք է համոզվիք որ իրի մը հարզը իր վրա կատարած աշխատութենեն չէ, այլ այն իբր ըստ ինքեայն հարզ ունենալուն համար է որ մարդիկ անիկա շինելու կամ բուսցընելու համար կաշխատին»<sup>1</sup>:

Ն.Ջորայանն ավելի է հստակեցնում իր ասելիքը, թե արժեքի որոշման հարցում ինչ է ժառանգել տնտեսագիտական մտքի կողմնորոշումներից. «Ուստի ըսածներիս հոս կրկին բովանդակելով կը նայիք որ իր մը հարզ ստանալու համար, նախ պետք է որ սահմանավոր կամ պակաս ըլլա: Երկրորդ, որևիցե կերպով ուրիշին ցանկալի բան մը ըլլա: Երրորդ՝ փոխադրելի ըլլա»<sup>2</sup>: Նա բերում է օրինակներ՝ ցույց տալու, որ արժեքի մեծությունը որոշող հիմնական գործոններն են հազվագյուտությունն ու օգտակարությունը: Նշված գործոնները տնտեսագիտական մտքի համար հատկապես բնորոշ են դարձել XIX դարի 70-ականներից սկսած: Սակայն, միաժամանակ հայտնի է, որ Դ.Ռիկարդոն արժեքի աշխատանքային տեսության իր իսկ որոշակի մոնիստական հայացքի նկատմամբ ունեցել է «կասկածներ և երկյուղներ», որոնք «արժեքի աշխատանքային տեսության պատմության մեջ ավելի կարևոր դեր են խաղացել, քան նրա պոզիտիվ պնդումները»<sup>3</sup>: Մասնավորապես, նա նշում է ապրանքների փոխանակային արժեքի ոչ թե մեկ, այլ «երկու աղբյուրներ»՝ հազվագյուտությունը և աշխատանքի քանակը<sup>4</sup>: Առաջինը որոշում է չվերարտադրվող ապրանքների արժեքը, իսկ երկրորդը՝ այնպիսի ապրանքների, որոնց քանակը կարող է ավելացվել մարդկային աշխատանքով և, որոնց արտադրության մեջ մրցակցությունը չի ենթարկվում որևէ սահմա-

<sup>1</sup> Ն.Ջորայան, նշվ. աշխ., էջ 32-33:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 31:

<sup>3</sup> Блауг М. Экономическая мысль в ретроспективе, М. 1994» с. 86.

<sup>4</sup> Д.Рикардо, Соч., т. 1, М., 1955, с.33.

նափակումների»<sup>1</sup> և որ միայն այս վերջին դեպքում կարելի է խոսել ապրանքների համեմատական գների մասին:

Ն.Զորայանը լավատեղյակ էր Գ.Ռիկարդոյի աշխատությանը և կրել է նրա հայացքների ինչ-ինչ ազդեցությունները:

Դիտենք աշխատավարձի հարցը: Նրա կարծիքով աշխատանքները լինեն «մարմնավոր» թե «մտավոր» երկաթագործ, ոսկերիչ, բժիշկ թե իրավաբան, ունեն տարբեր դժվարություններ, սակայն դրանք չէ, որ պայմանավորում են աշխատավարձի չափը, այլ «կատարուած գործքին հարգը», «Ամեն տեսակ գործքի կամ աշխատանաց հարգն ալ, ուրիշ ամեն իրանց հարգին պես իրենց աշխատութենեն կամ քշութենեն կախված է» Իսկ մյուս մասով էլ պայմանավորված է մարդու «բնական հանճարով»<sup>2</sup>: Ինչպես ակներև է, աշխատավարձը նույնպես եկթակա է պահանջարկի ու առաջարկի, հազվագյուտության, սակավության կարգավորիչ ուժերին: Ն.Զորայանի դիտողությունները միանգամայն տեղադրվում են դասական տնտեսագիտության ազատամտական հայեցության մեջ: Ինչպես հայտնի է, XVII դարի Անգլիայում աշխատավարձը կարգավորվում էր օրենսդրական ձևով: Ժամանակի տնտեսագետներից Վ.Պետին էլակետ ուներ նրա այնպիսի մակարդակի սահմանումը, որն աշխատողին կապահովի կենսամակարդակի նվազագույնով: Կրկնակի բարձրացրու բանվորի աշխատավարձը, ասում էր Պետին, նա կրկնակի քիչ կաշխատի, «իսկ դա հասարակության համար նշանակում է նույնքան աշխատանքի կորուստ», հարստության կորուստ<sup>3</sup>: Տնտեսական գիտությունն այդ ժամանակաշրջանում, ինչպես նկատում է Ն.Զորայանը, դեռևս թույլ էր զարգացած, և միայն հետագա զարգացման և հատկապես XIX դարում պարզ դարձավ, որ օրենքներ սահմանելը «ճարտարության զարգացմանը վնաս տալեն ուրիշ բանի օգուտ մը չունի»<sup>4</sup>: Եվ նա բերում է օրինակներ ցույց տալով, որ օրենքներով աշխատավարձի սահմանների որոշումը պարզապես ավելի շուտ կտանի գործազրկության աճին և տնտեսական արդյունավետության կրճատմանը. և ուստի «Աժան գինով բան առնել ու բան շինել տալուն ամենեն հարմար եղանակը՝ առնողն ու վաճառողը՝ աշխատողն ու աշխատացնողը՝ բոլորովին ազատ ձգիլն է, որ իրենց սակարկությունը իրենք ընեն, առած ու տված իրերուն վրայոք հարմար դատածին ուզեն ու

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>2</sup> Ն.Զորայան, նշվ. աշխ., էջ 35:

<sup>3</sup> Вильям Петти, Экономические и статистические работы, М., 1940, с. 70-71.

<sup>4</sup> Ն.Զորայան, նշվ. աշխ., էջ 42:

տան, թե որ իրարու կը հաճին նե՝ փոխանակություննին կատարեն, թե որ չեն կրնար հաճիլնե տտ կենան»<sup>1</sup>:

Համաձայն դասական տնտեսագիտության դոկտրինայի տնտեսական ազատությունը թույլ է տալիս հասնելու ոչ միայն անհատների, այլ նաև հասարակական բարեկեցության ընդհանուր աճին: Ազատ տնտեսական գործունեության առավելությունների վերաբերյալ ստորև բերվող մտքերը համապատասխանում են դասական տնտեսագիտության հայեցողությանը. «Վաճառական մը որչափ շահասեր ալ ըլլա, չէ կրնար հետամտության իշխանութենեն ազատիլ, որուն վճիռները՝ կառավարութեանց օրենքներեն բյուրապատիկ ավելի հզոր ու ազդու են:

Արդարեւ երբ որ կառավարությունները մարդուս աշխատանքները նեղ օրենքներով չեն կաշկանդեր, ազատ կըթողուն, երկրացիք իրանց գիտցած արհեստներուն կգրադին, միևնույն տեսակի եղող արհեստավորներուն թիվը կըշատնա, մեջերնին հետամտությունը կըծագի, ամեն մարդ կըջանա որ իր շինած բանը մյուսներեն աղէկ ու աժան լինելով իրեն քաշե» կամ «Ուստի ազատ փոխանակության դրությունով մեկ կողմեն արհեստները կը կատարելագործին, մեկալ կողմեն ալ հաստուածները՝ ավելի առատ, աժան ու աղէկ ըլլալով՝ հասարակությունը ավելի բարեկեցիկ կըլլա: Անանկ, որ գործավորաց բարոյական ու արհեստական կրթությանը հետ՝ ազատ աշխատություն մը եղած տեղը՝ անտարակույս մարդիկ ամենեն ավելի հանգիստ ու աժան կերպով մը կապրին»<sup>2</sup>:

Աշխատավարձի, որպէս եկամտի խնդիրն առնչվում է երկրում ստեղծված հարստության բաշխման հարցի հետ: Մակայն, նախ խնայողության մասին: Ն.Ջորայանի կարծիքով խնայողությունը պետք է դառնա հասարակության պահվածքի կարևոր հատկանիշներից մեկը, կյանքի ամեն տեսակ պատահարներին, ձախորդություններին դիմակայելու համար: Ուստի խնայող մարդը «իր ծախքը իր վաստակին համեմատի», սովորի «չափավորության, բավականասիրության ու պարզության», ինչպէս ասում է Դ.Ռիկարդոն, «Մարդու սեղանը որչափ շեն ըլլա, մեռած ժամանակ՝ սնտուկն ալ այնչափ դատարկ կըլլա»<sup>3</sup>: Ժուժկալությունն ամեն մի բանական մարդու համար պետք է լինի ուղեցույց, որը նրան կապահովի բարեկեցություն, ինչպէս նաև հարստություն: Հասարակությունը միշտ էլ չարակամ վերաբերմունք է ունեցել հարուստ մարդկանց նկատմամբ կարծելով, որ «եթե հարուստ մարդոց ձեռքն իրենց հարստությունը առնվի ու աղքատաց մեջ բաժանվի, ու անկէ ետեվ նորեն հարստանալու

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 44:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 44-46:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 24:

մեկուն թող չի տրվի, աղքատաց վիճակը ավելի աղեկ կըլլա»<sup>1</sup>: Ն.Ջորայանը մերժում է նման սոցիալական դոկտրինան, նախ, որ հավասարության սկզբունքը երկար պահպանվել չի կարող, և տարբեր պատճառներով պայմանավորված այն պիտի խախտվեր: Եվ ապա հարստության այդպիսի մասնատումը խիստ բացասական հետևանքներ ունենալով ձեռնարկատիրական գործունեության վրա, չէր նպաստի սոցիալական հարցի լուծմանը: Դ.Ռիկարդոն, որի կարծիքով աշխատավարձի կարգավորումը պետք է թողնվի «ազատ մրցակցությանը» և հանդես էր գալիս պառլամենտում աղքատների մասին օրենքի ընդունման դեմ, ասում էր, թե «փոխանակ աղքատներին հարուստներ դարձնելու, կարծես թե նպատակ ունեն հարուստներին աղքատներ դարձնելու»<sup>2</sup>: Այդ նույն ոգով Ն.Ջորայանը նկատում է, թե հարստության բաժանման արդյունքում «Իրավ է, որ հարուստը կաղքատանա, բայց աղքատին ալ վիճակը աղեկ ըլլանուն տեղը՝ առավել գեշ կըլլա»<sup>3</sup>:

Իսկ իրականում միշտ էլ հասարակության մեջ տեղի է ունենում «անուղղակի կերպով» հարստության բաշխում, որով հարուստները աղքատներին մասնակից են ունենում իրենց եկամուտներին. հիմնում են մեծ գործարաններ, մշակում մեծ հողատարածություններ, ընդլայնում առևտրական գործը, կատարելագործում արհեստները (որն անհնար է փոքր հարստությունների ժամանակ), դրանով իսկ «ընչեղ մարդոց եկամուտ, փոխ առնողներուն վաստակ, գործավորներուն վարձ, ու հասարակության ալ առատություն, աժանություն ու վայելքը կբերեն»<sup>4</sup>:

Ն.Ջորայանն ի վերջո հանգում է մի հետևության, որի ուղեցույցը շահերի ներդաշնակության տեսությունն է: Համընդհանուր ազատության պայմաններում հասարակությունն իրար կապող սկզբունքը սոցիալական շերտերի միջև ոչ այլ ինչ է, քան փոխանակվող ծառայությունների ամբողջություն: Հասարակության բարոյական կողեքը պետք է հիմնված լինի ոչ թե անհանդուրժողականության, այլ համերաշխության վրա. «Երբ որ հոյակապ ու ամուր պարիսպը մը կը տեսնենք, անոր մեջի ամեն քարերը մեծ կամ ամենը մանր չեն. անոնց մեջ խիստ մեծն ալ կա, միջակն ալ, խիստ մանրն ալ, ու ամենուն մեկեն միավորությամբ՝ այն հաստատուն պարիսպը կը շինվի: Ասանկ ալ, մարդկային ընկերությունները միայն հարուստ մարդիկներե կամ միայն աղքատներե չեն շինվիր, այլ նախախնամությունը անանկ տնօրիներ է, որ կերպ կերպ պետքերով

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>2</sup> Д.Рикардо, Соч., т. 1, М., 1955, с.95.

<sup>3</sup> Ն.Ջորայան, նշվ. աշխ. էջ 54:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 57:

հարուստն ու աղքատը իրարու հետ կապրին: Անոր համար, ամեն բարեկարգ ընկերության մեջ, հարուստն ալ տեղ ունի, միջակն ալ, աղքատն ալ:

Ուրեմն ցանկանք, որ ամեն տեղ ստացուածք ապահովություն գտնեն. հարուստ՝ աղքատ ամեն մարդ իր ինչիցը տերը ըլլա, համեստ ու արդար ճամբով ամեն մարդ կրցածին չափ վաստակի, ու իր վաստակն ալ՝ հարմար դատած ճամբովը ծախէ, առանց ուրիշին վնասելու<sup>1</sup>:

Հարստության ստեղծման հարցի Ն.Ջորայանի դրվածքը իր շատ կողմերով առնչվում է կապիտալ հասկացության հետ: Հասարակության մեջ վերջինիս վերաբերյալ նեղ ընկալում է դրսևորվում, այն հաճախ նույնացնելով դրամի (դրամագլխի) հետ: Մինչդեռ իր ընդգրկումների մեջ այն շատ «ավելի ընդարձակ նշանակություն ունի», որպես «նյութական կամ աննյութական բոլոր այն միջոցները, որ կենաց հարկավոր եղած բարիքը հաստատելու պետք կըլլան»<sup>2</sup> Մրանց մեջ մտնում են և ձկնորսի նավակը, և հյուսնի սղոցը և երկաթագործի գործիքները, մարդու նյութական ուժը՝ հմտությունը, արվեստը և այլն: Նա նշում է կապիտալի բաժանումը հիմնական և շրջանառու մասերի, սակայն հարստության ստեղծման հարցում ընդլայնում արտադրողական ուժեր հասկացության սահմանները, նրա մեջ ներառելով «նյութական կամ աննյութական» միջոցները, որոնք ծառայում են ազգի հարստության ստեղծմանը:

Որքան ավելին լինի կապիտալը, այնքան մեծ կլինի մարդկանց աշխատելու հնարավորությունը: Հարուստների կողմից «վաստակաբեր գործքերու վրա» կատարած սկզբնական ծախքը, շրջապտույտի վերջում «ծախսված դրամեն ավելին կբերէ ու անանկով այն գործին ձեռք գարնողին հարստությունը կավելացնէ»<sup>3</sup>: Եվ այդպես տարեց-տարի շրջապտույտների արդյունքում ընդլայնվում է արտադրությունը և ավելանում ազգային հարստությունը: Ն.Ջորայանը այս առումով վկայակոչում է Թյուրգոյի խոսքերը. «Երկրի մը ընչից (կապիտալից-Ռ.Ս.) շրջաբերությունը մարդոյս մարմնոյն մեջ արյան շրջաբերությանը կը նմանի» և ընդհանրացնում, թէ «Հիրավի, արյունը մարդոյս մարմնոյն կենդանությանը համար որչափ հարկավոր է նե՛ ինքն ալ ընկերական մարմնոյն բարեկեցությանը համար նույնչափ պիտանի են»<sup>4</sup>:

Խոսելով հասարակական կյանքում միացյալ ուժի կամ, ինչպես ինքն է անվանում, «ընկերության մասին», նա դա համարում է ցանկացած գործունեության հաջողության երաշխիքը՝ առավելապես արտադրության

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 60-61:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 74:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 62-63:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 70:

մեջ և առևտրում: Այն թույլ է տալիս միավորելու հարստացման երեք տարրերը՝ գիտությունը, աշխատությունը և կապիտալը (խելք, ուժ, ինչք – Ն.Ջ.): Այդ է վկայում Եվրոպայի հասարակական զարգացման հետազոծը: «Ընկերական ոգու» արմատավորումը հայկական կյանքում, թույլ կտա լուծել առանձին տնտեսական միավորների հնարավորությունների սահմանափակության խնդիրը<sup>1</sup>:

Մեքենաները լինելով կապիտալի բաղկացուցիչը, կարևոր նախադրյալներ են հանդիսանում հասարակության բարեկեցության համար: Եվ վնասակար պիտի դիտել այն հայացքը, թե մեքենաները բացասական ազդեցություն են ունենում՝ կրճատելով զբաղվածությունը: Ն.Ջորայանը նշելով մեքենայական արտադրության բերած առավելությունները, հարցը դիտում է երևույթի արժեքավորման ընդհանուր չափանիշների դիրքերից հակառակ տեղ գտած հետահայաց նկրտումներին. «աշխարհիս մեջ կատարյալ բան չկա, ու մանավանդ քաղաքական վիճակին մեջ մեզի ավելի ընդհանուրին օգուտը պետք է, քան թե մասնավոր մարդկանց շահը, իսկույն կը խելամտինք, որ մեքենայից գործածությանը դեմ խոսված խոսքերը մտիկ ընելու բաներ չեն»<sup>2</sup>: Բայց զբաղվածությունը կապված է նաև մի այլ խնդրի՝ ազգաբնակչության աճի հետ: Համաձայն մերկանտիլիզմի դոկտրինայի որքան երկրի բնակչությունը շատ է, այնքան երկիրը հզոր է, որ «ամենն հարուստ տերությունը՝ ամենն շատ ժողովուրդ ունեցողն է»: Նույնիսկ բնակչության աճը խթանելու նպատակով, ինչպես, օրինակ, Անգլիայում, երեխաներ չունեցողների վրա հարկեր սահմանեցին: Բայց տնտեսական գիտությունը սովորեցնում է երևույթները գնահատել որոշակի իրական կապերի մեջ, մասնավորապես, «որ այն ժամանակը միայն ժողովուրդը մը իր երկրին՝ իր տերությանը օգուտ կընէ, երբոր կրնա ինքըզինքը իր աշխատությամբը ապրեցնել, իր կեանքը ուրիշի բեռ չըլներ, կամ իր սպառածին փոխարեն ինքն ալ իր աշխատութեան պըտուղովը կը հարստացնէ: Ուստի առանց այս վերջի պայմանը մեջ բերելու, անտարբեր կերպով մը բազմամարդության խրախույս տալը տնտեսական օրինաց դեմ գործք մըն է»<sup>3</sup>: Ազգի անհամապատասխանությամբ պիտի բացատրել արտագաղթի ու քաղաքական խռովությունների դրսևորումները: Բայց տնտեսական լեզվով ասած երևույթի ու էության այդ անհամապատասխանությունը, մի այլ կարևոր իմացական կողմ ունի. «անանկ երկրին մեջ հարկավ գործավորներուն շատութենն մեջերնին հետամտություն մը կը պատճառի, վարձուած գինը կը նվազի,

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 153-157:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 83-84:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 178-179:

ու հետևաբար ալ շատերուն վրա ընդհանուր չքավորություն մը կը բռնանա...»<sup>1</sup>, դրանով իսկ իջեցնելով աշխատողների կենսամակարդակը: Ինչպէս մեքենաների կիրառման, այնպէս էլ ազգաբնակչության աճի հարցերում Ն.Զորայանի հայացքները աղերսներ են հայտաբերում ինչպէս Մալթուսի, այնպէս էլ Սիսմոնդու տեսության հետ: Երկուսն էլ, ի վերջո, նպատակ ունեն հաստատել հավասարակշռություն հարստության (եկամուտների) աճի և բնակչության աճի միջև: Նա խոսում է մահացության աճը պայմանավորող և այն կրճատող ինչ-ինչ գործոնների մասին, իր ընդհանուր բնութագրություններում դավանելով նշված տնտեսագետների հայացքներին. «... աներկբայելի կերպով մը հիմակու տնտեսականները աղէկ հաստատեցին, որ մեկ կողմէն մարդիկ հետզհետէ յանչափ բազմանալու վրա են ու մյուս կողմէն ալ կերակուրը հետզհետէ կը պակասի, ուստի մենք ալ կամ պետք է որ մարդկանց շատանալուն չըցանկանանք, կամ հետզհետէ կերած կերակուրներու չափը քչացունենք» Եվ որովհետև կերած կերակուրներու չափը քիչցունելը անհնար է, ուստի կը պարտավորինք որ խոհեմության թելադրած ամեն ըզգուշությունները ընելով՝ մարդկանց չափը միշտ կերակրոց չափին համեմատ ընենք, կամ որ նույնն է սնունդնիս օր օրի առատ ընելու աշխատինք»<sup>2</sup>: Ուստի կառավարությունների քաղաքականությունը պետք է համապատասխանի այն «բնական ու խոհեմ կանոնին», համաձայն, որի «Կերակուրը պետք է բազմամարդ դրութենէ առաջ ըլլա և ոչ թէ բազմամարդությունը քան զկերակուրը»<sup>3</sup>:

Մերժելով «հասարակաց» կամ այլ ձևերով գոյություն ունեցող սեփականության իրավունքը, նա հողի նկատմամբ մասնավոր սեփականությունը համարում է գյուղատնտեսության զարգացման ստեղծագործ ուժի պայմանը, որն իր թերություններով հանդերձ «մարդկային ազգին բարօրությանը առատ աղբյուրներուն մեկն եղած է»<sup>4</sup>: Նա որոշ դիտողություններ է կատարում ռենտայի կամ ինչպէս ինքն է անվանում «հաս»-ի առաջացման վերաբերյալ: Հողի սեփականատերերը հաճախ ոչ թէ իրենք են մշակում հողը, այլ վարձակալությամբ տալիս են մշակելու ուրիշներին. « Ինչպէս որ դրամը վարձողը իր վաստակին մեկ մասը իբր շահ դրամին տիրոջ կուտա, ասանկ ալ ուրիշի կալուածը վարձողը իր ըրած վաստակին մեկ մասը իբր հաս կալվածին տիրոջը կուտա...»<sup>5</sup>: Ռենտայի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 182:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 189-190:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 190:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 104:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 105:

առաջացումը նա պայմանավորում է հողերի «արգասավոր ու միանգամայն սահմանավոր ըլլալու» հետ<sup>1</sup>: Նրա դիտողություններն այս հարցում խիստ կցկտոր են:

Ն.Զորայանը արծարծումներ ունի նաև պետության կարգավորման ոլորտներ հանդիսացող հարկերի, երկրի առևտրային հաշվեկշռի և այլ հարցերի վերաբերյալ:

Անդրադառնալով հարկերի անհրաժեշտության խնդրին որպես անհրաժեշտ եկամուտների պետության հայտնի ֆունկցիաների իրականացման համար, նա ընդհանրացնում է. «Ուրեմն հարկը՝ ժողովրդին իր պաշտպանությանը զինն է, որ իր կառավարությունը կը վճարի»<sup>2</sup>: Ինչպես նկատել ենք Ն.Զորայանը փոխանակությունը դիտում է որպես հասարակական պահվածքի գլխավոր հատկանիշը: Մի սկզբունք, որը գործում է բոլոր ոլորտներում, հարկային հարաբերություններում նույնպես պետության և քաղաքացիների միջև. «Մարդիկ, ընդհանրապես ամեն արվածնուն դեմ բան մը առնելու սորված ըլլալուն, եբոր կնային, որ կառավարության վճարած հարկերուն փոխարեն ուրիշ նյութական բան մը չեն առներ, կամ իրենց հաճոյք մը չեն զգար, սիրտերնին կը նեղանա, կը կարծեն որ այն ըրած ծախքերին՝ ուրիշ բոլոր ըրած ծախքերեն տարբեր է, անպիտան է, կամ ինչպես կըսեն ծովը նետեցին, քայց հոս մեծապես կը սխալին: Այս ծախքն ալ մյուս ամեն ըրածնուն նույնն է, կամ ավելի լավ մը ըսեմ, աս ալ ուրիշ ամենուն պէս փոխանակություն մըն է:

Արդարև, հացագործին, մսավաճառին, դերձակին, հիվանս դրամ կուտաս վասնզի, քեզ կը կերակրեն, կը հազվեցընեն ու կը բնակեցնեն: Նմանապես երաժշտին, բժշկին ու դերասանին դրամ կուտաս, վասնզի քեզի բժշկություն կամ զբոսանք կուտան: Ահա նույնպես ալ կառավարության դրամ կուտաս, որ քու ստացուածքդ, կեանքդ ու ընտանիքդ պահե... ամեն մարդ պարտական է անիկա վճարելու»<sup>3</sup>: Ակներն են հեղինակի մտածողության տեսական ակունքները:

Լինելով ազատ առևտրի կողմնակից, նրա համար անընդունելի է մերկանտիլիստների ուսմունքը, որը ազգի հարստությունը նույնացնում էր երկրում եղած ազնիվ մետաղների քանակի հետ: Ուստի նա ծիծաղելի ու անհիմն է համարում առևտրական հաշվեկշռի վերաբերյալ կառավարությունների վարած քաղաքականությունը, ոսկու և արծաթի ներհոսքն ավելացնելու ինչ-ինչ միջոցառումները, որոնք ոչ այլ ինչ էին, քան «ճշմարիտ հարստության ինչ ըլլալը չճանաչելու» հետևանք, իսկ դրանք

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 108:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 91:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 92-93:

«բոլոր այն նյութական բարիքը, կամ այն օգտակար իրերը պիտի իմանանք, որևիցե կերպով մարդուս պետքերը լեցնելուն կծառայեն (որպես սպառման առարկաներ կամ արտադրության միջոցներ – Ռ.Ս.)»<sup>1</sup>:

Ազատ առևտրի դոկտրինայի ճշմարտացիությունը ցույց տալու համար նա բազմաթիվ վկայակոչումներ է կատարում Սեյից:

Հայտնի է, որ ըստ դասական տնտեսագետների հասարակական շահը անհատական շահերի գումարն է: Ձգտումը անձնական շահի բավարարմանը համապատասխանում է ընդհանուրի շահին: Այսինքն, եթե բավարարվում է անձնական շահը, նշանակում է բավարարվում է նաև հասարակական շահը: Սա արդեն ընդհանուր սկզբունք է, որը տարածելի է բոլոր ոլորտների վրա: Հենց այդ դիտակետից էլ Ն.Ջորայանը գրում է, թե «ամեն մարդուն իր անձնական շահը՝ առհասարակ անվրեպ երաշխավորող մըն է իր հաջողությանը համար միշտ զինքը մտադիր ընելու, և որովհետև ստույգ գիտենք այլ որ միշտ որևիցե ազգի մը վաճառականաց մեծ մասը՝ իր գործքը գիտե, հայտնի վնասներու մեջ զինքը չի մխեր, ուստի կրնանք թե տեսական և թե գործնական կերպով հաստատել, որ ազատ վաճառականությունը՝ ազգի մը բարօրությանը մեկ առատ աղբյուրն է, կամ որ նույնն է առևտրական կշիռը բոլորովին վնասակար դրություն մըն է, ու մանավանդ սուտ ու հաստատուելն այլ անհնար է...»<sup>2</sup>: Այնուամենայնիվ, նա առանձին դեպքերում անհրաժեշտ է դիտում հայրենական արտադրության ու առևտրի հովանավորչական միջոցների «խիստ օգտակար ու ազգին այլ շատ շահավոր» քաղաքականության կիրառումը<sup>3</sup>:

Ն.Ջորայանը գործել է մի ժամանակաշրջանում, երբ հայ իրականությունն ընդառաջ էր գնում դրամատիրական հասարակարգի տնտեսաձևերի ձևավորմանը: Նրա «Քաղաքական տնտեսության վրա տեղեկություններ» աշխատությունը որոշակի արժեք է ներկայացնում նոր տնտեսաձևերին բնորոշ տնտեսական մտածողության կազմավորելու գործում:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 203:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 217-218:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 233-234:

**«ԱՉՆԻԿ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ»  
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԶՈՐԱՅԱՆԻ ՀԱՅԵՑՈՒԹՅԱՐ**

**ՌՈԲԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ**, տ.գ.դ., պրոֆեսոր

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող*

**Համառոտագիր:** Նիկողայոս Զորայանը գործել է XIX դարի կեսերին: Նա առաջին հայ տնտեսագետն է, որը, ըստ էության, քննության առարկա է դարձրել քաղաքատնտեսության հիմնական կատեգորիաները և, որպես ազատամտական ուղղության ներկայացուցիչ, դրվատել արևմտյան տնտեսաձևի սկզբունքները: Տնտեսագիտությունը նրա լուսավորչական ծրագրի բաղկացուցիչներից է: Նա ուրվագծեց այն բաղադրիչները, որոնք պայմանավորում են ազգի տնտեսական բարեկեցությունը:

Հողվածում ժամանակի տնտեսագիտական ուսմունքների զուգահեռներում քննության են ենթարկվում նրա հայացքները հարստության աղբյուրների, փոխանակության, աշխատավարձի, բաշխման, սեփականության իրավունքի և այլ հարցերի վերաբերյալ:

*Բանալի բառեր. աշխատանքի բաժանում, փոխանակություն, աշխատավարձ, բաշխում, կապիտալ, սեփականության իրավունք, պահանջմունքներ, առևտրային քաղաքականություն:*

**ВЗГЛЯДЫ НИКОГАЕСА ЗОРАЯНА  
«ВЫГОДЫ БЛАГОРОДНОЙ НАУКИ»**

**ՐՈԲԵՐՏ ՆԵՐՏԵՍՈՎԻՇ ՏԱՐԻՆՅԱՆ**, *ժ.Յ.Ն., профессор*

*главный научный сотрудник Института экономики  
им. М.Котаяна НАН РА*

**Аннотация:** Никогаяс Зораян творил в середине XIX века. Он был первым армянским экономистом, который основные категории политэкономии сделал предметом исследования, и как представитель либерального направления восхвалял принципы западных экономических форм. Экономическая наука является составной частью его просветительской программы. Он указал те составляющие, которые обуславливают благосостояние нации.

В статье в параллелях экономических учений того времени подвергается критическому анализу его взгляды на источники богатства, обмен, распределение, заработную плату, право на собственность и т.д..

*Ключевые слова: разделение труда, обмен, зарплата, распределение, право собственности, капитал, торговая политика.*

## **“THE BENEFITS OF THE NOBLE SCIENCE” FROM THE VIEWPOINTS OF NIKOGHAYOS ZORAYAN**

**ROBERT NERSES SARINYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor  
Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Nikoghayos Zorayan worked in the mid-nineteenth century. He was the first Armenian economist, whose research objective, per se, was to examine the main categories of political economy, and as a representative of the liberal branch commended the principles of Western economic forms. The Economics as a discipline is an integral part of its knowledge disseminating and/or sharing agenda. He highlighted those components that explain the economic wealth of the nation.

The article critically analyzes his views on the sources of wealth by comparing them with the economic doctrines of the stated period.

**Keywords:** *Division of labor, exchange, salary, distribution, property rights, needs, trade policy.*

## ՌՈՒՔԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱԼ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող

### ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱԼ (տնտեսագիտական մտորումներ)

Նշանավոր պատմաբան Լեոն «Ստեփանոս Նազարյան» մենագրության առաջին հատորը ավարտում է հետևյալ խոսքերով. «Մի ընդհանուր ակնարկ գցելով Նազարյանցի մատենագիտական գործունեության վրա, ինչ կտեսնենք: Այդ գործունեությունը ինքնըստինքյան այնքան նշանավոր չէ, որ կարողանանք նրան հարստություն համարել մեր գրականության համար: Այն, ինչ տվել է Նազարյանցը իր գրքերում ոչ մի առանձին ինքնուրույնություն ունի, ոչ մի առանձին տաղանդի կնիք է գրում իր վրա... :

Եվ Նազարյանցը շուտ կմոռացվեր...: Բայց նա չէ մոռացվել և չը պիտի մոռացվի, որովհետև տվել է նաև «Հյուսիսափայլը»:

«Հյուսիսափայլի» Նազարյանցը մի խոշոր անձնավորություն է մեր գրական վերածնության արշավույսին<sup>1</sup>: Ինչպես նկատում է գրականագետ Ռ.Նանուկյանը, «հայ ազգային լուսավորական շարժման պատմության մեջ» նրա մասնակցությունը եղել է ընդգրկուն<sup>2</sup>, իբրև «համապարփակ սեփականություն», ոչ պատահականորեն պայմանավորելով և գրականագետների, և պատմաբանների, և փիլիսոփաների, և տնտեսագետների անդրադարձը նրա հայեցության տարբեր շերտերին: Մույն հոդվածի քննության առարկան Նազարյանի տնտեսագիտական հայացքներն են: Չի կարելի ասել, թե նրա տնտեսական հարցերի արծարծումները գրված են պրոֆեսիոնալ մակարդակով, այնուամենայնիվ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ժամանակի հայ տնտեսագիտական մտքի բնութագրության տեսակետից:

«Ինչ է վաճառականության խորհուրդը ընդհանրապես...» հոդվածում Նազարյանը, հիմք ունենալով եվրոպական տնտեսական ուսմունքների մերկանտիլիզմի և ֆիզիոկրատների առաջադրությունները, թե տնտեսության որ ճյուղին վերապահել առաջնությունը՝ վաճառականությանը, թե երկրագործությանը, գրում է. «Ամենևին անխել բան է այն վիճաբանական խնդիրը, արդյո՞ք երկրագործությունը, թե՞ վաճառականությունը ավելի

<sup>1</sup> Ամսագիրը հիմնադրել և խմբագրել է Մ.Նազարյանը 1858-1864թթ.:

<sup>2</sup> Լեո, Ստեփանոս Նազարյան, I հատոր, Թիֆլիս, 1902, էջ 223-224:

<sup>3</sup> Ռուզան Նանուկյան, Ստեփանոս Նազարյան, Երկերի ժողովածու, Ե., 1996, էջ 5:

մեծակշիռ էր: Երկուքը ևս հավասարապես խորհրդավոր են, և մինի հետ մնալը կամ առաջ գնալը առաջացնում է վնասակար կամ օգտակար ազդեցություն մյուսի վրա: Ցանկությունը հաջողություն տալու երկրագործության, վնասելով ֆաբրիկաներին, պիտոյ է ընծայել այն մարդերի անձնական շահասիրությանը, որ, թեպետ փոխկապված էին որպիսությունքը, այնուամենայնիվ կկամենային իրանց կալվածներից ավելի արդյունք քաղել վնասելով, կամ թե պիտոյ էր այդ բանը տալ տգիտությանը թե ինչ փոխադարձ ազդեցություն միմյանց վրա ունեին երկրագործությունը և վաճառականությունը»<sup>1</sup>:

Տնտեսության երկու նշված հատվածների զարգացումը ֆունկցիոնալ իմաստով ենթակա է հավասարակշռության սկզբունքին, եթե երկրագործությունն արտադրում է ավելի շատ արդյունքներ, քան անհրաժեշտ է երկրի պահանջների համար, ապա ավելի շահավետ է ավելցուկի իրացումը «առաջադեմ ազգերի վաճառահանդեսների մեջ շահավետությամբ ծախել, և դորա փոխանակ այն աշխարհների պատրաստած բաները ներս բերել իր աշխարհի մեջ»<sup>2</sup>:

Ընդհանրապես, տնտեսական հարցերի վերաբերյալ Նազարյանի շարադրանքը հաճախ թոռցիկ բնույթի դիտողություններ էին, ավելի շուտ առաջադրույթներ, որոնք թեն վերլուծական վավերացումներ չեն ստանում, այնուամենայնիվ վկայում են դրանց ակունքների նրա լավատեղյակության մասին: Այսպես.

- «Եվ որովհետև գյուտերը, ֆաբրիկագործությունը և գիտությունը սահման չունին, այս պատճառով մի քաղաքագործված աշխարհ երբեք տեղիք չունի վախենալու ժողովրդի բազմանալուց»<sup>3</sup>,

- «Մեթենաները թեթևացնում են ապրանքի պատրաստության ծախքը (ինքնարժեքը-Ռ.Ս.), և հեշտությամբ էժան գնով ճարելու իր համար կեցության հարմարությունները, շատացնում է նոցա գործածությունը, և նոքա որ մի անգամ շահվել էին արծաթ, շուտով լայնացնում են իրենց գործի շրջանակը և մեծացնում իրենց հարստությունը»<sup>4</sup>,

- «...մի անգամ հաստատված զանազանությունը ունեվորության մասին, ոչ թե միայն անբաժանելի է մարդկային բնությունից, այլ մի իմաստուն նախատեսություն է նրա օգտի համար, որովհետև հարստությունը որով բաղդավորվում են մի մի մարդիկ, ընդհանուր օգտի համար

<sup>1</sup> «Հյուսիսափայլ» 1858, №3, էջ 231:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 232:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 233:

ետ է դնում մի փոքր բան ավելի, քան թե հարկավոր էր բոլորական կարոտության համար...»<sup>1</sup>

- «... մի ազգ իր իսկական առևտրական գորությունը ստանում է միշտ սակավ մարդերի ձեռքից, որ ունենալով իրանց մեջ առանձին հասկացողություն, գիտեն ամենայն պատեհ միջոց ըմբռնել և օգտակար կացուցանել»<sup>2</sup> և այլն:

Մ.Նազարյանը ազգի բարեկեցությունը կապում է «վաճառականության և ֆաբրիկագործության առաջադիմության», «գույքի կուտակության կրթյալ ընկերությունների» հետ: Նշելով մրցակցության նշանակությունը երկրի հարստության աճի, ձեռնարկատիրական գործունեության աշխուժացման համար, միաժամանակ նկատում է, որ մրցակցության հետևանքով հարստության կենտրոնացումը սահմանափակ թվով մարդկանց ձեռքում, իր բացասական հետևանքներն է ունենում չունևոր խավի վրա: Եվ այս իմաստով նա տնտեսական-ազգային շահերի ներդաշնակությունը կառուցում է «միջին դասակարգի» գաղափարի վրա, ի դեպ վերջինս ուղեկցել է հայ տնտեսագետների հայեցությանը նաև հետագա տասնամյակներին: «Մի այլ անհարմարություն, - գրում է Մ.Նազարյանը, - որ առաջանում է հարստության չափազանց կուտակությունից մի քանի վաճառականների և ֆաբրիկաների ձեռքում, այն է, որ ժողովրդի միջին դասակարգը բանդվում է. ժողովրդի առավել մեծ մասը դառնում է հասարակ մշակ և սակավաթիվ հաջողակ մարդիկ չափից դուրս բարձրանում են: Բայց խոսելով իսկապես, ժողովրդի միջին դասակարգը առավել խորհրդավորն է այն պատճառով, որ նա է ազգային իմացականության առաջ տանողը, և էթե նա բավական բազմաթիվ է, ապա լինում է մի հսկող պահապան ստորին ժողովրդակարգերի սեփականության վրա և հակառակ նոցա տարապայման ձգտողություններին: Առանց մի միջին ժողովրդակարգի բոլոր ջանահնարությունները և գյուտերը դադարում են, բազմացած ժողովուրդը չէ գտնում բավական պարապմունք. այս բանը դարձյալ, նայելով աշխատավոր մարդկանց սակավությանը, փոքրացնում է պիտույքների գործադրությունը, որպես և նոցա մեջ, որ առանց աշխատանքի շրջում էին այս կողմ ու այն կողմ, զարթնեցնում է հոժարություն թողնել և հեռանալ հայրենի աշխարհից և առհասարակ գորացնում է չքավորությունը, որին պիտոյ էր համբերել ականա ծուլության մեջ»<sup>3</sup>: Դրանք քաղաքային ու գյուղական մանր ու միջին սեփականատերերի խավերն

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 234:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 235:

էին, որոնք Նագարյանին ավելի գործնական էին ներկայանում ձևելու սոցիալական առաջադիմության սկզբունքները:

Մ.Նագարյանը կարևորելով առևտրի դերը երկրի հզորացման համար, նա դա կապում է երկրի տնտեսական ու քաղաքական պատմության հետ: Իբրև դրույթի հաստատում, նա վկայակոչում է Անգլիայի օրինակը, որը «ֆարրկա-գործարանային կարողության» մեծացման արդյունքում իր համար ստեղծել է մոնոպոլիայի վիճակ «աշխարհի վաճառանոցներում»:

Մ.Նագարյանը գտնում է, որ հարստություն կոչվածը հարկ է դիտել նրա առաջացման և գործադրության առումներով: Հասարակության տարբեր խավերի վերաբերմունքը սեփականության նկատմամբ եղել է հակասական, անհատի անձնական ու հասարակական կյանքի հետ ունեցած առնչություններում՝ մի դեպքում հարստությունը որպես հասարակության չարիքների պատճառ, իսկ առավելապես բարոյականության, բարեկեցության, կարեկցության, արդարության, մարդասիրության, հարստության բազմապատկման աղբյուրի:

Դրվատանքի է արժանի «ինքնաստաց հարստությունը», որն «ավելի մեծ արժողություն ունի, քան թե ժառանգականը», այսինքն, որը վաստակված է «արդար ճանապարհով» և «օրինավոր տնտղական աշխատասիրությամբ»<sup>1</sup>:

Մ.Նագարյանը ընդլայնում և հստակեցնում է հարստության նշանակության իր պատկերացումները, որոնք լինելով դուրս սոցիալիստական ուսմունքների հավասարարական սկզբունքներից, հարստության պոտենցիալի ուղղվածությունն ավելի շուտ կապում էր հասարակության նյութական հիմքերի բազմապատկման և սոցիալական հավասարակշռության հետ. «բայց և բոլոր հասարակության համար ունի հարստությունը մի ճշմարիտ արժանավորություն. այսինքն, օգտակար ու շահավետ է հասարակությանը, որ բախտի բարիք ասած բանը հավասար չափով բաժանված չէ հասարակության անդամների մեջ, այլ որ մի քանիսը ունենին նորան ավելի առատ ու լի չափով: Այն հարստությունը, որ անգործ չէ, այլ որ պիտի կամ նոր հարստություն վաստակեր կամ թե այլապես գործ է դրվում և անցնում է մարդկանց ձեռք, դա գոյացնում է ավելի կյանք և գործականություն մարդկանց մեջ: Նա հաջողություն է տալիս հասարակության ժրջանությանը, աշխատասիրությանը և վաստակասիրությանը. այստեղ զարթնեցնում է մեքենայական, այնտեղ իմացական գործություններ, հասարակաց բարին առաջադեմ կացուցանելու համար: Մինի համար է նա շարժառիթ և հնար օգտակար գյուտերի և ախորժելի

<sup>1</sup> Նույն տեղում, 1860, №10, էջ 317:

բաների, մյուսին տալիս է նա առիթ հաջողությամբ նմանելու և կատարելագործելու արդեն հնարած անոթները (գործիքը) հարմարության և վայելչության»<sup>1</sup>:

Համաձայն նրա դիտողությունների, առևտրի ոլորտում, հատվում են ժողովուրդների միջև փոխհարաբերությունները, իրենց վրա կրելով հասարակության որպես «առևտրական միության» վերաբերյալ հայեցողության ինչ-ինչ նստվածքները:

Ինչպես հայտնի է, եվրոպական երկրներում կապիտալիստական հարաբերությունների ձևավորման արշալույսին շրջանառության ոլորտին տրվում էր առաջնություն, համաձայն որի ազգի հարստությունը ստեղծվում է առևտրի ոլորտում: Նազարյանի հայեցողության մեջ հարստություն հասկացողությունը ստանում է մի շատ ավելի լայն իմաստ, որպես թե «հարստության շրջանառության» մեջ կարող է իրացվել նրա հասարակական գորությունը: Այն թույլ է տալիս երկրներին դարձնել կապակից, միմյանց հետ փոխանակվելու «իրենց աշխատասիրության պտուղքը, ճարտարության գործերը, գիտության լույսը» և շատ այլ բաներ, դրանով իսկ «բազմապատկելով» բոլոր «ազգերի գործերն ու աշխատությունքը»:

Այսպիսով՝ հարստությունը ներկայացնում է հատկանիշների հյուսվածքի մի միասնություն, որում հատկապես խորհուրդ ունի հարստություն-գիտություն կապը: Մինչդեռ, մեր իրականության մեջ «Հայոց մեծատունքը միևնույն աշտմ նայում են գիտության վրա որպես մի անպատիվ աղախնու վրա, որի պաշտոնն էր կատարել նոցա ցանկության կամքը, անուշ խունկեր ծխելով նրանց քթին, զովասանելով և բարձրացնելով նոցա չգործած սխրագործությունքը»<sup>2</sup>, առաջնորդվելով այն հոգեբանությամբ, թե «մեր պապերը եկել ու զնացել են հանգիստ ապրելով իրանց համար, նրանք երջանիկ էին առանց ուսման և գիտության»<sup>3</sup>:

Փոխվել են ժամանակները, փոխվել են հին ու նոր սերունդները միացնող ու բաժանող սահմանները: Հասարակության առաջընթացը այսուհետ ենթակա է գիտությունների այլատար ամբողջության պահանջին: «Մեզ հայերիս, մեր բազմապահանջ ժամանակներում,- գրում է Նազարյանը,- հերիք չէ մի լոկ գրագիտություն, մեզ և մեր մանուկներին հարկավոր է գիտություն, գիտություն բազմամասնեայ, գիտություն տեսական և գործնական, որովհետև ոչ ամենայն մարդ միատեսակ կոչումն ունի. ոմանք կամին լինել ուսումնականը, մյուսները վաստակագործք, վաճա-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 321-322:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 322:

<sup>3</sup> Նույն տեղում, 1861, №3, էջ 251-252:

ռականք և արհեստավորք: Այս բազմատեսակ պիտույքը միասին լցուցանելու համար, ամենայն օրինավոր դպրոց մեր օրերում ունի ընթանալու բավական բազմամասնյաց ոճով»: Եվ նա ծրագրել էր Մոսկվայում բացել գիտական և գործնական բաժիններով դպրոց: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նրանում դասավանդվող հետևյալ առարկայական ցանկը. որպես ընդհանուր առարկաներ՝ աստվածաբանություն, ընդհանուր պատմություն և աշխարհագրություն՝ վիճակագրական վերլուծություններով, բնապատում (բնապատմական գիտություն), ֆիզիկա, աշխարհաբար և գրաբար լեզու, լատիներեն, ռուսերեն և եվրոպական լեզուներ, գիտական բաժնի համար՝ մաթեմատիկական աշխարհագրություն (կոսմոգրաֆիա), մաթեմատիկա, ֆիզիկա, գործնական բաժնի համար՝ վաճառականության պատմություն, վաճառականական հաշվապահություն և վաճառաշահական նյութերի գիտություն, վաճառականական և անակագրություն օտար լեզուներով<sup>2</sup> և այլն:

Նազարյանը իրավացիորեն ամեն մի գործունեության իրականացումը կապում է մարդու նյութական կամ հոգևոր պահանջմունքների հետ: Վերջիններս մշտապես փոփոխվում են, ընդլայնելով հասարակության գործունեության ոլորտները: Հասարակական պատմությունն ի վերջո պահանջմունքների աճի պատմություն է: Մարդկության վաղ ժամանակներից մարդու խիստ սահմանափակ պահանջմունքների աճի արդյունք է երկրագործության, առևտրի, ֆաբրիկա-գործարանային գործունեության, և ընդհանրապես տնտեսական, սոցիալական ու քաղաքական կացության արդի բովանդակությունը: «Ամենայն պիտուք մարդկային կյանքի մեջ,- գրում է Նազարյանը,- ծնվում է և զոյանում է, եթե կա հարկավորություն...: Բայց եթե մարդկության մեջ ծնել են և առաջ են գնացել արհեստները և ճարտարությունները, դրանց ծնող և առաջացնող պատճառը եղել է միշտ հարկավորությունը...»<sup>3</sup>: Սակայն նյութական բարեկեցության այդ առաջընթացը չէր կարող կատարվել առանց հոգևոր զարգացման: «Ուրեմն եթե մարդկային ազգը,- շարունակում է Մ.Նազարյանը,- հասել է այսքան մեծ և երևելի մարմնավոր բարեկեցության, նյութական հարկավորության պատճառով միայն, ապա մի թե նորա իմացական բարեկեցությունը կարող է առաջադեմ լինել, եթե չկար մի նույնպիսի կարիք, մի նույնպիսի հարկավորություն պատրաստելու մեր համար հոգևոր բարիք և իմացական վայելչություն: Կարծեմ, ոչ որ մեզանից կարող չէր այնքան անմտանալ..., որ կարծում էր թե նա կարող է

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 253-254:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 257-258:

<sup>3</sup> Նույն տեղում, 1860, №1, էջ 139-140:

ապրել որպես այս աշխարհի բաղաձայն, առանց զգալու իր մեջ լուսավորության կարիք, առանց լցուցանելու իր բանական հոգու պիտույքը այն հնարներով, որ մեր ժամանակները առաջարկում են նրան, այսինքն գրասիրությամբ և ընթերցասիրությամբ»<sup>1</sup>:

Ս.Նազարյանը կյութական ու հոգևոր արժեքների միասնության ու դրանց հետագա կատարելագործման մեջ էր տեսնում հայ ազգային պահվածքի հետագա ուղին, որով անցել է «եվրոպական մարդկությունը իր կրթության ընթացքի մեջ»:

Ս.Նազարյանի ընդհանուր հասարակագիտական և տնտեսագիտական հայացքների բնութագրության առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նրա «Ֆրանսիական հեղափոխության պատճառը» ուսումնասիրությունը: Նրա կարծիքով, այդ պատճառները սկիզբ են առել շատ ավելի վաղ՝ Լյուդովիկոս XIII ժամանակներից: 1614 թվականին տեղի է ունենում ֆրանսիական ազգի փոխանորդների վերջին ժողովը, այն «միջնորդող իշխանությունը, որ ժողովուրդը և թագավորը մոտեցնում էր միմյանց»: Ազգային խորհուրդը այն «պատվական հնարքն» էր, որ կոչված էր «օրինավոր միջնորդներով ճշմարտությունը մոտ բերել արքայական աթոռին, ժողովրդի կարիքը արժանի և գորավոր կերպով բացահայտել, ցույց տալ ճանապարհը, թե ինչպես պիտոյ էր խնամ տանել նոցա, և ընկերական կազմածը, հանգամանքներին համեմատ, իր ամենայն մասերով հանդարտ ու ապահով առաջ տանել զուգապատշաճ միաբան ներգործությամբ Աթոռի և Ազգի փոխանորդների կողմից»<sup>2</sup>: Ֆրանսիայի պետական համակարգի այդ ճեղքվածքն ավելի խորացավ Լյուդովիկոս XIII առաջին նախարար Ռիշելիեյի, ապա Մազարինի և այլ պետական գործիչների կառավարման բռնակալական ձևերի իրականացման հետևանքով:

Եվ, իրոք, XVII դարի Ֆրանսիան մարմնավորում էր թագավորական միապետությունը: Լյուդովիկոս XIV «պետությունն այդ էս են», որպես թե «հասարակական կարգը ամբողջությամբ սկիզբ է առնում ինձանից»<sup>3</sup> սկզբունքի վրա էր հիմնված Ֆրանսիայի զաղափարը:

Ս.Նազարյանը նկատում է, թե «բռնակալության վնասակար ներգործությունները» տեղ էին գտնում ամենուր: Կոլբեռի և Լուվուայի նման պետական գործիչներ այլևս չկային, իսկ ծայր առած բազմաթիվ պատերազմները, պալատականների շռայլություններն ու ազահությունը երկիրը դրել էր ծանր տնտեսական կացության առաջ: «Հարկերի բազմությունը,- գրում է Ս.Նազարյանը,- ծանրանում էր ժողովրդի վրա, տերու-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 139-140:

<sup>2</sup> Նույն տեղում, 1858, №4, էջ 267:

<sup>3</sup> В.П.Волгин Развитие общественной мысли во Франции в XVIII веке, М., 1977, с. 10.

թյան ծախքերը կարող էին միայն բռնավորական հնարներով կամ թե հանդուգն գործողություններով դուրս հանվել. մի անտանելի բեռն պարտքերի, որ առաջացել էին տնտեսական պատերազմներից, կառավարության սխալներից, թագավորության շինասպիրությունից և փառասիրությունից, փակեց հասարակության բարեկեցության աղբյուրները: Ժողովրդի բազմությունը օրեօր առավել նվազեցավ, սառեցավ ու կապվեցավ երկրագործությունը, վաստակասիրությունը և վաճառաշահությունը, որովհետև չկար արծաթ ոչ մի աշխատանք առնելու համար<sup>1</sup>: Լյուդովիկոս XIV-ը ժառանգություն էր թողել դատարկ գանձարան, շուրջ երկու միլիարդ լիվր պետական պարտք, որի տարեկան տոկոսները կազմում էին պետական եկամտուների նշանակալից մասը: Այսպիսի տնտեսական կացության պայմաններում Ֆրանսիա է հրավիրվում շոտլանդացի Ջոն Լոն՝ երկիրը փրկելու ֆինանսական կործանումից: Գրականության մեջ լավ հայտնի է, թե ինչու Լոնի համակարգը կազմալուծվեց: Ահա, թե Մ.Նազարյանն ինչպես է նկարագրում Լոնի «փորձը». երկրի ընդհանուր կացությանն «ավելացավ այն ընդհանուր ապշությունը, որ բերեց ֆրանսիացոց վրա Շոտլանդացի Լոնի արած կարգադրությունը. բոլոր ժողովուրդը խելագարվեցավ: Այն խաբեական հույսերը, որ Շոտլանդացին տված էր, մոլորեցրեցին վերջումը և առավել զգաստ ու պարկեշտ մտքերը: Սկզբում, երբ որ այդ ծիծաղելի խելագարությունը վեր երևաց, որ և շատ հեշտ տարածվեց, որովհետև մարդիկ դեռևս ուղիղ հասկացած չէին, թե ի՞նչ հարաբերություն ունի արծաթը ճշմարիտ հարստության հետ, թղթեղեն արծաթը մետաղեղեն նշանի հետ, սկզբումը կարող էին արդարև երևակայել, թե մի շատ շահավետ բան էր իր արծաթի գույքը փոխել Աքցիաներ, որոնցից հուսալի էին կամ թե երևում էին ահագին շահավետություններ: Հանկարծակի առաջացան չտեսած ու չլսած հեղափոխությունք արծաթի աղբատները հարստացան առանց աշխատելու, հարստականները ևս առավել ճոխացան առանց գործություն գործ դնելու, և ամենքը չափից ու սահմանից դուրս անձնատուր եղան զեղխության բոլոր արասներին ու վայելչություններին, որ և հեշտ կարող էին լցուցանել: Բայց երբ որ շարժարանի լարերը դուրս պրծան իրենց տեղերից... այն մեծ երազը չքացավ հանկարծակի, այնուհետև կարծեցած հարստականքը զլորվեցան ամենախորին աղբատության մեջ և ձեռք ձգեցին հուսահատության վերջին հնարներին...»<sup>2</sup>:

XVII-VIII դարերում Ֆրանսիայում անտեսված էին գյուղատնտեսության շահերը, որը հասել էր ծայրագույն քայքայման: Եվ ահա ի հայտ

<sup>1</sup> «Հյուսիսափայլ», 1858, №4, է 273-274:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 275-276:

եկան մտածողներ, որոնք երկրի և ազգի հիմքը կապում էին այդ ճյուղի հետ՝ ծայր տալով ֆիզիոկրատների դպրոցի առաջացմանը: Ինչպես ասում է Մ.Նազարյանը «առաջացավ ևս մի առանձին ուսումնարան քաղաքական տնտեսության համար, որ պատիվ էր դնում հողի բերքերին միայն, որ և իր միակողմանի հայացքով և տարապայման ուղղությամբ մոլորվեցավ, բայց իր սխալանքով պատճառ տվեց ուշադրություն գործելու այդ բանին և փրկավետ հարցուփորձ առաջացրեց»:<sup>1</sup> Նրա ակնարկը վերաբերում է ֆիզիոկրատների այն հայեցությանը, համաձայն որի ազգային հարստության միակ աղբյուրը գյուղատնտեսությունն է:

XVII դարի կեսերից Ֆրանսիայում ձևավորվում է մի նոր հասարակահայեցություն՝ «մի այնպիսի վայրենի գործունեություն իմացականության հանդեպի մեջ», որը ի վերջո պիտի «տերության հիմնախարհիսյաների տակը փորեր և կործաներ»: Վոլտերի, Արժանսոնի, Դը Ալամբերի ազատական գաղափարները անընդունելի էին Նազարյանի համար: Միաժամանակ համակրանք էր տածում ֆիզիոկրատական մտքի ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Ժակ Թյուրգոյի հանդեպ: Լինելով ավելի լայնատես և ազատ Ֆ.Քենեի պահպանողական նկրտումներից, նա ֆիզիոկրատների ուսմունքը ավելի գիտականացրեց: Որպես Ֆրանսիայի ֆինանսների գլխավոր վերահսկողի, նրա կարճատև գործունեությունը նշանավորվեց մի շարք տնտեսական ռեֆորմների իրականացումով: 1776-ին Թյուրգոյի կողմից հրապարակած էլիկտները հարկերի, հացի առևտրի, ցեխերի մասին, ուղի էին հարթում տնտեսական ազատության համար: Ռեզլամենտացիան նա համարում էր «աբուրդ», «մշտական գրանցված սուր» և «իշխանության լծակ», «ովքեր դրանից օգտվում են»:

Ռեֆորմատոր նախարարը շուտով ազատվում է պաշտոնից: Մակայն «այնպիսի մի ժամանակ, երբ միայն ամենավճճական ռեֆորմը կարող է կանխել հեղափոխությունը, ռեֆորմի չհաջողված փորձը ընդունակ է միայն արագացնելու այն»<sup>2</sup>:

Մ.Նազարյանը մի շատ հետաքրքիր դիտողություն է կատարում այս ոգով, թե հեղափոխությանը նախորդող շրջանում «Վերանորոգությունը, հիմնովին, մեծարարած, հաստատուն վերանորոգությունը հարկավոր էին, և անպատճառ պիտոյ էր տերությանը լայն ու շրջանկատ տեսությամբ, քաջ և զորավոր կերպով և տոկոս համբերությամբ ձեռնարկել և զլուխ տանել այդ վերանորոգությունը, եթե չկամեր նա պատրաստել իր և թագավորության կործանումը»<sup>3</sup>: Թյուրգոյի կողմից իրականացվող ռե-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 281:

<sup>2</sup> Эдгар Фор, Опала Тюрго 12 мая 1776г., М., 1979, с.427-428.

<sup>3</sup> «Հյուսիսափայլ», 1858, №7, էջ 24:

ֆորմները հասարակության զարգացումը մաքրում էր ֆեոդալական կապանքներից, ուղի հարթում կառավարման նոր ձևերի համար, մինչդեռ Նազարյանը պատրանք ունենալով «լուսավոր միապետության» գաղափարը, ֆրանսիական հեղափոխության պատճառները վերագրում էր այս կամ այն պետական գործիչների բռնակալական և ոչ դեմոկրատական մեթոդների կիրառմանը<sup>1</sup>:

Գրիգոր Արծրունին Մ.Նազարյանին նվիրված մահախոսականում նրան համարում է «հայոց ժամանակակից գրական ասպարեզում վերանորոգիչ և հեղափոխիչ»<sup>2</sup>: Նա 1850-60-ական թվականների հայ հասարակական մտքի այն սերնդից էր, որը հանդես էր գալիս «դարաշրջանի հայ հասարակական զարգացումը ուղեգծելու պատմական առաքելությամբ»<sup>3</sup>:

Մ.Նազարյանի տնտեսագիտական մտորումները չեն հավակնում վերլուծական խորության, բայց կրթության ու գիտության, վաճառականության, հարստության, կառավարման ձևերի և այլ հարցերի վերաբերյալ նրա դիտողությունները, որոնք հետագայում պիտի «լայնանային ու ընդարձակվեին» հետաքրքրական են ժամանակի հայ տնտեսագիտական մտքի իմացությունների առումով:

## ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆ (տնտեսագիտական մտորումներ)

**ՌՈՒԲԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ**, *տ.գ.դ., պրոֆեսոր*  
*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության*  
*ինստիտուտի գլխավոր գիտաշխատող*

**Համառոտագիր:** Մ.Նազարյանը XIX դարի հայ մտավոր պատմության ամենախիշարժան անուններից է, որպես «մի խոշոր անձնավորություն մեր գրական վերածնության արշալույսին»: «Հայ լուսավորական շարժման պատմության մեջ» նրա մասնակցությունը եղել է ընդգրկուն, իբրև «համապարփակ անհատականություն» ոչ պատահականորեն պայմանավորելով և գրականագետների, և պատմաբանների, և փիլիսոփաների, և տնտեսագետների անդրադարձը նրա հայեցողության տարբեր շերտերին: Մույն հոդվածի քննության առարկան Նազարյանի տնտեսագիտական հայացքներն են: Կրթության ու գիտության, վաճառականության, հարստության, կառավարման ձևերի և այլ հարցերի վերաբերյալ նրա դիտողությունները, որոնք հետագայում պիտի «լայնանային ու ընդար-

<sup>1</sup> Տես՝ Ռ.Ա.Կարապետյան, Ստեփանոս Նազարյանց, Փիլիսոփայական հայացքներ, Ե., 1976, էջ 144:

<sup>2</sup> «Մշակ», 1879, №62:

<sup>3</sup> Ս.Սարինյան, Հայ գաղափարաբանություն. Պատմաքննական տեսություն, Ե., 1998, էջ 27:

ձակվելին» հետաքրքրական են ժամանակի հայ տնտեսագիտական մտքի իմացությունների առումով:

*Բանալի բառեր. կրթություն, գիտություն, առևտուր, վաճառականություն, հարստություն, միջին դասակարգ, նյութական և հոգևոր պահանջներ:*

## СТЕПАНОС НАЗАРЯН (экономические раздумья)

**РОБЕРТ НЕРСЕСОВИЧ САРИНЯН**, *д.э.н., профессор*

*главный научный сотрудник*

*Института экономики им. Котаяна НАН РА*

**Аннотация:** Степанос Назарян один из самых упомянутых имен в истории армянской интеллектуальной мысли XIX века, как «крупная личность на заре нашего литературного возрождения». Его роль «в истории армянского просветительского движения» было всеохватывающим, обусловленным интересом к его личности со стороны литературоведов, историков, философов и экономистов. Предметом данной статьи являются экономические воззрения Назаряна. Его заметки по вопросам образования, купечества, богатства, форм управления представляют определенный интерес для познания армянской экономической мысли того времени.

**Ключевые слова:** образование, наука, купечество, торговля, богатство, управление, средний класс, материальные и духовные потребности.

## STEPANOS NAZARYAN (Economic Thoughts)

**ROBERT NERSES SARINYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor*

*Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Stepanos Nazaryan is one the renown names of the Armenian intellectual history of the 19<sup>th</sup> century as “a great person at the dawn of our literal renaissance”. His participation “In the history of the Armenian illumination movement” was crucial as a “thorough personality”, and it is not accidental that literature critics, historians, philosophers and economists address his being Armenian and preserving Armenian identity from various viewpoints. The article examines the economic views of Nazaryan. His statements and views on education and science, merchant class, wealth, forms of governance and other issues “extended and widened” by him throughout his career are of interest in the context of the Armenian Economic thought of the period.

**Keywords:** Education, science, trade, merchant class, wealth, middle class, material and spiritual needs.

**ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ**  
**НАШИ АВТОРЫ**  
**OUR AUTHORS**

**ՎԼԱԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն*

**ВЛАДИМИР ЛИПАРИТОВИЧ АРУТЮНЯН**, *д.э.н., профессор, член-корр. НАН РА*  
*директор Института экономики им. М. Котаняна НАН РА.*

**VLADIMIR LIPARIT HARUTYUNYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor*  
*Director, M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciences, Republic of*  
*Armenia, Corresponding Member, National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԱՇՈՏ ԶԱԿՈՒԻ ԲԱՅԱԴՅԱՆ**, *տ.գ.դ., պրոֆեսոր*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի բաժնի  
վարիչ, գլխավոր գիտաշխատող*

**АШОТ АКОПОВИЧ БАЯДЯН**, *д.э.н., профессор*

*Зав. Отделом, старший научный сотрудник*  
*Института экономики НАН РА им. Котаняна*

**ASHOT HAKOB BAYADYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor*  
*Head of Department, Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԴԱՎԻԹ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, *տ.գ.դ.,*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար  
գիտաշխատող*

**ДАВИД ВЛАДИМИРОВИЧ АРУТЮНЯН** *д.э.н.,*

*ведущий научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА*

**DAVIT VLADIMIR HARUTYUNYAN**, *Doctor of Sciences (Economics)*

*Leading Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, *տ.գ.դ. դոցենտ,*

*ԵՊՀ դասախոս*

**ТИГРАН ВЛАДИМИРОВИЧ АРУТЮНЯН**, *д.э.н., доцент,*

*преподаватель ЕГУ*

**TIGRAN VLADIMIR HARUTYUNYAN**, *Doctor of Sciences (Economics), Associate*  
*Professor, Yerevan State University*

**ՌՈՐԵՏՆ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ**, տ.գ.դ., պրոֆեսոր

*ՀՀ ԳԱԱ Մ. Բոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր  
գիտաշխատող*

**РОБЕРТ НЕРСЕОВИЧ САРИНЯН**, д.э.н., профессор

*главный научный сотрудник*

*Института экономики им. Котаняна НАН РА*

**ROBERT NERSES SARINYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor*

*Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՍՈՒՍԱՆ ԱԲԿԱՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ**, տ.գ.թ., դոցենտ

*Շուշիի տեխնոլոգիական համալսարանի էկոնոմիկայի և կառավարման ամբիոնի*

**СУСАН АБКАРОВНА АВЕТИСЯН**, к.э.н., доцент

*кафедра экономики и управления Шушинского технологического университета*

**SUSAN ABKAR AVETISYAN**, *Ph.D. in Economics, Associate Professor*

*Chair of Economics and Management, Shushi University of Technology*

**ԵՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**, տ.գ.թ., դոցենտ

*ՀՀ ԳԱԱ Մ. Բոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ  
գիտաշխատող*

**КРИСТИНЕ ЮРЬЕВНА БАГДАСАРЯН**, к.э.н., доцент,

*старший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА*

**KRISTINE YURI BAGHDASARYAN**, *Ph.D. in Economics, Associate Professor*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԱՆՆԱ ԱՇՈՏԻ ԲԱՅԱԴՅԱՆ**, տ.գ.թ., դոցենտ

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան*

**АННА АШОТОВНА БАЯДЯН**, к.э.н., доцент

*Армянский Государственный Экономический университет*

**ANNA ASHOT BAYADYAN**, *Ph.D. in Economics, Associate Professor*

*Armenia State University of Economics*

**ԱՐԹՈՒՐ ՌԱՖԻԿԻ ԹԱՄԱԶՅԱՆ**, տ.գ.թ.,

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ  
գիտաշխատող*

**АРТУР РАФИКОВИЧ ТАМАЗЯН**, к.э.н.,

*старший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА*

**ARTUR RAFIK TAMAZYAN**, Candidate of Sciences (Economics)

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics,  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԱՆՆԱ ՌՈՒԶՎԵԼՏԻ ՄԱԿԱՐՅԱՆ**, տ.գ.թ.,

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**АННА РУЗВЕЛЬТОВНА МАКАРЯН**, к.э.н.,

*научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА*

**ANNA ROOSEVELT MAKARYAN**, Ph.D. in Economics

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԼԻԼԻԹ ՆՈՐԱՅՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ**, տ.գ.թ.,

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**ЛИЛИТ НОРАЙРОВНА САРГСЯН**, к.э.н.,

*научный сотрудник Института экономики имени М. Котаняна, НАН РА*

**LILIT NORAYR SARGSYAN**, Ph.D. in Economics

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՏԱԹԵՎԻԿ ՍՄԲԱՏԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ**, տ.գ.թ.,

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր  
գիտաշխատող*

**ТАТЕВИК СМБАТОВНА ПАРСАДАНЯН**, к.э.н.,

*младший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА*

**TATEVIK SMBAT PARSADANYAN**, Ph.D. in Economics

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԻՐԻՆԱ ԱՐՄԵՆԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ**

*Շուշիի տեխնոլոգիական համալսարանի դասախոս*

**ИРИНА АРМЕНОВНА АВАНЕСЯН**

*преподаватель Шушинского технологического университета*

**IRINA ARMEN AVANESYAN**

*Lecturer, Chair of Economics and Management  
Shushi University of Technology*

**ԳԱՅԱՆԵ ՍԱՅԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*ՀՊՏՀ ասպիրանտ*

**ГАЯНЕ СААКОВНА АВЕТИСЯН**

*аспирант АГЭУ*

**GAYANE SAHAK AVETISYAN**

*Ph.D. Student, Armenian State university of Economics*

**ՍԱՍՈՒՆ ՄՅԱՍՆԻԿԻ ԲԱԽՇՅԱՆ,**

*ՀԱՊՀ ուսանող*

**САСУН МЯСНИКОВИЧ БАХШЯН**

*Студент, Национальный политехнический университет Армении*

**SASUN BAKHSHYAN**

*Bachelor Student, National Polytechnic University of Armenia*

**ԱՐՓԻՆԵ ՄԵԽԱԿԻ ԿՅՈՒՐԵԴՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

**АРПИНЕ МЕХАКОВНА КЮРЕГЯН**

*соискатель Института экономики им. М. Котаяна НАН РА*

**ARPINE MEKHAH KYUREGHYAN**

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՋԱՆՐԻԿ ՎԱԼԵՐԻ ԾԱԼԱԼՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ*

**КНАРИК ВАЛЕРЬЕВНА ДЖАЛАЛЯН**

*экономист первой категории Института Экономики им. М. Котаняна НАН РА*

**KNARIK VALERI JALALYAN**

*First Level Economist, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԼԻԼԻԹ ՄԱՆՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

**ЛИЛИТ МАНВЕЛОВНА ПЕТРОСЯН**

*соискатель Института экономики им. М. Котаняна НАН РА*

**LILIT MANVEL PETROSYAN**

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆԻ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ՀԱՊՀ մագիստրանտ*

**РУБЕН ВАРДАНОВИЧ АРУТЮНЯН**

*магистрант Национального политехнического университета Армении*

**ROBERT VARDAN HARUTYUNYAN**

*Graduate Student, Armenian National Agrarian University*

**ՏԱԹԵՎԻԿ ՎԱԶԳԵՆԻ ՇԱԳԻՆՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**ТАТЕВИК ВАЗГЕНОВНА ШАГИНЯН**

*младший научный сотрудник Института экономики имени М. Котаняна НАН РА*

**TATEVIK VAZGEN SHAHINYAN**

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

---

**ՄԻՔԱՅԵԼ ՍԵՂՐԱՎԿԻ ԶԱՎԱԴՅԱԼ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

**МИКАЕЛ СЕДРАКОВИЧ ДЖАВАДЯН**

*аспирант Института экономики им. М. Котаняна НАН РА*

**MIKAEL SEDRAK JAVADYAN**

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

---

**ԱՆՈՒՇ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՐԳՍՅԱԼ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ*

**АНУШ ТИГРАНОВНА САРГСЯН**

*младший научный сотрудник, аспирант  
Института экономики им. М. Котаняна НАН РА*

**ANUSH TIGRAN SARGSYAN**

*Ph.D. Student, Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Science, Republic of Armenia*

---

**ՆԱՐԵԿ ԳՐԻԳՈՐԻ ԶԱՐԴՈՒՄՅԱԼ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

**НАРЕК ГРИГОРЬЕВИЧ КАРДУМЯН**

*аспирант Института экономики им. М.Котаняна НАН РА*

**NAREK GRIGORI QARDUMYAN**

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

---

**ՌՈԲԵՐՏ ՍՈՍԻ ԶՈՉԱՐՅԱԼ**

*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասպիրանտ*

**РОБЕРТ СОСОВИЧ КОЧАРЯН**

*Национальный аграрный университет Армении, аспирант*

**ROBERT SOS KOCHARYAN**

*Ph.D. Student, Agrarian National University of Armenia*

---

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ - 2018**

**Մաս I**

**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНО-  
ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ - 2018**

**Часть I**

**THE CONTEMPORARY ISSUES OF SOCIOECONOMIC  
DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA**

**SCIENTIFIC JOURNAL OF ARTICLES - 2018**

**Part I**

**Հրատարակչության խմբագիրներ՝  
Նյութերի հավաքագրող՝  
Համակարգչային ձևավորումը՝**

**Редакторы издательства  
Собрание материалов  
Компьютерная верстка**

**Publishing House Editors:  
Collection of Articles:  
Text Design and Electronic Composition:**

**Ա. Հովակիմյան, Ա. Սահակյան  
Ա. Մարկոսյան  
Մ. Համբարձումյանի**

**А. Овакимян, А. Саакян  
А. Маркосян  
М. Амбарцумян**

**A. Hovakimyan, A. Sahakyan  
A. Markosyan  
M. Hambardzumyan**

**Հրատ. պատվեր № 861**

**Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60 x 84 1/16:**

**Ծավալը՝ 19.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100 օրինակ:**

**Տպագրվել է ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարանում:**

**Заказ № 861**

**Печать офсетная. Формат 60 x 84 1/16.**

**Печ. л. 19.5 Тираж 100 экз.**

**Отпечатано в типографии издательства " Гитутюн"  
Национальной академии наук Республики Армения**

**Printing Order № 861**

**Printing: Offset. Size: 60 x 84 1/16.**

**Conventional Offset Press: 19.5 printing units. Number of copies printed: 100.**

**Printed by the print house of "Ghutyun"**

**Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia**

ԳԱՍ Հիմնարար Պիտ. Գրադ.



51 0657007

Π  
1904648

ISSN 1829-4324